

Հայաստանի Հանրապետություն  
Գիտությունների ազգային ակադեմիա  
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

# ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 (24)  
2 0 2 1

Գյումրի 2021

---

*«Գիտական աշխատություններ» հոդվածների պարբերական ժողովածուն  
հիմնադրվել է 1998թ. ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Շիրակի հայագիտական  
հետազոտությունների կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ (15.01.1998):*

*Ընդգրկված է ՀՀ ԿԳՄՄՆ ԲՈԿ-ի կողմից ընդունված պարբերականների ցանկում:*

*ISSN 1829-4316  
DOI: 10.52971/18294316*

**Գլխավոր խմբագիր՝** Բանասիրական գիտությունների դոկտոր  
**Ս.Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

**Խմբագրական խորհուրդ՝** Աբրահամյան Լ.Հ. (պատմ. գիտ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ), Ակոպով Ա.Ա. (պատմ. գիտ. թեկնածու, պատասխանատու քարտուղար), Ավետիսյան Պ.Ս. (պատմ. գիտ. դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ), Բազեյան Կ.Ռ. (պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ), Գրիգորյան (Հայկազուն) Ա.Հ. (ճարտ. դոկտոր, պրոֆեսոր), Խաչատրյան Լ.Մ. (բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր), Հայրապետյան Ա.Ս. (պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ) Հարությունյան Հ.Հ. (արվ. թեկնածու), Մահե Ժ.-Պ. (հայագետ, ԳԱԱ արտասահմանյան անդամ, Ֆրանսիա), Մելքոնյան Ա.Ա. (պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս), Պետրոսյան Ս.Գ. (պատմ. գիտ. դոկտոր), Կավրեյիշվիլի Ռ.Ա. (պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Վրաստան), Սկոյան Ա.Ա. (փիլ. գիտ. թեկն., մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր), Քոսյան Ա.Վ. (պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր)

**ԳԱԱ ՇՀՀ ԿԵՆՏՐՈՆԻ «ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»**

NN 1 (24) / հայագիտություն և հասարակական գիտություններ // ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն: Խմբ. խորհուրդ՝ Ս. Հայրապետյան և այլք.- Գյումրի, «Ռ. Ավետիսյան» ԱԶ, 2021. – 200 էջ:

*Խմբագրության հասցեն՝ 3101, ՀՀ, Գյումրի, Վ. Սարգսյան 5ա  
հեռ.՝ +374/312/6 94 77, +374/94/411-228  
էլ. հասցե՝ scient.works@shirakcenter.sci.am  
կայքէջ՝ www. shirakcenter.sci.am*

ISSN 1829-4316  
DOI: 10.52971/18294316

© ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն 2021

Республика Армения  
Национальная академия наук  
Ширакский центр арменоведческих исследований

# НАУЧНЫЕ ТРУДЫ

ВЫПУСК  
1 (24)  
EDITION

# SCIENTIFIC WORKS

**Shirak Centre of Armenological Studies**  
National Academy of Sciences  
Republic of Armenia

Гюмри 2021 Gyumri

---

*“Научные труды” основан в 1989г. решением ученого совета Ширакского центра арменоведческих исследований НАН РА (15.01.1998)  
Входит в перечень периодических изданий, утвержденных ВАК-ом МОНКС РА.*

*The periodical collection of “Scientific Works” was established in 1998 by the decision of the scientific board of Shirak’s Center of Armenological Studies of NAS of RA (15.01.1998).  
The periodical is indexed in the list of SCC MESCS RA.*

*ISSN 1829 - 4316  
DOI: 10.52971/18294316*

**Главный редактор:** доктор филологических наук **АЙРАПЕТЯН С. А.**

**Редакционная коллегия:** **Абрамян Л.А.** (к.ист.н., член кор. НАН РА), **Аветисян П.С.** (д.ист.н., член кор. НАН РА), **Айрапетян А.С.** (к. ист.н, доцент), **Акопов А.А.** (к.ист.н., ответственный секретарь), **Арутюнян А.А.** (к.иск.), **Базеян К.Р.** (к.ист.н., доцент), **Григорян (Айказун) А.А.** (д. архит., профессор), **Каврелишвили Р. А.** (д.ист.н., профессор, Грузия), **Косян А.В.** (д.ист.н., профессор), Маэ Ж.-П. (арменовед, Иностраннный член НАН РА, Франция), **Мелконян А.А.** (д.ист.н., профессор, академик НАН РА), **Мкоян А.А.** (к.фил.н., д.пед.н., профессор), **Петросян С.Г.** (д. ист. н.), **Хачатрян Л.М.** (д.фил.н., профессор)

**“Научные труды” Ширакского центра арменоведческих исследований НАН РА**

NN 1 (24) арменоведение и общественные науки // Национальная академия наук РА, Ширакский центр арменоведческих исследований/Ред. совет: С.Айрапетян и др. - Гюмри, ЧП “Р.Аветисян”, 2021.-200 с.

**Editor-in –chief:** Doctor of Philological Sciences **HAYRAPETYAN S. A.**

**Editorial board:** **Abrahamyan L.H.** (PhD in History, Corresponding Member of NAS RA), **Akopov A.A.** (PhD in History, Responsible Secretary), **Avetisyan P.S.** (Doctor of History, Corresponding Member of NAS RA), **Bazeyan K.R.** (PhD in History, associate professor), **Grigoryan (Haykazun) A.H.** (Doctor of Architecture, professor), **Kavrelishvili R.A.** (Doctor of History, professor, Georgia), **Khachatryan L.M.** (Doctor of Philology, professor), **Hayrapetyan A.S.** (PhD in History, associate professor), **Harutyunyan H.H.** (PhD in Art Studies), **Mahé J.-P.** (Armenologist, Foreign member NAS RA, France), **Melqonyan A.A.** (Doctor of History, professor, Academician NAS RA), **Mkoyan A.A.** (PhD in Philosophy, Doctor of Pedagogy, professor), **Petrosyan S.G.** (Doctor of History), **Qosyan A.V.** (Doctor of History, professor).

**“Scientific Works” Shirak’s Center of Armenological Studies of NAS RA**

NN 1 (24) Armenology and Social Sciences // National Academy of Sciences RA, Shirak Center for Armenological Studies/. Ed. Board: S.Hayrapetyan and others. -Gyumri, "R.Avetisyan PE", 2021,- 200p.

*Адрес редакции: 3101, РА, Гюмри, ул. В. Саргсяна 5а*

*Address: 3101, 5a V. Sargsyan Street, Gyumri, RA*

*тел./tel.: +374 /312/6 94 77, +374/94/411-228*

*E-mail: scient.works@shirakcenter.sci.am*

*hppt: www. shirakcenter.sci.am*

ISSN 1829-4316

DOI: 10.52971/18294316

@ Ширакский центр арменоведческих исследований НАН РА, 2021

@ Shirak Center for Armenological Studies of NAS RA, 2021

ՀՏԴ՝ 902/903

DOI: 10.52971/18294316-2021.1-5

ՀՆԱԳՈՒՅՆ ՏԱՐՈՆԻ ԵՎ ԲԶՆՈՒՆԻՔԻ ԱՐՏՈՆՅԱԼ  
ԴԱՍԵՐՆ ՈՒ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ

*Մարգիս Պետրոսյան*

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

**Բանալի բառեր՝** *Հասուլա, Խախա, խեթ թագավոր, կառամարտիկներ, երկվորյակներ, Արևի աստված, Ամպրոպի աստված, միություն:*

Հոդվածում քննարկվել են հնագույն Տարոնի և Բզնունիքի արտոնյալ զինվորական ու քրմական դասերի գոյությունը հաստատող խեթական (գրավոր) և հայկական (գրավոր ու բանավոր) աղբյուրների տեղեկությունները, դրանց՝ երկվորյակների պաշտամունքի հետ ունեցած առնչությունները, այդ պաշտամունքը՝ որպես հնագույն Տարոնի և Բզնունիքի դաշնային միությունն ամրապնդած գաղափարախոսական հենք: Ցույց է տրվում, որ դրանում իր դերն է ունեցել նաև զինվորական ու քրմական դասերը ներկայացրած կառամարտիկների գույզի և երկվորյակ աստվածությունների կերպարի համադրման հանգամանքը՝ իր հետքը թողած գույզով հանդես եկած ուրարտական հեծյալների վրա:

**Նախաբան.** Գրավոր առաջին ստույգ տեղեկությունները Հայկական լեռնաշխարհի և նրա բնակիչ հայախոս էթնոսի մասին մեզ տալիս է խեթ թագավոր Խաթուսի I-ի (մ.թ.ա. 1650-1620 թթ.)<sup>1</sup> Տարեգրությունը<sup>2</sup>: Խեթ թագավորներից սա առաջինն էր,

<sup>1</sup> Ceram C.W., Le secret des Hittites. Découverte d'un ancien empire. Librairie Plon. Paris.-1955. p 278.

Այսուհետև ևս խեթ թագավորների գահասարիները բերվում են ըստ Ceram, Le secret, p. 278:

<sup>2</sup>«Keilschrifttexte aus Boghazköi (Wissenschaftliche Veröffentlichung der Deutschen Orient-Gesellschaft), Leipzig-Berlin. 1916-1926, X2 und X1 (այսուհետև՝ KBo): Ռուսերեն թարգմանությունը և ծանոթագրությունները Վ.Վ. Իվանովի (տե՛ս «Хрестоматия по истории древнего Востока». Часть первая. «Высшая школа». -1980. С. 263-266. այսուհետև՝ Хрестоматия I): Մենք օգտվել ենք արանից (-Ս.Պ.):

որ անցել էր Եփրատը և իր բանակով հասել մինչև Վանա լճի արևմտյան ափ: Ցավոք սրտի, այս վստահելի աղբյուրը անհրաժեշտ ուշադրության չի արժանացել հայագիտական հետազոտություններում: «Հայ ժողովրդի պատմության քրեատոմատիայի» առաջին հատորում<sup>3</sup> անգամ նրանից որևէ մեջբերում չկա: Հայոց պատմությանը վերաբերող խեթական սեպագիր արձանագրություններից այնտեղ մեջբերումներ են արված՝ սկսած խեթ թագավոր Տուդիսալիյա III-ի (մ.թ.ա. 1400-1380 թթ.) ժամանակվանից, ասել է՝ սրան նախորդած 250 տարվա անտեսումով<sup>4</sup>: Այնինչ, հենց Խաթուսիլի I-ի տարեգրության մեջ մեր պատմությանը վերաբերող թանկարժեք տեղեկություններ կան: Դրանցից է, օրինակ, Խախա քաղաքի տաճարներից մեկից ավար վերցրած «ոսկե քթով նավի» հիշատակումը<sup>5</sup>: Սրանից պարզվում է, որ՝ ա/ դա ծիսական նպատակներով օգտագործվող նավ է եղել (հակառակ դեպքում ավար կտարվեր միայն «ոսկեպատ քիթը»), բ/ որ այն Արևի աստծուն ձուլված նավ է եղել (ոսկին Արևի աստծու մետաղն էր), ուստի խեթ թագավորը Խախա քաղաքից տարված նավը նվիրել էր խեթական Արիննա քաղաքի՝ իրեն հովանավորող Արևի դիցուհուն, գ/ որ Խաթուսիլի I-ի արևելյան արշավանքի վերջին թիրախ Խախա քաղաքը գտնվել է Վանա լճի արևմտյան ափին կամ նրա մոտերքում:

Մեկ ուրիշ ուշագրավ վկայություն. Հասուվա երկրի (հետագայում՝ Տարոն) ցեղապետ-արքային Խաթուսիլի I-ը կոչում է «Տավանանայի որդի», որը խեթերենում նշանակում էր «թագուհու որդի»<sup>6</sup>: Խեթերի թագուհին պարզապես թագավորի կինը չէր, այլ լայն արտոնություններ ունեցող նրա գլխավոր կինը: Գահաժառանգումը տեղի էր ունենում նրա միջոցով: Սովորաբար, հանգուցյալ թագավորին փոխարինում էր կամ թագուհու եղբորորդին, կամ թագավորի փեսան՝ գլխավոր տիկնոջից ծնված արքայադստեր ամուսինը<sup>7</sup>: Տելեպինու թագավորի մ.թ.ա. 1525 թ. իրագործած բարեփոխումով ժառանգելու իրավունք ստացան արքայատոհմի միայն արական գծով ներկայացուցիչները: Այդ հին կարգը գործել է նաև Հասուվա երկրում: Ավելին, Խաթուսիլի I-ը վկայում է, որ հասուվացիներն իրենց ցեղապետ-արքային գահընկեց էին արել: Այստեղից հետևում է, որ Հասուվայում ևս գործել է խեթական պանկուսի կամ տուլիյայի<sup>8</sup> լիազորություններով օժտված մի հաստատություն:

<sup>3</sup> «Հայ ժողովրդի պատմության քրեատոմատիա» (այսուհետև՝ ՀԺՊՔր), Հնագույն ժամանակներից մինչև IX դարի կեսերը, Երևանի համալսարանի հրատարակչություն, հ. 1, Երևան, 1981:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 7:

<sup>5</sup> Хрестоматия I. С. 265.

<sup>6</sup> Խաթուսիլի I-ի նախորդի՝ Հին խեթական թագավորության թագավոր Լաբարնա//Տաբարնա I-ի անունը այսուհետև դարձել էր խեթ թագավորների տիտղոսը (տե՛ս **Ceram**, նշվ. աշխ., էջ 126, **Авдиев В. И.** История древнего Востока. Госиздат политической литературы. Ленинград. -1953. С. 332; **Герни О. Р.** Хетты. Изд-во «Наука». Москва. -1987.С.60): Ճիշտ նույն կերպ նրա տիկնոջ Տավանանա անունը դարձել էր խեթ թագուհիների տիտղոսը (տե՛ս **Герни О.Р.**, նշվ. աշխ., էջ 62):

<sup>7</sup> Տե՛ս Хрестоматия I. С. 265. Пр. 2; **Довгяло Г. И.** О характере наследования царской власти у хеттов в эпоху Древнего царства//«Вестник древней истории». Москва. -1964. № 1. С. 23-24; **Герни**, նշվ. աշխ., էջ 62, 190:

<sup>8</sup> Խեթական պանկուսի և տուլիյայի վերաբերյալ տե՛ս «История древнего Востока». Под ред. **В. И. Кузищина**. «Высшая школа». Москва. -1979. С. 199-200; **Авдиев В. И.**, նշվ. աշխ., էջ 333:

### 1. Խեթ-հայկական բախումները

Խեթական թագավորները հետիոտն ու կառամարտիկ զորամասերից բաղկացած իրենց մեծ բանակները Հայկական լեռնաշխարհի երկրների դեմ հանելիս նախընտրում էին արշավել երկու բանուկ ճանապարհներից որևէ մեկով: Դրանցից առաջինը Արևելյան Եփրատի (Արածանի) հոսանքն ի վեր, գետափնյա շրջաններով բերում էր լեռնաշխարհի կենտրոնական շրջաններ և Վանա լճի հյուսիսային ու արևմտյան ափեր, իսկ երկրորդը՝ Արևմտյան Եփրատի մեծ ոլորանի կողմից, նրա հոսանքն ի վեր առափնյա շրջաններով բերում էր գետի ակունքների շրջան և Ճորոխ գետի ավազան: Դրանցից առաջին ճանապարհով էին ներխուժել, օրինակ, Խաթուսիլի I-ի և նրա հաջորդ Մուրսիլի I-ի (մ.թ.ա. 1620-1590 թթ.) բանակները<sup>9</sup>: Նրանց հաջորդներն օգտվում էին նաև երկրորդ ճանապարհից: Այդպես էր վարվել, օրինակ, Մուրսիլի II-ը (մ.թ.ա. 1345-1315 թթ.), որն ուղղակի հայտարարում էր. «Իսկ երբ գարուն բացվեց, երկրորդ ճանապարհով գնացի Ազգի երկիր»<sup>10</sup>:

Արդեն Խաթուսիլի I-ից սկսած՝ հզորացած խեթական թագավորության գահակալները ձգտում էին հասնել Հայկական լեռնաշխարհի նկատմամբ իրենց ռազմավարական և տնտեսական հեռահար նպատակների իրագործմանը: Դրանք էին՝ ա) Խոչընդոտել լեռնաշխարհի էթնիկապես միատարր ցեղային երկրների միավորմանը ռազմական, վարչական և կրոնական միասնության տանող ցեղամիությունների մեջ<sup>11</sup>: բ) Խաթուսիլի I-ից և Մուրսիլի I-ից սկսած՝ խեթ արքաները ձգտում էին իրենց գերիշխանությունը հաստատել Եփրատ գետից արևելք ընկած Հայկական Տավրոսի ցեղային երկրների վրա և դրանով իսկ խափանել այստեղից իրենց գլխավոր հակառակորդ Միտանիին մետաղի ու փայտանյութի մատակարարումը (սրանք չափազանց կարևոր էին մարտակառքերի պատրաստման համար): գ) Այդ ցեղային երկրների հպատակեցումը խեթերին հնարավորություն կտար Բիթլիսի լեռնանցքով դուրս գալ Ասորեստանյան հարթավայր, որտեղ նրանց սպասում էր Միտանիի լուծը թոթափելու պատրաստ Աշուր քաղաք-պետությունը: Նրա հետ դաշնակցած՝ խեթերը կարող էին Միտանիին հարվածել նաև թիկունքից և վերականգնել իրար հետ ունեցած վաղեմի առևտրա-տնտեսական կապերը: զ) Խեթ թագավորները երբևէ աչքաթող չէին անում նաև Հայկական լեռնաշխարհի ցեղային երկրներից թանկարժեք մետաղներ, այլ հարուստ ավար և ռազմագերիներ ձեռք բերելու հնարավորությունները: Խաթուսիլի I-ը Հասուվայի մասին ասում էր. «Այդ երկրի արծաթին ու ոսկուն հաշիվ չկար»<sup>12</sup>, իսկ արհեստավարժ զինվորական-

<sup>9</sup> Хрестоматия I. С. 264-265; «Keilschrifturkunden aus Boghazköi (Staatliche Museum zu Berlin, Vorderasiatische Abt)», այսուհետև՝ KUB. Berlin -1923-1939. XXXI. 64. II; Պետրոսյան Ս. Գ., Մուրսիլի I-ի արևելյան արշավանքի երթուղին // ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ» (այսուհետև՝ «ԳԱ»), հ. IV, Գյումրի, 2001, էջ 53-60:

<sup>10</sup> ՀԺՊՔԲ, հ. I, էջ 10:

<sup>11</sup> Այդպես էր վարվել Մուրսիլի II-ը կասկյան ցեղերի դեպքում՝ պատճառաբանելով, որ «Պիխունիյան կասկերի երկրում չէր իշխում այնպես, ինչպես ընդունված էր նրանց մոտ: Կասկերի երկրում միանձնյա չէին իշխում: Իսկ նշյալ Պիխունիյան թագավորավայել էր իշխում» (Ղազարյան Ռ., Մուրսիլի II-ի «Տասնամյա» տարեգրությունը, «Խեթական աղբյուրները Հայկական լեռնաշխարհի մասին», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2013, էջ 53):

<sup>12</sup> Хрестоматия I. С. 264.

ներ եղած հայկական ռազմագերիները մշտապես համալրում էին խեթական բանակների շարքերը:

Խաթուսիլի I-ը, իր արևելյան արշավանքի նկարագրությունն անելուց առաջ, համառոտ պատմում է Ադալուր լեռան մոտ Հասուվա և Խալպա (Հալեպ) երկրների միացյալ բանակների դեմ տարած հաղթանակի մասին: Մրանցից առաջինը հետագա Տարոն<sup>13</sup> է, իսկ երկրորդը՝ Յամխադի հյուսիսատրիքյան թագավորությունը՝ կոչված իր մայրաքաղաքի անունով: Դրանից հետո խեթ թագավորը շարունակում է. «Ընդամենը մի քանի օր անց ես անցա Պուրանա գետը, և Հասուվա երկիրն ինչպես առյուծ ես ոտնատակ տվի»<sup>14</sup>: Վերջինիս նվաճումից հետո Խաթուսիլի I-ը իր բանակով ներխուժել էր հարևան Խախա երկիր և գրավել անգամ նրա արքայանիստ Խախա քաղաքը<sup>15</sup>: Այս քաղաքը չէր կարող գտնվել Հայկական լեռնաշխարհից դուրս կամ նույնանալ Երզնկայի շրջանի հետագա Խախ գյուղի հետ<sup>16</sup> այն պարզ պատճառով, որ Խաթուսիլի I-ի արևելյան արշավանքի ընդհանուր ուղղությունը «առաջին ճանապարհով» էր՝ Մրածանիի հոսանքն ի վեր, իսկ նրա վերջնակետը դարձել էր Հասուվայից արևելք՝ Վանա լճին մերձ գտնված Խախան, որն, ըստ Տարեգրության, «Արևի աստվածության երկրներից» մեկի արքայանիստն էր:

## 2. «Արևի աստվածության երկիր» Բզունիքը

*Խախա* երկիրը իր կենտրոնական բնակավայրի՝ իր ցեղապետ-արքայի նստավայրի անունով են խեթերը կոչել *Խախա* (Ḫaḫḫa): Դա Մեծ Հայքի Բզունիք գավառի տարածքն է: *Խախա* անվան հիշատակն ենք մենք տեսնում XX դարի սկզբների իր գոյությունը դեռևս պահպանած Բիթլիսի գավառի Դատվանի գավառակի *Խախրե* գյուղի անվան մեջ: Վերջինս գտնվում էր Վանա լճից 6 կմ հեռավորության վրա<sup>17</sup>: *Խախրե/Ḫaḫḫa* նույնացմամբ մենք գործ կունենանք արևի պաշտամունքի տեղանվանական դրսևորման հետ, որովհետև *Խախրե* ձևը ենթադրում է նախնական *\*Խախ-արե* ձևից իր առաջացումը: Նույնպիսի հնչյունական անցումներ (շեշտակիր վերջնականկին նախորդած միջնաձայն *ա*-ի հնչյունափոխություն և աղում) տեղի են ունեցել հայերեն բազմաթիվ բառերում. հմմտ. *աշակերտ>աշկերտ,բաղանիք>բաղնիք, դադարել>դադրել, դարպաս>դարպաս, վարդապետ>վարպետ*, և այլն: *Խախրե* բնակավայրը այդպես է կոչվել Խաթուսիլի I-ի Տարեգրության մեջ հիշատակված «Արևի աստվածության երկրներից» մեկում գտնվելու, արևի աստվածության պաշտամունքի կենտրոն լինելու պատճառով: Մեր կարծիքով, *\*խախ*-ը եղել է առավոտյան արևին տրված մակդիր-մականուն և պահպանված է Մշո, Ալաշկերտի և Կարնո բարբառների *խախանդ* «հանդարտ, հան-

<sup>13</sup> Պետրոսյան Ս. Գ., նշվ. աշխ., էջ 56-58:

<sup>14</sup> Хрестоматия I. С. 264.

<sup>15</sup> Хрестоматия I. С. 265.

<sup>16</sup> **Хачатрян В.** Восточные провинции Хеттской империи. Ереван. -1971. С.53; **Խաչատրյան Վ.**, Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, Երևան, 1998, էջ 35-36, 42: Խախա քաղաքի տարբեր տեղորոշումները՝ համապատասխան գրականության հղումով տե՛ս **Քոսյան Ա.Վ.**, Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խեթական սեպագիր աղբյուրների), Երևան, 2004, էջ 51-52:

<sup>17</sup> **Ա-Դո**, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Երևան, 1912, էջ 86: **Հակոբյան Թ.**, **Մելիք-Բախշյան Ստ.** և ուրիշներ, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. II, Երևան, 1988, էջ 629:

գիստ» բառերում<sup>18</sup>: *Խախ-անդ* բաղադրիչներից բաղկացած բառի *-անդ* վերջածանցի համար հմտ. *ադանդ, աւանդ, եռանդ, մարմանդ* բառերի համապատասխան վերջածանցները:

Հնում Վանա լիճը հայտնի էր *Բզնունեաց* ծով անունով: Եթե մեր նախնիները լճի անվանադրի պատվին արժանացրել էին Բզնունիք գավառը, ուրեմն, նա լիճը շրջապատած գավառներից ամենաանվանին է եղել: Բայց մեր մատենագիրների ապրած ժամանակաշրջաններում Բզնունիքը այդպիսի համարում չի ունեցել, այդուհանդերձ՝ հեթանոսական դարերում կարող էր ունենալ, որովհետև այդ դարաշրջաններում նա արևի և Արևի աստծու պաշտամունքի կարևոր կենտրոններից էր: *Բզնունիք* գավառանունն արդեն ենթադրում է գավառի՝ արևապաշտության կենտրոններից լինելու հանգամանքը: Նրա անվան և *Բզնունի* տոհմանվան հիմքում (հակառակ Մովսես Խորենացու ավանդած ժողովրդական ստուգաբանության) ոչ թե *Բազ* անձնանունն է, այլ *բուզի* բառը. *Բզնունիք*\**բուզի-ն-ունի*: *Բուզի*-ի բացատրությունը գտնում ենք միջնադարյան «Բառգիրք հայոց»-ում. «*Բուզի*-արեգակն»<sup>19</sup>: Հմտ. *-ի* վերջածանցը բուսական և կենդանական աշխարհներին վերաբերող *այգի, բարդի, մայրի, հացի, գոճի, մոզի, ջորի* և այլ բառերում: *Բուզի* բառի արմատը նույնն է հնդեվրոպական ծագումով *բուծ* «կաթնակեր գառնուկ կամ ուլիկ» բառի հետ: *Բուզի* և *բուծ* բառերի արմատակիցներ լինելու հանգամանքը զարմանալի չի թվա, եթե նկատի առնենք իմաստային նույնպիսի զարգացման հետևանքն արձանագրած և վաղ հ.-ե. DY արմատից ծագած ազգակից լեզուների բառերը: Դրանց մի մասը ունեն «այծ», «այծենի», «տիկ», «պարկապզուկ», իսկ մյուս մասը՝ «աստվածություն», «լույս», «ամպրոպ» և այլն իմաստներ<sup>20</sup>: Հմտ. հայ. *տիկ* «տկճոր, պարկապզուկ» («այծ») և *տի* «ցերեկ, օրվա լուսավոր մասը»:

Վերևում նշվեց, որ հասուվացիները, դժգոհ լինելով իրենց ցեղապետ արքայից, սրան գահընկեց էին արել, իսկ սա ինչ-որ չբացահայտված հանգամանքներում (Տարեգրությունն այստեղ լռում է) հայտնվել էր խեթ թագավորի մոտ: Խաթուսիլի I-ը գլխատել էր նրան, իսկ Հասուվան նվաճելուց հետո շարունակել էր արշավանքը, բայց արդեն՝ Հասուվայի հարևան և դաշնակից Խախա երկրի դեմ: Սրա Ջիպասնա քաղաքի անունը երրորդ անգամ Խաթուսիլի I-ը տալիս է նրա գրավման առիթով. «Եվ Ջիպասնա քաղաքը ես ավերեցի և նրանից աստվածներին վերցրի և դրանք տվեցի Արիննա քաղաքի Արևի աստվածությանը: Եվ Խախա քաղաք ես գնացի»<sup>21</sup>: Ջիպասնայից հափշտակված կուռքերը խեթական Արևի դիցուհու տաճարին նվիրելիս, Խաթուսիլի թագավորը,

<sup>18</sup> «Հայ ժողովրդական հեքիաթներ», հ. X, Երևան, 1967, էջ 608; հ. XIII, Երևան, 1985, էջ 516: **Գրիգորյան Ռ.**, Գեղարքունիք, «Հայ ազգագրություն և բանահյուսություն. նյութեր և ուսումնասիրություններ», 14, Երևան, 1983, էջ 77: Իմ մանկության և պատանեկության տարիներին՝ 1950-ական թթ., Գյումրի-Լենինականում *խախանդ* բառը նույն իմաստներով (նաև բայական *խախրնդավ, խախրնդվան* ձևերով) գործածության մեջ էր (-Ս.Պ.):

<sup>19</sup> «Բառգիրք հայոց», Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ **Հ.Ամայանի**, Երևան, 1975, էջ 58:

<sup>20</sup> **Андреев Н. Д.** Раннеиндоевропейский праязык. Москва. -1986. С. 86-87.

<sup>21</sup> Хрестоматия I. С. 265.

բնականաբար, նկատի էր առել դրանց՝ Արևի աստծու պաշտամունքին առնչված լինելու հանգամանքը:

### 3. Արևի և Ամպրոպի երկվորյակ աստվածների պաշտամունքը

Խաթուսիի I-ի խեթական բանակը Ջիպասնա քաղաքից հետո գրավել էր Խաթուսի երկրի նույնանուն արքայանիստ քաղաքը: Մրա գրավման մասին խեթ արքան իր Տարեգրության մեջ ասում է. «Եվ Խաթուսի քաղաք ես մտա: Խաթուսի քաղաքի դարպասների մոտ ես երիցս մարտ տվեցի և Խաթուսի քաղաքը ես ոչնչացրի: Նրա ունեցվածքն էլ վերցրի և իմ քաղաք Խաթուսա ուղարկեցի: Երկու սայլ բեռնված արծաթով: Մեկ ծածկով կառք, մեկ արծաթյա անկողին, մեկ ոսկե սեղան, մեկ արծաթե սեղան՝ Խաթուսի քաղաքի աստվածների, մեկ արծաթե ցուլ, մեկ նավ, որի քիթը ոսկեպատ էր, մեծ արքա Տաբարնան (նույն ինքը՝ Խաթուսիի I-ը - Ս. Պ.) տարավ Խաթուսի քաղաքից և տվեց Արևի դիցուհուն»<sup>22</sup>: Հստակ չէ, թե հափշտակած թանկարժեք իրերից որոնք ո՞ր աստծուն են ձեռնված եղել: Պատճառն այն է, որ դրանք բոլորը, ըստ երևույթին, միևնույն տաճարից են տարվել: Այդ դեպքում մնում է ենթադրել, որ Խաթուսի քաղաքի գլխավոր տաճարը ձեռնված է եղել Ամպրոպի և Արևի աստվածների միասնական պաշտամունքին: Կասկած չի կարող, որ Արևի աստվածությանն են պատկանել ինչպես «մեկ ոսկե սեղանը», այնպես էլ «մեկ ոսկեպատ քթով նավը», որը նախատեսված է եղել Վանա լճում ծնվող Արևի աստծու ծիսական նավարկության համար:

Խաթուսիի I-ի տարած ավարի մեջ կարելի է առանձնացնել նաև Խաթուսի քաղաքի Ամպրոպի աստծուն պատկանած «մեկ արծաթե անկողինը», «մեկ արծաթե սեղանը», «մեկ արծաթե ցուլը»: Վերջինի առթիվ նկատի առնենք, որ Մերձավոր Արևելքի շատ երկրների նման՝ Հայկական լեռնաշխարհում ևս ցուլը համարվում էր Ամպրոպի աստծու սրբազան կենդանին և խորհրդանիշը<sup>23</sup>: Խաթուսիից տարված երկու սայլաբեռ արծաթը ևս, ամենայն հավանականությամբ, Ամպրոպի աստծուն ձեռնված ծիսական նպատակներով գործածված իրերից է բաղկացած եղել: Ինչպես ոսկին էր համարվում՝ իր գույնի պատճառով, Արևի աստծուն ձեռնված մետաղ, այնպես էլ արծաթն էր իր գույնի պատճառով (կայծակի նման) համարվում Ամպրոպի աստծուն ձեռնված մետաղ:

Արևի և Ամպրոպի աստվածների զույգով պաշտամունքը (անգամ միևնույն տաճարում) հնդեվրոպական ակունքներ ունենալով՝ պայմանավորված հնագույն հնդեվրոպական հասարակության երկմիասնական (դուալ) կառուցվածքով<sup>24</sup>: Հնդեվրոպացիների երկու գլխավոր աստվածություններից առաջինը եղել է գերագույն աստվածություն, պարզ երկնքի և արևի աստվածություն, քրմական գործառույթներով օժտված և պտղաբերության հովանավոր աստվածություն, իսկ երկրորդը եղել է ոչ գերագույն աստվա-

<sup>22</sup> Хрестоматия I. С. 265.

<sup>23</sup> Piotrovsky B. B. Ourartou, «Archaeologia Mundi» Les Éditions Nagel, Genève-Paris-Munich, 1970, p. 69, 128; Հմայակյան Ս., Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, 1990, էջ 41-43: Խաթուսիի I-ի Հասուվայից տարած ավարի մեջ եղել են նաև ցուլի արծաթե երկու արձաններ: Հավանաբար, դրանք ձեռնված են եղել Թեշուբ/Ամպրոպի աստծու ուղեկից զույգ ցուլերին: Դրանց մասին տե՛ս Герни О.Р., նշվ. աշխ., էջ 127:

<sup>24</sup> Гамкрелидзе Т. В., Иванов В. В. Индоевропейский язык и индоевропейцы. Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры. Тбилиси. Т. I-II. -1984. Т. II. С. 776.

ծություն, ամպրոպային երկնամերձ ժայռի ու կայծակի աստվածություն, ռազմական գործառույթներով օժտված և տնտեսական գործունեության ու պտղաբերության հովանավոր աստվածություն<sup>25</sup>: Ըստ այսմ, հնդեվրոպական ավանդույթը պահպանած Հայկական լեռնաշխարհի ցեղային երկրներն ունենում էին երկու առաջնորդ արքաներ՝ քուրմ-արքա և զինվոր-արքա, որոնցից գերագույնի կարգավիճակը որոշում էր հասարակությունը՝ իր առաջնային պահանջարկներից ելնելով:

Խախա երկրում Արևի աստծու գերագույն լինելը բխում է նրանից, որ նա մեկն էր Վանա լճի շրջակայքը բռնած «Արևի աստվածության երկրներ»-ից: Իսկ որ այդ աստծու հովանավորյալը եղել է քուրմ-արքա, պարզվում է հայոց հին ավանդագրույցից, ըստ որի՝ Բզնունի տոհմի հիմնադիրը որդին էր Հայկ նահապետի Մանավազ որդու: Մա Հայկի քուրմ որդին էր՝ սոցիալական եռյակ կազմած իր եղբայրներ հողագործ Արամանյակի և զինվոր Խոռի հետ: Ավանդագրույցը վկայում է. Արամանյակը «թողեալ գերկուս յեղբարց իւրոց՝ զԽոռ և զՄանաւազ ամենայն աղիսին իւրեանց ի կոչեցեալն Հարք, եւ գորդի Մանաւազայ զԲազ. յորոց Մանաւազ ժառանգէ զՀարք, իսկ որդի նորա *Բազ՝ յարեւստից հիւսիսոյ զեզր ծովուն Աղւոյ*, և զգաւառն և զծովն անուանէ իւրով անուամբ: Եւ ի սոցանէ ասեն լեալ զնահապետութիւնս զՄանաւազեան եւ Բզնունեաց, եւ Որդունին անուանեալ...»<sup>26</sup>: Բզնունիք գավառի՝ որպէս նախկին քրմապատկան տարածքի մասին վկայում է նաև V դարում նրա կաթողիկոսական տիրույթ<sup>27</sup> լինելու փաստը: Մեծ Հայքի թագավոր Խոսրով Կոտակը (330-338 թթ.) Բզնունի նախարարական տոհմը բնաջնջել տալուց հետո բռնագրավել էր նրա տիրույթ Բզնունիք գավառը<sup>28</sup>, որն այնուհետև հանձնվել էր եկեղեցուն: Ուրեմն, իսկապես Խախա-Բզնունիքում ի սկզբանէ, ինչպես հնդեվրոպական ավանդույթն էր պահանջում, գերագույնը զույգ աստվածներից համարվել է Արևի աստվածը, իսկ իշխանության առաջին դեմքը մնում էր նրա հովանավորյալ քուրմ-արքան՝ Բզնունի տոհմի նահապետը:

Չույգ աստվածները պաշտվում էին նաև հարևան և դաշնակից Հասուվայում, բայց գերագույն աստված այնտեղ համարվում էր Ամպրոպի աստվածը: Խաթունիլի I-ի զինվորներն այստեղ կողոպտել էին երկու տաճար, որոնց հետին պատերը ոսկեպատ և արծաթապատ էին, իսկ դռները՝ ոսկուց ու արծաթից: Անշուշտ, այդ տաճարներից ոսկեպատած պատովն ու ոսկե դռնովը ձոնված է եղել Արևի, իսկ արծաթապատած պատովն ու արծաթե դռնովը՝ Ամպրոպի աստծուն: Տաճարների այդ զույգը, հավանաբար, գտնվել են Տարոնի Քարքե լեռան շրջանում, որտեղ նախաքրիստոնեական դարերում գտնվում էին Գիսանե և Դեմետր աստվածային եղբայրների տաճարները: Խախա-Բզնունիքի հարավային հարևան Ասուվայում (հետագա Երեւարք գավառը) մ.թ.ա. XV դ.

<sup>25</sup> Гамкрелидзе Т. В., Иванов В. В. Индоевропейский язык и индоевропейцы. Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры. Тбилиси. Т. I-II. -1984. Т. II. С. 776, էջ 793-794:

<sup>26</sup> Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը Ս. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Երևան, 1981, գիրք Ա, գլ. Ժբ:

<sup>27</sup> Փաւստոսի Բիզանդացույ Պատմութիւն Հայոց, Բնագիրը՝ Ք. Պատկանյանի, Երևան, 1987, գիրք Գ, գլ. Ը:

<sup>28</sup> Նույնը: Այլ մեկնաբանությամբ՝ տե՛ս Խորենացի, Գ, բ:

կեսերին գործում էին առաջնորդներ Պիյաինարան և Կուկուլին<sup>29</sup>, որոնցից առաջինը զինվոր-արքան էր՝ Ամպրոպի աստծու երկրային փոխանորդը, իսկ երկրորդը քուրմ արքան էր՝ Արևի աստծու երկրային փոխանորդը<sup>30</sup>:

Մինչև Հասուվա երկրի դեմ ձեռնարկած արշավանքին անդրադառնալը Խաթու-սիլի I-ը համառոտ նկարագրությունն է արել Հասուվայի և Խալպայի միացյալ բանակների դեմ իր տարած հաղթանակի, ապա թվարկել հաղթանակի շնորհիվ իր ձեռք բերած ավարը: Թվարկումն սկսվում է «Արմարուքի Ամպրոպի աստծու պատկերով» և «Խալպա քաղաքի տեր Ամպրոպի աստծու պատկերով», որոնց հետևում է այլ աստվածություններին<sup>31</sup>: Անկասկած հաղթող խեթ արքան պարտված երկրների կուռքերը թվարկում է ըստ այդ երկրների ունեցած կարևորության: Ասել է թե՛՝ առաջինը լինելու է Հասուվայի գերագույն աստվածը, որ այստեղ հանդես է գալիս ինչ-որ Արմարուքի (Armaruk) առնչությամբ: Մեր կարծիքով, Arm-ar-uk բաղադրիչներով կազմված այս բառի առաջին բաղադրիչը՝ \*արվ-ը, հայերեն գուգահեռն է հին հունարեն ἄρουα «ձիակառք, մարտակառք»<sup>32</sup> բառի: Հայկական լեռնաշխարհում մարտակառքի և նրա նախատիպ երկանիվ ձիասայլի շատ վաղ գործածության մասին խոսում են Հայաստանի ժայռապատկերները:<sup>33</sup> Իսկ մեր \*արվա-ի գուգահեռներից են նաև հայ. *յարվար* բառի *արվ* հիմքը, հուն ἄρουός «կցվածք, հավելված», լատին. arma «հարմարանք, սարք», ավեստ. arəm «հարմար, համապատասխան» և հին սլավ. jarimъ «լուծ» (որից՝ ռուս. ярем, ярмо «լուծ, լծասարք») բառերը<sup>34</sup>: Հայ. *յարվար* բառը կազմված է \*արվ հիմքին *յ* նախդիրի և *-ար* վերջածանցի հավելումով<sup>35</sup>: Բերված բոլոր բառերը կազմվել են հ. -ե. \*ar- «կցորդել, միացնել, արվեստով հորինել» արմատից -m ածականով<sup>36</sup>: Մեր բառի *-ար* վերջածանցի համար հմմտ. *արդ-ար*, *գալ-ար*, *դալ-ար*, *կերպ-ար* և այլն:

Կառամարտիկ գույզի և երկվորյակների կերպարների համադրման բազմաթիվ օրինակներից այժմ անդրադառնանք \*արվ հիմքին առնչվող հեթիաթային գույզի *Արվեն* և *Ջարվեն* անուններին: Արցախյան «Արմենը նաև Ջարմենը» հեթիաթից<sup>37</sup> հայտնի երկվորյակ այս եղբայրների անձնանունների *-են* բաղադրիչները արտացոլում են *-ին* վերջածանցի (հմմտ. *ամուսին*, *գետին*, *դեղին*, *Լուսին*, *խորին*, *ստորին* և այլն) ավելի հին ձևը: Այս երկվորյակների անունների շատ հին լինելու մասին խոսում է նաև *Արվեն* < \*արվ-են անձնանվան երկվորյակ *Ջարվեն* < \*q-արվ-են անվան մեջ նախաձայն *q-*

<sup>29</sup> KUB. XXIII 11, XXII 14.

<sup>30</sup> Պետրոսյան Ս. Գ., Ասուվա երկիրը և գույզ առաջնորդների սոցիալական ինստիտուտը // «Պատմա-բանասիրական հանդես», 2002, թիվ 3, էջ 261-276:

<sup>31</sup> Хрестоматия I. С. 264.

<sup>32</sup> «Древнегреческо-русский словарь». Т. I. Москва. -1958. С. 236.

<sup>33</sup> Կարախանյան Գ., Մաֆյան Պ., Սյունիքի ժայռապատկերները, «Հայաստանի հնագիտական հուշարձանները, 4, Ժայռապատկերներ», Երևան, 1970, նկ. 117-V և 276-II:

<sup>34</sup> Гамкрелидзе Т. В., Иванов В. В. նշվ. աշխ., հ. II, էջ 723, 731, Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), Երևան, 1977, հ. III, էջ 389-390:

<sup>35</sup> ՀԱԲ, հ. III, էջ 387-388:

<sup>36</sup> Նույն տեղում, էջ 388:

<sup>37</sup> «Հայ ժողովրդական հեթիաթներ», հ.V, Երևան, 1966, էջ 142-148: *Արվեն* և *Ջարվեն* հմմտ. *ամպ ու գամպ* (<q-ամպ), *արդ ու զարդ* (<q-արդ):

ի առկայությունը: Սա հայերենի *q*- սաստկական նախածանցն է՝ առկա նաև նույնպես շատ հին և նույնարմատ *Ջարմայր* < *q-արմ-այր* անվան մեջ: *Արմեն* անվան *q*- սաստկականով գործածումը՝ որպես երկրորդ երկվորյակի անուն, թույլ չի տալիս դա նույնացնել «հայ» նշանակող և օտարների գործածած *արմեն* ցեղանվան հետ, որի գործածումը՝ որպես անձնանուն XX դարից է (ի դեպ, հեքիաթասացը՝ շուշեցի Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, ծնվել էր XIX դարում՝ 1876 թվականին)<sup>38</sup>: Հեքիաթում դարվիշի տված խնձորի կեսը թագավորն է կերել, մյուս կեսը՝ թագուհին: Ծնված երկվորյակներից ավագին տրվել է *Արմեն*, իսկ կրտսերին՝ *Ջարմեն* անունը: Ըստ դրա՝ նրանցից ավագը՝ Արմենը, լինելու էր ամպրոպային և արևմտյան երկվորյակը, իսկ կրտսեր *Ջարմենը*՝ արևայինն ու արևելյանը: Վերջինն արևի պաշտամունքին առնչվում է իր հրեղեն ձիով և փրկիչի իր դերով (կենդանացնում է չար կախարդի քար դարձրած մարդկանց և եղբորը՝ Արմենին): Ուրախությամբ որդիների վերադարձը դիմավորած ծեր թագավորը հրաժարվում է գահից, իսկ «ուրան հարստությունն էլ կես ա անըմ, կեսը տամ Արմենին, կեսն էլ՝ Ջարմենին, իշխանությունն էլ ուրանց տամ»<sup>39</sup>:

Խաթունսիլի I-ի հիշատակած *Արմարուք* < arm-ar-uk բառի երկրորդ բաղադրիչը՝ - ar-, հայերեն *այր* (հոգն. *ար-ք*) «տղամարդ» բառի սեպագրային գրանցումն է լինելու. հմմտ. *եղբայր* > *եղբարք*, *հայր* > *հարք*, *մայր* > *մարք*: Այս դեպքում \**արմար*-ը իր կազմությանը հիշեցնում է *այրուձի*, *այրնձի*, *առնուձի*, *առննձի* բառերը, որոնք նշանակում են «արք հեծեալք ի ձի. գունդ ձիաուրաց, հեծելագունդ, հեծելագոր»<sup>40</sup>: Arm-ar-uk բառի վերջին բաղադրիչը, ըստ երևույթին, վերարտադրումն է հայ. -*ոյք* հոգնակիակերտ վերջավորության: Մրանով նշվում էր մարդկանց ինչ-ինչ խմբեր և առկա է հին հայկական տեղանուններում ևս. հմմտ. *Երերոյք*, *Կաղանկատոյք*, *Սոգոյք*, *Երիցկոյք* և այլն<sup>41</sup>: Ըստ այսմ, arm-ar-uk/\**արմարոյք*՝ «կառամարտիկներ»:

Վարձկան կառամարտիկներ խեթական բանակում կային և՛ Հայասա-Ազիից և՛ Հայկական լեռնաշխարհի մանդա, սալա, խեմուա և այլ ցեղերից<sup>42</sup>: Այս տեսանկյունից ուշագրավ են եզիպտական որմնանկարները, որոնք խեթական բանակի զինվորներին պատկերում են տարբեր մարդաբանական տիպերով<sup>43</sup>: Ի. Մ. Դյակոնովը, սալա և խեմուա ցեղերը տեղորոշում է Հայկական լեռնաշխարհում՝ Եփրատի և Վանա լճի միջև և կարծում, թե «Ձիակառքերի միջոցով մարտ վարելու արվեստը Փոքր Ասիա կարող էր մուտք գործել՝ նաև շրջանցելով խուռիներին, օրինակ՝ Մանդա ցեղի կամ Սալա ցեղի նման ինչ-որ վարձկան զորքի միջոցով»<sup>44</sup>: Հիշված ցեղերը Տարոնից էին, որովհետև նրանց ցեղային ավագանուց սերած հայկական նախարարական Մանդակունի և

<sup>38</sup> «Հայ ժողովրդական հեքիաթներ», հ. V, էջ 685-687:

<sup>39</sup> Նույն տեղում, էջ 148:

<sup>40</sup> «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. I, Երևան, 1979, էջ 99:

<sup>41</sup> **Ստեփաննոսի Միսնեաց** եպիսկոպոսի Պատմութիւն տանն Միսական, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861, գլ. 2Գ, էջ 373, 374, 377:

<sup>42</sup> **Պետրոսյան Ս. Գ.** Հայկական լեռնաշխարհի հնագույն կառքերի և կառամարտիկների մասին // «ՎԷՄ. Համահայկական հանդես», 2014, 4, էջ 36: **Նույնի.** Ջարմայր նահապետի և «Քաղդեացուց» արքայացանկի մասին//«ԳՄ», հ. XVII, Գյումրի, 2014, էջ 59-61:

<sup>43</sup> Տե՛ս **Gurney O. R.** Hetyci, państwowe Wydawnictwo Naukowe. Warszawa. -1970, էջ 261, նկ. 56 a և 56 b:

<sup>44</sup> **Дьяконов И. М.** Предыстория армянского народа. Ереван. -1968. С. 43.

Մաղկունի/Սլկունի տոհմերը ժառանգական տիրույթներ ունեին Տարնում<sup>45</sup> և, ինչպես Գր. Ղափանցյանն էր նկատել տալիս, նրանք տարնոցի լինելով են միասին հիշատակվում թե՛ Վաղարշակ թագավորի կողմից նախարարություններ հաստատելու ժամանակ (Խորենացի, Բ, ը), թե՛ Գահնամակում (47-րդ և 48-րդ գահերով), թե՛ Ջորանամակում («Արևմտյան դռան» 14-րդ և 15-րդ տեղերում)<sup>46</sup>:

Մարտակառքի զինվորների զույգի՝ որպես աստվածային զորությամբ օժտված անձանց վերաբերյալ եղած պատկերացումները այնքան ամուր էին նստած մարդկանց ըմբռնումներում, որ հետագայում զույգերով էին պատկերացնում նաև նրանց փոխարինելու եկած հեծելազորայիններին: Ինչպես հնագետ Մ. Պոգրեբովան է նշում, ուրարտական բանակի հեծյալները, որպես կանոն, գործում էին զույգերով: Ջույզի մի զինվորը զինված էր լինում նետաղեղով, իսկ մյուսը՝ նիզակով ու վահանով<sup>47</sup>: Նիզակը համարվում էր կայծակի և Ամպրոպի աստծու խորհրդանիշը, իսկ նետը՝ արևի ճառագայթի և Արևի աստծու:

Մարտակառքի զույգ ձիերը «Մասնա ծոեր» դյուցազնավեպի Քուռկիկ Ջալալիի նման նախ ծովածին ու երկրային են համարվել: Նրանց այդպիսին ըմբռնվելու հետևանք է Վանա լճի հակադրամիասնական ընկալված հյուսիսային ափի սեպագիր *Zisqu-(ni)* երկրանունը (*Zisqu* - < \**Չիուկ*, սեռ. հոլ. *Չիուկոյ*) և հարավային ափի *Երեւարք* (հմմտ. *երիւարք* «լավ ձի») գավառանունը<sup>48</sup>: Դրանք անուններն էին Բզնունիքի հյուսիսային և հարավային հարևանների: Ծովածին ձիերի զույգը նաև երկնասլաց համարվելու փաստն է արձանագրել Հայոց Տիրան թագավորի ձիերի մասին գրույցը: Ըստ դրա՝ նրան «*ձիոց երկուց* լեալ. Թեթեւ առաւել, քան զՊիզասոս, երագութեամբ անբաւ, զորս ոչ երկրակոխ, այլ օդագնացս համարէին. Յոր խնդրեալ հեծանել Դատաքէի ուրումն *իշխանի Բզնունեաց*՝ պարծեր ընչեղագոյն գոլ քան զարքայն»<sup>49</sup>: Միջնադարյան մեր ձեռագրերը Երկվորյակներ համաստեղությունը պատկերում էին մեկ մարմին և զույգ գլուխ ունեցող պատանու տեսքով, երբ շատ ավելի վաղ մեկ մարմին և ծայրերին հակադիր կողմեր նայող գլուխներով ձի է պատկերում ինչպես Գավառ քաղաքի Բերդի գլուխ հնավայրից պեղված կավե կնիքը, այնպես էլ Արևմտյան Հայաստանի պեղումներից հայտնաբերված և Լոնդոնի Բրիտանական թանգարանում պահվող արձանիկը<sup>50</sup>:

<sup>45</sup> Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում. Քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի, Երևան, 1987, էջ 344-346:

<sup>46</sup> Նույն տեղում, էջ 281-282, 292, 294: Ղափանցյան Գ., Հայոց լեզվի պատմություն (հին շրջան), Երևան, 1961, էջ 45-46; Капанцян Гр. Историко-лингвистические работы к начальной истории армян. Древняя Малая Азия. Ереван. -1956. С. 136-137.

<sup>47</sup> Погребова М. Н. Иран и Закавказье в Раннем железном веке. Москва. -1977. С.138.

<sup>48</sup> Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհագրոյց»-ի, Երևան, 1963, էջ 51:

<sup>49</sup> Խորենացի, Բ, կբ:

<sup>50</sup> Միքայելյան Գ., Ուելիքուլի երկրի կենտրոնական կիկլոպյան ամրոցը // «Պատմա-բանասիրական հանդես», 1964, թիվ 1, էջ 119-132, նկ. 4; Herzfeld E., Iran in the Ancient East, «Archeological Studies presented in the Lowell Lectures at Boston», London-New York, 1941, p. 175, fig. 295 d.

Ամենայն հավանականությամբ, Հասուվան և Խախան եղել է երկմիասնական կառուցվածքով այն կազմավորումը, որի հիմքի վրա նույն այդ տարածքում հետագայում ձևավորվել էր Հայասան, որի և Ազիի միավորումով<sup>51</sup> ստեղծվել էր երկմիասնական կառուցվածք ունեցած Հայասա-Ազի ցեղամիությունը<sup>52</sup>: Կարելի է ենթադրել, որ հետագա Հայասայի միջուկը կազմած Հասուվա-Խախա միավորումը կարող էր ունենալ երկու կառավարիչ-ցեղապետեր՝ Հասուվան՝ Տարոնում Ամպրոպի աստծու երկրային փոխանորդ համարված զինվոր-արքան, իսկ Խախան՝ Բզնունիքում՝ Արևի աստծու երկրային փոխանորդ համարված քուրմ-արքան:

Հասուվա-Տարոնի և Խախա-Բզնունիքի միջև ամուր կապի մասին են, կարծես, խոսում ինչպես երկու երկրների՝ խեթական միաժամանակյա հարձակման թիրախ դառնալու, այնպես էլ նրանց երկուսի ցեղապետ-արքաների գերեվարման փաստը:

**Եզրահանգում. ա.** Եթե իր Տարեգրության ավարտական մասում Խաթուսիլի I-ը որպես Խախա երկրի երբեմնի հակառակորդ հիշատակում է Սարգոն (Šarru-ken) Աքադացուն՝ Միջագետքը միավորած և Հայկական Տավրոս արշաված առաջին բռնակալին, ապա նրա մեծ բանակին դիմադրած Խախա երկիրը միայն Բզնունիքը լինել չէր կարող: Ամենայն հավանականությամբ, դա եղել է Խախա-Բզնունիքի գլխավորած Հասուվա-Տարոնի և Վանա լճի շրջակա «Արևի աստվածության երկրների» միությունը՝ Խախա կենտրոնով: Այս միությունն ստեղծված էր լինելու Սարգոն Աքադացու ժամանակաշրջանից (մ.թ.ա. XXIV դ. երկրորդ կես) առաջ:

**բ.** Այդ միության գաղափարախոսական հիմքը եղել է Արևի և Ամպրոպի երկվորյակ աստվածների՝ իշխող զինվորական և քրմական դասերի հովանավորների պաշտամունքը:

**գ.** Քննության առարկա նյութին վերաբերող հասուկ և հասարակ անունների հնդեվրոպական-հայկական ստուգաբանությունները մեկ անգամ ևս գալիս են հաստատելու Վանա լճին հարող տարածքների և հնագույն Տարոնի սեպագրային ժամանակաշրջանի բնակչության հնդեվրոպական-հայկական բնույթը:

**դ.** Նա՛ է եղել աշխարհակալ խեթական և ասորեստանցի թագավորների բանակների ավերիչ արշավանքներին դիմադրողն ու դիմադարձողը: Իսկ դրանք ի վերջո հաջողությամբ են ավարտվել շնորհիվ կառավարողների գլխավորած զինվորական և քրմական դասերի վերնախավերի կայուն դաշինքի:

<sup>51</sup> Forger E. Hajaša-Azzi, «Caucasia». IX. 1931. S. 4.

<sup>52</sup> Петросян С. Г. Племенной союз Хайаса-Аззи в системе двойных противопоставлений // «Լրիվեր հասարակական գիտությունների», 1987, թիվ 3, էջ 77-87:

## ПРИВИЛЕГИРОВАННЫЕ СОСЛОВИЯ И КУЛЬТ ДРЕВНЕЙШЕГО ТАРОНА И БЗНУНИКА

*Петросян С. Г.*

**Ключевые слова:** *Хасува, Хаха, хеттский царь, колесничий, близнецы, бог Солнца, бог Грома, союз.*

Среди мелких стран Армянского нагорья хеттские источники упоминают также страну Хасува. Она охватывала ту часть южной Армении, где формировался армянский эпос «Сасна црер». Известно, что хеттский царь Хаттусили I (1650-1620 гг. до н. э.) завоевав Хасуву (позд. Тарон) и Хаху (позд. Бзнуник) пленил жителей в числе которых находились и вожди этих стран. Эти двое напоминают вождей Асувы (позд. Ереварк)-Пиайнару и Кукули, которых позже пленил другой хеттский царь – Тудхалиа II (1460-1440 гг. до н. э.). Подобно им напомним также Санасара и Багдасара из эпоса «Сасна црер», а в языческом Тароне божеств Гисане и Деметра. Известно, что в хеттских источниках XIII в. до н. э. люди из племен Армянского нагорья упомянуты как наемные воины ранее освобожденные от податей. Потомками этих племен (в частности Манда и Сала) являются и представители древнеармянских нахарарских (княжеских) родов Мандакунни и Салкунни, которые вместе упомянуты как в «Истории Армении» Мовсеса Хоренаци (II, 8), так и в древнеармянском «Гахнамаке» (47-ое и 48-ое места) и «Зоранамаке» (14-ое и 15-ое места). По соседству были также их владения в Тароне. Значит, и предки этих княжеских родов – племена Манда и Сала жили по соседству в этих же местах, т. е. в клинописной Хасуве.

Мы предполагаем, что царя страны Хасува считали не только человеком-воином, но также персонификацией бога Грома (ср. Санасар, Гисане), царя страны Хаха считали не только человеком – воином, но также персонификацией бога Солнца (ср. Багдасар, Деметр). Значит, союз стран Хасува и Хаха является важнейшим очагом формирования не только культа индоевропейских божественных близнецов, но и индоевропейского социального института двух вождей.

## THE PRIVILEGID ESTATES AND CULT OF THE ANCIENT TARON AND BZNUNIQ

*Petrosyan S. G.*

**Key words:** *Hasuva, Khakha, Hittite king, charioteers, twins, God of Sun, God of Thunder, union.*

The Hittite sources mention the country Hasuva was among three smaller countries situated on the Armenian Highland. The Hasuva occupied the part of Southern Armenia, where Armenian epics "Sasna Tsrer" was shaped. It is known that Hittite king Hattusili I (1650-1620 B.C.) captured of the countries Hasuva (next Taron) and Khakha (next Bznuniq), were taken as prisoners among whom there were 2 leaders of the countries. These 2 persons remind us of Piainara and Kukuli from country Asuva (next Erevarq): later other Hittite king Tudkhaliya II (1460-1441 B.C.) taken as prisoner 2 leader of the this country. Like this remembers Sanasar and Baghdasar from "Sasna Tsrer", also gods Gisane and Demetr from Taron. In the Hittite inscriptions of the XIII century B.C., the people from Armenian Highland were mentioned as the freelancers earlier exempt from duties. The descendants of these tribes (included the Manda and Sala) are the representatives of ancient Armenian princely family Mandakuni and Salkuni. Together they are mentioned in the

“History of Armenia” by Movses Khorenatsi (II, 8), in ancient Armenian “Gahnamak” (47th and 48th) and “Zoranamak” (14th and 15th). So their possessions were in the neighbourhood in the Taron, hence the gencesters of these tribes – Manda and Sala, lived in the neighbourhood in the cuneiform Hasuva.

We assume that the king of Hasuva is reputed to be not only a warrior man, but an personification of the Thunder – God (compare Sanasar, Gisane) and the king of Khakha is reputed to be not only a warrior man, but an personification of the Sun-God (compare Baghdasar, Demetr). Mean the Union of ancient Hasuva and Khakha was one of tne most important lands of that time where Indo-European cult of godlike Twins and Indo-European social Institute of 2 leaders were shaped.

### Գ ր ա կ ա ն ո լ թ յ ո ն

1. Ա-Դո, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Եր., 1912:
2. Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում. Քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի, Եր., 1987:
3. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, Եր., 1977, հ. III:
4. «Քաղցիրը հայոց», Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Հ. Ամալյանի, Եր., 1975:
5. Գրիգորյան Ռ., Գեղարքունիք, «Հայ ազգագրություն և բանահյուսություն. նյութեր և ուսումնասիրություններ», 14, Եր., 1983:
6. Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963:
7. Խաչատրյան Վ., Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, Եր., 1998:
8. Կարախանյան Գ., Սաֆյան Պ., Սյունիքի ժայռապատկերները, «Հայաստանի հնագիտական հուշարձանները, 4, Ժայռապատկերներ», Եր., 1970:
9. Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ. և ուրիշներ, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. II, Եր., 1988:
10. «Հայ ժողովրդական հեքիաթներ», հ. X, Եր., 1967, հ. XIII, Եր., 1985:
11. «Հայ ժողովրդի պատմության քրեատոմատիա», հատոր 1, Հնագույն ժամանակներից մինչև IX դարի կեսերը, Երևանի համալսարանի հրատարակչություն, Եր., 1981:
12. Հմայակյան Ս., Վանի թագավորության պետական կրոնը, Եր., 1990:
13. Ղազարյան Ռ., Մուրսիլի II-ի «Տասնամյա» տարեգրությունը, «Խեթական աղբյուրները Հայկական լեռնաշխարհի մասին», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Եր., 2013:
14. Ղափանցյան Գ., Հայոց լեզվի պատմություն (հին շրջան), Եր., 1961.
15. Միքայելյան Գ., Ուելիքուխի երկրի կենտրոնական կիկլոպյան ամրոցը//«Պատմա-բանասիրական հանդես», 1964, թիվ 1:
16. Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը Մ. Արեղյանի և Ս. Հարությունյանի, Եր., 1981:
17. «Նոր քաղցիրը հայկազեան լեզուի», հ. I, Եր., 1979:
18. Պետրոսյան Ս., Ասուվա երկիրը և զույգ առաջնորդների սոցիալական ինստիտուտը// «Պատմա-բանասիրական հանդես», 2002, թիվ 3:
19. Պետրոսյան Ս., Զարմայր նահապետի և «Քաղդեացուց» արքայացանկի մասին//«ՇՀՀԿ գիտ. աշխ.», XVII, Գյումրի, 2014:

20. Պետրոսյան Ս., Հայկական լեռնաշխարհի հնագույն կառքերի և կառամարտիկների մասին// «ՎԷԲ. համահայկական հանդես», 2014, թիվ, 4:
21. Պետրոսյան Ս. Գ., Մուրսիլի I-ի արևելյան արշավանքի երթուղին//ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. IV, Գյումրի, 2001:
22. Ստեփաննոսի Մինեաց եպիսկոպոսի Պատմություն տանն Միսական, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861:
23. Փաստոսի Բիզանդացոյ Պատմություն Հայոց, Բնագիրը Ք. Պատկանյանի, Եր., 1987:
24. Քոսյան Ա. Վ., Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խեթական սեպագիր աղբյուրների), Եր., 2004:
25. Авдиев В. И. История древнего Востока. Государственное изд-во политической литературы. Ленинград. -1953.
26. Андреев Н. Д. Раннеиндоевропейский праязык. Москва. -1986.
27. Гамкрелидзе Т. В., Иванов В. В. Индоевропейский язык и индоевропейцы. Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры. Тбилиси. Т. I-II. -1984. Т. II.
28. Герни О. Р. Хетты. Изд-во «Наука». Москва. -1987.
29. «Древнегреческо-русский словарь». Т. I. Москва. -1958.
30. Довгяло Г. И. О характере наследования царской власти у хеттов в эпоху Древнего царства //«Вестник древней истории». Москва. -1964. № 1.
31. Дьяконов И. М. Предыстория армянского народа. Ереван. -1968.
32. «История древнего Востока». Под ред. В. И. Кузищина. «Высшая школа». Москва. -1979.
33. Капанцян Гр. Историко-лингвистические работы к начальной истории армян. Древняя Малая Азия. Ереван. -1956.
34. Петросян С. Племенной союз Хайаса-Аззи в системе двоичных противопоставлений//«Լրագրեր հասարակական գիտությունների», 1987, թիվ 3:
35. Погребова М. Н. Иран и Закавказье в Раннем железном веке. Москва. -1977.
36. Хачатрян В. Восточные провинции Хеттской империи. Ереван. -1971.
37. Ceram C. W. Le secret des Hittites. Découverte d'un ancien empire, Librairie Plon, Paris, 1955 .
38. Forrer E. Hajaša-Azzi, «Caucasia», IX, 1931 .
39. Gurney O. R. Hetyci, państwowe Wydawnictwo Naukowe, Warszawa, 1970 .
40. Herzfeld E. Iran in the Ancient East, «Archeological Studies presented in the Lowell Lectures at Boston», London-New York, 1941 .
41. «Keilschrifttexte aus Boghazköi (Wissenschaftliche Veröffentlichung der Deutschen Orient-Gesellschaft), Leipzig-Berlin, 1916-1926, X, 2 und X. Ռուսերէն թարգմանությունը և ծանոթագրությունները Վ. Վ. Իվանովի (տե՛ս «Хрестоматия по истории древнего Востока». Часть первая. «Высшая школа». -1980.)
42. Piotrovsky B.B. Ourartou, «Archaeologia Mundi» Les Éditions Nagel, Genève-Paris-Munich, 1970 .

Ընդունվել է՝ 29. 05. 2021

Գրախոսվել է՝ 11. 06. 2021

Հանձնվել է տպ.՝ 21. 06. 2021

**Տեղեկություններ հեղինակի մասին**

**Սարգիս ՊԵՏՐՈՍՅԱՆ՝** պատմական գիտությունների դոկտոր,  
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի  
առաջատար գիտաշխատող, էլ. հասցե՝ vahe1996@mail.ru

ՀՏԴ՝ 93.94

DOI: 10.52971/18294316-2021.1-17

ԲԵՐԴԱԳՐԱԿԻ ԳԱՎԱՌԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԸ  
XVI-XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

*Արկադի Ակոպով*

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

**Բանալի բառեր՝** *Տայք, հայ կաթոլիկներ, հայ մահմեդականներ, կեսկեսներ, հարկացուցակներ, Օսմանյան կայսրություն, Ճորոխ:*

Ուսումնասիրությունը նվիրված է Օսմանյան կայսրության Ախալ-ցըխայի նահանգի կազմում ընդգրկված Մեծ Հայքի Տայք աշխարհի տարածքում ձևավորված Բերդագրակի գավառի ազգային կազմին: XVI-XVIII դդ. գավառի տարածքում հաշվվում էր շուրջ 6 տասնյակ բնակավայր: Բնակեցված լինելով ճնշող մեծամասնությամբ հայերով՝ գավառը ենթարկվում է կրոնական սաստիկ հալածանքների, ինչի հետևանքով հայության մի մասն ընդունում է կաթոլիկ դավանանքը, իսկ մյուս մասը՝ նախընտրում մահմեդականությունը:

**Նախաբան.** XVI դարի սկզբին կատաղի մրցակցություն սկսվեց Օսմանյան կայսրության և Սեֆյան Պարսկաստանի միջև Հայաստանին տիրելու համար: Փոփոխակի հաջողություններով ընթացող հակամարտությունը սրվեց 1549թ., երբ օսմանյան բանակը մի քանի շաբաթվա ընթացքում գրավում է Հայաստանի հյուսիսարևմտյան շրջանների շուրջ 20 բերդեր<sup>1</sup>: Ծանր մարտերի արդյունքում գրավվում են պատմական Տայքի անմատչելի կառույցներից Թորթումի և Բերդագրակի բերդերը<sup>2</sup>: 1555թ. Ամասիայի հաշտությամբ ընդմիջված պատերազմը վերսկսվում է 1578թ.: 1590թ. պարսից շահ Աբասը կնքում է պարսիկների համար ծանր մի պայմանագիր, որով ձանաչում էր

<sup>1</sup> Տե՛ս **Տաշեան Յ.**, Տայք, դրացիք եւ Խոտորջուր, հ. Ա, Վիեննա, 1973, էջ 159:

<sup>2</sup> Տե՛ս Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, կազմեց **Ա. Խ. Սաֆրաստյանը**, հ. Ա, Երևան, 1961, էջ 31:

թուրքերի իրավունքները Հայաստանի, Վրաստանի և Ատրպատականի մի մասի վրա՝ թավրիզ կենտրոնով:

Արևմտյան Հայաստանում իրենց տիրապետությունը հաստատելու հետ մեկտեղ՝ թուրքերը ձեռնամուխ են լինում տարածաշրջանի յուրացմանն ու օսմանյան վարչամիավորների ստեղծմանը: Այդպիսի վարչամիավորներից մեկն էր նորաստեղծ Ախալցխայի (Չրլըրրի) նահանգի (էյալեթ) կազմի մեջ ընդգրկված Մեծ Հայքի Տայք նահանգի արևմտյան հատվածում գտնվող Բերդագրակի գավառը: Այն տեղագրվում է պատմական Տայքի Արսեացփոր գավառի հարավային և կենտրոնական շրջաններում: Բերդագրակի գավառն ընկած էր Ճորոխ գետի երկու ափերին՝ ընդգրկելով Ճորոխի բազմաթիվ վտակների ավազանները: Գավառը, որ գտնվում էր «առ Պարխար լեռամբ», համարվում էր «...յետին սահմանք Հայոց ընդ արևմտեանն հիւսիս և սահմանակիցք Պոնտոսի...»<sup>3</sup>: Բերդագրակի սահմաններն արևմուտքում հասնում էին մինչև Մալերի հովիտ, հարավից և հարավ-արևելքից՝ Թորթում, հյուսիսից՝ Պարխար և հյուսիս-արևմուտքից՝ Համշեն, որից գավառը բաժանվում էր Պոնտական լեռնաշղթայով և նրա Քաջքար լեռնագագաթով:

Բերդագրակի գավառի սահմանները պարբերաբար փոփոխությունների են ենթարկվել՝ երբեմն գավառի տարածքի մեջ ընդգրկելով Քաջքարի լանջին գտնվող Խևակի ձորը՝ համանուն գյուղով, երբեմն էլ՝ դեպի հյուսիս ընկած Պարխարի գավառը: Մասնավորապես, Ղ. Ինճիճյանի համաձայն, Խևակը պատկանում էր Համշենի գավառակին<sup>4</sup>, չնայած այն հանգամանքին, որ Համշենից բաժանված էր տարվա մեծ մասն անանցանելի լեռնաշղթայով: Իր հերթին գերմանացի ճանապարհորդ Կ. Կոխը Խևակը դիտարկում էր Բերդագրակի գավառի կազմում<sup>5</sup>, թեպետ աշխարհագրորեն այն վերաբերում էր Պարխարի գավառին:

#### Բերդագրակի գավառի ազգային կազմը XVI դարից մինչև XVII դարի առաջին կեսը

Որպես վարչական միավոր՝ Բերդագրակի գավառը ձևավորվել է XVIդ. վերջին: Այն Շավշատի, Նսֆի Լիվանեի և Լիվանեի հետ մեկտեղ կառավարվում էր սեփակաւության կարգով: XVI-XVII դարերում գավառի կենտրոնը Ճորոխի ձախ ափին գտնվող Բերդագրակ բնակավայրն էր<sup>6</sup>: Վաղ միջնադարում այն պատկանում էր Մամիկոնյաններին, այնուհետև անցել էր Տայքի Բագրատունիներին և ի սկզբանե կոչվել ուղղակի Ազարակ: XVIIդ. հեղինակ Հ. Կարնեցին ևս այն հիշատակում է Ազրակ ձևով. «Եւ ունի

<sup>3</sup> Ալիշան Ղ., Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1853, էջ 38:

<sup>4</sup> Ինճիճյան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մաս Ա, հ. Ա, Ասիա, Վենետիկ, 1806, էջ 397:

<sup>5</sup> Koch K. Wanderungen im Oriente während der Jahre 1843 und 1844. II. Reise im Pontischen Gebirge und Türkisch-Armenien, Weimar, Druck und Verlag des Landes, 1846, s. 98-99.

<sup>6</sup> XVIII դ. երկրորդ կեսից գավառի վարչական կենտրոնն է դառնում Ճորոխի աջ ափին գտնվող հայաշատ Կիսկիմը: Մակայն դա արտացոլվում էր միայն պաշտոնական գրագրության մեջ: Իրականում, թուրքերը վարչական մարմինները տեղափոխել էին Կիսկիմի մերձակայքում գտնվող Արսիս (Էրսիս) գյուղը մի պարզ պատճառով, որ այն ավելի մեծ թվով մահմեդական բնակչություն ուներ:

ձորս այս բերդս անառիկս Թորթում, որ պարոնանիստ է և իշխող է մինչև ի բերդն Ագրակ առ ափն Ճորոխ գետոյն»<sup>7</sup>: Փաստորեն, բնակավայրի Բերդագրակ անվանումը ուղղակիորեն կապված էր այնտեղ առկա բերդի անվան հետ, ինչպես դա երևում է Հ. Կարնեցու մոտ:

Աղբյուրներում Բերդագրակի գավառը երբեմն հիշատակվում էր նաև «Գյուրջիստան» (Վրաստան) ձևով: Թուրքերի համար քաղաքականապես այստեղ էր սկսվում «Գյուրջիստանը», քանի որ Բերդագրակի գավառը մաս էր կազմում Մամցխեի իշխանության: Մյուս կողմից, Կարնո դաշտի ծայրից՝ Հինձքի մոտից սկսվող կիրճը, որը Թորթում տանող ամենահարմար ուղին էր, այդ նույն շրջանում (ցայժմ) հայտնի էր «Գյուրջի բողազ» (Վրացական կիրճ) անունով<sup>8</sup>: Թուրքերի աչքում Մամցխեի աթաբեկությունը վրացական էր նաև այն պատճառով, որ նրա տարածքում տիրապետող էր վրացական եկեղեցին: X դարից սկսած՝ հայ ազգաբնակչության մի ստվար հատված թեպետ պահպանել էր մայրենի լեզուն, սակայն ընդունել էր քաղկեդոնականություն, որի հետևանքով անգամ առաքելական հայերը նրանց անվանում էին «վրացիներ»:

Ինչպիսի՞ն էր ժողովրդագրական իրավիճակը Բերդագրակի գավառում օսմանյան տիրապետության հաստատման շրջանում, այսինքն՝ XVI-XVII դարերում: Տարբեր աղբյուրների համադրությունից հստակ երևում է, որ չնայած նախորդ ժամանակաշրջանում երկրամասում տեղի ունեցած ոչ հայանպաստ էթնոժողովրդագրական գործընթացներին՝ Բերդագրակում, ինչպես ամբողջ Տայքում գերակշիռ մեծամասնություն էր կազմում տեղաբնիկ հայ տարրը (առաքելական և ուղղափառ): Մասնավորապես, Կիսկիմ գյուղի XVI դարասկզբի հայության մասին ուշագրավ վկայություններ կան Հ. Տաշյանի մեջբերած ձեռագրերից մեկի հիշատակարանում, որտեղ հանդիպում ենք ինչպես արական, այնպես էլ իգական սեռի ներկայացուցիչների անունների. «Ես Գուլպակիս որդի Աստընվորի թոռն մադրար Յովանեսին՝ որ գնեցի գտուրբ աւետարանս ի Կսկիմ ի Վրաց ազգէ՝ որ գերեալ էին եւ տարեալ, ի թվականիս ԶԿԱ (1512). յիշխանութեանն Սպերու Պրն. Կիտեվանին, որ տիրեաց, ի Վրաց ազգէ: Արդ եւ Գուլպակիս որ գնեցի գտուրբ աւետարանս ի հալալ արդեաց իմոց, յիշատակ ծնաւոյաց իմոց Աստընվորին եւ մարն իմոյ Գոհարին եւ պապին իմոյ Յովանեսին եւ մամին իմոյ Մավլուին եւ ամենայն արեան մերձաւորաց մերոց, ի վայելումն եւ ի պահպանութիւն ինձ եւ եղբարցն իմոց Տէր Սարգսին եւ Տիրատրին, Ամիրին եւ Չրախին. եւ որդոցն իմոց Փիրումին եւ Դիպալիկին. եւ եղբարն որդոցն իմոց Աբելին եւ Դովլաթիարին եւ Սահակին: Արդ աղաչեմ զձեզ ընթերցողք սուրբ աւետարանիս յիշե/ս/ջիք ի մաքրափայլ աղաւթս ձեր զԳուլպակիս եւ զկողակիցն իմ զՍուրաթն, զՏէր Սարգիսն եւ զկողակիցն իւր զՏանսուխն, զՏիրատուրն եւ զկողակիցն իւր զհանգուցեալ Գոհարն, զԱմիրն եւ զկողակիցն իւր Սուլթան փաշան, զեղբայրն իմ զՉրախն, եւ զքորքն մեր զԱւաքտիկինն, զՄավլուն, զՄիտամն եւ զԼալխաթունն. եւ դուք յիշեալ լիջիք...»<sup>9</sup>: Հիշատակարանի շարունակության մեջ տարբերվող ձեռագրով հիշատակվում են բազմանդամ գերդաստանի հաջորդ սերնդի

<sup>7</sup> Յակովբ Կարնեցի, Տեղագիր Վերին Հայոց, Վաղարշապատ, 1903, էջ 17:

<sup>8</sup> Տաշեան Յ., Տայք, դրացիք եւ Խոտորջուր, հ. Բ, Վիեննա, 1980, էջ 263-265:

<sup>9</sup> Տե՛ս Տաշեան Յ., նույն տեղում, էջ 224-225:



**Բերդագրակի գավառի բնակչության ազգային կազմը XVI-XVIII դարերում**

				նի, Խաչիկ Սարգսի, Գաբրիել Բալիքի, Վասիք Մուրադի, Օվկեթ Սարգսի, Օսիպ Շեխբարի, նրա եղբայրը՝ Ջաքար, Օրբան Մարգարի, նրա եղբայրը՝ Սաբա, Ավանիք Շեյխի, Մուլթան Ավանիքի, Ավագ Սաբայի, Ջաքար Մուկանուրի	
5	Արսիս	38000	73	Թաբել Միքայելի, Ջաբիլ Մանուկի, Միմոն Մինասի, Լուլուր Հակոբի, Նիկողոս Հակոբի, Ավեր Գաբրիելի, Թավավիս Ստեփանի, Փիրզենդ Հակոբի, Մարկոս Ջաքարի, Մամավուն Գիրգորի, Հալջի Ավանիսի, Օսիպ Մինասի, Մուրադ Միքայելի	298-299
6	Մուխլուրեք՝ /Լազուզետ/	6000	16	-	300
7	Նիխաղ	16000	31	Մանտուր Ջաքարի, Սարգիս Հակոբի, Աշոտ Անդուրվուլի, Ազիզ Մանուկի, Աթաբեզ Մանուկի	300-301
8	Վերին Ջորկանց	15000	40	Սարգիս Գուզելի, Օսկիմատ Խաչատուրի, Կիրակոս Շահումվերդի, նրա որդին՝ Օմուրջատ, Ջաղուր Մարտիրոսի, Ամիրբար Առաքելի, Գիրքոր Բաբի, նրա եղբայրը՝ Ավադբեզ, Ջանազիզ Առաքելի, Մուրադ Արսլանի, Փիրզենդ Գուլասի, նրա որդին՝ Ավանիս, Առաքել Դավթի, Շերբիլ Օնիկի, Վարդագ Աբդաղիբի, Ավանիք Փիրումի	301
9	Որջնհաղ	18000	41	Գիրգոր Մախորոբելի, Ջաքար Գիորգի, Գրիգոր, Արնո Հակոբի, նրա եղբայրը՝ Առաքել, Միքայել, նրա եղբայրը՝ Արքոս, նրա եղբայրը՝ Ջաբիթան, Օհասն Զադիկի, Ջաքար, Կիրակոս Միմոնի, Միրբել Հակոբի	302
10	Հավ/ք/	6000	5	-	303
11	Քիրքիջուր	5000	15	Ազիզ Մանուկի, նրա եղբայրը՝ Կիրակոս, Փիրանբուլ Ավագի, Բալիք Փիրումի, Ջաքար Քասրմի, Միքայել Օվկեթի	304
12	Վարին Ջորկանց	5000	20	Դավիթ Վիրուլեթի, Ղազար Խաչատուրի, նրա եղբայրը՝ Շիրանոս, Ստեփանոս Կիրակոսի, նրա եղբայրը՝ Շիրանոս, Գրիգոր Միմոնի	304-305
13	Խաբքանիք /Ղազարենց/	6000	15	Թաղևոս Օհանի, նրա որդին՝ Մանուկ, Մուսքիկ Դաստանի	305
14	Կուրրաշեն	8000	31	Հակոբ Թորոսի, նրա եղբայրը՝ Կիրակոս,	305-

**Արկարի Ակոսով**

				Օսկունդեք Հակոբի, Ավանիս Պողոսի, Վարդանես Միրաբիլի, Գիրգոր Ավիդյեզի, նրա եղբայրը՝ Միրբադուլ, Շահսուվար Դավթի, նրա եղբայրները՝ Նուրբազուլ և Վարդագիզ, Շահագիզ Անդրեասի, նրա եղբայրը՝ Սարգիս, Անդրեաս Դավթի, Ամիրմալիք Քեշիշի, նրա եղբայրը՝ Վարիթ, Շահբեգ Կիրակոսի, Ամիրվանիդ Հակոբի, Փիրում Ասատուրի, Շահսուվար Խաչատուրի, նրա եղբայրը՝ Աբիլ, Մելիք Ասատուրի, Բահադուր Խաչիկի, Իսմիխան Օհանի, նրա եղբայրը՝ Մարգար, Վարդանես սալարի	306
15	Կարմրիկ	5000	14	Բահադուր Խաչատուրի, նրա եղբայրները՝ Ավանիս և Թադեոս, Ազատ, Տիրատուր Միրլեթ, նրա եղբայրը՝ Վարսեր, Մարտիրոս Բազագիզի, Թորոս Քեսիկի, Մուրադ Մարտիրոսի, Մխիթար Խաչատուրի	306-307
<b>Ընդամենը</b>		<b>191000</b>	<b>389</b>		

Հարկացուցակում հիշատակվում են նաև մի շարք բնակավայրեր, որոնց բնակչության թվի կամ ընտանիքների ավագների վերաբերյալ տեղեկություններ չկան, բայց առկա են այդ բնակավայրերից գանձվող հարկերի տեսակների և չափերի վերաբերյալ տվյալները:

**Աղյուսակ 2**

N	Բնակավայրի անվանումը	Հարկի չափը (ակչե)	N	Բնակավայրի անվանումը	Հարկի չափը (ակչե)
1	Քարեկամուրջ	8000	6	Իսաձոր	7000
2	Վահնա	8000	7	Մունենց	7000
3	Մոխուրկուտ	5000	8	Հունգամբ	18002
4	Խանդաձոր	12000	9	Խտորջուր	20000
5	Գորգանց	10000	10	<b>Ընդամենը</b>	<b>95002</b>

Կարևոր է նշել, որ վերը թվարկված բնակավայրերում հանդիպում ենք նաև որոշակի քանակությամբ վրացական անձանունների: Հաճախադեպ է, երբ հայրն ունեցել է վրացու, որդին՝ հայի, կամ եղբայրներից մեկը՝ հայի, մյուսը՝ վրացու անուն, որոնք վկայում են խառը բնակչություն ունեցող գյուղերի գոյության, նրանցում երկու ազգությունների միջև ոչ միայն հանդուրժողական, այլ նաև բարյացակամ վերաբերմունքի առկայության մասին: Այսպիսի իրավիճակը ձևավորվել էր նախորդ՝ Մամգիսեի աթաբեկության շրջանում և կարող էր լինել նաև հայության շրջանում քաղկեդոնակա-



կրող մի քանի գույգ գյուղերի՝ Վերին, Ներքին, Մեծ, Միջին և Փոքր, ապա այժմ նրանց մի մասն առհասարակ չի հիշատակվում, մյուսներն էլ նշվում են իբրև մեկական գյուղեր: Այս գործընթացը բնորոշ էր Տայքի բոլոր գավառներին:

1639 թ. Կասրե-Շիրինի հաշտության պայմանագրի կնքումից հետո թուրքական կառավարությունը ձեռնամուխ եղավ նվաճված ժողովուրդների մահմեդականացման գործընթացին: Հակոբ Կարնեցին գրում է. «Ի բազմանալն Հագարացոցն ի ժամանակս մեր ի թուականիս ՌՂԲ. (1643) ամին եղև հրաման մեծ կայսերեն Ստամպոլայ ի վերայ մոլլայի միոջ, որ էր յոյժ անուանի և առաջակայ էր քաղաքիս Արզրումայ և փաշաներաց՝ Ջաֆար անուն ժանտաբարոյ և քրիստոնէից թասիպ, յաշխարհագիր առնել զբոլոր շրջակայ երկիրս Արզրումայ: Եվ ելեալ արար դատար և կապեաց ծանր խարաճ, և ելին մեծ և փոքր ի թագաւորական դատարն. և երկրիս Վրացիքն ամենայն յերկուցեալք ի յահէ խարաճին յօրէնս Մահմետի. ապա ազգս Հայոց մնացին ի վերայ հաւատոցն ուղորմութեամբն Քրիստոսի և աղօթիք սուրբ Լուսաւորչին»<sup>18</sup>: Փաստորեն, Բերդագրակի գավառի մահմեդականացումը, Տայքի մյուս գավառների նման, սկսվեց 1643թ. և շարունակվեց XVIII դարի ողջ ընթացքում: Այսուհանդերձ, մահմեդականացած հայերի մեծամասնությունը շարունակում էր պահպանել մի շարք քրիստոնէական սովորույթներ, ինչպես նաև մայրենի լեզուն: Այդպիսի հայերին անվանում էին «կեսկեսներ»՝ կես հայ-քրիստոնյա և կես թուրք-մահմեդական:

Բերդագրակի գավառի կեսկեսների կամ մահմեդականացած հայերի մասին Հ. Տաշյանը գրում է. «... այս տեղոյ մահմետականք բաւականին տարբեր են իրենց զուտ թուրք կրօնակիցներէն ուրիշ տեղերու: Շատերը, եթէ ոչ ամէնքը, գիտեն հայերէն, զոնէ կը հասկնան: Խիստ մահմետական սովորութեանց շարք մը չունին, եւ հանդէպ քրիստոնէից լիովին բարեկամական աղերս ունին ընդհանրապէս, մասնակից ուրախութեանց եւ նոյն իսկ երկսեռ պարուց՝ իրենց իգական սեռն իսկ: Ասոնք իրենց կողմացեալ դրիւք անշուշտ շատ զօրեղ ազդեցութեան ներքեւ էին քրիստոնէայ ձորի մը մէջ, եւ քրիստոնէից հետ անձուկ աղերս եւ կախում պէտք է որ ունենային՝ նոյն իսկ տնտեսական տեսակէտով»<sup>19</sup>:

Երկար ժամանակ Բերդագրակի գավառի կեսկեսները չէին խզում հոգևոր կապը քրիստոնէությունից և գաղտնի գալիս էին գավառի քրիստոնյա հայկական գյուղեր՝ ծեսեր կատարելու: Ինչպես ասում էին Խոտորջուրում. «Նրանց մի ոտքը ժամի մեջ էր, մյուսը՝ ջամին\* էր մտել»: Կեսկեսներից շատերը կրում էին իրենց հին անունները՝ Մինաս-օղլի, Արթին-օղլի, Կոպալ-օղլի, Գյուրջ-օղլի, Վարդան-օղլի, Սուքիաս-օղլի, Ուսեփ-օղլի և այլն, ինչպես նաև խնամքով պահպանում էին իրենց քրիստոնյա նախնիների զերեզմանները<sup>20</sup>:

Մահմեդականացման գործընթացին զուգահեռ՝ Բերդագրակի գավառի հայության մի ստվար հատված կրոնափոխմանը նախընտրեց կաթոլիկ դավանանքն ընդու-

<sup>18</sup> **Յակովբ Կարնեցի**, նշվ. աշխ., էջ 18:

<sup>19</sup> Տե՛ս **Տաշեան Յ.**, Տայք, դրացիք եւ Խոտորջուր, հ. Բ, էջ 290:

\* Ջամի՝ թուրք. մզկիթ:

<sup>20</sup> Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1407, ց. 1, գ. 24, էջ 4:

ները՝ դրանով իսկ լիովին պահպանելով իր հայկական նկարագիրը: Հ.Տաշյանը գրում է. «Այս պարագան մասամբ նպաստաւոր էր բռնի մահմետականացման շրջանին այնու, որ հայ-կաթոլիկեայք քիչ շատ եւրոպական պաշտպանութիւն մը կը վայելէին. միւս կողմանէ սակայն մոռանալու չէ ճիշդ .ԺԸ. դարու վերջերն եւ մանաւանդ .ԺԹ. դարու սկիզբն յարուցուած սաստիկ հալածանքները կաթոլիկէից դեմ, որոնց արձագանքը . . . հասած է մինչեւ այս խորին ձորերը»<sup>21</sup>: Այս գործընթացի արդյունքում կաթոլիկությունը ընդունեցին Բերդագրակի գավառի Կուրբաշեն, Որջնհաղ, Կիսկիմ, Նիխաղ, Կարմրիկ, Ծետկունց, Տանձուտ, Վերին և Վարին Մոխուրկուտ գյուղերը, ինչպես նաև Խոտորջուրի գյուղախումբը:

XVIII դ. II կեսին տեղի ունեցավ նաև Խնակ գյուղի մահմետականացումը: 1776 թ. Խնակ այցելած կաթոլիկ հայ հոգևորական Պողոս վրդ. Մեհերյանը հայտնում է, որ գյուղի մոտ 200 տուն բնակիչները նոր էին ընդունել մահմետականություն, քանի որ մնացել էին առանց հոգևոր առաջնորդի: Մահմետական խնակցիները խոսում էին հայերեն: Ավելին, հայ հոգևորականին տեսնելով՝ ծնկի էին իջնում նրա առաջ, համբուրում աջը, խնդրում, որ ավետարանից հատվածներ ընթերցի հիվանդների համար: Սակայն հայ հոգևորականը շատ չի մնում Խնակում, քանի որ «Եւ զի երկնչէի, թէ գուցէ մատնեսցեն զիս յայլագեաց, թէ վարդապետս այս եկեալ է հայացուցանել զխեղակցիք»<sup>22</sup>: Ուշագրավ է նաև այն տեղեկությունը, որ Խնակի հարևան գյուղի վրացածես եկեղեցու քահանա տեր Իսրայելը դիմում է Պողոս վարդապետին՝ խնդրելով թույլ տալ իրենց գյուղում ծիսակատարությունը կատարել հայերենով՝ կաթոլիկական ձեռով, սակայն մերժում է ստանում, քանի որ «թէ դու կամիս զգիւղացիս քո ուղղել և մուծանել յեկեղեցին Քրիստոսի. և ի փոխելն քո զծես յունական, այլես ոչ կարես ուղղել զժողովուրդս զեղջ քո»<sup>23</sup>: Նորահավատ մահմետականներից շատերը, հատկապես ծերերը «ողբային զանհաւատութիւնս իւրեանց և խոստովանիլ խնդրէին»<sup>24</sup>: Ուշագրավ է նաև այն, որ տարեց կանայք պահպանել էին քրիստոնեությունը<sup>25</sup>:

XVI-XVIII դարերի օսմանյան սկզբնաղբյուրները զգալի նյութ են պարունակում նաև յուրաքանչյուր վարչամիավորի տարածքում առկա հողատիրության ձևերի վերաբերյալ: Պարզվում է, որ Բերդագրակի գավառի տարածքում գոյություն է ունեցել Օսմանյան կայսրությունում առկա հողատիրության ձևերի մեծ մասը՝ թիմարներ, զեամեթներ, խասեր և այլն: Ըստ Էվլիա Չելեբիի՝ Բերդագրակի միրլիվայի խասը կազմել է 1462190 ակչե<sup>26</sup>: Մեկ հարյուրամյակ անց, համաձայն «Չըլդըրի էյալեթի ջաբա դավթարի», Բերդագրակի գավառի միրլիվա Իբրահիմի խասը կազմում էր 519000 ակչե<sup>27</sup>: Հար-

<sup>21</sup> Տե՛ս **Տաշեան Յ.**, Տայք, դրացիք եւ Խոտորջուր, հ. Բ, էջ 289:

<sup>22</sup> Տե՛ս **Վարդանյան Ա.**, Կարևոր սկզբնաղբյուր մահմետականացված հայերի մասին, Պատմա-բանասիրական հանդես, 2004, № 3, էջ 168:

<sup>23</sup> Նույնը:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 169:

<sup>25</sup> Նույնը:

<sup>26</sup> Տե՛ս Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, կազմեց **Ա. Մաֆրաստյանը**, հ. Գ, Էվլիա Չելեբի, Երևան, 1967, էջ 28-29:

<sup>27</sup> Տե՛ս Բոլլեզորոս յօճալլեթոս չճձձ ճձձձձձձ, ճձ. 199, 204:

յուրամյակի կտրվածքով հարկաչափի կրճատումը պայմանավորված է մի շարք գործոններով՝ առաջին հերթին Բերդագրակի գավառի բնակավայրերի և բնակչության թվի կրճատման, ինչպես նաև թուրքական տիրապետությամբ պայմանավորված տնտեսական աննախադեպ անկման հետ: Բացի վերոնշյալից, մեր կարծիքով, առավել կարևոր հանգամանք է նաև գավառի հայության մեծամասնության մահմեդականացումը: Մահմեդականների հարկային բեռն անհամեմատ ավելի փոքր էր, քան քրիստոնյաներինը, ուստի սրանով ևս կարելի է բացատրել գավառի կառավարչի եկամտի շուրջ 60 տոկոսով կրճատումը:

*Եզրահանգում.* Այսպիսով, երկու հարյուրամյակի ընթացքում Բերդագրակի գավառի հայությունը հայտնվեց ծանր կացության մեջ: Ենթարկվելով աննախադեպ բիրտ ճնշումների՝ հայության մեծ մասը նախընտրեց մահմեդականություն ընդունել՝ փորձելով այդ քայլով ձերբազատվել դաժան ճնշումներից: Եթե XVI դարավերջին գավառում հաշվվում էր շուրջ 14400 բնակիչ, որից ավելի քան 10 հազարը հայ, ապա XVIII-XIX դարերի սահմանագլխին բնակչության թիվը կրճատվել էր ավելի քան 30 տոկոսով, իսկ քրիստոնյա հայկական բնակչությունը կազմում էր գավառի բնակչության փոքր մասը: Մեծամասնություն էին կազմում հայկական արմատներով կեսկեսները, որոնց թրքացման գործընթացը շարունակվեց ողջ XIX դարի ընթացքում:

## ЭТНИЧЕСКИЙ СОСТАВ БЕРДАГРАКСКОЙ ПРОВИНЦИИ В XVI-XVIII ВЕКАХ

*Акопов А. А.*

**Ключевые слова:** *Тайк, армяне-католики, армяне-мусульмане, кескесы, налоговые списки, Османская империя, Чорох.*

Бердагракская провинция в XVI-XVIII вв. входила в состав Ахалцихского эялета Османской империи. Центром провинции было село Бердаграк. Согласно османским налоговым спискам в конце XVI в. более 2/3 населения провинции составляли православные и апостольские армяне, в меньшем количестве – грузины и мусульмане. Однако в середине XVII в. османское правительство ужесточило налоговую политику в отношении христиан. Это стало причиной исламизации православных армян Бердагракской провинции. В то же время подавляющее большинство апостольских армян приняло католическое вероисповедание. В конце XVIII в. большинство населения Бердагракской провинции составляли армяне-мусульмане, которые чтити армянские традиции, и в основном понимали армянский язык.

## THE ETHNIC SITUATION OF BERDAGRAK PROVINCE IN THE XVI-XVIII CENTURIES

*Akopov A. A.*

**Key words:** *Tayk, Armenian Catholics, Armenian Muslims, keskeses, tax lists, the Ottoman Empire, Chorokh river.*



ՀՏԴ՝ 316.7

DOI: 10.52971/18294316-2021.1-29

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԵՐԿԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴՄԱՆ  
ԽՈՐՀՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ (XVII-XIX դդ.)

*Գևորգ Այվազյան*

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

**Բանալի բառեր՝** *հայ, Նիդերլանդներ, ազատագրություն, խորհրդանկար, Արևմուտք, Մխիթարյան միաբանություն, գաղափարախոսություն, Փարիզ, ինքնապահպանում:*

Արևմուտքի և Արևելքի արանքում հայկական և քոչվորական քաղաքակրթությունների բախման հետևանքով իր պետականությունը կորցրած հայ ժողովրդի լավագույն ներկայացուցիչները սերունդների հետ հաղթանակների նախապատրաստման մասին խոսել են խորհրդանիշների միջազգային լեզվով:

Հոդվածում, վեր հանելով XVII-XIX դարերի քաղաքական պատկերագրության վառ կողմերը, ցույց է տրվում, որ պատմական հիշողության արթնացման համատեքստում օգտագործվել են V դարի պատմիչ Մովսես Խորենացու կերպարը և գիտական ավանդը:

Ամստերդամում և Մբ Ղազարի հայկական տպարանում հրատարակված գրքերի խորհրդանկարների մեկնաբանմամբ ուրվագծվել են Հայաստանի ազատագրության հարցում ազգի հասարակական և հոգևոր-մշակութային կյանքի կազմակերպիչների նպատակադրումները և փիլիսոփայական ընկալումները: Հետազոտությունն առանձնահատուկ կերպով պարզում է Մխիթարյան միաբանների ծավալած ուղղագիծ և ազգապահպան քաղաքական հստակ ծրագիր հետապնդող գործունեությունը:

**Նախաբան.** Հայաստանի միջնադարյան և նոր ժամանակների պատմության բախտորոշ դրվագներում պետական այրերի և պետականության գաղափարակիրների գործողություններում հաճախ բացակայել են հետևողականությունը և շարունակականությունը: Բացառություն է կազմել օտար նվաճողներից երկրի ազատագրության հարցը, որը համախմբել է ազգի ջանքերը: XVII-XIX դդ. այն մասամբ ներկայացվել է եռամեծ վարդապետ Մովսես Խորենացու երկերի նկարագրամամբ: Հայաստանի նկատմամբ Թուրքիայի և Ադրբեջանի անհաշտ վարքագիծն այսօր էլ պահանջում է միասնականություն, հայահավաք-հողահավաքի գաղափարախոսության բովանդակային թարմացում՝ անցյալի փորձի հաշվառմամբ:

Հայոց ազատագրական պայքարի հարուստ պատմագրությունից և խորենացիագիտությունից մեզ հետաքրքրել են ինքնութենական բաղադրիչը լուսաբանող աշխատությունները: Դրանց հեղինակները՝ Ա. Հովհաննիսյան,<sup>1</sup> Ս. Ջաքարյան,<sup>2</sup> Հ. Մանուչարյան և Մ. Դավթյան,<sup>3</sup> Պ. Հովհաննիսյան<sup>4</sup> և այլք, մեծ գործ են կատարել ազգային ինքնության հարացույցերի, խորհրդանիշների պարզաբանման ուղղությամբ: Պատմափիլիսոփայական բնույթի այդ ուսումնասիրություններից, կարծում ենք, դուրս է մնացել Հայի խոսքն ու գործը միավորող քաղաքական ծրագիրը: Ընդամին՝ նպատակ ունենք ցույց տալ, որ Ամստերդամ-Վենետիկ-Փարիզում հայ աշխատասիրող հրատարակիչները մտածել էին ազգային բարդ խնդիրների արծարծման առանձնահատուկ եղանակ: Նրանց հանձնարարությամբ օտար պատկերահանները խորհրդանիշ նկարներով ձևավորել են հայ գործիչների պատմական-գրական և խրատական ստեղծագործությունները: Այդ զարդարանքները կազմել են Հայաստանի ազատագրության ծրագրի փաթեթի անբաժանելի մասերը և դարերի հոլովույթում կատարելագործվել:

Բազրատունյաց կենտրոնական թագավորության և Կիլիկիայի հայկական պետության անկումից հետո սերունդները շատ բան էին մոռացել՝ որպես ծանրագույն զրկանքների և գրագիտության պակասի արգասիք: Մտավոր ավազանին նրանց սթափեցնելու, ազգային ձգտումները կենդանացնելու համար գործադրել է իրեն հասանելի բոլոր միջոցները:

1639թ. Կասր ի Շիրինի թուրք-պարսկական հաշտության պայմանագիրը հերթական անգամ գորացրել է «ուժեղների» օգնությամբ գավթիչներից ազատագրվելու հայերի սպասումը, որի հիմքը կազմել են IV-V դարերից քաղաքական նպատակներով ձգձգվող «հայ ազատագրական լեգենդը»<sup>5</sup> և քրիստոնյա Արևմուտքի՝ Հայաստանին օգ-

<sup>1</sup> Հովհաննիսյան Ա. Չ., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության: Գիրք առաջին և երկրորդ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1957- 1959:

<sup>2</sup> Ջաքարյան Ս. Ա., Հայոց ինքնության հիմնահարցեր, Երևան, ԵՀ հրատ., 2020:

<sup>3</sup> Դավթյան Մ. Խ., Մանուչարյան Հ. Գ., Մովսես Բաղրամյան. Հայ քաղաքական հրապարակախոսության սկզբնավորումը, Երևան, ԵՀ հրատ., 2015:

<sup>4</sup> Հովհաննիսյան Պ. Հ., Հայ ազատագրական շարժումները (XV դարի կես – XVIII դարի վերջ) Երևան, ԵՀ հրատ., 2010:

<sup>5</sup> Դավանական շղարշով պատված ազատագրական գաղափարախոսություն:

նելու պատասխանատվությունը հավաստող փաստաթուղթը՝ «Դաշանց թուղթը»:<sup>6</sup> Նույն դարավերջին Սեֆյան Պարսկաստանի և Օսմանյան Թուրքիայի միջև բաժանված լինելու անջուր իրականությունից այդ հույսի աղբյուրը ցամաքել է (չնայած ժամանակ առ ժամանակ պետք է վարարեր): Անշուշտ, իրականության թելադրանքով էր, որ ուշ միջնադարում ազատագրական շարժման գործիչները վերադարձել էին վաղմիջնադարյան դեգերումներին՝ խորքում չդադարեցնելով նոր գաղափարների փնտրտուքը: Ազատագրական շարժման մտակառույցը շարունակել է կառչած մնալ ինքնապահպանական բնագոյներից՝ հաշվի չառնելով Անիի Բագրատունիների և Կիլիկիայի Ռուբինյանների պետականաստեղծ փորձը. պետական գործերում ՈւՄԻՇԻ օգնությանը չապավինելը:

Եթե XI-XV դդ. Արևմուտքն Արևելքում արմատներ ձգած մահմեդական, մասնավորապես՝ թյուրքական ներկայությանը հակադրել է խաչակրաց արշավանքները, ապա XVI – XVIII դդ. այդ նպատակով ստեղծել է Սրբազան միություններ (լիգա): Հռոմի պապերի այդպիսի նախաձեռնությունները (1538թ., 1571թ., 1684թ., 1717թ.) միտված էին Կասպյան և Միջերկրածովյան ավազաններում և դեպի արևմուտք Օսմանյան կայսրության առաջխաղացման կասեցմանը: Եվրոպայի կաթոլիկ պետությունների և Ռուսաստանի միավորումն ընդդեմ Օսմանյան ծավալապաշտության համընկել է հայության ազատագրական ձգտումներին: Լինելով զարկված, սահմանափակ հնարավորություններով քաղաքական անձավում՝ Հայաստանը շահագրգռված էր թյուրքական աշխարհի ջախջախմամբ: Ուստի, գաղտնի ժողովներ են հրավիրվել, որոնք պատվիրակություններ են ձևավորել և ուղարկել նշված երկրների արքունիքներ: Ասպարեզ են բերվել Հայաստան-Եվրոպա բարեկամական ձևաչափը փաստող ավանդություններ և վավերագրեր:

Հայրենիքից դուրս խարիսխներ էին գցվել Ֆրանսիայում՝ Փարիզում, և Իտալիայում՝ Վենետիկում, որոնց հետ, հատկապես Կիլիկիայի ինքնակալ Լևոն II Մեծագործի (1187-1219թթ.) թագավորության շրջանից, ավանդաբար ձևավորվել էին լավ հարաբերություններ: Փարիզում էր ամփոփված հայության հավաքական երազի խորհրդանիշ, հայոց վերջին արքա Լևոն VI Լուսինյանի մարմինը (նկ.1<sup>7</sup>):



1660-ականների կեսերից Ֆրանսիայի և Նավարրայի միապետ Լյուդովիկոս XIV Բուրբոնի Վերսալյան պալատում հայ-ֆրանսիական բանակցություններին<sup>8</sup> զուգահեռ՝ 1683թ. Վենետիկում լույս է տեսել «Դաշանց թուղթը»: Գործողությունների այդպիսի համակցությունը կրկնվել է 1690, 1695, 1700 թվական-

<sup>6</sup> Մտացածին փաստաթուղթ, որն իբր կնքվել է IV դարում Հռոմի Կոստանդինոս Մեծ կայսեր և Հայոց Տրդատ III թագավորի միջև: 1862թ.՝ Ջեյթունի ապստամբության օրերին, վերլուծվել և հերքվել է Կարապետ վարդապետ Շահնազարյանցի կողմից:

<sup>7</sup> Ալիշան Ղ., Յուշիկք հայրենեաց Հայոց, հատոր Բ, Վենետիկ, 1870:

<sup>8</sup> Մամիկոնեանց Գր., Ձերդ Սրբութիւն Հրատարակիչ Արարատ օրագրի // «Արարատ», Տիփսիս, Ա. տարի, համար 7, 1850 հոկտեմբերի 21, էջ 98-101:

ներին և այդուհետ բոլոր այն դեպքերում, երբ անհաղթահարելի հակասություններ են առաջացել Օսմանյան կայսրության, կաթոլիկ Արևմուտքի և Ռուսաստանի տարածաքաղաքական շահերում: Հայաստանի ներկայացուցիչները այդտեղ փնտրել են ազգային ազատագրության հաջողության բանալին:

Քայլերի նշված հերթականությունը, երբ Արևմուտքին շահագրգռել ենք մեր ամենաթանկ դիվանագիտական կապիտալով՝ դավանափոխության ապագայով, պահպանվել է մինչև XIX դարի կեսերը: Արևմտյան Հայաստանում հարստահարությունների նկատմամբ անտարբերությունը և 1878թ. Բեռլինի միջազգային խորհրդածողովրդի հուժկու հարվածներ են հասցրել հայ քաղաքական մտքի այդ ուղղվածությանը:

Առևտրաարհեստավորական և հոգևոր խավերի մեծամեծերը հեռատեսորեն զգացել էին նաև, թե ինչ օգուտներ կարող են ստանալ նշված ժամանակահատվածի հզոր պետություններ Ֆրանսիայի և իր «մշակութային ոսկեդարն»<sup>9</sup> ապրող Նիդերլանդների ներհակություններից: Պատահական չէր, որ նրանք Ամենայն հայոց կաթողիկոսների հանձնարարությամբ համաժամանակյա մշակութային-քաղաքական գործունեություն են ծավալել դրանց մայրաքաղաքներում՝ Փարիզում և Ամստերդամում: Վերջիններիս ջանքերով նիդերլանդացի բանաստեղծ Յան Լոյկենը (1649-1712թթ.) և գիտնական Վիլհելմ Գուրիեն մաշտոցյան այբուբենը ներառել են 1690թ. իրենց ստեղծած հին ժողովուրդների այբուբենների փորագրանկարների շարքում:<sup>10</sup>



Նրանք առաջ են մղել պատմահայր Մովսես Խորենացու անձը և գործերը՝ ընդգծելով մշակութային ինքնապահպանության խոռոչում չսպանված ազգի վերածնության հույսը: 1695թ. տպագրիչ Թովմաս Նուրիջանյանն Ամստերդամում առաջին անգամ լույս է բնծայել Հռոմեական կայսրության և Պարսկաստանի միջև Հայաստանի բաժանմանը, հայոց պետության անկմանը ժամանակով շատ մոտ պատմիչի «Հայոց պատմություն»-ը:<sup>11</sup> Գրքի միակ խորհրդանկարը (նկ.2), կարելի է ասել, բացել է այդ օրերից մինչև 1918թ. հայ ազատագրական պայքարի գաղափարախոսության կճուճը: Դրա ինքնատիպ մեկնաբանություններով ընդ-

հույ հանդես են եկել հայ գրականության մեջ խորհրդապաշտության հեթանոսական ուղղության և նորվիպապաշտության ներկայացուցիչներ Դ.Վարուժանը, Միամանթոն, Վ.Թեբեյանը, Վ.Տերյանը, Լ.Շանթը և այլք:

<sup>9</sup> Шатохина-Мордвинцева Г. А. История Нидерландов. Москва. Дрофа. -2007. С.190-206.

<sup>10</sup> Luyken Jan (1649-1712), Amsterdam, 1690 վերջին այցելությունը 30.04. 2021թ.

<sup>11</sup> Ազգաբանութիւն տոհմին Յաբեթեան: Յօրինեցեալ ի Մովսիսէ Խորենացոյ, յեռամեծ Վարդապետէ, և Յոզնէրախտ Քերթողահօրէ. Ի ինդրոյ Պայազատ ասպետի Սահակայ Բագրատունոյ: Ի լոյս ածեալ Տպիք, և Ծախիք Թօմայ Վանան դեցոյ, Վեհափայլի Եպիսկոպոսի և բազմաջան վարդապետի, ՅԱմստէլոդամի, 1695:

Պատկերագիրը հայ հեթանոս աստվածուհիների, Տիրոջ և Տիրամոր խորհրդանշական կերպարներով նախաքրիստոնեական գերբնական Ոգու և Քրիստոնեական Ոգու շաղախ է: Գրքի գրաֆիկական ձևավորումն ընթերցողի գիտակցությանն ընծայող է հավերժության, պետականակիր ժողովրդի ժառանգ լինելու և տոհմ-ընտանիք-ազգի գաղափարները: Բազրատունյաց թնատարած արծվի հովանավորությամբ նկատելի են նախարարական սաղավարտ, զինանշան, զենքեր և թագ: Վերևում աստվածային գահն է, որի վրա ի լուր մարդկության ծածանվել է Կիլիկիայի հայկական պետության դրոշմը: Իմիջիայլոց, Թովմաս և Ղուկաս Վանանդեցիներն<sup>12</sup> իրենց հրատարակած գրքերում զետեղած զեղեցիկ և իմաստալից մի նկարով պատմել են նաև Բազրատունիների թագավորության մայրաքաղաք Անիի մասին (նկ.4<sup>13</sup>): Վենետիկի Մխիթարյանները դրա ընդօրինակությամբ նույնիսկ խրախուսել են Մեծ Բրիտանիա-Հայաստան ճանապարհին հավվող ազատագրական պայքարի գործիչ Հովսեփ Էմինին՝ 1752թ. տպագրելով «Հայոց պատմություն»-ում և «Աշխարհացոյց»-ում:<sup>14</sup> Ազգի մասին ճշմարտությունն այլաբանորեն պատմող նկարի թեման միաբանները հետագայում զարգացրել են ինչպես քերթողահոր, այնպես էլ հայագիտական այլ գրքերի գրաֆիկ դիզայնում:

Օրինակ, դրվագվելով «Բառգիրք Հայկազեան լեզուի» հատորների<sup>15</sup> անվանաթերթերին՝ խորհրդանկարը (նկ.2) 50 տարում զգալի փոփոխություններ էր կրել (նկ.3): Բարձունքում պահպանվել էր Աստծո գահը, իսկ Հ. Մծբնեցին, Մ. Խորենացին, Եղիշեն և Ն. Լամբրոնացին Նրա հարկի տակ ընթերցողների համար հնչեցրել են արթնության զանգը: Նրանք ժողովրդին շնջացել են պեղել սեփական պատմությունը և Վարդանանց ապստամբության ոգով պայքարի դուրս գալ:

<sup>12</sup> Թովմաս, Ղուկաս, Մատթեոս և Միքայել Վանանդեցիների մասին մանրամասն տե՛ս **Իշխանյան Ռ. Ա.**, Հայ գիրքը. 1512-1920, Երևան, ՀՄՍՀ ԳԱ հրատ., 1981, էջ 69-71:

<sup>13</sup> Գանձ չափոյ՝ կշոռոյ՝ թոյ՝ եւ դրամից բոլոր աշխարհի: Ժողովեալ և ի մի վայր հաւաքեալ աշխատութեամբ Ղուկասու Ապաշնորի Ջահրնկալի Վանանդեցու, յԱմստէրդամ, 1699: Յոզևադիմի Աստուածաբանական, Բարոյական և Քաղաքական իրողութեանց սահմանք: Երկասիրութեամբ մեղուաջան արանց ի մի վայր ըստ կարգի Այբուբենիցն, հաւաքեցեալք: Ի լոյս ածեալ Տպիք, և Արդեամբք Առաքելաշաւիղ Թօմայ Եռամեծ Վարդապետի Վանանդեցու, ՅԱմստէրդամ, 1704: Հանգամանալից տե՛ս **Հովհաննիսյան Ս. Խ.**, Վանանդեցիների գործունեությունն իբրև քաղաքակրթական ինքնագրության փորձ /<http://www.arteria.am/hy/1334610692/>.

<sup>14</sup> Ազգաբանութիւն տոհմին Յարեթեան: Յօրինեալ ի Մովսիսէ Խորենացոյ Յեռամեծ Վարդապետէ, և Յոզնէրախտ Քերթողահօրէ. Ի ինդրոյ Պայազատասպետի Սահակայ Բազրատունոյ: Տպագրեցեալ երկասիրութիւն Սարգսի վարդապետի և Արքեպիսկոպոսի Կոստանդնուպօլսեցոյ, ի Վենէտիկ, 1752: Հետեւի համառօտ պատմութիւն աշխարհագրութեան: Արարեալ ի Նոյնոյ Հեղինակէ Մովսիսէ Խորենացոյ, Քաջիմաստ և Յոզնահանճար Վարդապետէ, ի Վենէտիկ, ի տպարանի Անտոնի պօռթօլի, 1752:

<sup>15</sup> Բառգիրք Հայկազեան լեզուի, հատոր առաջին: Արարեալ բազմատքուն, և աչալուրջ ճգանօք՝ յաշակերտաց ամենապատիւ տն Մխիթարայ մեծի բբբային, և րաբունապետին սեբաստացոյ: Ի Վենէտիկ, ի տպարանի անտոնի պօռթօլի, 1749: Նույնը, հատոր երկրորդ, ի Վենէտիկ, 1769:



Նկ. 3



Նկ. 4



Նկ. 5



Նկ. 6

Մ. Խորենացու «Գիրք պիտոյից» և «Հայոց պատմություն» մատյանների, հայր Ղևոնդ Ալիշանի «Յուշիկք հայրենեաց Հայոց»-ի Մբ Ղազարի տպագրություններում<sup>16</sup> տվյալ գաղափարանկարից մնացել են թագազարդ շրջանակը (նկ.5)<sup>17</sup> և անկախության հուսավառ պատվանդանը (նկ.6), որոնք ինքնագոհության կոչ են հղել:

1770-1820-ական թթ. Միաբանության վանականները հայրենաճանաչության այդ և այլ դասագրքերի տպագիր օրինակներ ներառել են նոր տարերը՝ ուրվագծելով ազատագրական մտքի քաղաքական հանգրվանները: Ուշագրավ է հատկապես «Հայոց պատմության» 1827թ. հրատարակության պատկերագրությունը.<sup>18</sup> Բելի (թշնամու) դիակը ընտանիքին (ազգին) մատնացույց անող Հայկ նահապետից մինչև գիշատիչ թռչուններով և գազաններով շրջապատված Մանուկ Հիսուս (Մանուկ Հայաստան), արքայազուններից մինչև հայոց պետական գահի անկման մասին խորհրդածություններ: Ռուս-թուրք-պարսկական պատերազմաշրջանի հայկական հայտնություն հանդիսացող այդ վիմատիպ միջբը ներկայացված է հմուտ ձեռագրով: Փարիզի հայ մտքի կենտրոնի պատվերով՝ «Հայոց պատմության» ֆրանսերեն տարբերակում<sup>19</sup> ցայտունորեն ընդգծվել է Ռուսաստանի դերը Հայաստանի ապագայում:

<sup>16</sup> Սրբոյ քերթողահօր մերոյ Մովսէսի Խորենացոյ նախակրթութիւն հռետորական ասացեալ Գիրք պիտոյից: Աշխատասիրութեամբ Տն Հ. Յովհաննէս Վղայի Զօհրապեան Կոստանդնուպօլսեցոյ ի միաբանութենէ ամենապատիւ Տն Միսիթարայ մեծի Աբբայի, ի Վենետիկ, 1796: Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացոյ մատենագրութիւնք, ի Վենետիկ, 1843: Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացոյ մատենագրութիւնք: Երկրորդ տպագրութիւն, ի Վենետիկ, 1865: Ալիշան Ղ., Յուշիկք հայրենեաց Հայոց, հատոր Ա, Վենետիկ, 1869:

<sup>17</sup> Սա դարձել է նաև Միսիթարայան միաբանության տպարանի խորհրդանիշ կնիքը:

<sup>18</sup> Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, ի Վենետիկ, 1827:

<sup>19</sup> Moise de Khorène auteur du V<sup>e</sup> siècle Histoire d'Arménie. Par P.E.Le Vaillant de Florival. Tome premier. Paris, 1841.

*Եզրահանգում.* Այսպիսով, միջնադարի մայրամուտին, երբ հայի համար անհնարինության չափ բարդ էր Հայրենիքում ազատ ստեղծագործելը, գրքերի նկարագրողումները Ուրիշների՝ օձի կերպարանքով ներկայացող, աղվեսաբարո *խորագիտությունը ճգնելու և հայորդիների մտքերը լուսավորելու լավագույն* հնարքներից էին: Պատմահոր կառուցիկ և հայոց ընդհանրական պատմությունն ամբարող «Հայոց պատմության» և «Աշխարհացոյց»-ի, նրա գրչին վերագրվող «Գիրք պիտոյից»-ի հրատարակությունների պատկերագրողումները ընթերցողին հստակ փոխանցել են պետականության վերակերտման, կորցրածին վերատիրելու գաղափարները: Պատմություն-աշխարհագրություն, գաղափարանկար-քարտեզ և Մայր Հայաստանում անկախության դրոշի պարզում. դրանք էին «Խորենացի»-ով մատուցվող փիլիսոփայության քաղաքական իմաստները:

## ЗАМЫСЕЛ ИЛЛЮСТРАЦИЙ ИЗДАНИЙ СОЧИНЕНИЙ МОВСЕСА ХОРЕНАЦИ (XVII-XIX вв.)

*Айвазян Г. С.*

**Ключевые слова:** *армянин, Нидерланды, освобождение, рисунок из символов, Запад, Конгрегация Мхитаристов, идеология, Париж, самосохранение.*

Османская империя, которая хорошо разместилась на территориях древних государств Малой Азии, представляла серьёзную угрозу для Запада. В XVI-XVIII вв. для более активного противодействия расширению тюркского мира вглубь Европы по инициативе Ватиканского Двора создавались Священные лиги. В этом деле участвовали Россия, Франция и т.д.

Армения была разделена между Персией и Турцией, поэтому деятели армянской культуры и национальной борьбы не могли не сделать ставку на ослабление и расшатывание империи зла. Они, параллельно с дипломатической работой в столицах вышеназванных держав, использовали гравюры изданий «История Армении» и «Ашхарацуйц» родоначальника армянской историографии Мовсеса Хоренаци, как средства освежения памяти и разума молодежи. Особенно, выделялась деятельность типографии Мхитаристов в Венеции.

## THE SYMBOLIC MEANING OF ILLUSTRATIONS FOR EDITIONS OF THE WORKS OF MOVSESA KHORENATSI (XVII-XIX centuries)

*Ayvazyan G. S.*

**Key words:** *Armenian, Netherlands, liberation, picture of symbols, West, Congregation of Mkhitarists, ideology, Paris, self-preservation.*

The Ottoman Empire, which fit well in the territories of the ancient states of Asia Minor, posed a serious threat to the West. In the XVI-XVIII centuries for more active counteraction to the expansion of the Turkic world deep into Europe, the Holy Leagues were created on the initiative of the Vatican Court. The Rzeczpospolita, Russia, France, etc. were engaged in the activities.

Armenia was divided between Persia and Turkey, therefore, the figures of Armenian culture and national struggle could not but bet on the weakening and shattering of the evil empire. In parallel with diplomatic work in the capitals of the aforementioned powers, they used engravings from the “History of Armenia” and “Geography” editions of the founder of Armenian historiography Movses Khorenatsi as a means of refreshing the memory and mind of the young. In this sense it’s worth mentioning the activity of the printing house of the Mkhitarists of Venice.

### Գ ր ա կ ա ն ո թ յ ո ն

1. Ալիշան Ղ., Յուշիկք հայրենեաց Հայոց, հատոր Ա, Վենետիկ, 1869, 537 էջ:
2. Նույնի, հատոր Բ, Վենետիկ, 1870, 572 էջ:
3. Բարզիբք Հայկազեան լեզուի, հատոր առաջին: Արարեալ բազմաաբուն, և աշալուրջ ճգանօք՝ յաշակերտաց ամենապատիւ տն Մխիթարայ մեծի աբբային, և րաբունապետին սեբաստացոյ: Ի Վենետիկ, ի տպարանի անտոնի պօթօլի, 1749, 1251 էջ:
4. Նույնի, հատոր երկրորդ, ի Վենետիկ, 1769, 1750 էջ:
5. Դավթյան Մ.Խ., Մանուչարյան Հ.Գ., Մովսես Բաղրամյան. Հայ քաղաքական հրապարակախոսության սկզբնավորումը, Եր., ԵՊՀ հրատ., 2015, 136 էջ:
6. Ջաքարյան Ս.Ա., Հայոց ինքնության հիմնահարցեր, Եր., ԵՊՀ հրատ., 2020, 326 էջ:
7. Իշխանյան Ռ.Ա., Հայ գիրքը. 1512-1920, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981, 154 էջ:
8. Հովհաննիսյան Ա.Գ., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության: Գիրք առաջին, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1957, 526 էջ:
9. Նույնի, Գիրք երկրորդ, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1959, 695 էջ:
10. Հովհաննիսյան Պ.Հ., Հայ ազատագրական շարժումները (XV դարի կես – XVIII դարի վերջ) Եր., ԵՊՀ հրատ., 2010, 116 էջ:
11. Հովհաննիսյան Ս.Խ., Վանանդեցիների գործունեությունն իբրև քաղաքակրթական ինքնագրության փորձ, <http://www.arteria.am/hy/1334610692>.
12. Մամիկոնեանց Գր., Ձերդ Սրբութիւն Հրատարակիչ Արարատ օրագրի// «Արարատ», Տիփլիս, Ա. տարի, համար 7, 1850 հոկտեմբերի 21, էջ 98-101:
13. Ազգաբանութիւն տոհմին Յաբեթեան: Յօրինեցեալ ի Մովսիսէ Խորենացոյ, յեռամեծ Վարդապետէ, և Յոզներախտ Քերթողահօրէ. Ի ինդրոյ Պայազատ ասպետի Սահակայ Բագրատունոյ: Ի լոյս ածեալ Տպիւք, և Ծախիւք Թօմայ Վանանդեցոյ, Վեհափայլի Եպիսկոպոսի, և բազմաջան վարդապետի, ՅԱմստէլօղամի, 1695, 483 էջ:
14. Ազգաբանութիւն տոհմին Յաբեթեան: Յօրինեալ ի Մովսիսէ Խորենացոյ Յեռամեծ Վարդապետէ, և Յոզներախտ Քերթողահօրէ. Ի ինդրոյ Պայազատասպետի Սահակայ Բագրատունոյ: Տպագրեցեալ երկասիրութիւն Սարգսի վարդապետի և Արքեպիսկոպոսի Կոստանդնուպօլսեցոյ, ի Վենետիկ, 1752, XII, 423 էջ:
15. Սրբոյ քերթողահօր մերոյ Մովսէսի Խորենացոյ նախակրթութիւն հոետորական ասացեալ Գիրք պիտոյից: Աշխատասիրութեամբ Տն Հ.Յովհաննէս Վդպի Զօհրապեան կոստանդնուպօլսեցոյ ի միաբանութենէ ամենապատիւ Տն Մխիթարայ մեծի Աբբայի, ի Վենետիկ, 1796, Ժը, 488 էջ:
16. Հետեւի համառօտ պատմութիւն աշխարհագրութեան: Արարեալ ի Նոյնոյ Հեղինակէ Մովսիսէ Խորենացոյ, Քաջիմաստ և Յոզնահանճար Վարդապետէ, ի Վենետիկ, ի տպարանի անտոնի պօթօլի, 1752, 92 էջ:

17. Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց, ի Վենետիկ, 1827, 632 էջ:
18. Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացույ մատենագրութիւնք, ի Վենետիկ, 1843, 640 էջ:
19. Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացույ մատենագրութիւնք: Երկրորդ տպագրութիւն, ի Վենետիկ, 1865, 640 էջ:
20. Յոգնաղիմի Աստուածաբանական, Բարոյական և Քաղաքական իրողութեանց սահմանք: Երկասիրութեամբ մեղուաջան արանց ի մի վայր ըստ կարգի Այբուբենիցն, հաւաքեցեալք: Ի լոյս ածեալ Տպիք, և Արդեամբք Առաքելաշաւիղ Թօմայ Եռամեծ Վարդապետի Վանանդեցույ, ՅԱմստէրդամ, 1704, 58 էջ:
21. Գանձ չափոյ՝ կշռոյ՝ թոյ՝ եւ դրամից բոլոր աշխարհի: Ժողովեալ և ի մի վայր հաւաքեալ աշխատութեամբ Դուկասու Ապաշնորի Ջահրնկալի Վանանդեցույ, յԱմստէրդամ, 1699, 80 էջ:
22. Шатохина-Мордвинцева Г.А. История Нидерландов. Москва. Дрофа. - 2007. 510 с.
23. Luyken Jan (1649-1712), Amsterdam, 1690.
24. Moise de Khorène auteur du Ve siècle Histoire d'Arménie. Par P.E.Le Vaillant de Florival. Tome premier. Paris, 1841, XII, 389p.

*Ընդունվել է՝ 20. 04. 2021  
Գրախոսվել է՝ 21.05. 2021  
Հանձնվել է տպ. 21. 06. 2021*

**Տեղեկություններ հեղինակի մասին**

**Գևորգ ԱՅՎԱԶՅԱՆ՝** պատմական գիտությունների թեկնածու,  
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի  
գիտաշխատող, էլ. հասցե՝ AyG.84@mail.ru

ՀՏԴ՝ 930.85

DOI: 10.52971/18294316-2021.1-38

ՀՈՎՍԵՓ ԱՐԴՈՒԹՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՒՂՂՎԱԾ  
ՌՈՒՍԱՀԱՅ ԹԵՄՈՒՄ ՀԱՅՈՑ ԴԱՎԱՆԱՆՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆԸ

*Հասմիկ Ամիրջանյան*

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

**Բանալի բառեր՝** *սոցիալ-տնտեսական, հոգևոր, եկեղեցի, Ամենայն Հայոց կաթողիկոս, Էջմիածին, արքեպիսկոպոս, թեմակալ առաջնորդ, հոգևոր-վարչական:*

Հոդվածը նվիրված է ականավոր հոգևոր գործիչ, Հայ Առաքելական եկեղեցու Ռուսաց թեմի առաջնորդ Հովսեփ Արղությանի էկումենիկ հայացքներին: 1773 թ. Ամենայն Հայոց կաթողիկոս Միմեոն Երևանցու (1763-1780) կողմից Ռուսաստանի հայկական թեմի առաջնորդ նշանակվեց արքեպիսկոպոս Հովսեփ Արղությանը (1773-1801): Այդ քայլն առաջին հերթին դրդված էր ռուսահայ թեմի նկատմամբ Էջմիածնի հոգևոր ազդեցության ու ներգործության ամրապնդման ու պահպանման անհրաժեշտությունից:

Հիշենք, որ XVIII դ. առաջին կեսերից սկսած, հատկապես Ղազար Զահկեցի (1737-1751) կաթողիկոսի գահակալության տարիներին, Մայր Աթոռը կորցրել էր իրավասությունը Ռուսաստանի հայկական թեմի նկատմամբ: Ավելին, 1749 թ., երբ Ռուսաստանի հայերի առաջնորդ է դառնում Գանձասարի աթոռին ենթակա Ստեփանոս Եպիսկոպոսը, Գանձասարի կաթողիկոսությունն իր իշխանության ներքո է առնում ռուսահայ գաղութների հոգևոր կյանքի վերահսկողությունը:

Հոդվածում մասնավորապես քննվում են արքեպիսկոպոս Հ. Արղությանի հայացքներն ու մոտեցումները դավանաբանական վեճերի նրկատմամբ:

**Նախաբան.** Միմեոն Երևանցին ըմբռնում էր, որ հայոց եկեղեցու ամբողջականությունը և միակենտրոն ուղղահայացը կարելի էր վերականգնել միայն Ամենայն Հայոց

կաթողիկոսի գերագահությունը բոլոր թեմերի կողմից անվերապահ ընդունելու դեպքում: Կարևորվում էր հատկապես ռուսահայ թեմի դերը՝ կապված Հայաստանում քաղաքական իրավիճակի, մասնավորապես՝ հայկական պետականությունը ռուսների օգնությամբ վերականգնելու գաղափարախոսության կայացման պայմաններում:

Կաթողիկոսն ամեն ջանք ներդրեց, որպեսզի Ռուսաստանի թեմի առաջնորդները նշանակվեն Էջմիածնի կաթողիկոսի կողմից և ենթարկվեն նրան: Թեմակալ առաջնորդ նշանակված Հովսեփ արքեպիսկոպոսը, շարունակելով իր ուսուցչի Էջմիածնակենտրոն քաղաքականությունը, իր հերթին դիմում է ռուսական իշխանություններին՝ ինչպես թեմի իրավունքների պաշտպանության ու ընդլայնման, այնպես էլ թեմի նկատմամբ Մայր Աթոռի գերակայության պահպանման խնդրանքներով:

Նորանշանակ հոգևոր առաջնորդի առջև առավել հրատապ է ներկայանում թեմի հոգևոր կյանքն ամուր վարչական հիմքի վրա դնելու հրամայականը, ինչի նպատակն էր հստակորեն տարանջատել հոգևոր և աշխարհիկ կառույցներն ու ամրագրել դրանց իրավասությունների սահմանները, հստակեցնել Էջմիածնի հոգևոր կազմակերպության նկատմամբ թեմի պարտականությունների շրջանակները, վերահսկողություն սահմանել թեմին ենթակա հոգևոր կառույցների գործունեության նկատմամբ և այլն:

Հոգևոր-վարչական համակարգի կայացման ճանապարհին Հովսեփ Արղությանի մտահոգության առարկան է դառնում ռուսահայերի հոգևոր կյանքին սպառնացող այնպիսի երևույթ, ինչպիսին ուղղափառություն ընդունելու և առհասարակ հայկական դավանանքից շեղվելու վտանգն էր:

Դավանափոխության վտանգի առկայությունը, հատկապես նորաստեղծ հայկական համայնքներում<sup>1</sup>, պայմանավորված էր տարբեր սոցիալական խնդիրների, դեռևս չկայացած տնտեսական համակարգի, հայերի՝ ռուսական միջավայրում և ռուսական հոգևոր ու աշխարհիկ օրենքների ներքո բնակվելու, դրա արդյունքում առաջ եկող խառնամուսնությունների և այլ պատճառներով, ինչն անխուսափելիորեն հանգեցնում էր բնակչության ուժացման և հայ հոգևոր ու կենցաղային ավանդական կարգերի, սովորույթների անկման:

Տեղի հայերը, նշված դրդապատճառներից ելնելով, փոխում էին դավանանքը, իսկ ռուս քահանաները, առանց ըստ կարգի հարցման, մկրտում էին նրանց. «...պարտադրեք և փախստականք գնան և նոքա ընկալեան»<sup>2</sup>:

Արքեպիսկոպոսը համեմատություն է անցկացնում արևմտահայերի և Ռուսաստանի հայերի միջև, ցավով արձանագրում, որ թուրքերի տիրապետության ներքո հայ երեխաները բռնությամբ հավատափոխ են լինում, իսկ Ռուսաստան եկած հայերը նույն վերաբերմունքին են արժանանում քրիստոնյաների կողմից:

<sup>1</sup> Հովսեփ Արղությանի թեմակալության օրոք՝ 1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, ռուսների կողմից Ղրիմի և Մոլդովայի հայերի բռնագաղթի հետևանքով ձևավորվեցին Նոր Նախիջևան և Գիգորիոպոլ հայաբնակ քաղաքներն ու շրջակայքի գյուղերը: Ռուսների կողմից թուրքերից գրավված նոր տարածքներ անցան հայկական թեմի ենթակայության ներքո, ինչի արդյունքում թեմն ընդլայնվեց:

<sup>2</sup> Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. հ<sup>ֆ</sup> 2951, թթ. 99ա, 143բ:

Այլադավանություն ընդունելու, այդ թվում՝ հայերին խաբեությամբ ուղղափառ կնքելու դեպքեր գրանցվում էին հատկապես անչափահասների ու երեխաների շրջանում: Հ. Արղությանը պատճառների մասին գրում է, որ ծնողների անհնազանդ որդիները գնում են դավանանքը փոխելու, իսկ ռուս քահանաները, օգտվելով պատեհ հնարավորությունից, անմիջապես ուղղափառ էին կնքում նրանց<sup>3</sup>:

Վշտացած արքեպիսկոպոսը 1789 թ. հունվարի 9-ին Սանկտ Պետերբուրգի իր ծանոթներից Ֆ. Մանուչարյանին<sup>4</sup> գրում է. «...վասն պահպանութեանն հաւատոյ էմք փախուցացեալ յերկիրս այս և թագուհին (Եկատերինա Երկրորդը-Հ.Ա.) մեզ ազատութիւն է խոստացել, ապա բռնադատին զմեզ և զհաւատս մեր որպէս և ոչ ի մէկ բարբարոսաց»<sup>5</sup>:

Նմանատիպ մէկ այլ դեպքի առիթով, երբ 14 տարեկան երեխան «գնացեալ ռուսացեալ» էր, Հ. Արղությանը դիմում է հղում ռուս եպիսկոպոսին (անունը չի շեշտում-Հ. Ա.), խնդրելով, որ դավանափոխվել ցանկացողներից նախ ըստ օրենքի հարցում՝ «սպրավկ առնեն», այլապես մերժեն դավանափոխության հայցը: Ռուս հոգևորականն անտեսում է արքեպիսկոպոսի խնդրանքը՝ հակադարձելով, որ փոքրահասակ երեխայից չեն կարող հարցում անել: Ավելին, դատապարտում է նրան, թե. «...որպէս համարձակեցաւ հայոց արքեպիսկոպոսն ինձ գիր գրել ու զիարդ համարձակեցաք...կատարել զօրէնս ձեր»<sup>6</sup>: Այնինչ, ինչպէս գրում է թեմակալ առաջնորդը. «Ի մեծէն կաուկազ 1716 թ. հունիսի 14-ի և 1717 թ. նոյեմբերի 2-ի, ըստ խնդրոյ տեր ավագ քահանայի, որ առանց հարցման չընդունեն և չմկրտեն: Բայց հրամանին ոչ ոք է ունկնդիր»<sup>7</sup>:

Արքեպիսկոպոսը դիմումներ է հղում ռուսների սրբազան միտրոպոլիտին և դատական Սինոդի անդամ Ա. Մուսին-Պուշկինին՝ բացատրելով, որ երբ հինգ տարեկան երեխայի խնդիր է, պարտավոր են Սինոդին տեղեկացնել և առաջնորդվել վերջինիս վճռով:

Նմանօրինակ մէկ այլ դեպքի առիթով Արղությանը Աստրախանի կոնսիստորիային գրում է. «Աստրախանի և Ստրպաօլու Նիկիփոռ արքեպիսկոպոսը իրավունք չունի իշխել ի վերայ օրինաց մերոց, և կամ բռնութեամբ զկինն այն քաշել ի տանէ և կամ ի կրօնէ ի կրօն փոխել հրամայել»<sup>8</sup>:

Հյուսիսկովկասյան Մոզդոլ քաղաքում վրացիների ու տեղի ռուս պարետի կողմից հայ երեխային ուղղափառ դավանանքով կնքելու փորձի առիթով Հ. Արղությանը տեղի ավագ քահանա տեր Աստվածատուրից պահանջում է տղային ուղարկել Նոր

<sup>3</sup> ՄՄ, թթ. 99ա, ձեռ. հ<sup>տ</sup> 2949, թ. 106բ:

<sup>4</sup> Մարգար և Ֆիլիպ (Ֆիլիպոս) Մանուչարյան եղբայրները, որոնք ակտիվ նամակագրական կապերի մեջ էին Հ. Արղությանի հետ, ջուղայեցի առևտրական Աստվածատուրի որդիներն էին, որոնք, հաստատվելով Սանկտ Պետերբուրգում, հիմնել էին Մետաքսի գործարան: Հ. Արղությանը նրանց հետ բազմիցս քննարկում էր հայ մշակութային, հոգևոր և այլ հարցեր:

<sup>5</sup> ՄՄ, ձեռ. հ<sup>տ</sup> 2949, թ. 106բ:

<sup>6</sup> Նույն տեղում, ձեռ. հ<sup>տ</sup> 2951, թ. 99ա

<sup>7</sup> Նույնը:

<sup>8</sup> Նույն տեղում, ձեռ. հ<sup>տ</sup> 2949, թ. 217ա:

Նախիջևան կամ Աստրախան: Նա հորդորում է, որ այսուհետև ռուսների կամ այլոց կողմից հայերին բռնի դավանափոխման ենթարկելու դեպքում ամբողջ ժողովրդով և հոգևորականներով ընդդիմանան, քանի որ հայերը եկել են այս երկիր, որ իրենց հավատը պահպանեն: «...Եվ յումեք է նեղութիւն չկրեցեմք վասն հաւատոյ: ...Գողին ու մարդասպանին ծեծ ոչ կայ, Թագանովն որպէ՛ս կարէ զհայ ժողովուրդս ծեծել...»<sup>9</sup>, գրում է Արդուրյանը տեղի ռուս պաշտոնյայի հակահայկական արարքների առիթով՝ մեղադրելով հայ բնակչությանը, որ իրենց դժգոհության վերաբերյալ ոչ ոքի գրավոր դիմում կամ բողոք չեն ներկայացնում:

Ռուսաստանի տարբեր վայրերի հայ հասարակական գործիչներին ևս նամակների միջոցով Արդուրյանը հրահանգում է դավանափոխության վերաբերյալ վեճերը ներկայացնել համապատասխան մարմիններին, որպեսզի տեղի ռուս զինվորական պարետները՝ «կամենդատները», չխառնվեն հայերի հոգևոր գործերին<sup>10</sup>:

Առավել վրդովեցուցիչ էր, երբ ռուսանում էին հայ եկեղեցականները կամ հայ հոգևոր կյանքի վիճահարույց տարբեր հարցերի վերաբերյալ բողոքագրերով դիմում ռուսական հոգևոր դատարանին: Արդուրյանը նման հոգևորականներին հնարավորություն էր տալիս ինքնակամ գոջալու և ներում հայցելու: Չգոջալու և հայ եկեղեցու գիրկը չվերադառնալու դեպքում արքեպիսկոպոսը դիմում էր ամենախիստ միջոցների, ընդհուպ՝ կալանքի տակ պահել, ապա կարգազանց անել, եկեղեցական կոչումն իջեցնել կամ կոչումն ազրկել<sup>11</sup>: Իսկ ռուսացած հայ երիտասարդներին առաջին հերթին խրատում էր խոսքով:

Շայոց դավանանքի նկատմամբ ոտնձգության օրինակ էր Մոզդոկի հայկական Ս. Ստեփանոս եկեղեցու շուրջ բորբոքված վեճը: 1781 թ. հոկտեմբերի 9-ին քաղաքի հայերի՝ արքեպիսկոպոսին ուղղած գրությունից տեղեկանում ենք, որ տեղի եկեղեցու երեցփոխ<sup>12</sup> Գեորգին իր համախոհներով նոր քահանայություն էր հիմնել, Վրաստանից ոմն Հովհաննիս հրավիրել և կարգել եկեղեցու քահանայապետ, իսկ հայ բնակչությանն ու հոգևորականներին արգելել եկեղեցի մտնել:

Պարզվում է, որ Գեորգին գրությամբ փաստել էր, որ նոր քահանայապետ Հովհաննը ցանկություն ուներ ընդունել ռուսական դավանանք, հետևաբար, ռուսները մտադրվել էին Ս. Ստեփանոս հայկական եկեղեցին դարձնել ուղղափառ:

Չայրացած արքեպիսկոպոսը դատապարտում է հայ հոգևորականությանը, որ լքել էր եկեղեցին, ընդ որում ոչ թե Սուրբ Մինոդի կամ տեղի նահանգապետի հրահանգի համաձայն, այլ ըստ «մէկ չիք<sup>13</sup> մուժիկի» հրամանով: Միաժամանակ ոգեշնչում ու խրախուսում է Մոզդոկի հայ բնակչությանը. «Ահա գրեմ ձեզ որ չխաբվիք, պինդ մնայք... և եթէ հրաման ևս լինի, չտայք, ինքեանք չեն կարօղ բռնութեամբ առնու ... և մի

<sup>9</sup> ՄՄ, ձեռ. հ<sup>մ</sup> 2949, թ. 244բ:

<sup>10</sup> Նույն տեղում, թ. 243ա:

<sup>11</sup> Նույն տեղում, ձեռ. հ<sup>մ</sup> 4496, թթ. 109, 114-115:

<sup>12</sup> Երեց կամ երեցփոխ, ծխականների կողմից ընտրված, եկեղեցու տնտեսությունը վարող անձ:

<sup>13</sup> Չիք-չէ, չկա, գոյություն չունեցող, չեղած, ոչնչություն: Տե՛ս Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, իմբ. **Խ. Աբրահամյան, Վ. Առաքելյան**, հ. չորրորդ, Երևան., 1980, էջ 137:

երկնչեք ի եանդ ի կալանս և յայլ տեսակ չարչարանս մտեք և մի տայք զեկեղեցին»<sup>14</sup>: 1781 թ. դեկտեմբերի 3-ին Սանկտ Պետերբուրգից Մոզդոկի հայ բնակչությանը հղած օրհնագրում Արղությանը կրկին հուսադրում է նրանց. «...ոչինչ կերպիւ նոցա ասածին չհաւատայք, եկեղեցին իմէ և հասարակութիւնէն»<sup>15</sup>:

Եկեղեցին հայոց դավանանքին վերադարձնելու խնդրանքներով Հ. Արղությանը դիմում է բոլոր նրանց, ում հնարավոր էր, այդ թվում՝ ռուսների Գաբրիել արքեպիսկոպոսին, տեղի նահանգապետին, հարցում է անում Մոզդոկի պետական պաշտոնյա Միխայիլ Միխայլովիչին, ում հրամանով Մոզդոկի պարետ Ալ. Իվանովը թույլատրել էր այլադավանների մուտքը եկեղեցի<sup>16</sup>: Մ. Միխայլովիչին հասցեագրված հաջորդ նամակից տեղեկանում ենք, որ պարետը տեղի նահանգապետից հրաման էր ստացել՝ եկեղեցին հայերից վերցնել և հանձնել ռուսական պատրիարքարանին: Թեմակալ առաջնորդը մտադրվում է հարցի առնչությամբ դիմել հոգևոր Մինոդին, առաջարկում է քաղաքի բնակչության անունից ևս խնդրագրեր հղել նահանգային իշխանություններին ու Եկատերինա կայսրուհուն (1762-1796):

Հայերի պնդմանն այն մասին, որ եկեղեցին կառուցվել է հայ հասարակության միջոցներով, ինչը փաստաթղթերով ապացուցելի էր, ռուսական կողմը ժխտողական պատասխան է տալիս: Հ. Արղությանը, Մ. Միխայլովիչին գրած նամակում հիշեցնելով, որ Եկատերինա կայսրուհին ժամանակին հայկական եկեղեցիները հրամանագրով վերադարձրել էր հայերին, զարմացած հարցնում է. «Ապա զի՞ արդ է կարելի ռուսաց մեծ և հզոր տերութիւն ակն դնել հայոց փայտեայ եկեղեցոյն և հանել կամ խլել ի տառապեալ աղքատ ժողովրդէնէն Մոզդոկու...»<sup>17</sup>:

Արքեպիսկոպոսը Մ. Միխայլովիչից, որը ըստ Գաբրիել արքեպիսկոպոսի որոշման, պետք է վերջնական վճիռ կայացներ, խնդրում է հրաման գրել Մոզդոկ այն մասին, որ. «...թողուլ զեկեղեցին ի ձեռս ողորմելի ժողովրդեանն մերոյ և մի նեղեցեալ զնոսա որք փոխուցեալք ի հալածմանց բարբարոս անօրինայ եկեալք են ի գտանել զխաղաղութիւն ի ներքոյ ինամոց մորն ողորմութիւն»<sup>18</sup>: Ապա տեղեկացնում է, որ հարցը չլուծվելու դեպքում պատրաստվում է անձամբ դիմել կայսրուհուն և ռուս պետական գործիչ, Հարավային Ռուսաստանի կառավարիչ, իշխան Գրիգորի Պոտյոմկինին (1739-1791)<sup>19</sup>:

Տեղի ռուս կառավարիչներին ու հոգևորականությանը հաճո չէր, որ նմանօրինակ դեպքի վերաբերյալ լուրերը հասնեին ռուսական կառավարությանը: 1781 թ. դեկտեմբերի 3-ին Սանկտ Պետերբուրգից Հ. Արղությանի գրած նամակից տեղեկանում ենք, որ. «Տեղի եպիսկոպոսը ...ինքը մեզ գրեց, որ տգեղ բան է, և հաճոյ չէ լինելոյ թագուհուն...»<sup>20</sup>: Որոշվում է, որ գործը քննեն Մոզդոկի ռուս բարձրաստիճան հոգևորական-

<sup>14</sup> ՄՄ, ձեռ. հ<sup>փ</sup> 4496, թ. 16:

<sup>15</sup> Նույն տեղում, թ. 21:

<sup>16</sup> Նույն տեղում, թթ. 17, 18, 19-20, 26, 49:

<sup>17</sup> Նույն տեղում, թ. 17:

<sup>18</sup> Նույն տեղում, թթ. 18-19:

<sup>19</sup> Գ. Պոտյոմկինը՝ Նովոռոսիյսկի, Ազովի և Աստրախանի գեներալ-նահանգապետն էր:

<sup>20</sup> ՄՄ, ձեռ. հ<sup>փ</sup> 4496, թ. 20:

ները: Այդ նպատակով Արդությանը հայկական եկեղեցիների վերաբերյալ կառավարական բոլոր հրովարտակներն ուղարկում է նահանգապետին, այդ թվում՝ Մոզդոկի եկեղեցու վերաբերյալ իր գրությունները, որոնք վկայում են եկեղեցու հայկական լինելու անվիճելի փաստը:

1782 թ. մարտի 3-ին Արդությանը գնում է Աստրախան, հանդիպում տեղի ռուս կառավարիչներին, խոսում Մոզդոկի եկեղեցու մասին: Հետաքրքիր է, որ նահանգապետն ու Աստրախանի ռուս եպիսկոպոսները Մոզդոկի դեպքերի վերաբերյալ, Արդությանի ձևակերպմամբ, «չքմեղ են ձևանում»: Ի վերջո, նահանգապին կառավարության կողմից Մոզդոկի ռուս հոգևորականությանը համապատասխան հրաման է գրվում, ինչին հաջորդում է Գեորգիի և իր համախոհների զոջումը:

Հայադավան եկեղեցիների նկատմամբ գործադրված ճնշման օրինակ էին նաև ռուս հոգևորականների կողմից հայկական հոգևոր արարողակարգերի դեմ դրսևորած կամայականությունները: 1789 թ. ապրիլի 10-ին Աստրախանից Մոզդոկի տեր Աստվածատուրին և մյուս հոգևորականներին գրած Հովսեփի Արդությանի նամակը փաստում է, որ քաղաքի հայ հոգևոր կազմը հայկական եկեղեցական արարողությունների հարցում ճնշումների է ենթարկվել ռուսական եկեղեցու կողմից: Արդությանը ոգեշնչում է հայ հոգևորականներին՝ գրելով. «...իմացեք, որ կայսրուհին (Եկատերինա Երկրորդը-Չ. Ա.) մանիֆեստով, Նախիջևանի պրովելեկով<sup>21</sup> և այլ հրամանագրերով տվել է, որ մեր եկեղեցական արարողությունը ըստ ժամանակի և պահանջովն ազատորեն գործածեն»<sup>22</sup>: Հովվապետը կոչում է չերկյուղել նմանօրինակ հարձակումներից, և եթե հայոց հոգևոր արարողակարգերի վերաբերյալ կառավարող Մինոդից կամ այլոցից գրավոր հարցում արվի՝ չպատասխանել, այլ գրությունն ուղարկել իրեն կամ Աստրախանի հայոց կոնսիստորիային. «...զի ողորմած թագուհին վասն այդպիսի հոգևոր բանից է մեզ կանցիստոր շնորհեալ, որ մեր ազգն առանց կանցիստորի և մեր գիտութեան ոչինչ հոգևոր բան չառնե»<sup>23</sup>:

Այս ամենը բխում էր նաև այն իրողությունից, որ ռուս հոգևորականների կողմից հայերը երբեմն դիտվում էին ոչ միայն որպես օտար դավանանքի, անգամ կրոնի ներկայացուցիչներ, այլև անհավատներ:

Այդ թյուրըմբռման հաղթահարմանն էր ուղղված արքեպիսկոպոսի կողմից հայոց դավանանքի վերաբերյալ գրքերի հրատարակումը: «Տեսնելով, որ Ռուսաստանի ժողովուրդը բաւական ծուռ դատողութիւն ունի հայոց հաւատի վրայ և նրանց զանազան անուններ է տալիս, օրինակի համար ասենք՝ Արիոսի աշակերտ, Նեստորի աշակերտ, և հասկանալով, որ քանի որ տերության հավատը մեծ ազդեցություն ունի քաղաքական օրենքների վրա, նա թարգմանել է տալիս հայերենից ռուսերեն հայոց եկեղեցու դաւանաբանութիւնը, այսինքն՝ աղոթքը, որ մեր եկեղեցումը կարդացվում է և սկսվում է էս բառերով՝ «խոստովանիմ և հաւատամ», հետո աղոթքի ընդարձակ մեկնությունը: Նմանապես մեր եկեղեցու մկրտության ու դրոշմի կարգը և պատարագամատոյցը տպում է

<sup>21</sup> Привилегия (ռուս.) արտոնագիր, արտոնություն, առանձնաշնորհում:

<sup>22</sup> ՄՄ, ձեռ. հ<sup>4</sup> 2949, թ. 127ա:

<sup>23</sup> Նույնը:

Պետերբուրգում 1799 թ. այս անունով. «Исповедание христианской веры Армянской церкви»<sup>24</sup>:

Փաստորեն, հովվելով օտար երկրում տեղակայված թեմը, արքեպիսկոպոսը քայլեր էր ձեռնարկում հայ և ռուս ժողովուրդների հոգևոր միասնության պահպանման ու ամրապնդման ուղղությամբ: Նրա հոգևոր գործունեությունն ուղղված էր երկու քրիստոնյա ժողովուրդների միջև դավանաբանական տարաձայնությունները հարթելուն: Այդ նպատակին էին ուղղված իր հովվապետության ընթացքում Արղությանի բազմաթիվ հանդիպումները և նամակագրական կապերը ռուս հոգևոր գործիչների՝ Մոսկվայի Պլատոն և Մանկտ Պետերբուրգի Գաբրիել արքեպիսկոպոսների, Ռոստովի վիճակի առաջնորդ Մամուել եպիսկոպոսի և այլոց հետ, որոնց հետ մշտապես քննարկում էր դավանաբանական հարցեր<sup>25</sup>:

Հ. Արղությանը գիտակցում էր, որ դավանափոխության պատճառներից մեկն էլ հայերի՝ ռուսական միջավայրում ու ռուսական օրենքների ներքո բնակվելու իրողությունն էր: Ուստի նրա անմիջական մասնակցությամբ Մանկտ Պետերբուրգի (այնուհետև Նոր Նախիջևանի ու Աստրախանի) տպարանում հայ բնակչության լայն շերտերի համար տպագրվում էին հայոց եկեղեցու խորհուրդների վերաբերյալ հայերեն գրքեր: Նոր Նախիջևանի հայկական տպարանում տպագրվող գրքերի վերաբերյալ տպարանի վերակացու և գլխավոր սրբագրիչ Թադևոս Մարտիրոսյանին Արղությանը զգուշացնում է. «...ջանասցես որ երբեք ընդդեմ մերս եկեղեցուց դաւանութեան հաւատելեաց և եկեղեցական կարգադրութիւն ինչ ոչ լինիցի: Այս ամենայն առողջ և ողջախոհ դատողութեամբ, որ ծաղր չլիցուք ազգին...»<sup>26</sup>:

Հայոց դավանանքի պահպանման ճանապարհին արքեպիսկոպոսը ստիպված էր գաղափարական պայքար մղել միաժամանակ Ռուսաստանում առկա այլադավան եկեղեցիների դեմ: Անհաշտ պայքար է մղվել Հովսեփ Արղությանի և Աստրախանի հույների հոգևոր առաջնորդի միջև: Բազմաթիվ նամակներում Արղությանը շեշտում է հույն եպիսկոպոսի թշնամական վերաբերմունքն առ իր անձը և հայ բնակչությունը<sup>27</sup>: Հնարավոր է, որ հունական եկեղեցուն անհաճո է թվացել ռուսական կառավարության առանձնահատուկ վերաբերմունքը հայ արքեպիսկոպոսի նկատմամբ:

Այս ամենից ելնելով՝ թեմակալ առաջնորդը 1798 թ. հոկտեմբերի 7-ին Մանկտ Պետերբուրգից «Հրաման Նախիջևանի հոգևոր դատարանին» խորագրով կոնդակով դիմում է քաղաքի հոգևոր կազմին: Կոնդակի երրորդ կետը հռչակում էր. «...Մի՛ երբեք համարձակեցի որ ի յեկեղեցիս հունաց քահանայ, սարկաւագ և կամ դպիր նոր երգ ինչ մուծանել յեկեղեցին, զայնպիսի անձն դատե՛լ իրապարակաւ և արտաքսե՛լ յեկեղեցույն որպէս զխանգարիչս կարգացն նախնեաց»<sup>28</sup>:

<sup>24</sup> «Կրունկ հայոց աշխարհին», Թիֆլիս, 1863, թիւ Դ, էջ 289-290:

<sup>25</sup> Տե՛ս ՄՄ, ձեռ. հմբ 4496, թ. 207, ձեռ. 9647, թթ. 15ա-15բ, 17բ, 19բ, 22բ, Աղանեանց Գ., Դիւան հայոց պատմութեան, հ. Թ, Թիֆլիս, 1911, էջ 389-392:

<sup>26</sup> ՄՄ, ձեռ. 4496, թ. 140բ:

<sup>27</sup> Նույն տեղում, ձեռ. հմբ 2949, թթ. 114ա-114բ, 117ա-117բ, 120ա:

<sup>28</sup> Նույն տեղում, ձեռ. 2951, թ. 221բ:

Հայոց դավանանքի պահպանման ու ամրապնդման ճանապարհին Հ. Արդու-թյանի առջև լուրջ մարտահրավեր էր Եվրոպայից եկող կաթոլիկության և աղանդների վտանգը: 1780 թ. Եվրոպայից Ռուսաստան է ներթափանցում կաթոլիկ քարոզիչների նոր հոսք: Արքեպիսկոպոսն անմիջապես միջոցներ է ձեռք առնում հայերին զերծ պահելու նրանց ազդեցությունից: «Աստրախան էին եկել եզուիտներ, ուսումնարան բացել, հայերին քարոզել, հայերին պապի կողմը քաշել, Հովսեփը հասկացավ նրանց միտքը, 1780 թ. Պոտյոմկինից խնդրանք խնդրեց, որ Աստրախանի պաստերները իրենց քարոզը վերացնեն, հայոց եկեղեցական զգեստը և լեզուն իրենց եկեղեցում չօգտագործեն, ինչից հետո կաթոլիկական հավատն այլևս չտարածվեց Աստրախանի հայերի մեջ, և հայերն սկսեցին ծաղրել կաթոլիկներին՝ անվանելով աղթարմա»<sup>29</sup>:

Գ. Պոտյոմկինին հղած խնդրագրում Արդությանի կողմից շեշտված էր, որ հայկական եկեղեցիներում աղոթքը հայերեն կատարվի՝ վկայակոչելով կաթոլիկության վտանգները: Նաև նշում է, որ կաթոլիկությունը ընդունած շատ հայեր խնդրում են թույլատրել՝ վերականգնել նախկին հավատը<sup>30</sup>: Հետագայում ևս արքեպիսկոպոսն ու հայ հոգևոր գործիչները բազմիցս դիմում են Գ. Պոտյոմկինին՝ խնդրելով չխոչընդոտել հայերին՝ պահպանելու իրենց հավատը, իսկ այլադավանություն ընդունածներին հնարավորություն ընձեռնել առանց դժվարության վերադառնալու նախկին հավատին<sup>31</sup>:

Վաթոլիկությունը ընդունած հայերի հարցում Արդությանն առավել անհանդուրժողական դիրքորոշում ուներ՝ փորձելով խնդիրը լուծել նաև հոգևոր դատարանի միջոցով: Նա հրաժարվում է անգամ իր թեմում ընդունել Վրաստանից ժամանած կաթոլիկ ունի հայ Աֆթանդիլի և նրա եղբայրներին՝ տեղի ռուս գործիչներին տեղեկացնելով. «...ես ոչ թողում ևնցա ի վիճակի իմում ...հարկ է ևնցա ունիլ զօրէնս ռուսաց որպէս է սահման երկրի և զօրումի ուրբազի առ այս»<sup>32</sup>:

Արքեպիսկոպոսը միջնորդագիր ներկայացրեց ռուսական կառավարությանը, որպեսզի Ղրիմից Նոր Նախիջևան վերաբնակված և Եկատերինոսլավում<sup>33</sup> հաստատված հայ կաթոլիկները վերադառնան Ղրիմ՝ ելնելով հայկական նորակառույց գաղթօջախներն ու շրջակայքը միմիայն հայ առաքելականներով բնակեցնելու միտումից:

Նա Ղրիմ, Բեսարաբիա (Դնեստր և Պրուտ գետերի միջև ընկած շրջանը, ներկայիս Մոլդովայի տարածքի մեծ մասը և Ուկրաինայի Օդեսայի մարզի հարավային մասը) և Ռումինիա կատարած ճանապարհորդության ընթացքում զբաղվում էր հայ եկեղեցական հավատի ու օրենքների քարոզմամբ ոչ միայն տեղի հայերի, այլև այլազգիների շրջանում. «Այստեղ մեր սուրբ Ավետարանը, այսինքն՝ ուղղափառ հավատը տարածում

<sup>29</sup> «Կռունկ հայոց աշխարհին», Թիֆլիս, 1863, թիւ Դ, էջ 290:

<sup>30</sup> Армяно-русские отношения в XVIII веке. Сборник документов под ред. акад. М. Нерсисяна. Т. IV. Ереван. -1990. Док. 95. С. 157-158.

<sup>31</sup> ՄՄ, Վաթոլիկոսական դիվան, թղթ. 5, վավ. 26, թ. 5:

<sup>32</sup> ՄՄ, ձեռ. հ<sup>ա</sup> 4496, թթ. 119-120:

<sup>33</sup> Եկատերինա կայսրուհու հրամանագրով՝ Ղրիմից բռնագաղթված հայ կաթոլիկների համար բնակավայր էր նախատեսվել 1778 թ. հիմնադրված Եկատերինոսլավ (այժմ Դնեպրոպետրովսկ) քաղաքը:

ենք այլալեզու մոլորավացի քրիստոնյաների մեջ, գրով և խոսքով նրանց տեղեկացնում մեր սուրբ օրենքներին...»<sup>34</sup>, գրում է 1790 թ. հունվարին Մոլդովայի Յասսի քաղաքից: Կարծում ենք, նրա այդ քայլը եթե դրված չէր, գոնե թույլատրված էր տեղի ռուսական ռազմական գործիչների կողմից՝ նպատակ ունենալով օրինակ ծառայելու Մոլդովայի բնակչության համար՝ վերաբնակվելու ռուսական տարածքներ:

Հովսեփ Արղությանի անզիջում պայքարը կաթոլիկության դեմ իր արտահայտությունը գտավ Վենետիկի Մխիթարյան միաբանության գործունեության դատապարտման մեջ: Պարզև արեղա Գևորգյանն արքեպիսկոպոսին համարում է առաջին անձնավորությունը, «որը քննադատության ենթարկեց և դատափետեց Չամչյանի կաթոլիկամոլությունը և կրոնական խիստ նեղմտությունը: Նա Հնդկաստանի Մադրաս քաղաքում ապրող և իր ձեռնարկումներին աջակցող հայ վաճառականների միջոցով 1791 թ. առանձին գրքույկով հրատարակել է տալիս ընդարձակ շրջաբերական-նամակ՝ ուղղված հնդկահայերին, որով քննադատելով Ս. Չամչյանի գրքում տեղ գտած թերությունները, առանձնապես Հայոց Եկեղեցու և հոգևորականության մասին «գստութիւն և զխաբէութիւն» պարունակող պատմությունները, զգուշացնում է, որ այդ «քաղցրապատիր» պատմությունները նպատակ ունեն մեր ազգին ճանաչել տալ «...զպապն ընդհանուր գլուխ Եկեղեցույ և զամենայն աղանդս ինմանէ հնարեալս տալ ազգիս ընդունել, իբրև բանք Քրիստոսի...»<sup>35</sup>:

Զարմանալի չէ, որ նույնիսկ հնդկահայ գործիչ Շ. Շահամիրյանի հրատարակություններն (որոնք անգամ Միմեոն Երևանցի կաթողիկոսը մերժեց<sup>36</sup>) այդքան բարձր դատող Արղությանի կողմից Մխիթարյանների ստեղծած մշակութային արգասիքներին երբևիցե գնահատական չտրվեց: Ավելին, նա դրանք դիտեց որպես աղանդների տարածման աղբյուր, իսկ նրանց գործունեության վայրն անվանեց «զպիղծ որջն Վենետիկու»<sup>37</sup>:

1794 թ. «Ազդարարում» տպագրված Հովսեփ Արղությանի հողվածն արտահայտում է արքեպիսկոպոսի հույզերն ու տագնապներն օտար, արևմտյան դավանանքների նկատմամբ. «...Սհա ի մենջ հեստեալքն, որք են ի Վենետիկ, զանազան լեզուագիտութեամբ յառաջ ածեն այնքան երկս՝ ոչ ազգին օգնելոց, այլ ազգն նոքօք որսալոյ»<sup>38</sup>: Արղությանի հողվածում ակնհայտորեն զգացվում է նրա թշնամական վերաբերմունքը թե՛ արևմտյան, այն է՝ եվրոպական իշխանությունների, թե՛ Հռոմի հոգևոր կազմակերպության, թե՛ Պապի անձի նկատմամբ:

Հ. Արղությանը նշում է, որ իր նպատակն է այնպես անել, որ հայ ազգը տարբերի օտարն ու ընտանին, վնասակարն ու օգտակարը, ճանաչի ճշմարտությունը և վեր-

<sup>34</sup> ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 6, վավ. 18, թ. 7:

<sup>35</sup> Պարզև արեղա Գևորգեան, Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը և հայ տպագրության գործը Ռուսաստանում 18-րդ դարում, «Էջմիածին», թիւ 11, էջ 46:

<sup>36</sup> Մնացականյան Ա., 18-րդ դարում գրված հայ-ռուսական դաշնագրային երկու նախագծերի գնահատման հարցի շուրջ, «Բանբեր Մատենադարանի», N 4, 1958, էջ 155, Հայոց պատմություն, Երևան, հ. 3, 2010, էջ 172:

<sup>37</sup> ՄՄ, ձեռ. հ<sup>մ</sup> 4496, թ. 46:

<sup>38</sup> «Ազդարար», 1794, Մադրաս, թիւ 1, էջ 24:

ջապես ազգն ու եկեղեցին միասնական լինեն: Խոսելով հայ ազգի ներկա վիճակի մասին՝ նա գրում է. «...ահա լալիս եմ իմ ազգի անբախտ վիճակը տեսնելով և ոմանց կուրությամբ հետևելը...»<sup>39</sup>:

Հայերին դավանափոխության ճանապարհից հետ պահելու նպատակով նա ժամանակ առ ժամանակ կոնդակներով դիմում էր թեմի բնակչությանը: 1799 թ. հուլիսի 28-ին Սանկտ Պետերբուրգից հղած «Աս ամենայն վիճակս իմ գրեցաք ընդ թագաւորի մանիֆեստին» խորագիրը կրող կոնդակով դիմում է Ռուսական կայսրության ենթակայության տակ բնակվող իր հոտին՝ ներկայացնելով կայսերական մանիֆեստի հիման վրա կառավարիչ Սինոդից տրված հրովարտակը. «...որով կարէք բացայայտ գիտել զնորին կայսերական Բարեպաշտումին լծեալ ջերմեռանդութեամբ զքրիստոնէական հաւատոյ ուղղափառութեամբ որպէս պաշտպան գոլն եկեղեցոյ և հաւատոյ և լինիլ օգնական համայն, ի քաղաքս աստուածային հաւատացելոցդ ազգաց...»<sup>40</sup>: Կայսերական հրովարտակին, որը հռչակում էր կաթոլիկության դեմ պայքարի կոչ, Արղոյանի կողմից չափազանցված մեկնաբանություն էր տրվում՝ այն ներկայացնելով որպէս կայսրության կողմից իր հպատակ ժողովուրդների նկատմամբ մեծ հոգատարության և նվիրվածության հետևանք. «...ոչ տալով քուն աչաց և կամ հանգիստ սուրբ անձին իւրոյ, այլ զծիրանին իւր շաղաղելով ի յաշխատանս և ի քրտունալս պահպանութեամբ ամենահպատակ իւրոյ ժողովրդեանն ջանայ զի զերևեալ աղանդն անօրէն ֆռանգսիզցն յատուցելոցն անյիրաւութեամբ ի վերայ եկեղեցոցն Քրիստոսի, խորտակել զբռնութիւնն նոցա զօրութեամբ ամենայն և բնաջինջ առնել զնոսա յաշխարհ»<sup>41</sup>:

Մյուս կողմից, թեմի հոգևորականներին Արղոյանը մշտապես զգոն էր պահում՝ չշեղվել հայկական ավանդական ուղուց, խստագույնս պահպանել եկեղեցական արարողակարգերը, ավանդական կարգուկանոնը. «Ձի ես եկեղեցիս իմ ոչ կարեմ յաւուրս իմ նորաձևութիւն մշտնջենաւորս մուծանել»<sup>42</sup>, -1788 թ. ապրիլի 25-ին գրում է նա թ. Սարուքյանին: Վերջինիս նույն թվականի մայիսի 2-ին դարձյալ հորդորում է՝ հետևել հոգևոր արարողակարգերի անթերի կատարմանն ու եկեղեցին զերծ պահել «նորաձև և այլանդակ մուծմանց»<sup>43</sup>:

Այդ ճանապարհին Արղոյանն աննահանջ պայքար մղեց աշխարհիկ իշխանության դեմ՝ փորձելով եկեղեցին զերծ պահել աշխարհականների միջամտությունից: Արղոյանի կոնդակներում քանիցս շեշտված է, որ աշխարհականներն իրավունք չունեն խառնվելու հոգևոր գործերին, իսկ եկեղեցականները պետք է պաշտպանեն իրենց իրավունքները նրանց նկատմամբ: Բազմաթիվ նամակներով աշխարհական դատավորներին նա հորդորում ու պահանջում է զերծ մնալ կրոնական գործերի վարույթից, ձեռք չմեկնել եկեղեցական շահույթին և եկեղեցականների ունեցվածքին<sup>44</sup>:

<sup>39</sup> «Ազդարար», 1794, Մադրաս, թիւ 1, էջ 24-25:

<sup>40</sup> ՄՄ, ձեռ. հ<sup>4</sup> 2951, թթ. 279բ-280ա:

<sup>41</sup> Նույն տեղում, թ. 280ա:

<sup>42</sup> ՄՄ, ձեռ. հ<sup>4</sup> 2949, թ. 64բ:

<sup>43</sup> Նույն տեղում, թ. 66բ:

<sup>44</sup> ՄՄ, ձեռ. հ<sup>4</sup> 4496, թ. 1, ձեռ. 2951, թթ. 58ա, 197բ, 199բ, 244ա-244բ, 251ա, 317:

Արղությանն աղանդների և հերձվածների վերաբերյալ հարցեր է քննարկում Ամենայն Հայոց կաթողիկոս Ղուկաս Կարնեցուն (1780-1799) ուղղած նամակներում<sup>45</sup>:

*Եզրահանգում.* Այսպիսով, իր հովվության առաջին օրերից սկսած, արքեպիսկոպոսն ստիպված էր անդուլ պայքար մղել հայոց եկեղեցու դավանանքի պահպանման համար: Պայքարի անհրաժեշտությունը բխում էր ոչ միայն նորաստեղծ և մինչ այդ եղած հայ համայնքներում հայոց եկեղեցու խորհուրդն ամրապնդելու հրամայականից, այլև տեղի ռուս հոգևոր և աշխարհական գործիչների կողմից հայկական եկեղեցու նկատմամբ գործադրված կամայականությունների ու ապօրինությունների մերժումից: Զմյուռնիայի քահանաներից Եղիային ներկայացնելով հայ առաքելական հավատի կարևորությունն ազգապահպան գործում, Արղությանը գրում է. «Մաքուր հաւատն մեր գրեթէ նոր նորոգի ցաւ ի յերկրի աստ, ի մէջ այլազգ քրիստոնէիցս ի գլխոյն սկսեալ մինչև յետինքն հոգևորինքն և աշխարականք մեօք ճանաչեցին զճշմարտութիւն սուրբ հաւատայ մերոյ և կարգայ եկեղեցոց: Տակաւին ծառայ անգիտան իմ գոր պարտ էր առնել արարաք և առնիմք և առնելոց ոչ դադարիմք...»<sup>46</sup>:

Ի վերջո, ռուսահայ թեմի բազմափորձ աթոռակալին հաջողվում է կանխել երկփեղկվածությունը, ամրապնդել Հայոց եկեղեցու սահմանած նվիրապետական կարգը՝ այն խախտելու յուրաքանչյուր փորձ ի սկզբանէ կանխելով: Նրա վարդապետության օրոք թեմի հայ բնակչության ճնշող մեծամասնությունը չըղկվեց հայոց եկեղեցու ճշմարիտ ուղուց, չհարեց այլ դավանանքների:

## ВОПРОСЫ ВЕРООТСТУПНИЧЕСТВА В ДЕЯТЕЛЬНОСТИ ОВСЕПА АРХИЕПИСКОПА АРГУТЯНА В РОССИЙСКО-АРМЯНСКОЙ ДУХОВНОЙ ЕПАРХИИ

*Амирджанян А. О.*

**Ключевые слова:** *социально-экономический, духовный, церковь, Католикос Всех Армян, Эчмиадзин, архиепископ, епархиальный предводитель, духовно-административный.*

Статья посвящена экуменическим взглядам видного религиозного деятеля, епархиального предводителя армянской церкви в России - Иосифа Аргутяна. Архиепископ (1779-1801) сыграл важную роль в основании городов Новый Нахичевань и Григориополь и в деле организации переселения армян в России в конце XVIII в. Его усилиями были установлены права и обязанности духовной власти Новой Нахичевани, Астрахани и т. д., в том числе урегулированы становление института семьи и вопросы наследия.

В статье, в частности рассматриваются подходы и взгляды архиепископа к примирению в христологическом споре. Несмотря на многовековую связь русской православной и армянской апостольской церкви, русская церковь использовала любую возможность для вероотступничества, пользуясь тяжелым социальным положением народа и обещая им безбедное существование. С этой целью русское духовенство использовало молодежь.

<sup>45</sup> ՄՄ, ձեռ. հ<sup>փ</sup> 2966, թ. 26ա:

<sup>46</sup> ՄՄ, ձեռ. հ<sup>փ</sup> 2699, թ. 143ա:

В концепции вероотступничества Иосиф Аргутян выделяет роль традиционной веры, как ценность семейно-культурной среды, и его роль в жизни местного армянского населения. Особое внимание он обращает на единство церкви, на правомочиях армянской епархии.

Благодаря его деятельности армяне сохранили армянскую веру. Его усилиями были установлены права и обязанности духовной власти армянской диаспоры, урегулированы духовные дела епархии.

## APOSTASY ISSUES IN THE ACTIVITIES OF ARCHBISHOP HOVSEP ARGHUTYAN IN THE ARMENIAN EPARCHY IN RUSSIA

*Amirjanyan H. H.*

**Key words:** *social and economical, religions, Church, Catholicos of All Armenians, Echmiadzin, Archbishop, leader of eparchy, religious-administrative.*

The article presents the ecumenical views of the prominent religious figure, the leader of Armenian eparchy in Russia Archbishop Hovsep Arghutyan. Hovsep Arghutyan (1779-1801) was the founder of New Nakhichevan, Grigoriopol and resettled Armenians in these new cities in the last quarter of the XVIII centuries. One of the main activities of Hovsep Arghutyan was the improvement of the religious-administrative regulations in New Nakhichevan, Astraghan, etc. and the development for the Familie Institution.

In this context, the Archbishops' approaches concerning the issue of reconciliation in Christological disputes are examined. Despite the close relationship between the Russian Orthodox and Armenian Churches, the Russian church used any opportunity to impose apostasy on Armenians taking advantage of their hard social conditions and promising them a prosperous life. The Russian clergy also had the support of the youth.

As far as the issues of apostasy are concerned, Hovsep Arghutyan paid special attention to the influence of traditional belief on the formation of personality and preservation of family traditions for Armenian diaspora. One of the main activities of Hovsep Arghutyan was the improvement in the unit of Armenian Church, and legacy of Armenian diocese.

He played significant role of the organization of the spiritual life of Armenian diaspora, of the propagation of the Armenian spiritual life.

### Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. «Ազդարար», 1794, Մադրաս, թիւ 1, էջ 24:
2. Ադանեանց Գ., Դիւան հայոց պատմութեան, հ. Թ, Թիֆլիս, 1911:
3. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, իւմբ. Խ. Արրահամյան, Վ. Առաքելյան, հ. 4, Երևան, 1980, էջ 137:
4. «Կռունկ հայոց աշխարհին», Թիֆլիս, 1863, թիւ Դ:
5. Հայոց պատմություն, Երևան, հ. 3, 2010:
6. Մերոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. հ<sup>Պ</sup> 2949, 2951, 2966, 4496:
7. Մերոպ Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 5, վավ. 26, թղթ. 6, վավ. 18:

8. Մնացականյան Ա., 18-րդ դարում գրված հայ-ռուսական դաշնագրային երկու նախագծերի գնահատման հարցի շուրջ, «Բանբեր Մատենադարանի», N 4, 1958:
9. Պարզև արեղա Գեորգեան, Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը և հայ տպագրության գործը Ռուսաստանում 18-րդ դարում, «Էջմիածին» հրատ., թիւ 11:
10. Армяно-русские отношения в XVIII веке. Сборник документов под ред. акад. М. Нерсисяна. Т. IV. Ереван. -1990.

*Ընդունվել է՝ 09. 04. 2021*

*Գրախոսվել է՝ 18. 05. 2021*

*Հանձնվել է տպ.՝ 21. 06. 2021*

**Տեղեկություններ հեղինակի մասին**

Հասմիկ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ՝ պատմական գիտությունների թեկնածու,  
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նոր պատմության բաժնի  
ավագ գիտաշխատող, էլ. հասցե՝ amirjanyan.hasmik@rambler.ru

ՀՏՂ՝ 93.94

DOI: 10.52971/18294316-2021.1-51

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԸ ՌՈՒՍԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ  
ՀՈՐԶԱՆՈՒՏՈՒՄ (1905-1907թթ.)

*Արմեն Հայրապետյան*

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն  
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

**Բանալի բառեր՝** գործադուլ, բանվորական շարժում, երկաթուղային կայարան, ցարիզմ, ոստիկանություն, ռազմական դրություն:

1905թ. հունվարի 9-ին Պետերբուրգում խաղաղ ցուցարարների գնդակոծմամբ սկսվեց Ռուսաստանում առաջին բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը: Այն ալեկոծեց ողջ երկիրը՝ իր հորձանուտի մեջ առնելով նաև Ալեքսանդրապոլը: Վերջինս ամենահեղափոխական քաղաքն էր Անդրկովկասում մինչև 1907թ.:

Սույն հոդվածի շրջանակներում գիտական գրականության, արխիվային վավերագրերի և պարբերական մամուլի հաղորդումների համադրմամբ՝ առանձին քննության առարկա է դարձել Ռուսական առաջին հեղափոխության տարիներին Ալեքսանդրապոլում ծավալված բանվորական շարժումների պատմությունը, ներկայացվել են շարժման պատճառները, ընթացքը և արդյունքները, լուսաբանվել են հեղափոխական շարժումն արմատախիլ անելու ուղղությամբ իշխանությունների գործադրած քայլերը:

**Նախաբան.** XIX դարավերջին Արևելյան Հայաստանը ներքաշվեց համառուսական կապիտալիզմի հորձանուտ, հիմնվեցին գործարաններ ու ֆաբրիկաներ, մեծ մասշտաբներ ընդունեց լեռնահանքային արդյունաբերությունը: Բուրժուազիայի կազմավորմանը զուգընթաց՝ հայտնվեց նաև բանվոր դասակարգը: Վերջինիս ձևավորման համար հիմնական աղբյուր հանդիսացավ տեղի աղքատացած ու հողազուրկ գյուղացիությունը, որ, պայմանավորված կապիտալիստական հարաբերությունների անհամաչափ

զարգացամբ, զանգվածաբար շարժվեց դեպի համեմատաբար խոշոր քաղաքներն ու արդյունաբերական կենտրոնները:

Հասարակական-քաղաքական կյանքում սկսված տեղաշարժերը և բանվորական շարժման վերելքը նպաստավոր պայմաններ ստեղծեցին հայ իրականության մեջ բանվորական մարքսիստական խմբակների ստեղծման համար: Սոցիալ-դեմոկրատական առաջին խմբակն Ալեքսանդրապոլում հիմնվեց 1902թ.՝ կայագործում: Այն առավել հայտնի էր «Սոցիալ-դեմոկրատական խմբի Ալեքսանդրապոլի բաժանմունք» անունով, ուներ գաղտնի գրադարան, կապեր էր հաստատել ՌՄԴԲԿ Կովկասյան միության հետ, ստեղծել էր ընդհատակյա քարոզչական աշխատանքի լայն ցանց և տարածում էր հեղափոխական կոչեր, թուղթիկներ ու բրոշյուրներ: Մինչև 1904թ. հիմնվեցին նաև երկաթուղայինների և քաղաքի աշխատավորների սոցիալ-դեմոկրատական խմբակները: Ռուսական առաջին հեղափոխության նախօրեին այս կազմակերպությունները հեղափոխական մեծ աշխատանք ծավալեցին կայագործի զինվորների, կրտսեր հրամանատարական կազմի, երկաթուղային բանվորների և աշխատավորական մյուս խավերի շրջանում<sup>1</sup>:

Ջարգացող կապիտալիստական հարաբերությունների ոլորտում ներգրավված Ալեքսանդրապոլը XIX դարավերջից դարձավ հասարակական բախումների և բանվորական շարժումների ասպարեզ: Այստեղ գործող 31 ձեռնարկություններում (օճառ, կաշի, գարեջուր, աղյուս և այլ) լայնորեն կիրառվում էր վարձու աշխատանքը<sup>2</sup>:

#### **Բանվորական շարժումներն Ալեքսանդրապոլի գավառում 1905-1907թթ.**

Տնտեսական հողի վրա առաջին ելույթն Ալեքսանդրապոլում տեղի ունեցավ արդեն 1895 թ.: Հուլիսին ընդվզեցին Մալխասյանի տպարանի բանվորները: «Մշակ»-ի թղթակցի հավաստմամբ՝ «գործադուլի պատճառը ռոճիկի քչութիւնը և անկանօն վճարելն էր, բանտըրը ստանում էր ամսական 3-12 ռուբլի, իսկ օրական բանում՝ 14-16 ժամ»<sup>3</sup>: 1896 թ. դեկտեմբերի 11-ին գործադուլ արեցին նաև Մեծ Ղարաքիլիսայի մոտ՝ Ջամանլուի կամուրջի շինարարության բանվորները: Դեպքի վայր ժամանած ոստիկանները կրակ բացեցին ցուցարարների ուղղությամբ՝ վիրավորելով երեք հոգու<sup>4</sup>:

XXդ. սկզբին բանվորական ելույթներն առավել մեծ մասշտաբներ ընդունեցին: 1902-1903 թթ. ոտքի ելան Ալեքսանդրապոլ և Ղարաքիլիսա կայարանների երկաթուղային բանվորները: Գործադուլավորները պահանջում էին բարձրացնել աշխատավարձը, կրճատել աշխատանքային օրը, բանվորներին տալ անվճար ապահովագրություն, հանրակացարան, արձակուրդի ժամանակ պահպանել աշխատավարձը, հաստատել գիշերային հերթապահություն և այլն: Մակայն, ոստիկանության ուժերի միջամտությամբ

<sup>1</sup> Աղայան Մ., Հայաստանը 1905-1907թթ. ռևոլյուցիայի տարիներին // «Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին» (հոդվածների ժողովածու), Երևան, 1955, էջ 42-43:

<sup>2</sup> Список фабрик из заводов Российской Империи. Под ред. Варзара В.Е. СПб. -1912. С. 265.

<sup>3</sup> Խաժ. Ա., Նամակ Ալեքսանդրապոլից, «Մշակ», օրաթերթ, Թիֆլիս, 1895, N 88, 5 օգոստոսի, էջ 3:

<sup>4</sup> Ավետիսյան Վ., Մի էջ Հայաստանի բանվորական շարժումների պատմությունից, Երևան, 1961, էջ 30-31:

իշխանություններին հաջողվեց ելույթը ճնշել: Նույն ճակատագրին արժանացավ նաև 1904թ. ապրիլի 29-ին Ալեքսանդրապոլում կենցաղային ձեռնարկությունների աշխատողների և տնային ծառայողների հայտարարած գործադուլը: Սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ղեկավարությամբ գործադուլավորներն ընտրեցին կոմիտե, մշակեցին տնտեսական պահանջներ և ներկայացրին ձեռնարկատեր Չիթոդյանին: Մակայն դրանք մերժվեցին, իսկ մահակներով զինված ոստիկաններն ապրիլի 30-ին ցրեցին միտինգը՝ ձերբակալելով ղեկավարներին<sup>5</sup>:

Ալեքսանդրապոլցի աշխատավորների այս ելույթները հիմնականում ունեին տնտեսական բնույթ և անկազմակերպ էին, բայց դրանք կարևոր նշանակություն ունեցան, որովհետև բացեցին քաղաքական գործադուլների ու հեղափոխական ելույթների մի ամբողջ շրջան:

1905թ. հունվարի 9-ին Պետերբուրգում խաղաղ ցույցի ելած բանվորների գնդակոծմամբ սկսվեց Ռուսաստանում բուրժուա-դեմոկրատական առաջին հեղափոխությունը: Այն ալեկոծեց ողջ երկիրը՝ հասնելով ազգային ծայրագավառներ: Մարտի կեսերից գործադուլային շարժումների մեջ ընդգրկվեց նաև Ալեքսանդրապոլը:

Հեղափոխական շարժմանն առաջինն արձագանքեցին երկաթուղային բանվորներն ու ծառայողները: Արդեն 1905թ. մարտի 20-ին գործադուլ սկսվեց Ալեքսանդրապոլ-Ղարաբիլիսա երկաթուղագծում: Իշխանությունները փորձեցին Թիֆլիսից Երևան ողջ գծի երկարությամբ զինվորական հսկողություն սահմանել<sup>6</sup>, սակայն կանխելով զորքերի հնարավոր տեղաշարժը՝ գործադուլավորները որոշ հատվածներում հանեցին երկաթուղային գծերը<sup>7</sup>: Ապրիլի 5-ին իրենց տնտեսական պահանջները ներկայացրին նաև Ալեքսանդրապոլ կայարանի բանվորները: Նույն օրը դադարեց գնացքների երթևեկությունը Թիֆլիս-Երևան և Ալեքսանդրապոլ-Կարս ուղղություններով: Համաձայն Երևանի նահանգապետի 1905թ. ապրիլի 25-ի Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Ղաշկովին ներկայացրած զեկուցագրի՝ «Ալեքսանդրապոլն այդ օրերին ամենահեղափոխական քաղաքն էր Անդրկովկասում»<sup>8</sup>: Գործադուլը ճնշելու համար իշխանությունները դիմեցին զորքի օգնությանը: Երկաթուղագիծ բերված Կաբարդինյան 80-րդ հետևակային գնդի 1-ին վաշտը գծի վրա մնաց մինչև հունիսի 17-ը<sup>9</sup>:

Մակայն ապրիլյան գործադուլները միայն բանվորական շարժումներով չսահմանափակվեցին: Ըստ Երևանի նահանգային ժանդարմական վարչության պետի 1905 թ. ապրիլի 5-ի Ոստիկանության ղեկարտամենտ ներկայացրած զեկուցագրի՝ «Մարտի վերջին Ալեքսանդրապոլի քաղաքային դուման ընդունեց և Կովկասի փոխարքային մատուցեց 15 կետից բաղկացած մի հանրագիր, որով պահանջում էր՝

<sup>5</sup> Համբարչյան Ա., Մուրադյան Ա., Միմոնյան Ա., Արևելյան Հայաստանի պրոլետարիատի պատմություն, Երևան, 1988, էջ 175:

<sup>6</sup> Революция 1905 г. в Закавказье (Хроника событий, документы и материалы). Тифлис. -1926. С. 119.

<sup>7</sup> Революция 1905 г. в Закавказье. С. 126.

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 117-118:

<sup>9</sup> Հարությունյան Գ., Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905-1907թթ., Երևան, 1956, էջ 79:

1. մտցնել դասային զեմսովոյական հիմնարկներ և փոխել քաղաքապահի կանոնադրությունը՝ լրիվ ինքնավարության և ընդհանուր քվեարկության սկզբունքներով,
2. մտցնել երդվյալ ատենակալների դատարան և ընտրովի հաշտարար դատավորներ, դատավարությունը կազմակերպել մայրենի լեզվով, գերազանցապես հայերով բնակեցված շրջաններում դատավորների համար պարտադիր համարել հայոց լեզվի իմացությունը,
3. հայ բնակչության համար պարտադրաբար բաժնեհողեր գնել գանձարանի օժանդակությամբ՝ ներքին նահանգների համար կիրառվող ընդհանուր հիմունքներով, տեղական սակավահող ու հողագուրկ գյուղացիներին տալ պետական ազատ հողերի վրա բնակվելու իրավունք,
4. Կովկասում մտցնել ընդհանուր, պարտադիր ձրի տարրական ուսուցում,
5. տարրական դպրոցներում մտցնել մայրենի լեզվի պարտադիր ուսուցում,
6. ժողովրդին տալ ժողովների, հավաքությունների, միությունների և գործադուլների ազատություն,
7. տեղական մամուլն ազատել գրաքննությունից և դատարանի առջև պատասխանատվությունից,
8. ապահովել անձի և գույքի անձեռնմխելիություն,
9. մտցնել ութժամյա աշխատանքային օր և բանվորների պարտադիր ապահովագրում,
10. սահմանել աշխատավարձի նվազագույն շեմ,
11. վերացնել ուժեղացված պահնորդությունն ու ռազմական դրությունը Կովկասում,
12. վերացնել դավանանքային ու կրոնական սահմանափակումները, սահմանել խղճի ազատություն,
13. երդման արարողությունը կատարել մայրենի լեզվով,
14. Հայ Առաքելական եկեղեցուն վերադարձնել վանքերին, նախկին ծխական ու թեմական դպրոցներին պատկանած և 1903թ. օրենքով բռնագրավված գույքն ու կապիտալը,
15. ներում շնորհել վարչական կարգով աքսորված բոլոր հայերին»<sup>10</sup>:

«Մշակ» պարբերականի հավաստմամբ՝ 28 կետերից բաղկացած նմանատիպ հանրագիր նույն օրերին կազմվեց և Նախարարների կոմիտե ուղարկվեց նաև Երևանի բնակիչների կողմից<sup>11</sup>: Այդ հանրագրերը արտացոլում էին արևելահայության աճող պայքարը տիրող կարգերի դեմ:

1905թ. հոկտեմբերի 7-ին սկսվեց Համառուսաստանյան քաղաքական գործադուլը, որով հեղափոխական շարժումը երկրում թնակոխեց իր զարգացման բարձրագույն աստիճանը: Մեկ շաբաթ անց քաղաքական գործադուլների ալիքը հասավ Անդրկովկաս և իր հորձանուտի մեջ առավ նաև Ալեքսանդրապոլը: Հոկտեմբերի 14-ի երեկոյան Ալեքսանդրապոլի հանգույցում հրավիրված ժողովը որոշեց միանալ համառուսաստանյան գործադուլին: Հաջորդ օրը երթևեկությունն Ալեքսանդրապոլ-Կարս և Ալեքսանդրապոլ-Երևան գծամասերում կանգ առավ: Մեքենավար Ս. Շահբազյանի

<sup>10</sup> Հարությունյան Գ., նշվ. աշխ., էջ 86:

<sup>11</sup> Երևանի Դումայի որոշումները // «Մշակ» օրաթերթ, Թիֆլիս, 1905, N 64, 7 ապրիլի, էջ 2:

գլխավորությամբ կազմակերպված գործադուլային կոմիտեն բանվորական վերահսկողություն հաստատեց ողջ հանգույցի և երկաթուղային երթուղիության վրա, իսկ երկաթուղայիններից կազմված զինված ջոկատները զինաթափեցին երկաթուղային պահակախմբերին<sup>12</sup>: Գնացքներն աշխատելու էին բացառիկ դեպքերում, այն էլ՝ բանվորների թույլտվությամբ:

Հոկտեմբերի 16-ին գործադուլային կոմիտեն հրապարակեց 18 կետից կազմված թռուցիկ, որով պահանջում էր սահմանել ութամյա աշխատօր, բարձրացնել աշխատավարձը, բանվորներին և ծառայողներին տալ պետական ապահովագրություն և անվճար բժշկական օգնություն, վերացնել երեկոյան և գիշերային աշխատանքները, անհապաղ հրավիրել սահմանադիր ժողով, ազատ արձակել քաղաքական բանտարկյալներին, ազգություններին տալ իրավահավասարություն, խոսքի, մամուլի, հավաքույթների, միությունների, կրոնի ազատություն և այլն<sup>13</sup>:

Շարժումը ճնշելու համար իշխանություններն Ալեքսանդրապոլի երկաթգծում ռազմական դրություն հայտարարեցին, ապա փորձեցին Թիֆլիսից կազակային զորամասեր տեղափոխել այստեղ: Դրան ի պատասխան՝ գործադուլավորները մի շարք վայրերում կազմակերպեցին զինվորական գնացքների խորտակումներ: Այսպես, հոկտեմբերի 15-ին Ղարաքիլիսա և Շահալի կայարանների միջև խորտակվեց Թիֆլիս գնացող զինվորական գնացքը (զոհվեցին 5, վիրավորվեցին 5 կազակներ): Եվս մեկ զինվորական գնացք խորտակվեց հոկտեմբերի 16-ին՝ Սանահին կայարանի մոտ (զոհվեցին 3, վիրավորվեցին 5 կազակներ)<sup>14</sup>:

Կրած անհաջողություններից հետո իշխանությունները գործադուլավոր բանվորներին ուղղակի փոխարինեցին զինվորներով: 1905թ. հոկտեմբերի 16-ին Կովկասյան 2-րդ սակրավորական գումարտակից երկու վաշտ գործուղվեց Ալեքսանդրապոլ կայարան՝ «երկաթուղու ուղեգծերում նորոգման բանվորների, լապտերավարների և հեռագրավարների պարտականությունները կատարելու համար»<sup>15</sup>:

Հեղափոխական շարժման հետագա աճը կանխելու նպատակով 1905թ. հոկտեմբերի 17-ին Նիկոլայ II-ը հրապարակեց մանիֆեստ, որը հռչակում էր քաղաքացիական ազատությունների անխախտ հիմունքներ, անձի իսկական անձեռնմխելիություն, խղճի, խոսքի, ժողովների և միությունների ազատություն: Այդ փաստաթուղթը խոստանում էր նաև օրենսդիր դումա և այդ դումայի ընտրություններին հասարակության բոլոր խավերի ներկայացուցիչների մասնակցություն:

<sup>12</sup> Всероссийская политическая стачка в октябре 1905 г. Документы и материалы. Ч. I. Москва-Л. -1955. С. 214-215.

<sup>13</sup> Революционное движение в Армении в 1905-1907 гг. Сборник материалов и документов. Ереван. -1955. С. 146-147.

<sup>14</sup> Революция 1905 г. в Закавказье. С. 78-79.

<sup>15</sup> Վրաստանի պատմության կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՎՊԿԱ), ֆոնդ 27, ցուցակ 1, գործ 192, թ. 35:

Մանիֆեստի հրապարակումից հինգ օր անց երկաթուղին վերագործարկվեց<sup>16</sup>: Մակայն բանվորական շարժումները չդադարեցին:

Նոյեմբերի 15-ին Մոսկվայի փոստ-հեռագրատների ծառայողների գործադուլով համառուսական գործադուլային շարժումը վերսկսվեց: Նոյեմբերի 16-ին դադարեց աշխատանքը նաև Ալեքսանդրապոլի փոստ-հեռագրատանը: Իգրայելովի նախագահությամբ կազմված գործադուլային կոմիտեն (գանձապահ՝ Անանին, քարտուղար՝ Կոլելով)<sup>17</sup> բաժանմունքի ծառայողներից ֆինանսական միջոցներ հավաքեց Մոսկվայի գործադուլային կոմիտեին աջակցելու համար:

Տեղի ունեցածը լուրջ տագնապ առաջացրեց քաղաքային և զինվորական իշխանությունների շրջանում: Հեռագրատան աշխատանքները վերսկսելու համար իշխանությունները կրկին դիմեցին գորքի օգնությանը, սակայն ձախողվեցին և ստիպված եղան գործադուլավորներին այս անգամ ևս փոխարինել զինվորներով:

Ալեքսանդրապոլի կայագործի պետին ներկայացրած 1905թ. նոյեմբերի 16-ի իր զեկուցագրում Կաբարդինյան 80-րդ հետևակային գնդի հրամանատար Լևիցկին տեղի ունեցածը նկարագրել է հետևյալ կերպ. «Այն բանից հետո, երբ գործադուլավորները մերժեցին անհապաղ աշխատանքի անցնելու առաջարկս, հրամայեցի գրասենյակից հեռացնել բոլոր չինովնիկներին, դռները կնիքեցի, դրանց մոտ պահակակետեր նշանակեցի, իսկ կառավարական պաշտոնական հեռագրերի ընդունման համար փոստ-հեռագրական գրասենյակի պետի տրամադրության տակ թողեցի հեռագրային գործին տիրապետող 3 զինվորականներին»<sup>18</sup>:

Փոստ-հեռագրատան ծառայողների գործադուլը շարունակվեց մոտ մեկ ամիս և ավարտվեց միայն դեկտեմբերյան զինված ապստամբության պարտությունից հետո:

Հեղափոխական իրադրության հասունացումը 1905թ. դեկտեմբերի 9-ին երկիրը հասցրեց զինված ապստամբության: Այն սկսվեց Մոսկվայից և շարունակվեց 9 օր: Ջինված ապստամբությանն Ալեքսանդրապոլն արձագանքեց քաղաքական նոր գործադուլներով: Դեռևս հոկտեմբերին ստեղծված երկաթուղայինների գործադուլային կոմիտեն անմիջապես իր վերահսկողությունը հաստատեց տեղի հանգույցի և Ալեքսանդրապոլ-Կարս ու Ալեքսանդրապոլ-Ուլուխանլու-Երևան գծամասերի վրա: Դեպոյի և կայարանի ցարական պաշտոնյաները փոխարինվեցին բանվորներով, կազմակերպվեցին զինված ջոկատներ, դատարան և փոխօգնության դրամարկղ: Բանվորական հավաքներ գումարելու համար կոմիտեն շենք վարձեց, որտեղ տեղավորվեց նաև հեղափոխական դատարանը: Վերջինս եռանդուն գործունեություն ծավալեց բանվորների շրջանում կարգապահությունը պահպանելու համար:

Չեզոքացնելով պետական մարմիններին՝ Ալեքսանդրապոլի գործադուլային կոմիտեն վերածվեց բանվորների հեղափոխական իշխանության օրգանի՝ իրականացնելով բանվորների դեպուտատների խորհրդի ֆունկցիաներ:

<sup>16</sup> Панкратова А. М. Первая русская революция 1905-1907 гг. Москва. -1951. С. 135.

<sup>17</sup> Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆոնդ, 103, ցուցակ 1, գործ 165, թ. 116:

<sup>18</sup> Высший подъем революции 1905-1907гг. Вооруженные восстания. Ноябрь-декабрь 1905г. Ч. 1. Москва. -1955. С. 111-112.

Դեկտեմբերյան գործադուլային շարժումը մեծ արձագանք ստացավ նաև գավառի մյուս բնակավայրերում: Օրինակ, Ղարաքիլիսայի երկաթուղայինները գործադուլի ժամանակ օգտագործելու նպատակով գաղտնի պատրաստել էին թնդանոթ: Ապստամբությունը ճնշելուց հետո ոստիկանությունն այն բռնագրավեց և հանձնեց Ալեքսանդրապոլի զինանոցի պահեստ<sup>19</sup>:

Հետաքրքիր է այն, որ գործադուլի օրերին երկաթուղու աշխատանքը լրիվ չդադարեց: Գնացքները տեղափոխում էին կոմիտեի ներկայացուցիչներին, գորացրման ենթակա զինվորներին, երկաթուղային բեռներ, մթերքներ և սահմանափակ թվով մարդկանց, որոնցից ստացված գումարները դրվում էին կոմիտեի տրամադրության տակ: Ընդ որում, բեռնափոխադրումները ոչ միշտ էին իրականացվում վճարովի հիմունքներով: Օրինակ, հայ-թաթարական ընդհարումների հետևանքով սովի մատնված շրջանների բնակչությանն ուղարկվող օգնությունը տեղափոխվում էր անվճար:

Ըստ Կովկասյան երկաթուղային վարչության պետի 1905թ. դեկտեմբերի 14-ին փոխարքային ներկայացրած զեկուցագրի՝ Ալեքսանդրապոլի գործադուլային կոմիտեի ցուցումներով էին գործում նաև Կարս, Ուլուխանլու և Երևան կայարանների երկաթուղայինները<sup>20</sup>:

Տեղական իշխանություններն անգոր գտնվեցին գործադուլավորների դեմ: Փոխարքայի հրամանով դեկտեմբերի 14-ից Թիֆլիսի նահանգը, իսկ 15-ից նաև ողջ անդրկովկասյան երկաթուղին հայտարարվեց ռազմական դրության մեջ<sup>21</sup>:

Դեկտեմբերի 19-ին ռազմական դրություն հայտարարվեց նաև Ալեքսանդրապոլում. քաղաքացիներին խստիվ արգելվեցին առանց իշխանությունների թույլտվության սառը զենք կամ հրազեն ունենալն ու կրելը: Հրամանին չենթարկվելու, ինչպես նաև ոստիկանությանը դիմադրություն ցույց տալու համար մտցվեց մահապատիժ<sup>22</sup>: Նույն օրը հրապարակվեց Ալեքսանդրապոլի կայարանի պարետի հրամանը, որում ասվում էր. «Մինչև դեկտեմբերի 20-ը բոլոր երկաթուղային ծառայողները, ովքեր ինչ-ինչ պատճառներով չեն ներկայացել ծառայության՝ կայարանի պարետ փոխգնդապետ Դրաչուկի անունով ներկայացնեն զեկուցագրեր, որոնցում հանգամանորեն կբացատրեն ծառայության չներկայանալու հարգելի պատճառները: Դեկտեմբերի 20-ից հետո զեկուցագրեր չներկայացրած անձինք կմեղադրվեն ա) ռազմական դրության պահանջներին չենթարկվելու, բ) կառավարական կարգը տապալելու փորձի և գ) քաղաքացիների կյանքի և առողջության դեմ հանցագործություն կատարելու մեջ և նրանց նկատմամբ կսկսվի հետաքննություն»<sup>23</sup>:

Երկաթուղու բնականոն աշխատանքը վերականգնելու համար իշխանություններն այն հեղեղեցին գորքերով: Եղան նաև բացահայտ սադրանքի փորձեր: Օրինակ, լուրեր տարածվեցին, թե իբր երկաթուղայինները պատրաստվում են հարձակվել Ա-

<sup>19</sup> Աղայան Մ., Ռևոլյուցիոն շարժումները Ալեքսանդրապոլում 1905-1907թթ., Երևան., 1955, էջ 34:

<sup>20</sup> ՎՊԿԱ, ֆոնդ. 26c, ցուցակ 1, գործ 6, թ. 3:

<sup>21</sup> ՎՊԿԱ, ֆոնդ 39, ցուցակ 1, գործ 2555, հ. 8, թ. 195:

<sup>22</sup> ՀԱԱ, ֆոնդ 41, ցուցակ 1, գործ 771, թ. 6:

<sup>23</sup> Նույնը:

լեքսանդրապոլի ամրոցի վրա և թալանել զինապահեստները, կամ գործադուլավորները ձեռնել են քաղաքի փողոցներում հանդիպած զինվորներին և կոչ են անում բնաջնջել բոլոր ռուսներին<sup>24</sup>:

Բացահայտ սաղարանք կարելի է որակել նաև քաղաքացիական իշխանություններին աջակցելու և, այսպես կոչված, «բանվորական ընդհարումները» հանդարտեցնելու պատրվակով Ալեքսանդրապոլ քաղաքի և համանուն գավառի պահնորդության գործերի հրամանատարի կողմից ղեկտեմբերի 20-ին և 21-ին Դրագունյան 45-րդ գնդի երկու դասակներն Ալեքսանդրապոլի կայարան գործուղելը: Վերջիններիս հրամայվել էր անհնազանդության ցանկացած փորձ ձնշել զենքի ուժով: Մակայն, ըստ գնդի հրամանատարի ղեկտեմբերի 21-ի զեկուցագրի՝ «...երկու դեպքում էլ առիթ չստեղծվեց դիմելու զենքի գործածության»<sup>25</sup>: Հավանաբար, ցուցաբերելով բարձր գիտակցություն, գործադուլավորները կարողացել էին խույս տալ գործերի հետ ընդհարումից:

Մոսկվայում սկսված զինված ապստամբության պարտությունից հետո իշխանությունները առանձնակի դաժանությամբ հաշվեհարդար տեսան ձեռքակալված երկաթուղայինների հետ, ապա ձեռնամուխ եղան բնակչության զինաթափմանը: Ալեքսանդրապոլում այդ «գործը» հանձնարարվեց Կաբարդինյան 80-րդ գնդի հրամանատար Լևիցկուն, որը քաղաքային բնակչության վրա հոգեբանական ճնշում գործադրելու հույսով որոշեց զինաթափման արարողությանը հաղթահանդեսի տեսք տալ: 1905 թ. ղեկտեմբերի 19-ի հատուկ հրամանով նա պարտադրեց զենքը հանձնելու եկած քաղաքացիներին անցնել սրերը պարզած և կրակելու պատրաստ հեծյալների և հետևակայինների շարքերի միջով<sup>26</sup>:

Հակառակ հեղափոխական պայքարն արմատախիլ անելու իշխանությունների գործադրած ջանքերին, բանվորական շարժումներն Ալեքսանդրապոլում շարունակվեցին նաև ղեկտեմբերյան զինված ապստամբության պարտությունից հետո:

Արդեն 1906թ. մայիսի 27-ին գործադուլ հայտարարեցին Ալեքսանդրապոլի պայտազոր՝ բանվորները<sup>27</sup>, հունիսի 6-ին՝ դերձակ բանվորները<sup>28</sup>, 8-ին՝ կոշկակար բանվորները<sup>29</sup>: Հետևելով նրանց օրինակին՝ հուլիսի 3-ին դադարեցրին աշխատանքը նաև Ալեքսանդրապոլի «Փոխադարձ վարկի ընկերության» ծառայողները<sup>30</sup>: Բոլոր դեպքերում գործադուլավորները առաջ էին քաշում բացառապես տնտեսական բնույթի պահանջներ՝ բարձրացնել աշխատավարձերը, կրճատել աշխատանքային օրը, թեթևացնել

<sup>24</sup> Հարությունյան Գ., նշվ. աշխ., էջ 99:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 98:

<sup>26</sup> Революционное движение в Армении в 1905-1907 гг. Сборник материалов и документов. Ереван. -1955. С. 163-164.

<sup>27</sup> Ա.Տ.-Ա., Նամակ Ալեքսանդրապոլից // «Կայծ», օրաթերթ, Թիֆլիս, 1906, N 35, 7 յուլիսի, էջ 3:

<sup>28</sup> Հրանդ, Գործադուլները Ալեքսանդրապոլում // «Կեանք», Թիֆլիս, 1906, N 14, 17 յունիսի, էջ 224:

<sup>29</sup> Յ.Մ., Նամակ Ալեքսանդրապոլից // «Կայծ» օրաթերթ, Թիֆլիս, 1906, N 30, 25 յունիսի, էջ 3:

<sup>30</sup> Ալեքսանդրապոլի Ռ.Ս.Դ.Բ.Կ. կազմակերպութեան թրուցիկը // «Կայծ» օրաթերթ, Թիֆլիս, 1906, N 36, 9 յուլիսի, էջ 3:

աշխատանքի պայմանները<sup>31</sup>: Սակայն գործատուներին նույնիսկ այս համեստ պահանջներն անընդունելի էին: Աշխատավորների սոցիալ-տնտեսական վիճակը բարելավելուն ուղղված ցանկացած պահանջ անմիջապես քաղաքականացվում էր՝ ստանալով հետևյալ պատասխանը. «...օղու էր սոցիալիստի բան է, էր հայություն չէ, վազն արեք էր բանեն, էտով դուք ազգի տունը կքանդեք»<sup>32</sup>:

Օգոստոսի 10-ին աշխատանքը դադարեց հացի փռերում: Այդ մասին «Նոր խօսք» պարբերականը գրել է. «Երբ տեղիս հացթուխները գործադուլ յայտարարեցին, նրանց տերերը հարբած՝ ժողովեցին Ս. Խոյեցեանի խանութը և պահանջեցին հեռացնել մի գործակատարի, որ դաշնակցության գործադուլային բիրոյի անդամն էր: Հակառակ դեպքում սպառնացին խանութը քարուքանդ անել: Ադան, վախենալով խուլիզանների սպառնալիքներից, հեռացրեց գործակատարին: Նոյն կերպ վարեցին և Տեր-Յարութիւնեանի հետ: Մրան էլ ստիպեցին հեռացնել գանձապահին, որի վրայ նոյնպես կասկածում էին, թէ խառն է հացթուխների գործադուլի գործում»<sup>33</sup>:

Օգոստոսի 11-ին գործադուլի էլան նաև Ալեքսանդրապոլի զինետների բանվորները, խոհարարները, խանութների գործակատարներն ու տնային աշխատողները: Աշխատավարձի բարձրացումից և աշխատաժամի կրճատումից զատ՝ վերջիններս պահանջում էին նաև կիրակի ու տոն օրերը հայտարարել ոչ աշխատանքային և տարեկան մեկամսյա արձակուրդ տալ: Այս մասին Երևանի նահանգապետը զեկուցել է Կովկասի ոստիկանապետին, պարտավորվելով «միջոցներ ձեռնարկել գործադուլի ղեկավարներին հայտնաբերելու համար»<sup>34</sup>:

Նույն օրերին տնտեսական բնույթի պահանջներով գործադուլ սկսեցին նաև Ալեքսանդրապոլի քաղաքային հիվանդանոցի ծառայողները: Քաղաքային վարչությունը մերժեց նրանց պահանջները, բոլորին ազատեց աշխատանքից և փակեց հիվանդանոցը, իսկ հիվանդներին տեղափոխեց տեղական զինվորական լազարեթ<sup>35</sup>:

Համեմատաբար հաջողված կարելի է համարել «Զինգեր» կարի ընկերության ծառայողների գործադուլը: Այն սկսվեց օգոստոսի կեսերին և երկու շաբաթ անց ավարտվեց բանվորների հաղթանակով:

Հաջորդ ամիսներին իշխանություններին հաջողվեց բիրտ ուժի կիրառմամբ նվազագույնի հասցնել գործադուլային շարժումները, իսկ 1907թ. հուլիսի 3-ի պետական հեղաշրջումից հետո՝ նաև փակել հեղափոխության էջը: Այս ընթացքում Ալեքսանդրապոլում տնտեսական հողի վրա վերջին ընդվզումը տեղի ունեցավ 1907թ. գարնանը: Մարտի 28-ին քաղաքի վեց հրուշակարանների վարպետներն ու բանվորները, հավաքվելով հայկական հին գերեզմանատանը, կազմեցին և գործատուներին ներկայացրին իրենց պահանջները՝ առաջարկելով երեք օրվա ընթացքում բավարարել դրանք:

<sup>31</sup> **Ենգոյան Փ.**, Ռևոլյուցիոն շարժումները Ալեքսանդրապոլում 1905-1907թթ. // «Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905-1907թթ.», Հոդվածների ժողովածու, Երևան, 1955, էջ 165:

<sup>32</sup> **Ընկեր**, Դարբին բանուրների պահանջները // «Կեանք», Թիֆլիս, 1906, N 15, 24 յունիսի, էջ 244:

<sup>33</sup> Կովկասեան կեանք // «Նոր խօսք» օրաթերթ, Թիֆլիս, 1906, N 1, 18 օգոստոսի, էջ 2:

<sup>34</sup> **Ենգոյան Փ.**, նշվ. աշխ., էջ 166:

<sup>35</sup> **Հարությունյան Գ.**, նշվ. աշխ., էջ 109:

Մերժում ստանալով՝ նրանք ապրիլի 1-ից դադարեցրին աշխատանքները, սակայն որևէ արդյունքի չհասան<sup>36</sup>:

Հեղափոխական շարժան դեմ պայքարի ամենափորձված մեթոդը քրեական հետապնդումն էր: Իշխանություններն առանց մեղադրանք ներկայացնելու կամ կեղծ մեղադրանքներով զանգվածային ձերբակալություններ սկսեցին՝ այս կերպ անողորմ դատաստան տեսնելով աշխատավորների հետ: Բանտերը լցվեցին ցարիզմի համար «կասկածելի» մարդկանցով: Միայն Երևանի նահանգում 1906թ. դրությամբ բանտարկվեց 3661 մարդ (այդ թվում՝ 19 կին)<sup>37</sup>: Ոստիկանական հետապնդումները հատկապես մեծ ծավալներ ընդունեցին երկաթուղայինների շրջանում: 1905-1907թթ. միայն Ալեքսանդրապոլի երկաթուղու բաժանմունքում 126 ծառայողներ հայտնվեցին քաղաքականապես «անվստահելի» մարդկանց ցուցակում<sup>38</sup>: Բանտային ծանր ռեժիմը խեղանդամ դարձրեց ու գերեզման իջեցրեց շատերին: Արյունալի կամայականությունները դարձան սովորական երևույթ: «Կայծ» պարբերականը 1906թ. հուլիսի 7-ին հրապարակեց Պետական Դումայի անդամ Տեր-Պետրոսյանցին ուղղված Ալեքսանդրապոլի բանտի բանտարկյալների նամակը, որում վերջիններս տեղեկացնում էին, թե առանց դատ ու դատաստանի տասը-քսան ամսով գտնվում են բանտային զնդաններում, ուր, «հակառակ գոյություն ունեցող օրենքների, պահում են շղթայակապ»: Բանտարկյալներն իրենց ցասումնալից զայրույթն էին արտահայտում բանտային իշխանության ապօրինությունների և դաժանությունների նկատմամբ և խնդրում օգնել իրենց<sup>39</sup>:

*Եզրահանգում.* Ամփոփելով Ռուսական առաջին հեղափոխության տարիներին Ալեքսանդրապոլում ծավալված բանվորական շարժումների համառոտ քննությունը՝ նշենք հետևյալը. 1905-1907թթ. Ալեքսանդրապոլը հանդես եկավ որպես քաղաքական պայքարի կարևորագույն կենտրոն և մեծապես նպաստեց հեղափոխական պայքարի հետագա ծավալմանը Արևելյան Հայաստանի մյուս քաղաքներում: Ալեքսանդրապոլի բանվորների և ծառայողների ելույթները հիմնականում ընթացան ռուս աշխատավորների օրինակով: Ռուսաստանի հոկտեմբերյան համընդհանուր գործադուլը, դեկտեմբերյան զինված ապստամբությունը և մյուս ելույթները ոգեշնչեցին նաև ալեքսանդրապոլցիներին ցարիզմի դեմ մղվող պայքարում:

## АЛЕКСАНДРОПОЛЬ В ПУЧИНЕ ПЕРВОЙ РУССКОЙ РЕВОЛЮЦИИ 1905-1907 ГГ.

*Айрапетян А. С.*

**Ключевые слова:** забастовка, рабочее движение, железнодорожная станция, царизм, полиция, военное положение.

<sup>36</sup> Համբարյան Ա., Մուրադյան Ա., Մինոնյան Ա., նշվ. աշխ., էջ 220:

<sup>37</sup> Памятная книжка Эриванской губернии на 1908 год. Ведомость о движении арестантов в Эриванской губернии за 1906 год. Подъ ред. В.Е. Василева. Эривань. -1908. С. 58.

<sup>38</sup> Արզումանյան Մ., Բոլշևիկների գործունեությունը և ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1907-1917թթ., Երևան, 1959, էջ 26:

<sup>39</sup> Նամակ Ալեքսանդրապոլից // «Կայծ» օրաթերթ, Թիֆլիս, 1906, N 35, 7 յուլիսի, էջ 3: Ա.Տ.-Ա., Նամակ Ալեքսանդրապոլից // «Կայծ» օրաթերթ, Թիֆլիս, 1906, N 7, 23 ապրիլի, էջ 2:

Александрополь, вовлеченный в развивающиеся капиталистические отношения, уже с конца XIX в. стал ареной общественных столкновений. Рабочее движение достигло своего апогея во время Первой русской революции. Выступая в качестве важнейшего центра политический борьбы, Александрополь поспособствовал распространению борьбы также и в другие города Восточной Армении. Александропольцы отреагировали политическими забастовками на Октябрьскую всеобщую стачку, Декабрьское вооруженное восстание и другие процессы в России. Активностью особенно выделились местные железнодорожники.

К сожалению, после поражения декабрьского восстания властям, применением грубой силы удалось подавить забастовки, а после государственного переворота 3 июля 1907 года и вовсе закрыть страницу революции.

## ALEXANDRAPOL IN THE WHIRLPOOL OF THE FIRST RUSSIAN REVOLUTION IN 1905-1907

*Hayrapetyan A. S.*

**Key words:** *strike, labor movement, railway station, tsarism, police, martial law.*

Alexandropol, being involved in the evolving capitalist relations, became an arena of the social conflict already beginning from the late XIX century. Workers' uprising reached its peak during the years of the First Russian Revolution. Acting as a key center of the political struggle, Alexandropol greatly contributed to the spread of the struggle in other cities of Eastern Armenia. Alexandropol responded to Russia's October general strike, the December armed uprising, and other deriving actions with political strikes. Especially, the local railwaymen stood out with their vigorous activities.

Unfortunately, in the months following the defeat of the December uprising, authorities managed to suppress the strike movements by use of brute force, and after the coup d'etat of July 3, 1907, also close the page of the revolution.

### Գ ր ա կ ա ն ն լ թ յ ո լ ն

1. Ա.Տ.-Ա., Ալեքսանդրապոլի բանտից // «Կայծ» օրաթերթ, Թիֆլիս, 1906, N 35, 7 յուլիսի:
2. Ա.Տ.-Ա., Նամակ Ալեքսանդրապոլից // «Կայծ» օրաթերթ, Թիֆլիս, 1906, N 7, 23 ապրիլի:
3. Ա.Տ.-Ա., Նամակ Ալեքսանդրապոլից // «Կայծ», օրաթերթ, Թիֆլիս, 1906, N 35, 7 յուլիսի:
4. Ալեքսանդրապոլի Ռ.Ս.Դ.Բ.Կ. կազմակերպության թռուցիկը // «Կայծ» օրաթերթ, Թիֆլիս, 1906, N 36, 9 յուլիսի:
5. Աղայան Ծ., Հայաստանը 1905-1907թթ. ռևոլյուցիայի տարիներին // «Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին (հոդվածների ժողովածու), Երևան, «Երևանի համալսարան» հրատ., 1955:
6. Աղայան Ծ., Ռևոլյուցիոն շարժումները Ալեքսանդրապոլում 1905-1907թթ., Երևան, ՀՍՍՌ քաղաքական և գիտական գիտելիքների տարածման ընկերության հրատարակություն, 1955, էջ 1-46:
7. Ավետիսյան Վ., Մի էջ Հայաստանի բանվորական շարժումների պատմությունից, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1961:
8. Արզումանյան Մ., Բոլշևիկների գործունեությունը և ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1907-1917թթ., Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1959:

9. Ենգոյան Փ., Ռևոլյուցիոն շարժումները Ալեքսանդրապոլում 1905-1907թթ. // «Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905-1907թթ.», Հոդվածների ժողովածու, Երևան, «Երևանի համալսարան» հրատ., 1955, էջ 155-168:
10. Երևանի Դումայի որոշումները // «Մշակ» օրաթերթ, Թիֆլիս, 1905, N 64, 7 ապրիլի:
11. Ընկեր, Դարբին բանուրների պահանջները // «Կեանք», Թիֆլիս, 1906, N 15, 24 յունիսի:
12. Խաժ. Ա., Նամակ Ալեքսանդրապոլից // «Մշակ», օրաթերթ, Թիֆլիս, 1895, N 88, 5 օգոստոսի:
13. Կովկասեան կեանք // «Նոր խօսք» օրաթերթ, Թիֆլիս, 1906, N 1, 18 օգոստոսի:
14. Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ 41, ցուցակ 1, գործ 771, թ. 6:
15. Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ, 103, ցուցակ 1, գործ 165, թ. 116:
16. Համբարյան Ա., Մուրադյան Ա., Միմոնյան Ա., Արևելյան Հայաստանի պրովետարիատի պատմություն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1988:
17. Հարությունյան Գ., Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905-1907թթ., Երևան, «Հայպետհրատ», 1956:
18. Հրանդ, Գործադուլները Ալեքսանդրապոլում // «Կեանք», Թիֆլիս, 1906, N 14, 17 յունիսի:
19. Յ.Մ., Նամակ Ալեքսանդրապոլից // «Կայծ» օրաթերթ, Թիֆլիս, 1906, N 30, 25 յունիսի:
20. Նամակ Ալեքսանդրապոլից // «Կայծ» օրաթերթ, Թիֆլիս, 1906, N 35, 7 յունիսի:
21. Վրաստանի կենտրոնական պետական պատմական արխիվ (ՎԿՊՊԱ), ֆոնդ 27, ցուցակ 1, գործ 192, թ. 35:
22. Վրաստանի պատմության կենտրոնական արխիվ (ՎՊԿԱ), ֆոնդ. 26с, ցուցակ 1, գործ 6, թ. 3:
23. Վրաստանի պատմության կենտրոնական արխիվ (ՎՊԿԱ), ֆոնդ 39, ցուցակ 1, գործ 2555, հ. 8, թ. 195:
24. Всероссийская политическая стачка в октябре 1905 г. // Документы и материалы. Ч. I. Под ред. Спиридонова И.В. Москва.-Л. «Изд-во Акад. наук СССР», -1955.
25. Высший подъем революции 1905-1907 гг. Вооруженные восстания. Ноябрь-декабрь 1905 г. Ч. 1. М. «Изд-во Акад. наук СССР», -1955.
26. Памятная книжка Эриванской губернии на 1908 год. Ведомость о движении арестантов в Эриванской губернии за 1906 год. Подъ ред. В.Е. Василева. Эривань. «Изд. Эриванского Губернского Статистического комитета», -1908.
27. Панкратова А.М. Первая русская революция 1905-1907гг. Москва. «Госполитиздат», -1951.
28. Революционное движение в Армении в 1905-1907 гг. // Сборник материалов и документов. Ереван. «Айпетрат», -1955.
29. Революция 1905 г. в Закавказье (Хроника событий, документы и материалы). Тифлис. «Госполитиздат», -1926.
30. Список фабрик из заводов Российской Империи. Под ред. Варзара В.Е. СПб. «Типография Торговли и Промышленности», -1912.

*Ընդունվել է՝ 09. 04. 2021*

*Գրախոսվել է՝ 01. 05. 2021*

*Հանձնվել է տպ.՝ 21. 06. 2021*

**Տեղեկություններ հեղինակի մասին**

**Արմեն ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ՝** պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի տնօրեն, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, էլ. huugե՛ a.hayrapetyan@shirakcenter.sci.am

ՀՏՂ՝ 93.94

DOI: 10.52971/18294316-2021.1-64

ԳՅՈՒՄՐՈՒ ՊԱՏՎՈ ԲԼՈՒՐԸ  
ՈՐՊԵՄ ՊԱՏՄԱՄՇՏԱԿՈՒԹԱՅԻՆ ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐ  
*Ինգա Ավագյան*

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

**Բանալի բառեր՝** *Բ. Լոռիս-Մելիքով, բարձրաստիճան սպաներ, ռուսական արխիվներ, ռուսական աղբյուրներ:*

Հրապարակման մեջ ներկայացվում են Ալեքսանդրապոլի Պատվո բլուրի մասին արխիվային նյութեր՝ համալրված ռուսական աղբյուրներում պահպանվող տեղեկություններով: Պատվո բլուրում կառուցված Սբ Հրեշտակապետ Միքայելի մատուռը, որ Գյումրու պատմամշակութային պահպանական միավորներից մեկն է, դեռևս XIX դ. կարևոր նշանակություն է ունեցել քաղաքի ուղղափառ բնակչության կյանքում: Պատվո բլուրում ուղղափառ դավանանքի բարձրաստիճան սպաների թաղումներ կատարվել են դեռևս 1828թ.: Դրիմի և 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմներից հետո գերեզմանոցում շարունակվել են երևելի զինվորականների թաղումները, և միայն XX դարասկզբին, երբ քաղաքային ինքնակառավարման մարմինները հատուկ որոշումներով այլադավաններին առանձին տաքաձքներ հատկացրին նոր գերեզմանոցում<sup>1</sup>, թաղումները Պատվո բլուրում

<sup>1</sup> Տե՛ս Дело «Об осаде склона старого кладбища деревьями, 1901-1902гг.»; Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 105, ց. 2, գ. 101, էջ 1-33; Дело «О прекращении погребения покойников на Холме Чести, 1899-1901гг.», ՀԱԱ, ֆ. 105, ց. 2, գ. 710, էջ 1-4; «Решение Александропольской городской управы об отводе земли под военное кладбище. 14.08.1899-25.06.1900гг.», ՀԱԱ, ֆ. 94, ց. 1, գ. 2512; Указ, постановление Управы, заявление «О принятии мер к содержанию кладбища в благоустройстве, 1894-1904гг.», ՀԱԱ, ֆ. 105, ց. 2, գ. 4; Дело «Об отводе важным гостям участков городской земли под кладбище, 1898-1903», ՀԱԱ, ֆ. 105, ց. 2, գ. 24; Տե՛ս Дело «Кладбище для холерного лазарета», ՀԱԱ, ֆ. 105, ց. 2, գ. 719, էջ 1-8: Տե՛ս նաև **Ավագյան Ի.**, Գյումրու հին գերեզմանոցը որպես մշակութային պահպանական միավոր // ՀՀ ԳԱԱ Շիրակի

դադարեցին: Ստորև ի թիվ այլ փաստաթղթերի, թարգմանաբար բերվում են նաև այդ պատերազմներում հերոսաբար զոհված մի շարք բարձրաստիճան սպաների համառոտ մահախոսականները, որ պահպանվում են հին ռուսական աղբյուրներում:

**Նախաբան.** Ռուսական աղբյուրներից տեղեկանում ենք, որ զոհված սպաներին Պատվո բլուրում սկսել են թաղել 1828 թվականից: Ռուսական արխիվներում պահպանվում են այստեղ հանգչող սպաների ամբողջական ցուցակներ<sup>2</sup>: Այդ սպաների և նրանց մասնակցությամբ պատերազմական անցքերի մասին պատմում են նաև այն մահախոսականները, որոնք հավաքել և հրատարակել է Մ. Յա. Օլշևսկին<sup>3</sup>:

«Կովկասը 1841թ. մինչև 1866թ.» աշխատության մեջ, որի X և XI գլուխները նվիրված են Ալեքսանդրապոլին ու Կարսի մարզին<sup>4</sup>, Մ. Օլշևսկին գրում է. «Ընթերցողի համար ավելորդ ծանրաբեռնվածություն չի լինի, եթե ես ներկայացնեմ Պատվո բլուրում հանգչող իմ համաձայնակիցներից և ծանոթներից մի քանիսի համառոտ մահախոսականները»:

Մ. Օլշևսկին սկսում է իր ավագ գործընկերոջ Պյոտր Պետրովիչ Կովալևսկուց (վերջինիս եղբայրներից Եվգրաֆի Պետրովիչ Կովալևսկին՝ լեռնային ինժեներիայի գեներալ, Արևելքի ճանապարհորդ, գրականագետ): Ըստ նույն աղբյուրի՝ փոխգնդապետ Կովալևսկին Կովկասում հայտնվել է 1814թ. հրետանային բրիգադի հրամանատարի պաշտոնում և «այն ժամանակվանից, գրում է Օլշևսկին, - Պյոտր Պետրովիչը արդեն գեներալ-մայորի կոչումով եղել է Կովկասյան գծի աջ թևի հրամանատար, ապա՝ 13-րդ հետևակային դիվիզիայի հրամանատար, որից հետո զբաղեցրել է Ախալցխայի ռուսական զորքերի հրամանատարի պաշտոնը: 1854թ. ստացել է գեներալ-լեյտենանտի աստիճան և նշանակվել 13-րդ հետևակային դիվիզիայի հրամանատար, որի գնդերը գտնվում էին Ալեքսանդրապոլի կորպուսի կազմում՝ զլխավոր հրամանատար Մուրավյովի հրամանատարության ներքո»: Կարսի գրոհի ժամանակ Կովալևսկին առաջնորդում է Շորախի բարձունքների ամրությունները գրոհող շարասյուներից մեկը, որտեղ էլ մահացու վիրավորվում է:

Տվերյան դրագունական գնդի հրամանատար Կուկոլևսկին Կովկաս էր ժամանել 1854թ. կոմս Նիբոդի հրամանատարությամբ գործող Նովոռոսիյսկի գնդի հետ՝ համահավաք դրագունական բրիգադի կազմում: «Երկարատև արդար ծառայությամբ հասել էր գնդի հրամանատարի պատվավոր պաշտոնի, գերազանց հեծյալ էր, լավ կառավարիչ -, գրում է Օլշևսկին, - իսկ ինչպես պարզվեց՝ գործում նաև՝ քաջ սպա. նրա ղեկա-

---

հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ» (այսուհետև՝ «ԳԱ»), Գյումրի 2018, էջ 195:

<sup>2</sup> **Арутюнян Ю.** Героический холм в Гюмри, Голос Армении /<http://www.yerkramas.org/article/8629/eroicheskiy-xolm-v-gyumri> (24.03.2019)

<sup>3</sup> **Ольшевский М. Я.** Записки, Кавказ с 1841 по 1866 гг. // Русская старина, июль. Ном. 9. -1894. С. 40-43. <http://chechen.org/2009/06/02> («ebook» ).

<sup>4</sup> Նույնը:

վարած գունդը լավ վիճակում էր և՛ տնտեսական, և՛ ռազմական առումով»: Կուկուլսկու արիության լավագույն ապացույցն է Տվերյան գնդի փայլուն գրոհը Քյուրուկդարայի ճակատամարտում: Փամփուշտների և արկերի տարափի տակ շահեց այդ փառահեղ գրոհը, որում նրա ենթականերից շատերը խփվեցին և վիրավորվեցին: Իսկ ինքը մահացու խոցվեց Կարսի պաշարման ժամանակ Չավտիկ-քյոյի բարձունքում՝ ամբողջից տեղացող հրետանային արկերի պայթյունից:

Օլշևսկին հիշում է գնդապետներ Շիկևիչին և Մոսկալևին: «Վիլենսկի գնդի հրամանատար գնդապետ Շիկևիչը հերոսաբար ընկավ Շորախի բարձունքները գրոհող իր գնդի կամավորների առաջին շարքերում, իսկ «Կովկասյան գրենադերական հրետանային գնդի հրամանատար Մոսկալևը սպանվեց Կարսի մատույցներում այն ժամանակ, երբ ընդունեց գեներալ Մայդելի գրոհող զորքերի ընդհանուր հրամանատարությունը՝ փոխարինելով ծանր վիրավորված գեներալին, գնդապետ Մերեբրյակովին և գնդապետ Գանեցկուն, որոնք նույնպես ստացած վերքերի պատճառով պետք է թողնեին մարտի դաշտը՝ հերթականությամբ մեկը մյուսին փոխանցելով շարասյունների հրամանատարությունը»:

Պատվո բլուրում ննջող հերոսների մեջ է նաև Օլշևսկու բնութագրմամբ՝ «հատուկ աչքի ընկած» կովկասյան հին ռազմիկներից հրաձգային գումարտակի հրամանատար գնդապետ Լուգանովը՝ «սպա, որի կողքով մահն անցել էր Բաշքատզարի և Քյուրուկդարայի ճակատամարտերում»: Նա զոհվեց Շորախի բարձունքների գրոհի ժամանակ:

Նրանցից էին նաև գլխավոր շտաբի փոխգնդապետ Սվեչինը և կապիտան Ռադիչը, որ «... մահացան վերքերից, առաջինը՝ Բայանդուրի ճակատամարտում, երկրորդը՝ Կարսի գրոհի ժամանակ»: Բաշքատզարի ճակատամարտում իրենց մահկանացուն կնքեցին Շիրվանյան հրաձգային գումարտակի հրամանատար մայոր Դյակոնովը, Երևանյան լեյբ-գրենադերական գնդի գումարտակի հրամանատար մայոր Տուրչանովսկին, որ չորս գումարտակների գրոհով ջախջախեց բարձունքներին տեղաբաշխված թուրքական դիրքերի բանալին՝ աջ թևը, որի գրավումով ձեռք բերվեց փառահեղ հաղթանակը այդ ճակատամարտում:

Վերջում Մ.Օլշևսկին ներկայացնում է Ակսյոնով եղբայրների մահախոսականը: «Կանգ առնեմ այս մահախոսականի վրա, թե չէ ստիպված կլինեմ ևս քսան դեմքերի մասին հիշատակել: Ասեմ միայն Ակսյոնով եղբայրների մասին, որոնք հանգչում են Պատվո բլուրում: Նրանք Կովկասյան սակրավորների գումարտակի վաշտերի հրամանատարներ էին և սպանվեցին 1853թ. սեպտեմբերի 17-ին Շորախի ամրությունների գրոհի ժամանակ, գլխավոր հրամանատար Մուրավյովի կազմակերպած Կարսի անխուհեմ գրոհի օրը»<sup>5</sup>:

Պատվո բլուրում հանգչող հերոսների մեջ առանձնահատուկ է Իվան Եզոբի Լորիս-Մելիքովի<sup>6</sup> (1834-27.02.1898) դերակատարությունը վերջին ռուս-թուրքական պա-

<sup>5</sup> Ольшевский М.Я., նշվ աշխ., էջ 40-43 <http://chechen.org/02.06.2009>:

<sup>6</sup> Гогитцидзе М., Бежиташвили Г. Военная элита Армении (Армяне-генералы, уроженцы Грузии). Биографический справочник. Тбилиси. -2014. С. 74 («ebook»).

տերազմում: Իվան Լորիս-Մելիքովը գեներալ-մայորի կոչումը ստացել է 1873թ., գեներալ Միխայիլ Տարիելի Լորիս-Մելիքովի եղբորորդին է՝ Թիֆլիսի ավագ ոստիկանապետ Եգոր Ստեփանի Լորիս-Մելիքովի (1807-1865թթ.) և նրա կնոջ՝ Թիֆլիսցի ազնվական Ելիզավետա Աբրահամի Ենիկոլովայի (Ենիկոլովպովայի) ավագ որդին, փոխգնդապետ Ալեքսանդր Եգորի Լորիս-Մելիքովի եղբայրը: Ծնվել է Թիֆլիսում, 1852թ. ավարտել է Մանկա Պետերբուրգի գվարդիական ենթասպաների և հեծելազորային յունկերների դպրոցը: 1852 թվականից որպես սպա ծառայել է բանակային հեծելազորի լեյբ գվարդիայի հուսարական, Կուբանի կազակական և Տվերյան 15-րդ դրագունյան գնդերում: 1857թ. գվարդիայի պորուչիկի կոչումով տեղափոխվել է Կովկաս և մասնակցել ապստամբ լեռնցիների դեմ արշավանքներին: 1862թ. հոկտեմբերի 17-ին ստացել է գրնդապետի կոչում: 1863թ. Կուբանի կազակական զորքի 21-րդ հեծյալ գնդի հրամանատարն էր: 1865թ. մայիսի 18-ին լեռնցիների դեմ պայքարում զերազանց մասնակցության համար պարգևատրվել է «Արիության համար» ոսկյա զենքով և նշանակվել Կովկասյան երկրորդ հեծյալ դիվիզիայի՝ Նորին գերազանցություն Դանիայի արքա Քրիստիան IX-ի Սեվերսկի 18-րդ դրագունյան գնդի հրամանատար: 1873 թ.-ից գեներալ-մայորի կոչումով ծառայության է անցել Կովկասյան բանակին կից Կուբանի կազակական կորպուսի բանակային հեծելազորում: 1874-1875թթ.՝ Նորին գերազանցության շքախմբի գեներալ-մայորի պաշտոնում Կովկասյան ռազմական օկրուգի գլխավոր շտաբի սպա: Մինչև 1876թ. մայիսը Կովկասյան երկրորդ բանակային կորպուսի Կովկասյան երկրորդ հեծելազորային դիվիզիայի I-ին բրիգադի, 1877թ.-ից՝ Երկրորդ կազակական հեծյալ դիվիզիայի հրամանատարն էր: Մասնակցել է Ղրիմի (1853-1856թթ.) և ռուս-թուրքական (1877-1878թթ.) պատերազմներին, Կարս և Էրզրում բերդերի գրոհներին ու պաշարումներին:

Անբասիր ծառայության, արիության ու խիզախության համար պարգևատրվել է պարսկական «Առյուծ և արև» II աստիճանի աստղով (1862թ.), Դանիայի Թագավորության Կոմանդերի խաչ՝ «Դանեբրոգի» 1-ին կարգի (1867) շքանշանով, արժանացել Սբ Ստանիսլավի III (1859թ.), II (1861), I (1863թ.) աստիճանի հայրենական շքանշանների, Կայսերական թագ սրերով՝ պարգևի (1856թ.), Ոսկյա սուսերով «Քաջության համար» (1865թ.) և Կայսերական թագ Սբ Աննայի II աստիճանի (1871թ.) շքանշանների և վերջապես Սբ Գեորգիի IV աստիճանի շքանշանի՝ 1877թ. հոկտեմբերի 2-3-ին Ալաջայի բարձունքների գրավման ժամանակ ցուցաբերած արիության համար: Անվանի գեներալը մահացել է տիֆից Հիպս-Կալայում: Թաղվել է Ալեքսանդրապոլի Պատվո բլուր զինվորական գերեզմանոցում: Նրա գերեզմանը գտնվել է Պատվո բլուրում՝ նիժնեգորոդցիների հանգանակությունով դրված հուշակոթողի կողքին:

Պատվո բլուրի հին լուսանկարներից մեկում պահպանվել է Իվան Լորիս-Մելիքովի շքեղ գերեզմանը, որի կողքին վեր է խոյանում 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմի հերոսներին նվիրված հուշարձանը, որ դրվել է Նիժնեգորոդսկի 44-րդ դրա-

<sup>7</sup> Աղբյուրները մահվան հետ կապված տարբեր տեղեկություններ են տալիս. մի դեպքում, որ մահացել է վերքերից Էրզրումում, 1878թ. ապրիլի 7-ին, իսկ մյուս դեպքում, որ մահացել է տիֆից 27.02.1878թ., Հիպս-Կալայում և թաղվել է Ալեքսանդրապոլի քաղաքային գերեզմանոցում, Հայաստանում:

գունական գնդի նվիրատվությամբ: Այս մասին իրենց աշխատության մեջ<sup>8</sup> հիշատակում են Ռիկմանը և Պորեմբսկին. «Հոկտեմբերի 12-ին մտնելով Ալեքսանդրապոլ՝ գունդը ուղղվեց Պատվո բլուր, որտեղ Ղրիմի պատերազմում ընկած և այստեղ հանգչող նիժնեգորոդցիների գերեզմանների վրա հոգեհանգիստ կատարվեց: [Պատերազմից] հետո, ձմռանը իրենց հերոս համագնդեցիների հիշատակը հավերժացնելու համար հուշարձան կառուցվեց գնդի անունից և հանդիսավոր օծումից հետո կանգնեցվեց Պատվո բլուրում»: Նույն աղբյուրից նաև իմանում ենք, որ վերջին ռուս-թուրքական պատերազմի առաջին զոհն է եղել բարոն Դե-Ֆորժետը. «Ժամը 12-ին բոլոր սպաները և ցածր աստիճանավորները հավաքվեցին բիվակի<sup>9</sup> առջև՝ աճյունը Ալեքսանդրապոլ ուղարկելուց առաջ ներկա գտնվելու սպանված բարոն Դե-Ֆորժետի հոգեհանգստի արարողությանը և վերջին հարգանքի տուրքը մատուցելուն: Երկու ամիս անց գնդի ջանքերով հուշակոթող դրվեց Պատվո բլուրում նրա գերեզմանի վրա: Նա առաջինն էր գնդի սպաներից, որ զոհվեց այդ պատերազմի ժամանակ: Վաղաժամ զոհվեց հույսեր ներշնչող այս պատանի սպան, բայց ընկավ պատվով՝ վաստակելով փառքի պսակ»<sup>10</sup>:

Առանձնակի ենք ուզում նշել վերջին ռուս-թուրքական պատերազմի ևս երեք հերոսների՝ գեներալ Գուբսկու, Իլյա Չելոկասևի և Իվան Մելիքովի անունները: Նորին կայսերական մեծություն իշխան Միխայիլ Նիկոլևիչի թույլտվությամբ<sup>11</sup> նրանց բացառիկ հարգանքով և պատվով թաղել են ոչ թե Պատվո բլուրում, այլ Ալեքսանդրապոլի բերդում Սբ Ալեքսանդրա եկեղեցու պատի տակ՝ դրանով կարծես խորհրդանշելով երեք ազգերի՝ հայերի, ռուսների և վրացիների զորական հավերժ բարեկամությունը տարածաշրջանում: Ի դեպ, այսօր Պատվո բլուրում են գտնվում Ի.Մելիքովի և Ի. Չելոկասևի արձանագրություններով մարմարե դամբարանասալերը, որոնք անհրաժեշտ է վերադարձնել իրենց իսկական տեղադրության վայր, որտեղ ամփոփված են հերոսների մասունքները:

*Եզրահանգում.* Մինչհեղափոխական ռուսական աղբյուրներում բազմաթիվ հիշատակումներ կան Պատվո բլուրում հանգչող սպաների և նրանց կատարած հերոսությունների մասին: Ստորև կատարել ենք մահացածների տվյալների վիճակագրական վերլուծություն՝ ըստ Ռուսաստանյան<sup>12</sup> պետական ռազմապատմական արխիվում պահպանվող ցուցակների, որոնցում նաև որոշակի ճշտումներ ենք կատարել:

<sup>8</sup> **Рикман, Порембский**, Описание боевой жизни 44-го Драгунского Нижегородского Его величества короля Витембергского полка в минувшую войну 1877-1878-го годов. Под редакцией Чернявского. Тифлис. -1885.

<sup>9</sup> Գիշերակացի վայր (Տե՛ս **Гарибян А.**, Русско-армянский словарь в одном томе. Второе издание. Ереван. -1977):

<sup>10</sup> **Рикман, Порембский**, նշվ. աշխ., էջ 37:

<sup>11</sup> **Ավագյան Ի.**, Ալեքսանդրապոլի զինվորական եկեղեցիները որպես մշակութային պահպանական միավոր // ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ «Գիտական աշխատություններ», 1-2 (22), Գյումրի, 2019, էջ 152:

<sup>12</sup> Հարցումը կատարել է «Հայրենիք» բարեգործական ֆոնդի նախագահ Ա.Պլյացը 17.06.2006թ.: [poxoronka.ru/news/1472-kholm-chesti-kladbishche-russko-turetskikh-vojn-kompanij-1828-1855-1877-1878gg](http://poxoronka.ru/news/1472-kholm-chesti-kladbishche-russko-turetskikh-vojn-kompanij-1828-1855-1877-1878gg) (24.03.2019)

Ըստ Ռուսաստանյան պետական ռազմապատմական արխիվում պահպանվող ցուցակի՝ Պատվո բլուրում են թաղվել Ղրիմի պատերազմում զոհված 76 սպա՝ 2 գեներալ-լեյտենանտ (2,63%), 7 գնդապետ (9,21%), 2 փոխգնդապետ (2,63%), 4 մայոր (5,26%), 6 շտաբ-կապիտան (7,89%), 4 կապիտան (5,26%), 16 պորուչիկ (21%), 18 պորպորուչիկ (23,68%), 16 ենթասպա (21%), 1 էսաուլ (1,32%):

Ցուցակի տվյալներով՝ Պատվո բլուրում թաղվել է ռուս-թուրքական վերջին (1887-1888թթ.) պատերազմում զոհված 88 սպա՝ 5 գեներալ-մայոր (5,68%), 5 գնդապետ (5,68%), 7 փոխգնդապետ (7,95%), 8 մայոր (9,09%), 12 շտաբ-կապիտան (13,64%), 4 կապիտան (4,55%), 16 պորուչիկ (18,18%), 12 պորպորուչիկ (13,64%), 12 ենթասպա (13,64%), 2 խորունժի (2,27%):

Այսպիսով՝ երկու պատերազմներում զոհված սպաների ընդհանուր թիվը 164 է, նշանակում է՝ Պատվո բլուրն իր գրկում ամփոփում է 2 գեներալ-լեյտենանտի (1,2%), 5 գեներալ-մայորի (3,04%), 12 գնդապետի (7,32%), 9 փոխգնդապետի (5,49%), 12 մայորի (7,32%), 18 շտաբ-կապիտանի (10,98%), 8 կապիտանի (4,88%), 32 պորուչիկի (19,5%), 30 պորպորուչիկի (18,29%), 33 ենթասպայի (20,1%), 1 էսաուլի (0,6%), 2 համհարզ խորունժի (1,2%) աճյուններ: Հայոց հողը թող թեթև լինի նրանց շիրիմներին...

## "ХОЛМ ЧЕСТИ" В ГЮМРИ КАК ОХРАНЯЕМАЯ ИСТОРИКО-КУЛЬТУРНАЯ ЕДИНИЦА

*Авагян И.Э.*

**Ключевые слова:** *И. Лорис-Меликов, высокопоставленные офицеры, российские архивы, русские источники.*

В публикации вкратце представлены вопросы истории основания Холма чести и часовни Св. Архистратига Михаила в городе Александрополь и тех высокопоставленных военных, которые похоронены на Холме чести. Дана биография героев по некоторым старорусским источникам. По данным Российского Государственного Военно-исторического архива составлены диаграммы, в которых дана статистика похороненных на Холме чести высокопоставленных офицеров и нижних чинов.

## "HILL OF HONOR" IN GYUMRI AS A PROTECTED HISTORICAL AND CULTURAL UNIT

*Avagyan I. E.*

**Keywords:** *I. Loris-Meliqov, high-ranking officers, Russian archives, Russian sources.*

The article examines the history of the foundation of the Hill of Honor and the chapel of St. Michael the Archangel in the city of Alexandropol and those high-ranking military men who were buried on the Hill of Honor. The biography of the heroes is presented according to some old Russian sources. According to the data of the Russian State Military-Historical Archive, diagrams have been drawn up, which show the statistics of high-ranking officers and lower ranks buried on the Hill of Honor.



Նկ. 1 Իլյա Ջաալի Չելոկան



Նկ. 2 Ֆեոդոր Ալեքսանդրի Գուբսկի



Նկ. 3 Պատվո բլուրի ընդհանուր տեսքը: Աջից՝ հունական խոյակներով գերեզմանում հանգչել է Ի. Լորիս-Մելիքովի աճյունը: Գերեզմանի հարևանությամբ, բարձր գեղեցիկ խաչով ավարտվող քառակոթողը դրվել է Նիժնեգորոդյան գնդի կողմից



Նկ. 4 Իվան Եգորի Լորիս-Մելիքով



Նկ.5 «Պլպլան ժամի»՝ Մբ Հրեշտակապետ Միքայելի մատուռի մուտքը



Նկ. 6. Գերեզմանոցի ընդհանուր տեսքը, որտեղից երևում է ռուսական ժամատան գմբեթը

Գրալիանություն

1. Ավագյան Ի., Գյումրու հին գերեզմանոցը որպես մշակութային պահպանական միավոր, ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ «Գիտական աշխատություններ», Գյումրի, 2018, էջ 195:
2. Ավագյան Ի., Ալեքսանդրապոլի զինվորական եկեղեցիները որպես մշակութային պահպանական միավոր // ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ «Գիտական աշխատություններ», 1-2 (22), Գյումրի, 2019, էջ 152:
3. Гарибян А. Русско-армянский словарь в одном томе. Второе издание. Ереван. - 1977.
4. Гогитцидзе М, Бежиташвили Г. Военная элита Армении. (Армяне-генералы, уроженцы Грузии). Биографический справочник. Тбилиси. -2014. («ebook»).
5. Ольшевский М.Я. Записки, Кавказ с 1841 по 1866гг. // Русская старина, июль. Ном. 9. -1894. <http://chechen.org/2009/06/02> («ebook»).
6. Рикман, Порембский. Описание боевой жизни 44-го Драгунского Нижегородского Его величества короля Витембергского полка в минувшую войну 1877-1878-го годов. Под редакцией Чернявского. Тифлис. -1885.
7. Старчевский А. Памятник Восточной войны 1877-78 гг. Спб. -1878. Приказ артиллерии Кавказского военного округа 15 декабря 1878г. Ном. 941. <https://www.prlib.ru/item/436304.02> («ebook»).

*Ընդունվել է՝ 10. 03. 2021*

*Գրախոսվել է՝ 15. 05. 2021*

*Հանձնվել է տպ.՝ 21. 06. 2021*

**Տեղեկություններ հեղինակի մասին**

**Ինգա ԱՎԱԳՅԱՆ՝** պատմական գիտությունների թեկնածու,  
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի  
գիտաաշխատող, էլ. հասցե՝ [inga.avagyan.76@mail.ru](mailto:inga.avagyan.76@mail.ru)

ՀՏԴ՝ 908

DOI: 10.52971/18294316-2021.1-73

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍԵՌԱՏԱՐԻՔԱՅԻՆ  
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ (XXԴ. վերջ - XXI սկիզբ)

*Արտաշես Բոյաջյան*

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

**Բանալի բառեր՝** բնակչության ծերացում, մինչաշխատունակ տարիք, աշխատունակ տարիք, վերարտադրության տարիք, ծնելիության անկում, սեռատարիքային բուրգ, ժողովրդագրական անվտանգություն, միգրացիա, բնակչության վերարտադրություն:

Սույն հոդվածում ներկայացվել են Շիրակի մարզի բնակչության սեռատարիքային կառուցվածքի փոփոխության վրա ազդող շարժառիթները և դրդապատճառները: Կատարված ժողովրդագրական վերլուծությամբ պարզվել է, որ XXԴ. վերջին XXI սկզբին մարզի քաղաքային և գյուղական բնակչության սեռատարիքային կառուցվածքի փոփոխությունների ազդեցությունը բնակչության վերարտադրության վրա:

**Նախաբան.** Բնակչության սեռատարիքային կառուցվածքի ուսումնասիրությունն ունի գիտական և սոցիալ-տնտեսական նշանակություն, ինչը կարևոր է տարածաշրջանների ժողովրդագրական քաղաքականության մշակման և իրականացման գործում: Արդի շրջանում Շիրակի մարզի ժողովրդագրական ու սեռատարիքային կառուցվածքի փոփոխությունը հիմնականում բացատրվում է բնակչության թվի նվազմամբ, արտագաղթով ու ծերացումով: Ժողովրդագրական ծերացումը և մինչաշխատունակ տարիքի բնակչության թվի նվազումը մարզի համար իրողություն է, որից հնարավոր չէ խուսափել, սակայն արդյունաբերության աշխատատար ճյուղերի զարգացման դեպքում հնարավոր է ծերացման գործընթացը մեղմել:

Որևէ երկրի, վարչական շրջանի և բնակավայրի ժողովրդագրական իրավիճակը գնահատող կարևոր բնութագրիչ է սեռատարիքային կառուցվածքը<sup>1</sup>: Այս առումով բնակչության թվի փոփոխության բաղադրիչներն են բնական վերարտադրությունը, ամուսնությունը, ամուսնալուծությունը և միգրացիան: Բնակչության սեռատարիքային բաշխվածության վերլուծությունը հնարավորություն է տալիս պատկերացում ունենալու բնակչության հեռանկարային թվի փոփոխության, սեռատարիքային խմբերի հարաբերակցության, աշխատանքային ռեսուրսների վերարտադրության, նյութական ռեսուրսների սպառման ծավալի և կառուցվածքի մասին<sup>2</sup>:

Վերջին երեսուն տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում, այդ թվում՝ Շիրակում գրանցվել են բնակչության թվի և սեռատարիքային կառուցվածքի էական փոփոխություններ՝ բազմաթիվ սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական գործոնների ազդեցությամբ: Ընդհանուր առմամբ տվյալ պահին բնակչության սեռատարիքային կազմի փոփոխությունը զգալի չափով պայմանավորված է նախորդ ժամանակաշրջանի բնակչության վերարտադրության և տեղաշարժերի բնույթով և միաժամանակ մեծ ազդեցություն է թողնում բնակչության ներկա ու ապագա վերարտադրության ցուցանիշների վրա: Հայտնի է, որ բնակչության սեռատարիքային կազմի փոփոխությունը կախված է ծնելիության մակարդակից, կյանքի միջին տևողությունից, միգրացիայից, պատերազմներից, տնտեսության մասնագիտացման բնույթից և այլ գործոններից:

Այժմ մեր հանրապետության, նաև Շիրակի մարզի բնակչությունը «ծերացած» է: Ժողովրդագրական այդ երևույթի հիմնական պատճառներն են. տարածաշրջանի աշխարհքաղաքական անկայունությունը, ինչը նաև բացասական ազդեցություն է թողնում տնտեսության զարգացման վրա, Սպիտակի աղետալի երկրաշարժը, 1990-ական թթ-ի տնտեսական և էներգետիկ ճգնաժամը, կառավարման անարդյունավետությունը, ինչը հանգեցրեց բնակչության բնական վերարտադրության անկմանը և զանգվածային արտագաղթին, որն էլ իր անմիջական ազդեցությունն ունեցավ բնակչության թվաճի ու սեռատարիքային կառուցվածքի փոփոխության վրա: Այսպես, 1988-2011թթ. մեր հանրապետության բնակչության բացարձակ թիվը պակասել է 489,9 հազարով կամ 14,2% -ով, այդ թվում՝ տղամարդկանցը՝ 293,7 հազարով կամ 17,3 %-ով, իսկ կանանցը՝ 196,2 հազարով կամ 11,1%-ով<sup>3</sup>: Նույն ժամանակահատվածում Շիրակի մարզի բնակչության բացարձակ թիվը համապատասխանաբար նվազել է 128,1 հազարով կամ 35,4%-ով, այդ թվում՝ տղամարդկանցը՝ 65,6 հազարով կամ 37,7%-ով, իսկ կանանցը՝ 62,5 հազարով

<sup>1</sup> Բնակչության սեռատարիքային կազմը տղամարդկանց ու կանանց քանակի թվային հարաբերակցությունն է և տարիքային (հասակային) խմբերի բաշխումը: Սովորաբար առանձնացվում են տարիքային երեք խմբեր՝ մինչև 15 տարեկանը (մինչաշխատունակ տարիք), 15-64 տարեկանը (աշխատունակ տարիք) և 65 ու բարձր տարեկանը (հետաշխատունակ կամ կենսաթոշակային տարիք):

<sup>2</sup> Ավետիսյան Խ., Սովետական Հայաստանի բնակչությունը և բնակավայրերի աշխարհագրությունը, Երևան, 1987, էջ 45:

<sup>3</sup> ՀՀ ազգային վիճակագրական կոմիտե (այսուհետև՝ ՀՀ ԱՎԿ) [https://www.armstat.am/file/article/demog\\_2019\\_2.pdf](https://www.armstat.am/file/article/demog_2019_2.pdf), (05.11.2020)

կամ 33,4%-ով (տե՛ս աղյուսակ 1): Այսինքն՝ հանրապետության բնակչության բացարձակ թվի նվազման 26,2%-ը բաժին է ընկել Շիրակի մարզին, և սա անսխալապես բարձր ցուցանիշ է, որ ցույց է տալիս, թե ինչպիսի տեղ է զբաղեցնում մարզը հանրապետության բնակչության բացարձակ թվի նվազման գործընթացում:

Աղյուսակ 1-ի թվային ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ ներկայացվող ժամանակահատվածը պայմանականորեն կարելի է բաժանել բնակչության սեռային կազմի փոփոխության չորս ժամանակափուլերի (1979-1988թթ., 1988-2001թթ., 2001-2011թթ. և 2011-2019թթ.): Այդ ժամանակափուլերում մարզի բնակչության թվի և սեռային կազմի ցուցանիշների մեծությունների փոփոխությունները նկատելիորեն տարբերվում են իրարից: Բացառությամբ 1979-1988թթ.՝ մյուս ժամանակափուլերում գրանցվել է տղամարդկանց ու կանանց բացարձակ թվի անկում: Այսպես, 1988-2001թթ. մարզում տղամարդկանց բացարձակ թիվը նվազել է 56,2 հազարով կամ 32,3%-ով, 2001-2011թթ.՝ 11 հազարով (9,3%-ով), 2011-2019թթ.՝ 9,4 հազարով (8,0%-ով), իսկ կանանցը համապատասխանաբար՝ 30,5 հազարով (18,0%), 12,9 հազարով (9,3%) և 1,6 հազարով (1,3%): Միայն Սպիտակի երկրաշարժի պատճառով Լենինականի (ներկայումս՝ Գյումրի) բնակչության թիվը պակասել էր մոտ 7,2%-ով: Օգտվելով քաղաքային «Կոմայրի» թերթի 1990-1992թթ. «Հիշողություն» հավելվածի 40 համարներից՝ վերլուծել ենք երկրաշարժից զոհվածների սեռատարիքային կազմին վերաբերող թվային տվյալները, որտեղից պարզվել է, որ 15000 մահացածներից 39,1%-ը տղամարդ էն, 60,9%-ը՝ կին, զոհվածների թվից 35,6 %-ն ունեցել են մինչաշխատունակ, 56,5%-ը՝ աշխատունակ, 7,9%-ը՝ կենսաթոշակային տարիք:

Աղյուսակ 1\*

**Շիրակի մարզի բնակչության սեռային կազմի փոփոխությունը 1988-2019թթ. հունվարի 1-ի դրությամբ (հազար մարդ)**

Տարեթիվ	Տղամարդ		կին		ընդամենը
	մարդ	%	մարդ	%	
1988թ.	174,2	48,2	187,2	51,8	361,4
1989թ.	158,9	49,7	160,9	50,3	319,8
1996թ.	170,7	47,4	188,7	52,6	359,4
2001թ.	118,0	45,9	139,2	54,1	257,2
2006թ.	128,3	45,6	153,1	54,4	281,4
2011թ.	107,0	45,8	126,3	54,2	233,3
2018թ.	110,1	46,7	125,3	53,3	235,4
2019թ.	108,6	46,5	124,7	53,5	233,3


Այժմ փորձենք պարզել մարզի բնակչության սեռային կազմի փոփոխության ընթացքը քաղաքային ու գյուղական բնակավայրերում: Ներկայացվող ժամանակահատվածում Շիրակի մարզի քաղաքային բնակչության բացարձակ թիվը նվազել է 72,6

\* Այս և մյուս աղյուսակները կազմելիս օգտագործվել են՝ Մ. Մանասյան, Ա. Գրիգորյան, Ա. Պոտոսյան, Շիրակի մարզ, Երևան, 2002, էջ 61: ՀՀ ԱՎԿ ժողովրդագրական վիճակագրական նյութեր, Երևան, 2019:

հազարով (տղամարդիկ՝ 43,6 հազար, կանայք՝ 29,0 հազար) կամ 34,4%-ով: Այսինքն՝ մարզի բնակչության բացարձակ թվի նվազման 83,9%-ը բաժին է ընկնում քաղաքային բնակավայրերին, հատկապես Գյումրի քաղաքին: Գյուղական բնակչության թիվը համապատասխանաբար նվազել է 13,9 հազարով (տղամարդիկ՝ 10,9 հազար, կանայք՝ 3 հազար) կամ՝ 12,6%-ով: Մարզում հիմնականում նվազել է քաղաքային աշխատունակ տարիքի տղամարդկանց թիվը, ինչը պայմանավորված է նրանց ճնշող մեծամասնության մշտական արտագաղթով, ի մասնավորի՝ Ռուսաստանի Դաշնություն: Սակայն 2011թ.-ից սկսած՝ տղամարդկանց ու կանանց թվի նվազման տեմպը դանդաղել է շնորհիվ սոցիալ-տնտեսական կայունացման ու աճի: Բնականաբար, մինչաշխատունակ և աշխատունակ տարիքի բնակչության թվի նվազումը հանգեցնելու էր բնակչության ծեփացմանը:

Ժողովրդագրական հարցերին առնչվող գրականության մեջ տարբերակում են հասարակության «ծերացում», «ծեր» մարդ կամ «ծերություն» հասկացությունները: «Ծերությունը» վիճակագրական, իսկ «ծերացումը»՝ ժողովրդագրական հասկացություններ են<sup>4</sup>: Եթե աշխարհի տնտեսապես զարգացած երկրների բնակչության «ծերացումը» պայմանավորված է ժողովրդագրական գործոնով<sup>5</sup>, ապա Հայաստանի Հանրապետությունում, այդ թվում՝ Շիրակի մարզում՝ սոցիալ-տնտեսականով: Այժմ Շիրակի մարզի քաղաքային բնակավայրերում մեկ թոշակառուին բաժին է ընկնում մեկ աշխատող այն դեպքում, երբ միջինը պետք է լինի 5-7 աշխատող<sup>6</sup>: Ի վերջո, սոցիալ-տնտեսական, քաղաքական արմատական փոփոխություններն իրենց ազդեցությունն ունեցան մարզի բնակչության տարիքային կառուցվածքի ու ծեփացման վրա (տե՛ս գծապատկեր 1):

Գծապատկեր 1



<sup>4</sup> Население и трудовые ресурсы. Справочник. Москва. -2003. С. 278.

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 273:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 278:

Գծապատկեր 1-ի թվային ցուցանիշներից երևում է, որ Շիրակի մարզում վերջին 30 տարիներին գրանցվել է բնակչության արագ ծերացման գործընթաց: Հայտնի է, որ եթե տվյալ պետության կամ տվյալ վարչական տարածքի ամբողջ բնակչության թվի 7%-ը 65 և բարձր տարիքի են, ապա համարվում է «ծեր», իսկ 7-12%-ի դեպքում՝ «ծերացող» բնակչություն<sup>7</sup>: Շիրակի մարզում այդ վերջին ցուցանիշը 2019թ. կազմել է 13,3%: Ըստ ԱՀԿ-ի (Առողջապահության համաշխարհային կազմակերպություն)՝ տարեց համարվում են 60-74 տարեկան մարդիկ, ծերեր՝ 75-90 տարեկանները և երկարակյացներ՝ 90-ից բարձր տարիքի մարդիկ: Աղյուսակ 2-ից երևում է, որ 2001-2019թթ. տարեցների համաթիվը մնացել է նույնը, իսկ ծերերինը և երկարակյացներինն աճել է: Սակայն 2001-2011թթ. գրանցվել է տարեցների տեսակարար համաթվի անկում, ինչը բացատրվում է մարզի բնակչության ծնելիության աճով և աշխատունակ տարիքի բնակչության արտագաղթողների թվի նվազմամբ:

Աղյուսակ 2

**Շիրակի մարզի տարեց, ծեր և երկարակյաց բնակչության թվի շարժընթացը**

	Տարեց		Ծեր և երկարակյաց		ընդամենը	
	հազար մարդ	ընդամենը ամբողջ բնակչության թվում %	հազար մարդ	ընդամենը ամբողջ բնակչության թվում %	հազար մարդ	ընդամենը ամբողջ բնակչության թվում %
2001թ.	32,3	12,6	6,5	2,5	38,8	15,1
2011թ.	23,1	9,9	10,8	4,6	33,9	14,5
2016թ.	25,2	10,9	12,0	5,2	37,2	16,1
2019թ.	29,4	12,6	10,7	4,6	40,1	17,2

Շիրակի մարզի բնակչության ծերացման հիմնական պատճառներն են բնակչության ծնելիության անկումը (այստեղ վճռական դերակատարություն են ունեցել ՀՀ իշխանությունների վարած ժողովրդագրական ոչ արդյունավետ քաղաքականությունը, զանգվածային լրատվամիջոցների և օտարերկրյա՝ հիմնականում արևմտյան ֆինանսավորմամբ հասարակական մի շարք կազմակերպությունների կողմից տարվող ընտանիքի պլանավորման քարոզչությունը), երկրորդ՝ բժշկության առաջընթացի շնորհիվ տարեցների և ծերերի կյանքի տևողության աճը, երրորդ՝ հիմնականում քաղաքային աշխատունակ տարիքի բնակչության զանգվածային արտագաղթը:

Վերջին 30 տարիներին Հայաստանի Հանրապետությունում, այդ թվում՝ Շիրակի մարզում կտրուկ կրճատվել է ծննդաբերությունների թիվը՝ 1979թ. մեկ կնոջ հաշվով բաժին է ընկել 4,1 երեխա, այժմ այդ թիվը կազմում է 1,6<sup>8</sup>: Վերջինս զգալիորեն ցածր է բնական կայուն վերարտադրությունն ապահովող ցուցանիշից, որը կազմում է 2,1: Հաշվի առնելով մարզի բնակչության ներկա ծննդաբերության հատուկ գործակցի մեծու-

<sup>7</sup> Աֆրիկյան Գ. Մեռաբանություն. Առողջապահության ամրապնդման և երկարակեցության գաղտնիքները, Երևան, 2005, էջ 20:

<sup>8</sup> <https://www.armstat.am/file/doc/200.pdf>, (24.11.2020).

թյունը և արտագաղթի միտումները՝ բնակչության թիվը հեռանկարում կնվազի, և 2030թ. մոտավոր հաշվարկով մարզի բնակչության թիվը կկազմի 200 հազար մարդ, իսկ ձեռացման ցուցանիշի մեծությունը կաճի՝ 13,3%-ից հասնելով 21-22%-ի:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում որոշակի փոփոխություններ են գրանցվել տարեցների, ծերերի և երկարակյացների սեռային կազմում: Ըստ ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքների ցուցանիշների՝ Շիրակի մարզի քաղաքային բնակչության ամբողջ թվի 15,1%-ը, 2011թ.՝ 16,1%-ը, 2019թ.՝ 17,2%-ը 60 և բարձր տարիքի են եղել: Նույն ցուցանիշը գյուղական բնակավայրերում կազմել է համապատասխանաբար՝ 14,7%, 12,4% և 15,0%: Բերված թվային ցուցանիշները ցույց են տալիս, որ քաղաքային բնակչության ձեռացումն ավելի արագընթաց բնույթ է կրում: Շիրակի մարզի բնակչության ձեռացման հետ մեկտեղ արձանագրվել է ևս մեկ հետաքրքիր փաստ. տարեցությունը ֆեմինիզացվում է (տե՛ս աղյուսակ 3): Այժմ մեր հասարակության գլխավոր նպատակներից մեկն է լուրջ ուշադրություն դարձնել տարեցների սոցիալական խնդիրների լուծմանը: Այդ առումով մեր հանրապետության սոցիալ-տնտեսական ծանր պայմաններն էլ ավելի են խորացրել տարեցների ու ծերերի սոցիալական խնդիրները, որոնք են՝ աղքատությունը, ընտանեկան կոնֆլիկտները, սոցիալական մեկուսացումը և սոցիալ-տնտեսական այլ երևույթներ: Ըստ ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքների՝ Շիրակի մարզում 1-2 անձից բաղկացած (դրանց հիմնական մասը տարեցներ և ծերեր էին) տնային տնտեսությունների թիվը մոտ 18 հազար է եղել, ինչը կազմել է մարզի տնային տնտեսությունների ամբողջ թվի 25,3%-ը<sup>9</sup>: Նույն ցուցանիշը 2011թ. կազմել է համապատասխանաբար՝ 17,8 հազար կամ 27,3%<sup>10</sup>:

Աղյուսակ 3

**Տարեցների, ծերերի և երկարակյացների սեռային կազմի փոփոխության մասին**

	ընդամենը	Տղամարդ		Կին	
		/մարդ/	%	/մարդ/	%
Տարեց բնակչության թիվը ( 60-74 տարեկան)					
2001թ.	31490	13348	42,4	18142	57,6
2011թ.	23110	9554	41,3	13556	58,7
2019թ.	29338	11805	40,2	17533	59,8
Ծեր և երկարակյաց բնակչության թիվը (75 և բարձր տարիք)					
2001թ.	6493	1863	28,7	4630	71,3
2011թ.	10833	3748	34,9	7049	65,1
2019թ.	10702	3547	33,1	7155	66,9

Բնակչության ձեռացման խորացմանը զուգընթաց՝ նվազել է մարզի մինչաշխատունակ տարիքի բնակչության համաթիվը (տե՛ս գծապատկեր 1): Սակայն 2016թ. համեմատ՝ 2019թ. գրանցվել է մինչաշխատունակ տարիքի բնակչության թվի աճ, ինչը բացատրվում է 2000-ական թվականների ծնվածների բացարձակ թվի ավելացումով: 1989-2019թթ. մինչաշխատունակ տարիքի բնակչության բացարձակ թիվը պակասել է մոտ


<sup>9</sup> <https://www.armstat.am/file/doc/200.pdf>, (24.11.2020).

<sup>10</sup> <https://www.armstat.am/file/doc/99485633.pdf>, (24.11.2020).

երկու անգամ: Շիրակի մարզում 2018թ. տարեցների, ծերերի և երկարակյացների թիվը գրեթե հավասարվել է մինչաշխատունակ տարիքի բնակչության թվին: Այսինքն՝ սեռատարիքային բուրգի գագաթը միտում ունի հավասարվելու հիմքին (տե՛ս գծապատկեր 2), և մարզում հնարավոր է բնակչության ժողովրդագրական պարզ վերարտադրությունից անցում կատարվի նեղացված վերարտադրության: Հիշեցնենք, որ 2001թ. Շիրակի բնակչության սեռատարիքային բուրգի հիմքն ավելի լայն էր, քան 2018թ.:

Գծապատկեր 2

Շիրակի մարզի մշտական բնակչության սեռատարիքային բուրգը 2018թ.



Գծապատկերի թվային տվյալները վերցվել են ՀՀ Ազգային վիճակագրական կոմիտեից (-Ա.Բ.):

Մարզում 2001-2019թթ. մինչաշխատունակ տարիքի բնակչության մեջ տղաների թիվը գերազանցել է աղջիկների թիվը 2,5-3,5 հազարով: Ակտիվ վերարտադրության տարիքի բնակչության սեռային կազմի նման անհամամասնությունն ապագայում կարող է հանգեցնել ամուսնության խնդիրների խորացմանը: Մինչաշխատունակ տարիքի քաղաքային բնակչության թիվը 1989թ. համեմատ 2011թ. նվազել է շուրջ 2,5 անգամ (տե՛ս աղյուսակ 4), գյուղական բնակավայրերում՝ 34,6%-ով, իսկ Գյումրի քաղաքում այն նվազել է 2,3 անգամ: Քաղաքային մինչաշխատունակ տարիքի բնակչության թվի շեշտակի անկումը պայմանավորված է ծնելիության անկումով: Մակայն, սկսած 2011թ.-ից, մարզի քաղաքային և գյուղական բնակավայրերում գրանցվել է մինչաշխատունակ տարիքի բնակչության թվի աճ: 2011-2019թթ. մինչաշխատունակ տարիքի բնակչության թիվն ավելացել է 3,1 հազարով կամ 6,6%-ով, այդ թվում՝ քաղաքային բնակավայրերում՝ 0,8 հազարով կամ 3,3%-ով, իսկ գյուղական բնակավայրերում՝ 2,2 հազարով կամ 10,8%-ով: Այդ տարիներին մինչաշխատունակ տարիքի բնակչության թվի աճը պայմանավորված է 2000-ական թվականների ծնելիության աճով: Իսկ ծնելիության աճի վրա որոշակի ազդեցություն է ունեցել ամուսնական տարիքի բնակչության թվի ա-

վելացումը 1989-1992թթ. աղետալի երկրաշարժից հետո, որը ժողովրդագրության մեջ հայտնի է «կոմպենսացիոն աճ» եզրույթով: Այսպես, 1992թ. մարզում ծնված երեխաների թիվը կազմել է 7,6 հազ., 2001թ.՝ 2,8 հազ.<sup>11</sup>, 2011թ.՝ 3,7 հազ.<sup>12</sup> և 2019թ.՝ 2,8 հազ. երեխա<sup>13</sup>:

Աղյուսակ 4

**Շիրակի մարզի մինչաշխատունակ տարիքի (մինչև 15 տարեկան) բնակչության թվի շարժընթացը**

Տարեթիվ	մինչաշխատունակ տարիքի բնակչության թիվը(մարդ)	մինչաշխատունակ տարիքի բնակչություն թիվը մարզի ամբողջ բնակչության թվում(%)
1989թ.	92695	29,1
2001թ.	71278	27,7
2011թ.	46187	19,7
2016թ.	47637	19,6
2019թ.	49242	21,1

Հայտնի է, որ աշխատուժը ողջ հասարակության հավաքական աշխատունակությունն է<sup>14</sup>: Ուսումնասիրվող ժամանակահատվածում Շիրակի մարզի աշխատունակ տարիքի բնակչության թիվը պակասել է 53,9 հազարով կամ 25,4%-ով (աղյուսակ 5), այդ թվում՝ քաղաքային բնակավայրերում՝ 30,3 հազարով կամ 24,5%-ով:

Աղյուսակ 5

**Աշխատունակ տարիքի բնակչության թվի շարժընթացը**

	15-24 տարեկան		25-49 տարեկան		50-64 տարեկան		Ընդամենը	
	Մարդ	%	Մարդ	%	Մարդ	%	Մարդ	%
1989թ.	55268	26,1	109547	51,7	47044	22,2	211859	100
2001թ.	43944	27,5	86836	54,2	29508	18,3	160288	100
2011թ.	44647	27,5	77445	47,6	40448	25,0	162540	100
2016թ.	36173	20,8	85939	49,3	41885	29,9	173997	100
2019թ.	28222	17,8	83947	53,1	45792	29,1	157951	100

Շիրակի մարզում 2001-2019թթ. աշխատունակ տարիքի բնակչության սեռային կազմում էական փոփոխություններ չեն գրանցվել: ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքներով՝ 15-64 տարեկան տղամարդկանց թիվը կազմել է 71,3 հազ., 2011թ.՝ 72,9 հազ. և 2019թ.՝ 72,8 հազ., իսկ կանանցը համապատասխանաբար՝ 89,0 հազ., 89,8 հազ. և 85,5 հազ.: Աղյուսակ 6-ի թվային ցուցանիշների հաշվարկը պարզում է, որ 2001-2019թթ. 15-24 տարեկանների թիվը պակասել է 16,4 հազարով կամ 37,4%-ով, 25-49 տարեկանների թիվը գրեթե մնացել է անփոփոխ, իսկ 50-64 տարեկանների թիվն ավելացել է 16,3 հա-

<sup>11</sup> [https://www.armstat.am/file/article/marzeri\\_6.pdf](https://www.armstat.am/file/article/marzeri_6.pdf) (07.12.2020).

<sup>12</sup> [https://www.armstat.am/file/article/demos\\_12\\_11-12.pdf](https://www.armstat.am/file/article/demos_12_11-12.pdf) (07.12.2020).

<sup>13</sup> [https://www.armstat.am/file/article/marzer\\_2020\\_9\\_.pdf](https://www.armstat.am/file/article/marzer_2020_9_.pdf) (07.12.2020).

<sup>14</sup> **Խոջաբեկյան Վ.**, Զբաղվածության հիմնախնդիրները Հայաստանում անցման շրջանում, Երևան, 1998, էջ 37:

զարով կամ 55,2%-ով: Այսինքն՝ ներկայացվող ժամանակահատվածում գրանցվել են աշխատունակ տարիքի բնակչության ծերացման միտումներ:

**Եզրահանգում.** Շիրակի մարզի բնակչության սեռատարիքային կազմի վերաբերյալ վերը շարադրվածը թույլ է տալիս անել հետևյալ սկզբունքային եզրահանգումներն ու առաջարկությունները.

ա. Ժողովրդագրական ծերացման վերին շեմը, աշխատունակ և մինչաշխատունակ տարիքի բնակչության թվի նվազումը մարզի համար իրողություն է, որից հնարավոր չէ խուսափել: Ըստ մեր կանխատեսման՝ ժողովրդագրական զարգացման ներկայիս միտումների պահպանման դեպքում 2030թ. 60-ից բարձր տարիք ունեցող մարդիկ կկազմեն մարզի ամբողջ բնակչության թվի 21-22%-ը, իսկ Գյումրի քաղաքում՝ 23-24%, այսինքն՝ կհասվի ժողովրդագրական ծերացման վերին շեմը: Սակայն արդյունաբերության աշխատատար ճյուղերի և զբոսաշրջության աշխուժացումը կնպաստի աշխատունակ տարիքի բնակչության ներգաղթին և ծերացման գործընթացի մեղմանը:

բ. Մարզում տղամարդկանց և կանանց թվի նվազման հիմնական մասը բաժին է ընկնում քաղաքային բնակավայրերին, հատկապես Գյումրի քաղաքին: Էապես նվազել է մինչաշխատունակ տարիքի աղջիկների և աշխատունակ տարիքի տղամարդկանց թիվը:

գ. Ուսումնասիրվող ժամանակահատվածում գրանցվել է վաթսուն և բարձր տարիքի բնակչության տեսակարար համաթվի աճ, որի հիմնական պատճառներն են ծնելիության անկումը, բժշկական ծառայությունների որակի բարձրացումը, տնտեսապես ակտիվ աշխատունակ տարիքի (25-49 տարեկան) բնակչության արտագաղթը:

դ. Այժմ մարզի բնակչության սեռատարիքային բուրգի գագաթի և հիմքի թվային ցուցանիշների մեծությունը գրեթե իրար հավասար է:

ե. Շիրակի բնակչության սեռատարիքային վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզը հայտնվել է ժողովրդագրական աղետալի վիճակում: Ժողովրդագրական իրավիճակի կարճաժամկետ բարելավումը հնարավոր է բացառապես աշխատունակ տարիքի բնակչության ներգաղթով, որի գլխավոր նախապայմանը պետք է լինեն մեծածավալ կապիտալ ներդրումները տնտեսության նյութական ոլորտի աշխատատար ճյուղերում:

## ИЗМЕНЕНИЕ ПОЛОВОЗРАСТНОЙ СТРУКТУРЫ НАСЕЛЕНИЯ ШИРАКСКОГО МАРЗА

(конец XX века - начало XXI века)

*Бояджян А. Г.*

**Ключевые слова:** старение населения, трудоспособный возраст, демографический спад, спад рождаемости, половозрастная пирамида, демографическая безопасность, ремиграция, воспроизводство селения.

За последние тридцать лет население Ширака оказалось на вершине демографического старения. В 1988-2019 гг. в Республике Армения произошли изменения общественного

порядка и производственных отношений, неэффективной демографической и социально-экономической политики, осуществляемой правительством. Число жителей Ширака сократилось на 35,4%, в том числе мужчин-на 37,7%, а женщин-на 33,4%. Отметим, что за эти годы 26,2% снижения численности населения Армении приходится на Ширакскую область.

В представляемом периоде численность населения трудоспособного возраста сократилась, в том числе абсолютное число мальчиков превышает число девочек, число 15-24-летних сократилось, число 25-49-летних почти осталось неизменным, а число 50-64-летних увеличилось, то есть отмечены тенденции старения населения трудоспособного возраста.

Половозрастной анализ населения Ширака показывает, что область оказалась в катастрофическом демографическом состоянии. Краткосрочное улучшение демографической ситуации возможно исключительно благодаря ремиграции, а главной предпосылкой этого является создание рабочих мест благодаря новым крупномасштабным капиталовложениям.

## CHANGES OF GENDER AGE STRUCTURE OF THE POPULATION OF SHIRAK REGION

(end of XX-beginning of XXI cc)

*Boyajyan A. G.*

**Key words:** *gender and age structure, population ageing, working age, demographic decline, birth rate decline, gender and age pyramid, demographic security, remigration, population reproduction.*

Over the past thirty years, Shirak's population has emerged on the top level of demographic ageing. In 1988-2019 the Republic of Armenia experienced changes in public order and industrial relations, as well as ineffective demographic and socio-economic policies implemented by the government. The number of residents of Shirak decreased by 35.4%, including men by 37.7%, and women by 33.4%. It should be noted that during these years, 26.2% of the decline in the population of Armenia falls on the Shirak region.

In this period the population of working age has decreased, including the absolute number of boys exceeds the number of girls, the number of young people aged 15-24 has decreased, the number of 25-49-year almost remained stable, and the number of 50-64-year-olds has increased, that is, the trend of ageing of the working-age population was registered.

Gender and age analysis of the population in Shirak shows that the region was in a catastrophic demographic state. A short-term improvement in the demographic situation is possible only through remigration, and the main prerequisite for this is to provide employment opportunities by means of new large-scale capital investments.

### Գ ր ա կ ա ն ո թ յ ն ի ն

1. Ավետիսյան Խ., Սովետական Հայաստանի բնակչությունը և բնակավայրերի աշխարհագրությունը, Երևան, 1987:
2. Ափրիկյան Գ. Մեռաբանություն. Առողջապահության ամրապնդման և երկարակեցության գաղտնիքները, Երևան, 2005:

3. Խոջաբեկյան Վ., Ջրադվածության հիմնախնդիրները Հայաստանում անցման շրջանում, Երևան, 1998:
4. Մանասյան Մ., Գրիգորյան Ա., Պոտոսյան Ա., Շիրակի մարզ, Երևան, 2002:
5. Медков В. Демография. Москва. -2003.
6. Население и трудовые ресурсы. Справочник. Москва. -2003.

*Ընդունվել է՝ 26. 04. 2021*

*Գրախոսվել է՝ 01. 06. 2021*

*Հանձնվել է տպ.՝ 21. 06. 2021*

**Տեղեկություններ հեղինակի մասին**

**Արտաշես ԲՈՅԱՋՅԱՆ՝** պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,  
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի  
ավագ գիտաշխատող, էլ. հասցե՝ a.bojayyan@mail.ru

ՀՏԴ՝ 6.2

DOI: 10.52971/18294316-2021.1-84

Գ. ՍՐՎԱՆՁՏՅԱՆՅԻ ԳՐԱՌԱՄ ՆԵՔԻԱԹՆԵՐԸ  
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ  
*Մարինե Խեմյան*

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

**Բանալի բառեր՝** սյուժե, մոտիվ, տարբերակ, նվիրատու, խորհրդատու, տարածաշրջան, կերպար, գործառույթ, հմայական արժեք:

Հայ հեքիաթագիտությունն ընդգրկում է հեքիաթների գրառումը, հրատարակությունը և ուսումնասիրությունը, որոնք երբեք տարանջատված չեն եղել. գրառմանը զուգահեռ դրանք հրատարակվել և ուսումնասիրվել են: Հեքիաթների գրառումը մեզանում սկսվել է դեռևս 19-րդ դարի երկրորդ կեսից, որի հիմքը դրել է բանասեր, բանահավաք, ազգագրագետ Գարեգին Սրվանձտյանցը, ում գործունեությունն ազդակ է դարձել հայ ժողովրդական բանավոր ավանդության հետագա գրառման և պահպանման համար: Գ. Սրվանձտյանցն իր գրառած 35 հեքիաթները հրատարակել է «Մանանայ» (1876) և «Համով-հոտով» (1884) գրքերում:

Գ. Սրվանձտյանցի գրառած հրաշապատում հեքիաթներն ունեն որոշ ընդհանրություններ հայ ժողովրդական տարբեր տարածաշրջաններից գրառած և այլ ժողովուրդների հեքիաթների հետ. այդուհանդերձ դրանք առանձնանում են իրենց ինքնատիպությամբ:

Հոդվածում քննության են առնված մարդ և մարդակերպ (աստված, ծերունի, թագավոր, թագուհի, մայր, հայր, պառավ, դերվիշ, արքայադուստր, դև և այլն), կենդանի (ձի, առյուծ, խոյ և այլն) ու թռչուն (արծիվ, ճնճրդուկ, արաղաղ և այլն) խորհրդատուներն ու նվիրատուները, ինչպես նաև հերոսի ճանապարհին հանդիպող, աստծո կողմից ուղարկված գերբնական ընդունակություններով օժտված գործող անձինք:

**Նախաբան.** Հեքիաթի հերոսի գործողությունները խարսխվել են մարդու բազմադարյան գիտելիքների վրա և ուղեկցվել են հարակից կերպարների շարքով, որոնք նպաստել են հեքիաթի գլխավոր խնդրի լուծմանը: Այդպիսի կերպարների շարքին են դասվում նվիրատուներն ու խորհրդատուները, որոնք Մրվանձտյանցի հեքիաթներում հարուստ են իրենց բազմազանությամբ ու գործառույթներով:

Հատկանշական է, որ Մրվանձտյանցի գրառած որոշ հեքիաթներում գործառույթների առումով նույնանում են նվիրատուների ու խորհրդատուների մի շարք կերպարներ, ինչպիսիք են՝ աստված-ծերունի-դերվիշ-ճգնավոր, թագավոր-հայր, թագուհի-մայր-պառավ, արքայադուստր-աղջիկ-քույր, արքայազն-երիտասարդ, ճնճող-աքաղաղ և այլն:

Մրվանձտյանցի գրառած որոշ հեքիաթներում որպես խորհրդատու և նվիրատու են հանդես գալիս կենդանիները և թռչունները, նրանք ունեն մարդկային հատկանիշներ, գիտեն հերոսի անցնելիք ճանապարհի, նրա առաջ ծառացող վտանգների մասին և իրենց խորհուրդներով ուղղորդում են նրան: Կենդանիները և թռչունները երբեմն հերոսին օգնում են ի նշան երախտագիտության, նրանք անդրաշխարհի հետ որպես կապող օղակ լինելուց զատ՝ կարող են կանչի բանաձևով մոտենալ հերոսին (հերոսի կողմից փետուրը, բուրդը, մազը կրակին տալու միջոցով) և նրան դուրս բերել անելանելի իրավիճակներից:

Գ. Մրվանձտյանցի հեքիաթներում հանդես եկող **մարդ և մարդակերպ նվիրատու ու խորհրդատու կերպարներից** են աստված, թագակիր անձ (թագավոր, թագուհի, արքայազն, արքայադուստր), ծերունի, հայր, մայր, աղջիկ, պառավ, որսորդ, ճգնավոր, դերվիշ, պալատական, շուկակ, արաբ, դև:

**Աստծո** տեսանելի կամ անտեսանելի ներկայությունն առկա է Հայաստանի յուրաքանչյուր պատմաագագրական տարածաշրջանի հեքիաթների գերակշռող մասում: Հեքիաթի սյուժեի զարգացման ընթացքում հերոսը կամ ընդհանրապես ցանկացած գործող անձ բազմիցս առիթ է ունենում հիշելու աստծո անունը: «Օձեմանուկ և Արևմանուկ» հեքիաթում անգավակ թագավորը, տեսնելով ձագերով շրջապատված օձին, դիմում է աստծուն. «Տեր Աստուած, աս օձի՞ն չափ ալ չես նայիր ինձի ու անգաւակ կու տանջես իս»: Մտքի մեջն էր միշտ աս օձին վիճակը: Հեօքմեթ իլահի, միջոցէ մը յետոյ թագուհին կը զգայ, որ յոյ է եւ ժամանակ հասնելուն՝ կը ծնի: Բայց տղային կէտը մարդ է, կէտը՝ օձ»<sup>1</sup>: Ըստ Հանս Յորգ Ութերի հեքիաթների տիպերի միջազգային դասակարգման՝ այս հեքիաթը դասվում է ATU 433B հեքիաթախմբին<sup>2</sup> և հանդես է գալիս T513 մոտիվով<sup>3</sup>, այն է՝ անգավակ թագուհու հղիացումը խնդրանքով և օձ գավակ ունենալը: Նույն մոտիվն է 1912 թ. Աշտարակում գրառած «Արևհատ և Օձմանուկ» հեքիաթում. անգավակ թագավորը խնդրում է աստծուց. «Տեր աստվա՛ծ, ի՛նչ կըլի որ ինձ էլ մի գա-

<sup>1</sup> «Օձեմանուկ և Արևմանուկ» .- **Մրվանձտյանց Գ.** Երկեր, հ. 1, Երևան, 1978, էջ 491:

<sup>2</sup> **Uther H.-J.**, The types of international folktales: A Classification and Bibliography Based on the System of Antti Aarne and Stith Thompson, part I, Animal Tales, Tales of Magic, Religious Tales. and Realistic Tales, with an Introduction. Helsinki. Academia Scientiarum Fennica. 2011. p. 259-260

<sup>3</sup> Նույնը, էջ 260:

վակ տայիր, ես էլ սիրեի իմ գավակին. բա ես էս օցի դդար էլ կայի ոչ, որ մի օցի ճուտ էլ ա ինձ տալիս չես»<sup>4</sup>: Եթե Սրվանձոյանցի հեքիաթում աստված անգավակ թագավորին կես-մարդ, կես-օձ է տալիս, այս հեքիաթում տալիս է օձի ճուտ, որը վերածում է վիշապի: Մանազկերտի «Օձ-մանուկ, Վարթ-մանուկ»<sup>5</sup> հեքիաթում աստված օձի տեսքով գավակ է տալիս ոչ թե թագավորին, այլ՝ աղքատ ամուսիններին: Երեք տարբեր տարածաշրջաններից գրառած այս հեքիաթներում աստծո գործառույթը որպես նվիրատու՝ նույնն է, սակայն հեքիաթներն ունեն տարբեր պլոտետային կառուցվածք և հանգուցալուծում:

Այլ է պատկերը Սրվանձոյանցի գրառած «Անխելք մարդը» հեքիաթում<sup>6</sup>: Այստեղ խորհրդատու աստվածը հանդես է գալիս «դովաթի» (ունեցվածք) տեսքով: Հարուստ և անխելքության արդյունքում ունեցվածքը կորցրած հերոսը ծերունու խորհրդով ճանապարհվում է իր ունեցվածքը հետ բերելու: Ծերունին խորհուրդ է տալիս, սակայն մատնացույց չի անում դովաթի տեղը, որի մասին հերոսն իմանում է երազի միջոցով<sup>7</sup>: Հերոսն իր հիմարության պատճառով կորցնում է աստծո կողմից իրեն տրված հնարավորությունը և պատժվում (կործանվում): Ըստ հեքիաթների տիպերի միջազգային դասակարգման՝ «հիմարների մասին» խմբի մոտիվները՝ ATU 460A<sup>8</sup>, ATU 1200-1349<sup>9</sup>, բնորոշ են բոլոր ժողովուրդների հեքիաթներին, սակայն պետք է նշել, որ յուրաքանչյուր ազգ յուրովի և ազգային ավանդույթների սահմանում է զարգացնում այն: Հետևաբար հայ բանահյուսական ժառանգության մեջ «հիմարների մասին» հեքիաթաշարի հեքիաթների տարբերակների պլոտետները պայմանավորված են Հայաստանի պատմաագագրական տարածաշրջանների լեզվամտածողության, սովորույթների, բնական միջավայրի, հասարակական ընկալումների առանձնահատկություններով: Ըստ այդմ՝ «անխելք մարդը» թեմայով պլոտետների համեմատությունը հնարավորություն է տալիս նրկատելու, որ տարբեր տարածաշրջաններում հիմարի կերպարային զարգացումը նույն սխեմայով է կատարվում. անխելք մարդու պլոտետի զարգացումը միանշանակ աստծուն գտնելու խնդիր է իրականացնում, որին զուգահեռ հանդես են գալիս գանգատավորներ, որոնց տեսակները և նրանց անհաջողությունների պատճառները տարբեր են:

«Բյուրապատիկ» հեքիաթում<sup>10</sup> (ATU 460A տիպի J1262.5.1 մոտիվ)<sup>11</sup> ողջ ունեցվածքը տերտերին տված հերոսը չի կործանվում, այլ հետևելով **տերտերի** խորհուրդներ-

<sup>4</sup> «Արևիստ և Օձմանուկ».- Հայ ժողովրդական հեքիաթներ (այսուհետև՝ ՀԺՀ), հ. I, Այրարատ, կազմող՝ **Նազինյան Ա.**, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1959, < 17, էջ 236:

<sup>5</sup> «Օձ-մանուկ, Վարթ-մանուկ».- ՀԺՀ, հ. IX, Բագրևանդ (Ալաշկերտ, Մանազկերտ, Բաղեշ), հ. IX, կազմող՝ **Մկրտչյան Մ.**, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1968, < 41, էջ 231:

<sup>6</sup> **Մրուանձտեանց Գ.**, նշվ. աշխ., էջ 161-165:

<sup>7</sup> Երազներում խորհրդատվության և նվիրատվության մասին տե՛ս՝ **Խենյան Մ.Հ.**, Խորհրդատվությունը և նվիրատվությունը երազներում (Ըստ հայ ժողովրդական հեքիաթների)// Պատմաբանասիրական հանդես, № 2, Երևան, 1917, էջ 162-172:

<sup>8</sup> **Uther H.-J.** նշվ. աշխ., էջ 269-270:

<sup>9</sup> **Uther H.-J.** նշվ. աշխ., էջ 72-150:

<sup>10</sup> «Բյուրապատիկ».- **Մրուանձտեանց Գ.**, նշվ. աշխ., էջ 165-170:

<sup>11</sup> **Uther H.-J.** նշվ. աշխ., էջ 269:

րին՝ ուղևորվում է ոսկե աթոռի վրա նստած Բյուրապատիկի (աստծո) մոտ՝ կորցրածը հազարապատկելու ակնկալիքով: Ի տարբերություն նախորդ՝ «Անխելք մարդը» հեքիաթի՝ աստված հերոսին ոչ թե անուղղակի հասկացնում է, որ ճանապարհին հանդիպած գանգատավորների միջոցով հարստանա, այլ անմիջականորեն հերոսին ցույց է տալիս հարստության աղբյուրի տեղը:

Հայկական հեքիաթներում կա մի խումբ, որտեղ աստված գործում է միջնորդների միջոցով (ծերունի, հրեշտակ, դերվիշ և այլն)՝ ընդունելով նրանց կերպարանքը: Հաճախ հեքիաթներում աստված հայտնվում է սպիտակամորուս **ծերունու** (ճամփաբաժանի, սև-սպիտակ թելեր կծկող, ճակատագիր գրող և այլն) տեսքով: Գ. Մրվանձտյանցի «Անտես-Աննրման» հեքիաթի ծերունին սուրբ Մարգիսն<sup>12</sup> է, որի միջոցով աստված օգնության ձեռք է մեկնում աղքատների նկատմամբ ողորմածություն անող արքայազնին: Նախ նա հանդես է գալիս խորհրդատվությամբ. «Քանի մը օր երթալեղ յետոյ, ճամփան երեք կուլի. վերին ու վարի ճամփան մի՛ երթար, միջինը գնա, ձիավոր մը տի հանդիպի քեզի, ձիւնը կու տեսնաս, ձիավորը չես տեսնար, չվախնաս: Մտքովդ Սուրբ Մարգիս կանչե ու ձիավորին ըսե. «Թե կտրիճ ես, ձիուց ցած իջիր, որ քեզ հետ գուլաշ բռնենք»: Անիկա ձիեն կիջնա՝ բայց չերվար, դու մեկեն էլիր, հեծիր անոր ձիւնը, ան ատեն անոր թըրսումն կավրվի, քեզի կերևա: Ասկե անդին զիտենալիք քուկդ է»<sup>13</sup>: Այնուհետև սուրբ Մարգիսը հետևում է հերոսին նրա բոլոր գործողությունների ընթացքում՝ տեսանելի կամ անտես: Մրվակով բուժիչ յուղ է տալիս՝ հիվանդ թագավորին բուժելու և պալատ մուտք գործելու, ինչպես նաև երկու փետուր՝ Չինումաչին հասնելու համար: Այս հեքիաթում ծերունին կարողանում է վերակենդանացնել նենգ պառավի կախարդանքի հետևանքով մեռած հերոսին: Այս մոտիվը համապատասխանում է հեքիաթների միջազգային դասակարգման ATU 302B («Կյանքը կախված է թրից») և ATU 516B («Հափը շտակված արքայադուստր») տիպերի E711.10 մոտիվին: Եթե այս հեքիաթում կախարդանքը հերոսի թևի մեջ է (նուսխա)<sup>14</sup>, «Զուլվիսիա» հեքիաթում՝ կայծակ թրի<sup>15</sup>, Հայաստանի այլ տարածաշրջանների հեքիաթներում հերոսի ուժը դաշույնի մեջ է («Աստղ

<sup>12</sup> Հեքիաթներում սուրբ Մարգիսի մասին անդրադարձները տե՛ս **Հարությունյան Ս. Բ.**, Սուրբ Մարգիսը ժողովրդական բանավոր ավանդության մեջ // Սուրբ Մարգիսն նվիրված գիտաժողովի նյութեր, «Մուղնի» հրատ., Երևան, 2002, էջ 24-42: **Հայրապետյան Թ.**, Արքետիպային հարակցումները հայկական հրաշապատում հեքիաթներում և վիպապատմական բանահյուսության մեջ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2016, էջ 144-148:

<sup>13</sup> «Անտես-Աննրման». - **Մրվանձտյանց Գ.**, նշվ. աշխ., էջ 487:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 489:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 431:

ջոկոդ, հոտ քաշոդ, դոչադ, լողնորդ»<sup>16</sup>, «Երգինքեն վեր ընգած խանչալը»<sup>17</sup>, թրի մեջ է («Արևելքի թաքավորի տղի հեքիաթը»)»<sup>18</sup> և այլն:

Վերոհիշյալ «Անխելք մարդը» հեքիաթում ունեցվածքը կորցրած հերոսին խորհուրդ տվող ծերունին նույնպես կարելի է ասել, որ աստծո միջնորդ է: Հիմար հերոսը եթե չի կարողանում էլք գտնել իր անելանելի վիճակից, աստված նրան անուղղակի ճանապարհով՝ ծերունու միջոցով է հասկացնում՝ ինչ անի:

Հայկական հեքիաթներում խորհրդատու և նվիրատու ծերունիների մի տեսակ էլ իրենից ներկայացնում է հերոսի մեռած նախնու՝ ծերունու տեսքով հայտնվելն անդրաշխարհից: Սրվանձտյանցի գրառած «Աղբյուրի հարսն» հեքիաթում<sup>19</sup> աղբյուրից դուրս եկած ծերունին աղջկա համար հագուստ չառած կնոջը խորհուրդ է տալիս գնալ աղջկան բերել, որ հագուստ տա: Ծերունին աղջկան հետը տանում է անդրաշխարհ և դարձնում իր հարսը: Հեքիաթի սյուժեի զարգացման ընթացքում ծերունին դառնում է նաև վնասատու՝ կատարելով վրիժառությանը լցված որդու պատվերը, քանի որ որդին մտածում էր, թե իր մարմինը ածելիով կտրատողը իր կինն է եղել:

Ըստ հեքիաթների միջազգային դասակարգման՝ ATU 910A տիպի<sup>20</sup> հեքիաթներին է պատկանում Սրվանձտյանցի «Պառվու տղան» հեքիաթը, որտեղ ծերունին երեք խրատ է տալիս հերոսին. «Միրտը ում որ սիրի՝ գեղեցիկը նա է», «Համբերություն, զուխը էլ հանգիստ» և «Ամեն մի համբերություն մի խեր է»<sup>21</sup>: Ի դեպ, հերոսը նշված հեքիաթում խորհրդատու ծերունուն գտնում է **արքայադստեր** խորհրդով: Հատկանշական է, որ նա՝ հայկական, և՛ միջազգային հեքիաթներում թե՛ թագավորը, թե՛ հերոսի հայրը, թե՛ ծերունին հերոսին տալիս են երեք խրատ: Տավուշի «Կորուստների խանութը» հեքիաթում խորհրդատու ծերունին հայտնվում է երազում և ասում հերոսին. «Առաչին հերթին տու ում որ հանդիպես, առաչին անքամը ինչ որ անվանես նրան, ասես, էտպես էլ կշարունակես, խոսքըս չփոփոխես: Երգորթը, որքան էլ գործըս վաժնի ըլի, որ տենաս մի ուխտատեղ կա, կթեքվես էտ ուխտատեղըմ մում կվառես: Եվ երրորթը, ճանապարհ գնալու ժամանակ, որդեղ էլ արևը մայր մտնի, էնդեղ էլ կմնաս...»<sup>22</sup>: Այս հեքիաթն էլ դասվում է ATU 910K տիպին<sup>23</sup>: Թե՛ Սրվանձտյանցի, թե՛ հայկական մյուս հեքիաթներում երբեմն առանց իրարից չտարբերվող երեք խորհուրդների հերոսն անկարող է հաղթահարել իր առջև ծառայած դժվարությունները:

<sup>16</sup> «Աստղ ջոկոդ, հոտ քաշոդ, դոչադ, լողնորդ».- ՀԺՀ, հ. III, Այրարատ, կազմող՝ Նազինյան Ա., Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1962, էջ 423:

<sup>17</sup> «Երգինքեն վեր ընգած խանչալը».- ՀԺՀ, հ. V, Արցախ, կազմողներ՝ Նազինյան Ա., Գրիգորյան Մ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1966, էջ 557:

<sup>18</sup> «Արևելքի թաքավորի տղի հեքիաթը».- ՀԺՀ, հ. VIII, Գուգարք (Լոռի), կազմողներ՝ Նազինյան Ա., Գրիգորյան Ռ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1977, էջ 174-175:

<sup>19</sup> «Աղբյուրի հարսն».- Սրվանձտյանց Գ., նշվ. աշխ., էջ 452-453:

<sup>20</sup> **Uther H.-J.** նշվ. աշխ., էջ 528-529:

<sup>21</sup> «Պառվու տղան».- Սրվանձտյանց Գ., նշվ. աշխ., էջ 481:

<sup>22</sup> «Կորուստների խանութը».- Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 25, Իջևան (Ձորոփոր), կազմող՝ Խենյան Է., Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2008, էջ 149:

<sup>23</sup> **Uther H.-J.**, նշվ. աշխ., էջ 535:

Դասական հրաշապատում հեքիաթի համար բնորոշ է հերոսի նախնական փորձությունը (ստուգումը), որն ավարտվում է օգնական կամ հրաշագործ միջոց ստանալով (նվիրատվությամբ): Հայկական հեքիաթներում հաճախ հերոսին նախնական փորձության է ենթարկում հերոսի **հայր-թագավորը** կամ պարզապես՝ **հայրը**: Փորձությունն ավելի հաճախ հմայական արգելքի (տաբու) վրա է խարսխված, որի խախտելու հանգամանքով են պայմանավորված հերոսի հետագա գործողությունները: Ջեյմս Ֆրեզերի դիտարկումներով՝ թագավորի կյանքին և իր երկրին սպառնացող վտանգի բնույթով պայմանավորված՝ ստեղծվել են մի շարք սահմանափակումներ՝ հանուն նրա կյանքի և ժողովրդի բարօրության<sup>24</sup>: Մրվանձտյանցի հեքիաթներից մեկում («Պատիկ Միրզան և դև Գորգոչան») թագավորը մեռնելիս որդիների առաջ երկու արգելք է դնում, նախ իր մահից հետո գահը դատարկ չթողնել՝ հակառակ դեպքում իրենց հորեղբայրը կնստի գահին, հետո ոչինչ անել չեն կարող, և թագավորությունը կկործանվի: Առաջին արգելքը խախտելու դեպքում հորեղբայրը կվճռի թագավորի որդիների երկրից, այդ պարագայում թագավորը որդիների առաջ դնում է երկրորդ արգելքը՝ չգնալ Ավեր-ջաղաց, Կանաչ չիման և Սև սար<sup>25</sup>: «Զուլվիսիա» հեքիաթում թագավորը իր յոթ որդիներին է պատվիրում չգնալ այն վայրը, որ հռչակված էր, որ գնացողը հետ չի գալիս<sup>26</sup>: Հայկական հեքիաթներում բազմաթիվ են թագավորի՝ որդուն կամ որդիներին ինչ-որ վայր չգնալու պայմանի մոտիվը: Այս մոտիվը միշտ չէ, որ վերաբերում է հայր թագավորին: Մրվանձտյանցի «Նենգավոր մայր մը» հեքիաթում հայրը **որսորդ** է, որը մահանալիս կնոջը պատվիրում է, որ որդուն թույլ չտա որսի գնալ Սև սար<sup>27</sup>, իսկ «Թիֆլիզու Տունյա Գուզալին» հեքիաթում հայրը **վաճառական** է, որը որդուն մեռնելուց առաջ խորհուրդ է տալիս Թիֆլիս չգնա, որպեսզի չզրկվի ունեցվածքից<sup>28</sup>:

Մրվանձտյանցի հեքիաթներից մեկում («Բաղիկան և խան Բողու») թագավորը թուր և նետուաղեղ է նվիրում քառասուն որդիներից ամենափոքրին. հրաշագործ զենքերը չեն կարողանում ներգործել երկաթյա մարմին ունեցող Բողուի վրա: Այս հեքիաթը դասվում է ATU 302 տիպի հեքիաթներին. ըստ E710 մոտիվի<sup>30</sup>՝ հրեշի հոգին գտնվում է մարմնից դուրս: Այրարատի «Ջան-Փոլատ» հեքիաթում թագավորը հրաշագործ թուր է նվիրում յոթ որդիներից փոքրին<sup>31</sup>: Երկու հեքիաթում էլ հերոսը հափշտակված արքայադստեր միջոցով իմանում է հրեշի հոգու տեղը: Առաջինում Սպիտակ սարի սպիտակ եզան փորի մեջ գտնվող սպիտակ աղվեսի փորի սպիտակ սաղափի տուփի մեջ յոթ

<sup>24</sup> Ֆրեզեր Ջ. Ջ., Ոսկե ճյուղը, Մոզուրյան և կրոնի ուսումնասիրություն, Երևան, «Հայաստան» հրատ., 1989, էջ 216:

<sup>25</sup> «Պատիկ Միրզան և դև Գորգոչան».- Մրվանձտյանց Գ., նշվ. աշխ., էջ 435:

<sup>26</sup> «Զուլվիսիա».- Մրվանձտյանց Գ., նշվ. աշխ., էջ 426:

<sup>27</sup> «Նենգավոր մայր մը».- Սրուանձտեանց Գ., նշվ. աշխ., էջ 204:

<sup>28</sup> «Թիֆլիզու Տունյա Գուզալին».- Մրվանձտյանց Գ., նշվ. աշխ., էջ 476:

<sup>29</sup> «Բաղիկան և խան Բողու».- Մրվանձտյանց Գ., նշվ. աշխ., էջ 421:

<sup>30</sup> Uther H.-J., նշվ. աշխ., էջ 180:

<sup>31</sup> «Ջան-Փոլատ».- ՀԺՀ, հ. II, Այրարատ, կազմող՝ Նազինյան Ա., Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1959: էջ 51:

սպիտակ ճնճղուկների մեջ է<sup>32</sup>, երկրորդում՝ անտառի առյուծի փորի արկղի մեջ գտնվող երեք ծտի մեջ<sup>33</sup>: Հայկական նմանատիպ բոլոր հեքիաթներում էլ հերոսը կարողանում է հաղթել՝ հոգին մարմնից դուրս գտնվող հրեշին՝ շնորհիվ տարբեր խորհրդատուների: Մրվանձոյանցի վերոնշյալ հեքիաթում **դերվիշն** է խորհուրդ տալիս՝ ինչպես սպիտակ աղբյուրից ջուր խմելու ժամանակ զսպի սպիտակ եզանը. «Մարդ կնիկովը յաղթուի, ջանավարը, գինիով»<sup>34</sup>:

Նվիրատու թագավորը ոչ միշտ է արքայազնին հրաշագործ առարկա տալիս: «Անտես-Աննրման» հեքիաթում թագավորը մեռնելուց առաջ իր որդիներին մեկական սնդուկ է տալիս: Ավագ որդու սնդուկի մեջ՝ թագ, որը նրան իրավունք էր տալիս նստել հոր տեղը, միջնեկ որդու սնդուկի մեջ՝ ոսկի, իսկ կրտսեր որդու սնդուկի մեջ՝ հող: Հողը կրտսեր որդուն օժտում է ժողովրդի նկատմամբ ողորմածությամբ՝ ինչի արդյունքում սուրբ Մարգիսն ուղեկցում է նրան հետագա գործողությունների ժամանակ՝ տալով խորհուրդներ և հրաշագործ առարկաներ<sup>35</sup>: Հողը Տիեզերքի չորս տարերքներից մեկն է, որի մասին սյուժեների զգալի մասն ընդգրկված է աշխարհի շատ ժողովուրդների տիեզերածին առասպելների մեջ<sup>36</sup>: Հայ բանավոր ավանդույթն անմասն չի մնացել հողի խորհրդի մասին պատումներից: Վերոնշյալ հեքիաթում թագավորի նվիրատվությունը որդիներին խորհրդանշական է: Թագը և ոսկին չեն կարող լինել թագավորության գոյատևման նախապայման՝ առանց հողի: Այդ իսկ պատճառով թագավորի ավագ և միջնեկ որդիները դուրս են մնում հետագա գործողություններից (նրանք որսորդությունից չեն վերադառնում): Բազմաթիվ փորձություններ հաղթահարելուց հետո գահը բաժին է հասնում կրտսեր որդուն: Արցախի «Իրեք կուլան» հեքիաթում հողն ուրիշ խորհուրդ ունի: Հարուստ հայրն իր երեք տղաներին երեք կուլա է տալիս, մեկը՝ ոսկուց, մեկը՝ սաթից, երրորդը՝ հողից: Շրջելիս ոսկե կուլայից արյուն է թափվում, սաթի կուլայից՝ մոխիր, իսկ հողե կուլայից. «... իրեք տառ ա վեր ըղնում, այս տառերն են՝ սեր: Մրանով հերը օգում ա իւրան խուխոցն ասել, վեր վեղը ամենալվն ա և բեղմա (պետք է) սիրել, քանի վեր ամեն հինչ վեղան ա կուլանը»<sup>37</sup>:

Մրվանձոյանցի հեքիաթներում թագավորը հանդես է գալիս և՛ որպես խորհրդատու, և՛ որպես նվիրատու: Հատկանշական է, որ թագավորը որոշ հեքիաթներում խորհուրդ կամ նվեր է տալիս հեքիաթի հերոսին, որը իր որդին չէ: Այսպես՝ «Մատնիկի ակն» հեքիաթում<sup>38</sup> թագավորը, ի նշան երախտագիտության (օձ դարձած արքայազնին կախարդանքից ազատելու համար), կախարդական մատանի է նվիրում հերոսին («Կա-

<sup>32</sup> «Բաղիկյան և խան Բողոս».- Մրվանձոյանց Գ., նշվ. աշխ., էջ 423:

<sup>33</sup> «Ձան-Փոլատ».- ՀԺՀ, հ. II, էջ 77:

<sup>34</sup> «Բաղիկյան և խան Բողոս».- Մրվանձոյանց Գ., նշվ. աշխ., էջ 424:

<sup>35</sup> «Անտես-Աննրման».- Մրվանձոյանց Գ., նշվ. աշխ., էջ 486-490:

<sup>36</sup> Рабинович Е. Г. Земля. Мифы народов мира. Т. I. С. 466-467.

<sup>37</sup> «Իրեք կուլան».- ՀԺՀ, հ. VII, Արցախ-Սյունիք, կազմողներ՝ Նազիկյան Ա., Առաքելյան Մ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979, էջ 207:

<sup>38</sup> «Մատնիկի ակն».- Մրվանձոյանց Գ., նշվ. աշխ., էջ 449-451:

խարդական (հրաշագործ) առարկաներ» հեքիաթախմբի ATU 560 տիպ)<sup>39</sup>: Նույն մոտիվն է Կարսի «Չոփչին» հեքիաթում, սակայն նվիրատուն ոչ թե թագակիր անձ է, այլ օձերի թագավորը<sup>40</sup>:

Հայ ժողովրդական հեքիաթներում թագավոր և հայր գործող անձինք երբեմն նույնանում, երբեմն էլ հանդես են գալիս որպես առանձին կերպարներ (որսորդ, վաճառական, ձկնորս և այլն): «Խելացի պատվիրաններ» խորագիրը կրող ATU 910 տիպն իր մեջ ընդգրկում է տարբեր պատումների համալիր՝ ATU 910A-ATU 910 N (13 տիպ)<sup>41</sup>, որոնցում հերոսը տարբեր մարդկանցից (հայր, ծերունի) ստանում է իրարից տարբեր վող խորհուրդներ: Վերևում անդրադարձանք ATU 910A և ATU 910K տիպերին: Սրվանձոյանցի «Չվանով բաղդի հասած» հեքիաթը դասվում է ATU 910D տիպին<sup>42</sup>: Այս հեքիաթում մի հարուստ մարդ, տեսնելով, որ որդին փողերը վատնում է, առաստաղից երկու տախտակ է հանում տակը մի փարչ ոսկի դնում, տախտակները դնում է տեղը և տախտակից մի պարան կախում: Մեռնելիս որդուն խորհուրդ է տալիս, որ փողերը լրիվ վատնելուց հետո, երբ անելանելի վիճակի մեջ կհայտնվի, առաստաղի պարանից կախվի: Հոր խորհրդին հետևելով՝ որդին տեր է դառնում մի փարչ ոսկուն և անցնում նորմալ կյանքի<sup>43</sup>:

Հայկական հեքիաթներում գործառույթների առումով ինչպես երբեմն նույնանում են աստված-ծերունի, թագավոր-հայր, այնպես էլ նույնանում են **թագուհի-մայր-պառավ** կերպարները: Թագուհի մոր կերպարն առանձնապես հստակ է արտացոլված Սրվանձոյանցի «Օձեմանուկ, Արևմանուկ» հեքիաթում, որը, ըստ Սարգիս Հարությունյանի հավաստման, էության մեջ հնամենի արևային առասպել է<sup>44</sup>: Արևային առասպելներում գլխավոր հերոսը արևն է. արևային են համարվում նաև այն առասպելները, որոնցում հերոսը կամ հերոսուհին ունեն առասպելական արևին նման հատկանիշներ<sup>45</sup>: Նշված հեքիաթում արևը չի հանդուրժում, որ հարուստի շփացած որդին իր անհաջող որսի պատճառով փորձում է նետահարել արևին և պատժում է նրան՝ անիծելով, որ այլևս արևի լույս չտեսնի՝ հակառակ դեպքում պետք է մեռնի: Արևի կողմից դրված արգելքը խախտվում է, Արևմանուկը մեռնում է: Արևմանուկի մորը **երագում** ինչ-որ ձայն ասում է՝ որտեղ և ինչպես գտնի որդու վերակենդանանալու դարմանը: Երագի ձայնի խորհրդատվությամբ Արևմանուկի մայրը գտնում է Արևամայր թագուհուն, որի գուրթը շարժվում է որպես մայր, և նրան հետևյալ խորհուրդն է տալիս. «... դուն անցիր

<sup>39</sup> Uther H.-J., նշվ. աշխ., էջ 328-329:

<sup>40</sup> «Չոփչին». - Կարս. հայոց բանահյուսական մշակույթը, կազմողներ՝ **Հարությունյան Ս., Վարդանյան Ս., Խեմչյան Է., Ղեջյան Լ., Խեմչյան Մ.**, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ. 2013, էջ 142:

<sup>41</sup> Uther H.-J., նշվ. աշխ., էջ 527-537:

<sup>42</sup> Uther H.-J., նշվ. աշխ., էջ 533:

<sup>43</sup> «Չվանով բաղդի հասած». - **Սրվանձոյանց Գ.**, նշվ. աշխ., էջ 445, 446:

<sup>44</sup> **Հարությունյան Ս. Բ.**, Հայ առասպելաբանություն, Բեյրութ, «Համազգային» տպարան, 2000, էջ 45:

<sup>45</sup> **Иванов В. В.** Солярные мифы. Мифы народов мира. Т. II. Москва. -1998. С. 461-462.

այդ աստղերուն ետևը ծածկվիր, հիմա որդիս կուգա՝ չըլլի թե էրվիս. երբ ավուզը կը մտնա լողկնա, կելնե կուգա կաթ ծծելու, ես անոր ծիծ տալուս ժամանակ՝ դուն անոր լվացված ավուզեն շիշով մը ջուր առ ու գնա, տար, ցանե քո որդվույն վրա, կառողջանա»<sup>46</sup>: Ավագանի ջուրն ամեն անգամ արևի լողանալուց հետո է միայն ձեռք բերում հրաշագործ՝ բուժող հատկություն: Նվիրատուն այս պարագայում արևն է, թեև ինքը չի Արևմանուկի մորը հանձնում անմահական ջրով լի շիշը: Այս մոտիվը հանդիպում է 1860 թվականին Առաքել Բահաթրյանի գրառած հեքիաթում («Օգ-Մանուկին հաքյաթը»)<sup>47</sup>: ATU 433B տիպին պատկանող այս երկու հեքիաթներն ունեն սյուժետային տարբեր զարգացումներ: Արևամայրը երկրորդ հեքիաթում դառնում է նվիրատու:

Հերոսի նախնական փորձության հմայական արգելքը խախտվելուն երբեմն հաջորդում է հերոսի մոր նվիրատվությունը: Մրվանձտյանցի հեքիաթներից մեկում («Թիֆլիզու Տունյա Գուգալին») վաճառականի հարստության աղբյուրի գաղտնիքը ժառանգաբար իրեն անցած հրաշագործ առարկաների՝ քսակի, գլխարկի և դուդուկի մեջ է: Մահանալիս վաճառականը կնոջը պատվիրում է հրաշագործ առարկաները հանձնի որդուն այն ժամանակ միայն, երբ նա աղքատանա<sup>48</sup>: Մայրը դառնում է ժառանգությունը փոխանցող օղակ և հանդես է գալիս հերոսի համար որպես նվիրատու:

Մրվանձտյանցի որոշ հեքիաթներում խորհրդատվությամբ ու նվիրատվությամբ հանդես են գալիս նաև հերոսի մայր **պառավը**, մայրական պարտականությունները ստանձնած պառավը, խորթ մայրը: Պատավի գործառույթները ինչպես Հայաստանի տարբեր տարածաշրջաններում, այնպես էլ Մրվանձտյանցի հեքիաթներում խիստ հակասական են՝ հյուրընկալ պառավից մինչև ջադու պառավ: Հակասական են նաև մարդակերպ **ղևի** գործառույթները: «Նենգավոր մայր մը» հեքիաթը հարուստ է խորհրդատու և նվիրատու գործող անձանց բազմազանությամբ. հերոսի մայր (սկզբից՝ խորհրդատու է, այնուհետև՝ վնասատու), հերոսի մոր սիրելյան խորհրդատու ղև, հյուրընկալ պառավ, քառասուն ղևերի պառավ մայր, կաղ ղև, նվիրատու **առյուծ**: Հերոսի գործողություններն ուղեկցվում են վնասատու խորհրդատուների խոչընդոտներով, սակայն նրա ճանապարհին հանդիպած հյուրընկալ պառավի խորհուրդներով և կաղ ղևի նվիրատվությամբ (հրաշագործ կուժ, սանր, ածելի) և ուղեկցությամբ հաղթահարում է բոլոր դժվարությունները<sup>49</sup>:

Մարդ և մարդակերպ նվիրատուներից և խորհրդատուներից հարկ է նշել նաև Մրվանձտյանցի գրառած հեքիաթների մի շարք գործող անձանց մասին. **աղջիկը**, որը եղբորը խորհուրդ է տալիս ջուր չիմել ձիու, եգան, գումեշի, արջի, խոզի, գայլի, գառան ոտատեղից, քարայրի փոսի մեջ գտնվող **պառավ ղևը**, որը կախված այն բանից, թե ինչ վերաբերմունք է ցույց տալիս հերոսը, տարբեր գործողություններին նպաստող կամ աննպաստ խորհուրդներ է տալիս, **խորթ մայրը**, որը ամուսնուն խորհուրդ է տալիս ա)

<sup>46</sup> «Օձեմանուկ և Արևմանուկ».- Մրվանձտյանց Գ., նշվ. աշխ. էջ 494:

<sup>47</sup> «Օգ-Մանուկին հաքյաթը».- ՀԺՀ, հ. VI, Արցախ-Ուտիք, կազմողներ՝ Նազինյան Ա., Սվազյան Վ., Երևան, ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1973 էջ 79-80:

<sup>48</sup> «Թիֆլիզու Տունյա Գուգալին».- Մրվանձտյանց Գ., նշվ. աշխ., էջ 476-480:

<sup>49</sup> «Նենգավոր մայր մը».- Մրուանձտեանց Գ., նշվ. աշխ., էջ 204-211

իր երեխաներին տանի կորցնի, բ) գառանը մորթի, որ ինքը ուտի («Գառնիկ աղբեր»)<sup>50</sup>, **ջուլհակը**, որի խորհրդով թագավորը խույս է տալիս պատերազմից («Իմաստուն ջուլհակն»), անդրաշխարհի նվիրատու **արաբը**, որը հերոսին 3 խնձոր և 3 նուռ է տալիս («Պատվու տղան»), **գերբնական հասկություններով օժտված գործող անձինք**՝ ա) ողջ աշխարհի խոսակցությունները լսող, բ) արագավազ, գ) շատակեր, դ) աշխարհի չափ բեռը շալակող, ե) շատ խմող, զ) փող փչող հովիվ, որ սար ու ձոր խաղացնում է («Երագատես»)<sup>51</sup> և այլն:

Հրաշապատում հեքիաթներում կենդանիները և թռչունները կապված են մարդու՝ տոտեմական պատկերացումների հետ. նրանք կարող են խոսել մարդկային լեզվով, օգնել գլխավոր հերոսին՝ իրենց գերբնական ուժով և տարածության մեջ (իրական աշխարհ-այնկողմնային աշխարհ) մեծ արագությամբ տեղաշարժվելու հատկությամբ:

Մրվանձտյանցի գրառած հեքիաթներում քիչ չեն նաև **կենդանի և թռչուն նվիրատուներն ու խորհրդատուները**: Այդ հեքիաթներից մեկը դասվում է ATU 301՝ «Երեք հափշտակված արքայադուստր» խորագրով տիպին: Դավադիր եղբայրների պատճառով անդրաշխարհում հայտնված արքայազնը չի կարողանում դևի գերեվարությունից փրկված աղջկա խորհուրդն իրականացնել՝ լույս աշխարհ դուրս գալու համար: Նա պետք է ճիշտ հաջորդականությամբ ցատկեր սև, կարմիր և սպիտակ **խոյերի** վրա, որպեսզի սպիտակ խոյը նրան դուրս բերեր լույս աշխարհ: Անդրաշխարհի՝ հերոսի կողմից սպանված դևերն անուղղակիորեն դառնում են նվիրատու, որովհետև արքայազնը նրանց ունեցվածքից ընտրում է կայծակ թուրը: Իսկ դևերի սև, կարմիր, սպիտակ հրեղեն **ձիերից** հերոսը մի-մի մազ է պոկում և վերցնում հետը: Հետագայում՝ հեքիաթի սյուժեի հանգուցալուծման ժամանակ հերոսը, հերթով կրակին տալով նվիրատու ձիերի մազերը, ձիերի օգնությամբ հասնում է իր գերագույն նպատակին՝ դառնում թագավոր<sup>52</sup>: Հերոսին անդրաշխարհից լույս աշխարհ է հանում երախտագետ **արծիվը**, որի խորհրդով հերոսը անդրաշխարհի թագավորից (նվիրատու թագավոր) ձեռք է բերում 40 տիկ գինի և 40 դմակ: Արծիվն այս հեքիաթում անդրաշխարհի և այսրաշխարհի կապող օղակ լինելուց բացի ունի մեկ այլ գործառույթ ևս՝ վիրավոր հերոսին բուժելը. «Արծիու ուր լեզուի տակից կը հանի պահած միս կը կպուցի տըղի կուշտ, ուր թքով ու լեզուով կը եռցուցի. ճամհու կը դնի դեհ քաղաք»<sup>53</sup>: Այս հեքիաթում հյուրընկալ պառավը, որն իր վրա է վերցնում հերոսի մոր պարտականությունները, նրան ուղղորդում է վիշապամարտի. ջրարգել վիշապին և արծվի ձագերին ուտող վիշապին սպանելուց հետո է միայն հերոսը կարողանում հաղթահարել այսրաշխարհ վերադառնալու ճանապարհին ծառացած արգելքները:

Հերոսի մեռած նախնու հոգին հայկական հեքիաթներում հանդես է գալիս նաև **թռչունի** կերպարանքով: Մրվանտյանցի «Ճնճղուկ և երկու որբ» հեքիաթում մեռած մոր հոգին, զգալով իր երեխաների գլխին կախված մոտալուտ վտանգը, **Ճնճղուկի** տեսքով,

<sup>50</sup> «Գառնիկ աղբեր». - Մրուանձտեանց Գ., նշվ. աշխ., էջ 155-157

<sup>51</sup> «Երագատես». - Մրուանձտեանց Գ., նշվ. աշխ., էջ 194-198:

<sup>52</sup> Մրուանձտեանց Գ., նշվ. աշխ., էջ 187-189:

<sup>53</sup> Մրուանձտեանց Գ., նշվ. աշխ., էջ 184:

զգուշացնում է երեխաներին, որ փախչեն խորթ մոր ձեռքից, որ գետում չխեղդի նրանց<sup>54</sup>: Իսկ «Գառնիկ աղբեր» հեքիաթում **աքաղաղն** է թագավորին հայտնում, թե որտեղ է խորթ մայրը թաքցրել հերոսուհուն<sup>55</sup>:

*Եզրահանգում*. Գարեգին Սրվանձտյանցի գրառած 35 հեքիաթի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հեքիաթ են մուտք գործում հարակից կերպարներ, որոնք իրենց խորհուրդներով և հրաշագործ առարկաներ մատուցելով՝ նպաստում են գլխավոր հերոսի գործողություններին: Հեքիաթներում գերակշռողը մարդ և մարդակերպ նվիրատուներն ու խորհրդատուներն են (աստված, ծերունի, թագավոր, թագուհի, արքայադուստր, հայր, մայր, պառավ, դերվիշ, վաճառական, որսորդ, արաբ, դև): Որոշ հեքիաթներում միևնույն կերպարը հանդես է գալիս և՛ որպես նվիրատու, և՛ որպես խորհրդատու: Կապված մարդու տոտեմական պատկերացումների հետ՝ հեքիաթ մուտք գործած կենդանիները (ձի, առյուծ) և թռչունները (արծիվ, ճնճղուկ, աքաղաղ) հանդես են գալիս որպես հերոսի մեռած նախնու վերամարմնավորում, ունեն մարդկային հատկանիշներ, զիտեն հերոսի անցնելիք ճանապարհի, նրա առաջ ծառացող վտանգների մասին և իրենց խորհուրդներով ուղղորդում են նրան:

Գարեգին Սրվանձտյանցի հեքիաթների նվիրատու և խորհրդատու կերպարները, Հայաստանի տարբեր տարածաշրջանների և տարբեր ժողովուրդների հեքիաթների նմանատիպ կերպարների հետ ընդհանրություններ ունենալով հանդերձ, աչքի են ընկնում իրենց ինքնատիպությամբ:

## СКАЗКИ ЗАПИСАННЫЕ Г. СРВАНДЗТЯНЦОМ В КОНТЕКСТЕ АРМЯНСКИХ НАРОДНЫХ СКАЗОК

*Хемчян М. Г.*

**Ключевые слова:** *сюжет, мотив, вариант, даритель, советчик, регион, образ, функция, магическое табу.*

Армянское сказковедение включает запись, издание и исследование сказок, которые никогда не были разделены: они издавались и исследовались одновременно с записью. Она началась еще во второй половине XIX в., основоположником которой был филолог, этнограф, собиратель устного народного творчества Гарегин Срвандзтянц, деятельность которого стала импульсом для дальнейшей записи и сохранения армянской народной устной традиции. Все 35 сказок, записанные Срвандзтянцом, имеют параллели со сказками разных регионов Армении и других народов.

Действия героя сказки основывались на многовековых знаниях человека и сопро-  
вождались рядом смежных образов, которые способствовали решению главной задачи сказки. К таким образам относятся дарители и советчики, которые в сказках Срвандзтянца богаты своим многообразием и функциями. В статье рассмотрены человек и антропоморфные существа (бог, старик, король, королева, мать, отец, старуха, принцесса, дервиш,

<sup>54</sup> «Ճնճղուկ և երկու որբ» . - **Սրվանձտյանց Գ.**, նշվ. աշխ., էջ 462:

<sup>55</sup> «Գառնիկ աղբեր» . - **Սրվանձտյանց Գ.**, նշվ. աշխ., էջ 159:

дэв и т.д.), животные (конь, лев, баран и т.д.) и птицы (орел, воробей, петух и т.д.), дарители и советчики, также повстречавшиеся герою по дороге одаренные сверхъестественными способностями действующие лица, посланные богом.

Изучение сказок, записанных Срвандзтянцом, показывает, что большинство помощников, содействующих герою - человек и антропоморфные дарители и советчики, которые с другими помощниками, имеющими общность с однотипными образами армянских и других народных сказок, также выделяются своеобразием.

## FAIRY TALES RECORDED BY G. SRVANDZTYANTS IN THE CONTEXT OF ARMENIAN FOLK FAIRY TALES

*Khemchyan M.H.*

**Key words:** *plot, motive, donor, adviser, version, region, character, function, magic taboo.*

Armenian Fairy Tale studies include the recording, publishing and research of fairy tales that have never been separated from one another: they have been published and researched simultaneously with the recording. The latter began in the second half of the 19th century, initiated by the philologist, ethnographer, folklore gatherer Garegin Srvandztyants, whose activities became an impetus for the further recording and preservation of the Armenian folk oral tradition. All 35 tales recorded by Srvandztyants have parallels with tales from different regions of Armenia and other nations.

The actions of the tale main character were anchored on the centuries-old human knowledge and were accompanied by a number of related characters that contributed to the solution of the main issue of the tale. Such characters include donors and advisers, which in Srvandztyants' tales are rich in their diversity and functions. The article studies the human and anthropomorphic (god, old man, king, queen, mother, father, old woman, princess, dervish, dev, etc.), animal (horse, lion, ram, etc.) and bird (eagle, sparrow, rooster, etc.), donors and advisers, as well as the characters gifted with supernatural abilities sent by the God and meeting the character along his way. The study of fairy tales recorded by Srvandztyants shows that most of the assistants who facilitate the actions of the character are human and anthropomorphic donors and advisers who, alongside with other assistants who have similarities with the same type of the Armenian and other folk tale characters, also stand out by their originality.

### Գ ր ա կ ա ն ո թ յ ո լ ն

1. Խենյան Մ. Հ., Խորհրդատվությունը և նվիրատվությունը երազներում (Ըստ հայ ժողովրդական հեքիաթների) // Պատմաբանասիրական հանդես, № 2, Երևան, 1971, էջ 162-172:
2. Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 25, Իջևան (Ձորովոր), կազմող՝ Խենյան Է., Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2008:
3. Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. I, Այրարատ, կազմող՝ Նազինյան Ա., Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1959:
4. Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. II, Այրարատ, կազմող՝ Նազինյան Ա., Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1959:
5. Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. III, Այրարատ, կազմող՝ Նազինյան Ա., Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1962:

6. Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. V, Արցախ, կազմողներ՝ Նազինյան Ա., Գրիգորյան Մ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1966:
7. Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. VI, Արցախ-Ուտիք, կազմողներ՝ Նազինյան Ա., Սվազյան Վ., Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1973:
8. Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. VII, Արցախ-Սյունիք, կազմողներ՝ Նազինյան Ա., Առաքելյան Մ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979:
9. Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. VIII, Գուգարք (Լոռի), կազմողներ՝ Նազինյան Ա., Գրիգորյան Ռ., Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1977:
10. Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. IX, Բագրևանդ (Ալաշկերտ, Մանազկերտ, Բաղեշ), կազմող՝ Սկրտչյան Մ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1968:
11. Հայրապետյան Թ., Արքեպիսկոպոսի հարակցումները հայկական հրաշապատում հեքիաթներում և վիպապատմական բանահյուսության մեջ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2016:
12. Հարությունյան Ս. Բ., Հայ առասպելաբանություն, Բեյրութ, «Համազգային» տպարան, 2000:
13. Հարությունյան Ս. Բ., Սուրբ Սարգիսը ժողովրդական բանավոր ավանդության մեջ // Սուրբ Սարգիս, Գիտաժողովի նյութեր, «Մուղնի» հրատ., Երևան 2002, էջ 24-42:
14. Սրվանձտյանց Գ., Երկեր, հ. 1, Երևան, 1978:
15. Սրուանձտեանց Գ., Մանանայ, Կ. Պոլիս, 1876:
16. Ֆրեզեր Ջ. Ջ., Ոսկե ճյուղը, Մոզուբյան և կրոնի ուսումնասիրություն, Երևան, «Հայաստան» հրատ. 1989:
17. Иванов В. В. Соляные мифы / Мифы народов мира. Т II. Москва. Изд-во «Советская энциклопедия». -1988.
18. Рабинович Е. Г. Земля / Мифы народов мира. Т. I. Москва. Изд-во «Советская энциклопедия». -1987.
19. Uther H.- J., The types of international folktales: A Classification and Bibliography Based on the System of Antti Aarne and Stith Thompson, part I. Animal Tales Tales of Magic. Religious Tales. and Realistic Tales. with an Introduction. Helsinki, Academia Scientiarum Fennica. 2011.

*Ընդունվել է՝ 26. 04. 2021*

*Գրախոսվել է՝ 26. 05. 2021*

*Հանձնվել է տպ.՝ 21. 06. 2021*

**Տեղեկություններ հեղինակի մասին**

**Մարինե ԽԵՄՉՅԱՆ**՝ բանասիրական գիտությունների թեկնածու,  
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի  
գիտաշխատող, էլ. հասցե՝ mkhemchyan@yandex.ru

ՕՐՈՐ-ՈՂԲԵՐԳ ՏԵՔՍԵՐՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՁ  
(ԳՐԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ)

*Հասմիկ Մատիկյան*

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

**Բանալի բառեր՝** տեքստ, բանաձև, միջավայր, երեխա, հասցեատեր, բանասաց, օրորոցային, ողբերգ:

Մեր աշխատանքը արժևորվում է երկու տարբեր ժանրերի՝ օրորոցայինի և ողբերգի համադրական քննությամբ: Համեմատական և զուգադրական մեթոդների կիրարկմամբ ենք պատկերագծելու մեր ասելիքը՝ կիզակետում պահելով նշված ժանրերի լեզվական յուրահատկությունները:

Ուսումնաքննությունը ցույց է տալիս, որ օրորոցային երգատեսակը ունի նկատելի ընդհանրություն ողբերգի տեքստի հետ: Ըստ էության, օրորը կարող է հանդես գալ որպես ողբերգ և հակառակը: Մեր բանահավաքչական աշխատանքը ցույց է տալիս, որ բանահյուսական լեզվամշակույթը այսօր էլ հարուստ է օրորոցայիններով և ողբերգերով:

**Նախաբան.** Մանկական բանահյուսությունը՝ որպես ժողովրդական բանահյուսության բաղադրիչ, առանցքային դերակատարում ունի հայկական բանահյուսական մշակույթում: Օրորոցային տեքստի սահմանները բավականին ընդգրկուն են և կարող են ներառել այլ ժանրերին մասնահատուկ լեզվատարբեր, բովանդակային ճյուղավորումներ:

Անհրաժեշտ ենք համարում ընդգծել օրորոցային ու ողբերգ տեքստերի ընդհանուր գծերը՝

ա) բանավոր պատումային տեքստ,

բ) տարբերակային տեքստ,

գ) կատարողական տեքստ:

Բանահյուսական օրոքոցայինն ու ողբերգը, լինելով բանավոր գրականության բացառիկ հյուսվածքներ, ամփոփում են ժողովրդական մտածողության յուրատիպ գծեր, որոնք համազգային են: Այս առիթով մեջբերենք Ս. Պալասանյանի խոսքը. «Բանավոր գրականությունը՝ իբրև բնածին պտուղ ժողովրդական վառ երևակայության, հակառակ է բոլորովին գրավոր գրականության, որ կանոնավոր մտքի արդյունքներ է պահանջում: Այս գրականությունը «ազգային» ասվելու արժանի է, որովհետև նրա ստեղծողը մի քանի անձինք չեն, ինչպես որ պատահում է գրավոր գրականության մեջ, այլ ամբողջ ժողովուրդը, որ իր բանաստեղծական գրույցների մեջ կատարելապես նկարագրում է պատկերը»:<sup>1</sup>

Օրոր և ողբերգ տեքստերի տարբերակների առաջացման պատճառներից մեկը նաև ասացողի դրսևորած լեզվագագությունն է: Տեքստային փոփոխակները բխում են որոշ իրավիճակներից, կարող են առաջ բերել նաև թեմատիկ ընդհանրություններ, տարբեր ժանրերի տեքստերի թեմատիկ ներթափանցումներ, որը թույլ է տալիս ինչ-որ առումով մերձիմաստ համարել օրորն ու ողբերգը և մեկ ամբողջական միավոր դիտարկել (օրոր-ողբերգ, ողբերգ-օրոր):

Բանահյուսական տեքստերը գոյություն ունեն տարբերակների ձևով, նրանց բնորոշ հատկանիշներից մեկը *տարբերակայնությունն* է: Ինչպես նշում է Ս. Հարությունյանը, տարբերակայնությունը բանահյուսության գոյության կերպն է. բանահյուսական բնագրերը գոյություն ունեն միայն տարբերակների տեսքով:

Օրոր-ողբերգ տեքստերի տարբերակների առաջացման պատճառներից ընդգծենք բանագետ Ս. Հարությունյանի առաջարկած անհատի կամ միևնույն էթնիկական հանրույթի ստեղծագործական-հոգեբանական խառնվածքի ազդեցության (հոգեբանական) գործոնը:<sup>2</sup>

Կատարողականությունը ենթադրում է տարբերակների առաջացում և երգաստեղծման գործընթաց: Հաշվի առնելով մեծ բանագետի առաջարկած տարածության գործոնը բանահյուսական տեքստերի գոյացման հարցում՝ կարող ենք ընդգծել, որ տեղավայրն ունի մեծ նշանակություն երգաստեղծման, երգի տարածման համար: Այս առիթով միջաբերենք երաժշտագետ Հ. Հարությունյանի խոսքերը. *Շիրակի արդի բանահյուսության մեջ թեև սակավաթիվ, սակայն երգաստեղծության կենդանի ավանդույթով ստեղծված երգերի նմուշներ հանդիպում են: Դրանք, անշուշտ, անհատ երգասացների տաղանդի արգասիքն են: Կարևոր է այն, որ այդ երգերը, արարվելով համայնքային միկրոմիջավայրի մեջ, կատարվում են որպես ավանդական դասական նմուշներ: Այս առումով բացառիկ տեղ են գրավում օրորներն ու ողբերգերը, որոնց ժանրային առանձնահատկությունները հնարավորություն են տալիս ասացողին ազատորեն ստեղծագործելու և անկաշկանդ շարադրելու երաժշտաբանաստեղծական հորինվածքը՝ ըստ տվյալ պահին ունեցած ապրումների և զգայական վիճակի: Թեև ասացողներից շատերը հղում են կատարում իրենց մեծերից լսած նմուշներին, սակայն պարզ վերլու-*

<sup>1</sup> Պալասանյան Ս., Բանավոր գրականություն, Պատմություն հայոց գրականության, հ. 1, Թիֆլիս, 1865, էջ 41:

<sup>2</sup> Հարությունյան Ս., Բանագիտական ակնարկներ, Երևան, «Գիտություն», 2010, էջ 18-20:

ծությունից անգամ ակնառու է դրանց հանկարծաստեղծ անհատական բնույթը, ինչը նաև լավագույնս վկայում է երգաստեղծության գործընթացը (մասնավոր գրույց արվեստագիտության թեկնածու, երաժշտագետ Հասմիկ Հարությունյանի հետ):

Ողբերգը մեր ուսումնաքննության տիրույթում ձեռք է բերում այլ մեկնություն, այն է՝ մի երգատեսակ, որի անմիջական հասցեատերը ունկնդիր երեխան է: Բացառիկ դեպքերում օրոր-ողբերգը չի ունենում հատուկ հասցեատեր. բացակա է ունկնդիրը: Այս պարագայում օրորը փոխում է իր գործառության ինչնանկությունը և դառնում է ինքնարտահայտման յուրօրինակ միջոց: Բանասաց Խանում Միքայելյանը<sup>3</sup> նշում է, որ օրորոցային երգը տարիք ու սեռ չի պահանջում: Որդեկորույս բանասացը հյուսում է իր ողբ-օրորը և ընդգծում. *Կորուստն ըմբես բան է, օր մենակ ջիգյարն է, օր կմդկտա, իմալ ըսիմ, օր էդնի, ինչքան ջան ըսիմ, բալա՛ ջան, չեմ կշտանա, չեմ հագենա քեզնից, քու կարոտից կուրացել իմ, բալա՛ ջան. օրոր երգելը կապ չունի, թե քանի տարեկան է, ամսեկան է բալեդ, էրեխեն էրեխա է, ջիգյարը՝ ջիգյար.*

Օրոր ասեմ, բալա՛ ջան, իմ սրտի ծաղի՛կ ջան,  
Բալա ըսիմ, յանա քաշիմ,  
*Վա՛յ էնեմ, բալա՛ ջան, անո՛ւշ ջան,*  
Ինչքան ըսիմ, բալա՛ ջան, չեմ կշտանա,  
Արտա՛կ ջան, ա՛խ, ու՛ր երթամ,  
Երթա՛մ, երթա՛մ Ալագյազ,  
Ուտեմ ձյունդ, խմեմ ջուրդ,  
Մրտիս մուռն ու մրմուռն էլ.  
Ու գամ մոտդ, բալա՛ ջան:

Ընդգծենք, որ բանասացը օգտագործում է ողբերգին հատուկ *վայ էնեմ* բայական հարադրությունը՝ արտահայտելով իր ցավն ու կսկիծը: Ուշագրավ է այն, որ *Երթա՛մ, երթա՛մ Ալագյազ, / Ուտեմ ձյունդ, խմեմ ջուրդ* տողերը (մասնակի փոփոխություններով) քնարական բանահյուսության այլ տեքստերից են միջաբերված, որն ունի նաև հայրենասիրական բնույթ.

Կապույտ երկինք, կանաչ սար,  
Առնեմ, առնեմ,  
Առնեմ *էլնեմ*  
Ալագյազ.  
Ջա՛ն եմ ասել, ջան լսել,  
Ծաղիկդ քաղեմ,  
*Ջուրդ խմեմ,*  
Պար գամ լանջիդ, Ալագյա՛զ:  
Նայենք մեր շեն աշխարհին,  
*Չունդ բարձրիկ,*  
*Ջուրդ քաղցրիկ,*

<sup>3</sup> Խանում Տիգրանի Միքայելյան: *Ծնվել է 1933 թ. Մեծ Սեպասար գյուղում: Նախնիները գաղթել են Ալաշկերտից (Հ. Մատիկյանի գրառումներից):*

Յարս արծվիկ, Ալազյազ:<sup>4</sup>

Տեքստում նշված *Ալազյազ* տեղանունը տեղափոխում է մեզ Ավ. Իսահակյանի այն բանաստեղծության խորքը, որտեղ մեծ բանաստեղծը ողբի ու լալիքի տողերով է դիմում սարին.

-Հե՛յ, վա՛ իս... կոտրան իմ թևերս,

Ընկա գիրկդ, Ալազյա՛զ,

Ա՛ իս, մեծ սրտիդ սեղմեմ սիրտս,

Լամ, արուն լամ, Ալազյա՛զ...

Այս համատեքստում նշենք *օրոր* (*օրորք*) բառի մեկնությունը. *Օրորք - անուն էրզոյ, որպէս օ՛ր օ՛ր գեղ գեղ մարդի ի ննջեցուցանել զգաւակն.. Քնի այ մերոյ օրորքն է (ի բերանոյ կուսին). Երկինք երկնից իմա՛ց արարէք... ա՛յ օրոր...<sup>5</sup>:*

Բառարանային վկայությամբ՝ *օրորք*-ը *օրոր* բառին համագոր է: Կարծում ենք՝ հնաբառ լինելով, նաև ավելի ընդգրկուն իմաստ ունի (*ք* հոգնակակերտով): Հովհ. Թումանյանի *Օրորք* բանաստեղծությունը՝ գրված 1882 թվականին, համազգային ողբ-օրորի տեսակ է.

Քնե՛, քնե՛, հոգվույս հատոր,

Ուրախություն իմ միակ,

Քնե՛, կասեմ քեզ օրոր,

Չտեսնես նրան ավերակ:

Մեկ այլ բանաստեղծության մեջ՝ *Իմ հայրենիքս տխուր է, տխուր...* սկսվածքով, Թումանյանը հայրենիքի տրտմությունը նկարագրելիս կրկին հիշատակում է *օրորք ա-սել* արտահայտությունը.

Թե երկրագործն է հորովել կանչում,

Թե մայրը որդուն օրորք է ասում.

Թե հովիվն իրան սրինգը հնչում,

Մի հուսակտուր հառաչք եմ լսում:

Տարորոշենք օրոր-ողբերգերի հասցեագրումը՝

➤ օրոր-ողբերգ՝ ուղղված բացակա երեխային,

➤ օրոր-ողբերգ, որի ունկնդիրն է դառնում երեխան:

Օրորոցային տեքստը երբեմն առանձնանում է *միջտեքստայնությամբ* և գոյութուն ունի այլ ժանրերի պարագծում:

Օրորոցայինի ու հեքիաթի տեքստերի մեջ դրսևորվում են և՛ միջժանրային, և՛ միջտեքստային առնչություններ.

➤ օրոր-ողբերգ հեքիաթի տեքստում,

➤ օրորոցայինը՝ որպես ողբ:

<sup>4</sup> Երզարան (կազմեցին Շարա Տայյան, Վաղինակ Չաքմիշյան), Երևան, 1966,

<http://horovel.org/lalayan/horovel.nsf/b6faaed24a719395c12580c50056ed9d/afd90babe6bbeca7c125811a0067bb6e!OpenDocument>.

<sup>5</sup> Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի, հ.2, Վենետիկ, 1837, էջ 1037:

Շարահար փոխակերպության սկզբունքով առաջանում է ժանրային խաչաձևում՝ օրոր-ողբերգ- հեքիաթ, հեքիաթ-օրոր- ողբերգ:

Հեքիաթի տեքստը որոշ դեպքերում ձեռք է բերում համատեքստային մեկնություն, հատկապես այն ժամանակ, երբ բովանդակում է օրորոցային տեքստ: Ուշագրավ են օրոր պարունակող այն հեքիաթները, որտեղ ենթադրվող ունկնդիրը կամ երգասացը բացակայում է: Անտառը մանկանոցում շատ է հանդիպում. անտառի պահապանները հանդես են գալիս հատկապես ընտանեզուրկ երեխաների խնամակալ. երեխաները գտնվում են հեքիաթային պահապան ու խնամարկու ոգիների հսկողության տակ:

Թումանյանական աշխարհում անտառը նկարագրվում է որպես որբ երեխաների կացարան.

*Սոված ու ծարավ գնում են, գնում.  
Գնում են, գնում՝ մ, չգիտեն թե ուր,  
Վերջապես մի հով **անտառ** են մտնում,  
Անտառի միջին մի զանգակ աղբյուր:<sup>6</sup>*

Համո Սահյանի «Անտառում» բանաստեղծության մեջ անձնավորված է աշնանային անտառը, որի շղարշիկ միջավայրում օրորասաց է աշունը.

Անտառում ամպի ծվեններ կային,  
Կապույտ մշուշներ կային անտառում,  
Օրոր էր ասում աշունն անտառին,  
Բայց դեռ անտառի քունը չէր տանում:

.....

Եղնիկի հորթը՝ մամուռը դնչին,  
Թռչում էր իր մոր բառաչի վրա,  
Եվ որսկանը թաց խոտերի միջին  
Կորած հետքերն էր որոնում նրա:

Ղ. Աղայանի «Անտառի մանուկը» հեքիաթում եղնիկի խնամքին է հանձնվել որբուկը.

*Միրո՛ւն երեխա, որբ էս մնացել,  
Քո անբախտ մորը գերի են տարել.  
Նա գնա՛ց, կորա՛վ, էլ ետ չի գալու,  
Էլ ոչ մի անգամ քեզ ծիծ չի տալու:*

.....

*«Պախրեն կրգա՝ ծիծ կըտա,  
«Նանա , գառնո՛ւկս, նանա»...  
Ահա եկել եմ, որ քեզ ծիծ տամ ես,  
Պահեմ, պահպանեմ իմ հորթուկիս պես,*

Պախրան ծիծ տվավ երեխին, երեխան կշտացավ ու քնեց:<sup>7</sup>

Ժողովրդական մտածողության բնորոշմամբ՝ երեխան մորից է որբ մնում (մորե որբ):

<sup>6</sup> Թումանյան Հ., Հեքիաթներ (մշ. կազմ. Վ. Աբրահամյանը), Երևան, ՄՀՄ գրատուն, 2011, էջ 73-74:

<sup>7</sup> Աղայան Ղ., Երկեր, Երևան, «Սովետական գրող», 1979, էջ 383-384:

Բանահյուսական օրորոցային տեքստի նշված դրվագը կարծես հեքիաթից պոկված պատառ լինի՝

*Միրո՛ւն երեխա, որք ես մնացել,  
Քո անբախտ մորը գերի են տարել.  
Նա գնա՛ց, կորա՛վ, էլ ետ չի գալու,  
Էլ ոչ մի անգամ քեզ ծիծ չի տալու:  
Քամին կգա, ժաժ կտա,  
Պախրեն կգա, ծիծ կտա,  
Ջա՛ն, գուլում, ջա՛ն, ջա՛ն...<sup>8</sup>*

Ինչպես տեսնում ենք, ժանրային ներթափանցումը (օրորը հեքիաթում) ավելի է հարստացրել հեքիաթի բովանդակությունը:

«Ջիգարով պախրեն» ժողովրդական հեքիաթը ևս հորդոր է պախրային, որ գա ու կերակրի երեխային.

*Նանա՛, նանա՛, Օրսագուլ,  
Պախրեն կգա ծիծ կտա,  
Ջիգար չունենա՝ քիչ կտա,  
Մանդրատերերը փափկոց կլի,  
Լենատերերը ծածկոց կլի.<sup>9</sup>*

Հեքիաթի համատեքստը կարևոր է օրորոցայինը ճիշտ ընկալելու համար: Վերը նշված օրորը եթե դիտարկենք սովյալ հեքիաթանյութի համատեքստում, ապա պատկերը կլինի այն, որ *պախրան* մանկասեր է, մանկախնամ, մանկապահ: Հեքիաթի վերնագիրը և վերջաբանն ընդգծում են այդ. «*Էդ վախտը մի թաքավոր իրա գորքերով էկած ա ըլլըմ էդ ծմակը ֆորսի: Պախրին տենըմ են թե չէ, տալիս են սպանըմ*»: Որ գալիս են տենըմ պախրի ծիծն էդ ըրեխի բերնըմը, ըրեխի մերն էլ կոխկին ֆոքին տված ա, կուռներուն թիլանըմ ա, մնըմ են հուշ էլած:

*Ասըմ են. - Պախրեն մարթկերանցից ջիգարով ա:<sup>10</sup>*

Միջաբերված տեքստում ուշագրավ է, որ եղնիկը բախտի քմահաճույքին մատնված որբ մանկիկի խնամակալն է / *Պահեն, պահպանեն իմ հորթուկիս պես...!*:

Ինչ խոսք, հեքիաթի համատեքստից դուրս օրորը ձեռք է բերում այլ մեկնություն: Օրորոցային տեքստերի մի փունջ կարելի է առանձնացնել անտառային կերպարի մասնակցությամբ.

*Նանա՛, բալիկ ջան, նանա՛,  
Պախրեն կգա ծիծ կտա,  
Ջիգար չունի, քիչ կտա:<sup>11</sup>*

Եղնիկի կերպարը ուրույն հատկորոշում ունի Ավ. Իսահակյանի «*Եղնիկը*» արձակ պոեմում. *Արդյոք գիտե՞ր նա, որ ինքը դողանջուն անտառների ազատ երեխան*

<sup>8</sup> Գրիգորյան Ռ., Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր, Երևան, 1970, էջ 354:

<sup>9</sup> Հայ ժողովրդական հեքիաթներ, Գուգարք (Լոռի), հ. 8, Երևան, ՀՍՍՀ ԳՄ հրատ., 1977, էջ 398:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 399:

<sup>11</sup> Գրիգորյան Ռ., նույն տեղում, էջ 70:

*է եղել, որ իր մայրը այնտեղ է կայծ տվել իրեն, որ այնտեղ է իր հայրը եղջյուրները խփել կաղնիներին... Արդյոք գիտե՞ր, որ այդ խուլ շառաչը անու՛շ-անու՛շ օրորել է իրեն առաջին անգամ, և ո՞վ գիտե, գուցե երագներ է բերել իրեն, սիրուն երագներ...<sup>12</sup>*

Հովհ. Թումանյանի «Եղջերուն» պատմվածքն ընդգծում է եղջերուի ու պախրի ձագի նմանությունը մոր ու երեխայի հետ: Պատկերավոր համեմատության ոճական հնարով է հեղինակն այս ամենը նշում. *Մի քար քցեցի թփուտը. մին էլ տեսնեմ մի պախրի ճուտի ականջներ ցցվեցին, էլ ետ ցածացան, ու սկսեց թփերը ժաժ տալ, ճամփա բաց անել, որ փախչի:...Տղերք, հիմի մի ձեն և ածում, մի տնքում և, ոնց որ մեռնող երեխա: Մտա մի ծառի տակ ճամփա պահեցի: Շատ մնացի թե քիչ, մին էլ տեսնեմ հրես էկավ, բայց ոնց էկավ, ես տեսա, դուք ոչ տեսնեք- մի խոսքով մոր նման, թվանքի ձենը իր էրեխի վրա լսած մոր նման: Ասում եմ, փառքդ շատ ըլի աստոծ, ինչ և մեր ու էն սարի պախրի զանազանությունը-ոչինչ... ամենի սիրտն էլ սիրտ և, ամենի ցավն էլ-ցավ...*

Պատմվածքի արձակ տիրույթում բովանդակության արտահայտման չափածո հատվածը ավելի գերզգայական բնույթ ունի՝ արտահայտված կրկնակ տողերով, ռիթմական շնչառության պահպանմամբ.

*Հէ՛յ, պարոննե՛ր, տեսա կանանչ գարունքին՝*

*Էս սարերում լաց էր լինում մի պախրա.*

*Միրուն հորթը մուր կանգնած իր կողքին՝*

*Էս սարերում լաց էր լինում մի պախրա...<sup>13</sup>*

Բազմաթիվ հեքիաթներում հերոսի կամ հերոսների քունը ապահովող «պահապաններն» են անտառն ու քամին: Օրինակ, «Հենգելն ու Գրետել»-ի թումանյանական փոխադրությունում չկա օրորոցային տեքստ. անտառն է հանդես գալիս որբախնամ օրորասացի գործառույթով. քամին է ապահովում երեխաների քունը, կարծես իր գնալ-գալով երգում է ինքնատիպ օրոր. *Բայց որ թրխկացնում էր, էն կացինը չէր, մի կոճղ էր, որ փայտահատը կապել էր մի չոր ծառի. քանուց գնում էր, գալիս, զարկում ծառի բնին ու թրխկացնում: Ու էսպես, երեխեքը երկար-երկար նստում են, աչքները հոգնածությու-նից փակվում են իրանց-իրանց, ու խորը քնում են:<sup>14</sup>*

Կան օրորներ, որոնք «պոկվում» են հեքիաթի տեքստից՝ պահպանելով հիմնա-նյութը.

Ռ. Գրիգորյանի «Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր» ժողովածուում նույնպես հանդիպում ենք օրորի մի տարբերակի, որն օրգանապես կապված է բանահյուսական «Էթումի հեքիաթ»-ի հետ:

*Օրոր էնիմ օրորոցին,*

*Անուշ քուն գալ գրկանոցին,*

*Դարդեր ունիմ քանց դարդ բեթար,*

<sup>12</sup> Իսահակյան Ա., Երկեր, հ. 3, Երևան, Հայպետհրատ, 1959, էջ 310:

<sup>13</sup> Թումանյան Հ., Ընտիր երկեր, 2 հատորով, Երևան, «Սովետական գրող», 1985:

<sup>14</sup> Գրիմ եղբայրներ, Հենգելն ու Գրետելը (Հովհ. Թումանյանի փոխ.), Երևան, «Արևիկ» հրատ., 1988, էջ 6:

*Տնից տեղից էղա բիբար:*<sup>15</sup>

Հաճախ դժվար է տարորոշել՝ օրորը ողբերգի համատեքստում է հանդես գալիս, թե ոչ: Այս պարագայում, անտարակույս, էական է ասացողի կողմից թե՛ լեզվական, թե՛ արտալեզվական տարրերի կիրարկումը: Օրինակ, առանձին դեպքերում ողբի տարրեր պարունակող տեքստը հանդես է գալիս օրորի միջավայրում: Միջաբերենք բանահյուսական օրորոցայինի պատահիկ.

*Լուսընկան կամար-կամար,*

*Ես կույամ քեզի համար,*

*Գառս, եկու կըլլի քնացիր,*

*Չագս, օրո՛ր, օրո՛ր, օրո՛ր, օրո՛ր:*<sup>16</sup>

Ինչպես նշում է բանահավաքը, միջաբերված երգային տեքստը հայօրորների այն շարքին է պատկանում, որոնք իրենց էությունը չեն առնչվում մանկան հուզաշխարհին, այլ միայն արտահայտում են գեղջուկ մոր սրտին ծանրացած *վիշտն ու տրտմութունը*: Այսպիսի օրորները միայն կրկներգերով են ծառայում մանկանը:<sup>17</sup>

Հայի բախտի ու ճակատագրի ողբ-օրոր է Ավետիս Ահարոնյանի «Նազեի օրորը».

*Քնիր, իմ բալի՛կ, օրոր իշ արա,*

*Դու լաց մի՛ լինիր, ես շատ եմ լացել:*

*Կույր կռունկները սուգ ու շիվանով,*

*Մեր սև երկնքով եկան, անց կացան,*

*Ա՛խ, մեր լեռներում նրանք կուրացան*

*Դու լաց մի՛ լինիր, ես շա՛տ եմ լացել:*

Հարկ է նշել, որ *իշ անել* արտահայտությունը ունի *քնել* իմաստը. *իշ*-ը երգեցիկ հնչվող ձայնարկություն է, որով երեխաներին քնեցնում են:<sup>18</sup> *Սուգ ու շիվանով, սև երկնքով* նկարագրականները ամփոփում են սրտնեղություն, դժգոհություն:

Երբեմն օրորոցային տեքստը հյուսվում է գրական երկի բովանդակությանը՝ դառնալով անտրոհելի ժանրային միավոր: Բացառիկ օրինակ է հետևյալ օրորը՝ Բաֆֆու «Մալբի» վեպից. *Մինչ Հուրի Խան-Դայան այդօրինակ խորհրդածությանց մեջ էր, նրա մտածմանց ամբոխմունքը ցրեց փոքրիկ Պողոսի լացի ձայնը, նա հրամայեց Նազլուին, որ յուր մոտ դնե յուր թոռան օրորոցը և յուր թույլ ձեռքով սկսեց օրորել նրան: Յուր ամուսնի հիշատակը, յուր տան վաղեմի օրերի անմեղ, կրոնական կյանքն, որ նույն բույեում վառել էին նրա երևակայությունը, առիթ եղան բորբոքելու նրա սատը սրտի մեջ բանաստեղծական շիջած կայծերը և նա ջերմ ոգևորությամբ սկսեց երգել, հանդարտ շարժելով յուր թոռան օրորոցը.*

*Քնե՛, քնե՛, սիրուն թոռնյակ,*

<sup>15</sup> Գրիգորյան Ռ., նշվ. աշխ., էջ 68:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 63:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 367:

<sup>18</sup> Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, հ. 2, Երևան, 1972, էջ 342:

Քնե՛, անուշ դու քնով,  
Օրորոցդ հանդարտ կշարժեմ  
Ես մայրական ջերմ սիրով:

Քնե՛, քնե՛, անմեղ հրեշտակ,  
Քնե՛, անուշ դու քնով,  
Քեզ օ՛ր կասեմ, քաղցր օ՛րօ՛ր...  
Քեզ օ՛ր կերգեմ մեղմ ձայնով:

Աչքդ փակի՛ր, իմ սիրեկան,  
Քնե՛, որ շուտ մեծանաս.  
Քո վատաբախտ ծնողաց համար  
Խելոք տղա դու դառնաս:

Նույն վեպի էջերում հանդիպում ենք դառնակսկիծ ողբ-օրորի, որը խտացնում է օրորասացի հոգեվիճակը.

«Մի մանկահասակ կին, տխուր, բայց վայելուչ կերպարանքով ճոճում էր յուր տղայի լանտիկը, որ քարշ էր տված շաղրի երկու սյուններից: Նա խիստ ցավալի ձայնով եղանակում էր այս **ողբալի օրորոցի երգը**: Հնչող քամիները նրա ձայնը տանում էին հեռու՝ և խառնում մուգաների ձայնի հետ...»

Նանի՛ կ՛կասեմ, իմ հրեշտակ,  
Նանի՛ կ՛կասեմ երգելով,  
Նանի՛ կ՛կասեմ երգելով,  
**Ողբերգելով ու լալով**»:

Անհրաժեշտ ենք համարում մեջբերել երկու բանասացներից լսած խոսքեր, որը գրառել ենք բանահավաքչական աշխատանքների ընթացքում՝ ա) *Անձամբ իմ երեխաներին թե ինչ եմ երգել, չեմ հիշում: Բայց շատ լավ եմ հիշում, թե ինչ եմ երգել իմ թոռնիկին քնեցնելիս, քանի որ դա ինձ համար շատ դժվար ու ծանր շրջան էր: Թոռնիկս հինգ ամսական էր, երբ ամուսինս մահացավ, ու նրան քնեցնելիս միայն լացով էի երգում օրորոցային. և՛ բառերը, և՛ երաժշտությունը ստեղծվում էին հենց այդ պահին: Շատ հուզական էր ստացվում, բայց հոգիս մի քիչ թեթևանում էր և հանգստանում:*<sup>19</sup> բ) *Քնեցնելուց կարդացել եմ հեքիաթներ և չեմ երգել ոչ մի անգամ: Միայն երեխայիս հիվանդ ժամանակ, գիրկս առնելուց ձեռքերիս մեջ շոյել եմ և առանց բառերի տխուր երաժշտություն եմ հորինել:*<sup>20</sup>

**Եզրահանգում.** Օրորոցայինն ու ողբերգը՝ որպես հուզական երգատեսակներ, ուղեկցում են մարդուն կյանքի անցումային բոլոր փուլերում: Հաճախ օրորը հանդես է

<sup>19</sup> Բանասաց՝ **Գայանե Վաղինակի Մելիքյան**. ծնվել է 1966 թվականին Գյումրիում: Ունի բարձրագույն կրթություն:

<sup>20</sup> Բանասաց՝ **Նարա Ստեփանի Դավթյան**. ծնվել է 1974 թվականին Գյումրիում: Ունի բարձրագույն կրթություն:

գալիս ողբի միջավայրում՝ արտահայտելով երգասացի կորստի ցավը, կարոտը, սիրո բացառիկ արտահայտումը: Ողբ-օրորը կամ օրորերգը շատ հաճախ երգասացի համար հոգեբանական արտամղման ձև է, թերապևտիկ միջոց: Ժողովրդի հոգեբանությունն արտահայտող դասական հեղինակները կերպարաստեղծման միջավայրում բնականաբար կարևորում են քննության առարկա ժանրային տեսակները՝ ողբն ու օրորը:

## КОЛЫБЕЛЬНАЯ - СКОРБНАЯ В АРМЯНСКОМ ФОЛЬКЛОРЕ (В КОНТЕКСТЕ ЛИТЕРАТУРНОЙ СРЕДЫ)

*Матикян А. Г.*

**Ключевые слова:** *текст, формула, среда, ребенок, адресат, нарратор, колыбельная, скорбная песнь.*

Колыбельная в контексте традиционного фольклора имеет специальные черты, которые также проявляются в текстах скорбных песен. Прежде всего, и колыбельная, и плач считаются текстами фольклорных песнопений. Жанровые и текстовые корреляции очевидны в колыбельных и причитаниях.

В детской среде стоит упомянуть следующие типы текстов: колыбельные, сказки и др. Языковая «среда» колыбельных текстов намного шире - она может содержать некоторые элементы плача.

Для того чтобы сделать глубокий обзор колыбельных текстов, необходимо рассмотреть тексты скорбных песен - причитаний. Во многих случаях текст колыбельной трансформируется в скорбь и наоборот.

## LULLABY- LAMENTATIONS IN ARMENIAN FOLKLORE (IN THE CONTEXT OF LITERARY ENVIRONMENT)

*Matikyan H. H.*

**Key words:** *text, formula, milieu, child, addressee, narrator, lullaby, lamentation.*

Lullaby is endowed with specific characteristic features in the framework of traditional folklore, especially lamentation song texts. In essence, the lullaby text bears some typical traits that are evident in lamentation texts. First of all, both lullaby and lamentation are considered to be as song texts. Generic and textual correlations are evident in lullabies and lamentations.

In the nursery milieu the following types of texts are worth mentioning: *lullabies, fairy-tales, etc.* The linguistic “environment” of lullaby texts is wider- it may contain some lament elements.

In order to make a deep survey of lullaby texts, it is necessary to view it in the context of lamentations. In many cases the lullaby text is transformed into a lament one and on the contrary.

**Գ ր ա կ ա ն ո թ յ ո ն**

1. Աղայան Ղ., Երկեր. Երևան, «Սովետական գրող» հրատ., 1970:
2. Գրիգորյան Ռ., Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր. Երևան, ՍՍՀ ԳԱ հրատ., 1970:
3. Գրիմ եղբայրներ., Հենզելն ու Գրետելը (Հովհ. Թումանյանի փոխ.), Երևան, «Արևիկ» հրատ., 1988:
4. Թումանյան Հ., Հեքիաթներ (մշ. և կազմ. Վ. Աբրահամյանը), Երևան, ՄՀՄ գրատուն, 2011:
5. Թումանյան Հ., Ընտիր երկեր, 2 հատորով, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1985:
6. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, հ. 2, Երևան, 1972:
7. Իսահակյան Ա., Երկեր, հ. 3, Երևան, Հայպետհրատ, 1959:
8. Հայ ժողովրդական հեքիաթներ. Գուգարք (Լոռի), հ. 8, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1977:
9. Հարությունյան Ս., Բանագիտական ակնարկներ. Երևան, «Գիտություն» հրատ., 2010:
10. Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի, հ. 2, Վենետիկ, 1837:
11. Պալասանյան Ս. Բանավոր գրականություն. Պատմություն հայոց գրականության, հ.1, Թիֆլիս, 1865:
12. Երգարան (Շարա Տալյան, Վաղինակ Չաքմիշյան, Երևան, 1966, <http://horovel.org/lalayan/horovel.nsf/b6faaed24a719395c12580c50056ed9d/afd90babe6bbeca7c125811a0067bb6e!OpenDocument>).

*Ընդունվել է՝ 20. 04. 2021*

*Գրախոսվել է՝ 09. 05. 2021*

*Հանձնվել է տպ.՝ 21. 06. 2021*

**Տեղեկություններ հեղինակի մասին**

**Հասմիկ ՄՄՏԻԿՑԱՆ՝** բանասիրական գիտությունների թեկնածու,  
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի  
գիտաշխատող, Շիրակի պետական համալսարանի դասախոս,  
Էլ. հասցե՝ hasvrej@mail.ru.

ՀՏԴ՝ 91.19

DOI: 10.52971/18294316-2021.1-108

ԴԱՍԱԿԱՆ ԳՐԱԲԱՐԻ ԵՆԹԱՇՐՁԱՆԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՀՈԼՈՎՄԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶՈՒԳԱԶԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Գուրգեն Խաչատրյան*

*Երանուհի Հովհաննիսյան*

Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

**Բանալի բառեր՝** գրաբար, հետդասական գրաբարի ենթաշրջան, հոլովական զուգաձևեր, երկանդամ զուգաձև, եռանդամ զուգաձև, հոլովիչ, ձայնավորահանգ և ձայնորդահանգ հոլովումներ, հոլովման համակարգ:

Հոլովածում քննության առարկա են դարձել գրաբարի անունների (մասնավորապես զոյականների և ածականների) հոլովական զուգաձևությունները, որոնք թեև արժանացել են քերականագետների ուշադրությանը<sup>1</sup>, սակայն առայսօր համալիր ուսումնասիրության չեն ենթարկվել: Նպատակ է հետապնդվում քննության առնելու միայն համաժամանակյա կտրվածքում վկայված հոլովական զուգաձևերը, մասնավորապես՝ դասական գրաբարի ենթաշրջանում վկայվածները:

<sup>1</sup> Այտրնյան Ա., Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Երևան, Եր. համալսարանի հրատ., 1987, էջ 436; Աբեղյան Մ. Գրաբարի քերականություն, Երևան, Պետհրատ, 1936, էջ 118-123; Туманян Э. Г. Древнеармянский язык. Москва. Изд-во “Наука”. -1971. С. 238-239; Շարաբխանյան Պ.Ե., Գրաբարի դասընթաց, Երևան, Եր. համալսարանի հրատ., 1974, էջ 155-156; Աբրահամյան Ա. Ա. Գրաբարի ձեռնարկ, Երևան, «Լույս» հրատ., 1976, էջ 63-64; Ավետիսյան Հ.Մ., Ղազարյան Ռ.Ս., Գրաբարի դասընթաց, Երևան, Եր. համալսարանի հրատ., 2001, 55; Առաքելյան Վ.Բ., Գրաբարի քերականություն, Երևան, «Վիամիր» հրատ., 201, էջ 79-83; Խաչատրյան Գ. Կ., Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» երկի բայական և անվանական համակարգերի քերականական անկանոնությունները // Մ.Խորենացու ծննդյան 1600-ամյակին նվիրված գիտաժողովի կյութեր, Վանաձոր, «ՄԻՄ տպագրատուն», 2011 էջ 4-18; Խաչատրյան Գ. Կ., Գրաբար, Երևան, «Ոսկան Երևանցի» հրատ., 2014, էջ 90-98:

Հոդվածի լեզվական նյութը քաղել ենք ՆՀԲ-ից, համեմատել Վ. Առաքելյանի ներկայացրած բառացանկի հետ<sup>2</sup>, դասակարգել՝ ըստ տարբեր հոլովումների համադրությամբ ձևավորված ենթախմբերի՝ նպատակ ունենալով վեր հանելու այն օրինաչափությունները, որոնք նշված ենթաշրջանում ընկած են հոլովական զուգաձևերի առաջացման հիմքում, ինչպես նաև ներկայացնելու զուգաձևերի զարգացման դինամիկան<sup>3</sup>:

Քննությունը հիմնականում կատարել ենք համեմատության մեթոդով՝ ըստ անհրաժեշտության կիրառելով նաև վերլուծական և զուգադրական մեթոդները՝ գերազանցապես առաջնորդվելով համաժամանակյա հայեցակետով:

**Նախաբան.** Լեզվաբանական տեսանկյունից զուգաձևեր են համարվում հնչյունական, բառային կամ քերականական այն միավորները, որոնք իմաստով (գործառույթով) նույնն են, իսկ ձևով՝ տարբեր<sup>4</sup>: Լեզվական փաստերը վկայում են, որ զուգաձևերով հարուստ են գրական հայերենի բոլոր շրջանները: Ահավասիկ զուգաձևության օրինակներ գրաբարից (*ուռնում//ուռչիւմ, մեղու//մեղէր* և այլն), միջին հայերենից (*լինիւմ//լինամ, լուսնեկի//լուսնեկան* և այլն) և ժամանակակից հայերենից (*բերի//բերեցի, գառի//գառան* և այլն): Գրական հայերենի բոլոր շրջաններում զուգաձևեր են հանդիպում ոչ միայն տարբեր ենթաշրջաններում վկայված գրավոր աղբյուրներում, այլև միևնույն ենթաշրջանում գրված տարբեր աղբյուրներում և նույնիսկ միևնույն հեղինակի նույն (կամ տարբեր) գործ(եր)ում: Հատկանշական է նաև, որ գրական հայերենի բոլոր շրջաններում առանձնանում են թե՛ հնչյունական, թե՛ բառային և թե՛ քերականական զուգաձևեր, ինչը լավագույնս վկայում է, որ հայոց լեզուն՝ որպես կենդանի համակարգ, հետզհետե փոփոխության է ենթարկվում, որտեղ մի շարք լեզվական միավորներ աստիճանաբար դուրս են գալիս գործածությունից՝ տեղը զիջելով լեզվակիրների կողմից զուգաձևաբար գործածվող միավորներին:

Չուգաձևերի առաջացումը կարող է պայմանավորված լինել ինչպես լեզվի զարգացման ներքին օրինաչափություններով և լեզվակիրների անհատական մոտեցումներով, այնպես էլ արտաքին ազդեցություններով ու այլ հանգամանքներով (բառերի

<sup>2</sup> Լեզվական փաստերը համեմատելիս պարզել ենք, որ հիշյալ բառացանկում Վ. Առաքելյանը՝ ա) *անշունչ* բառին վերագրել է *ի-ա//ի* հոլովական զուգաձևություն, մինչդեռ ՆՀԲ-ում նշվում է *ի//ն* զուգաձևի մասին, բ) *մժեխ* բառին վերագրել է *ի-ա//ն* զուգաձևություն, մինչդեռ այն ունի *ի//ի-ա* համադրությամբ զուգաձև, գ) *վաճառ* բառին վերագրել է *ի-ա//ու* զուգաձևություն, մինչդեռ այն եռաբաղադրիչ զուգաձև է՝ *ի-ա//ու//ն* տարբերակով, դ) *կողոպուտ* և *ժամ* գոյականները ներկայացրել է *ու//ի* զուգաձևությամբ, մինչդեռ առաջինը *ու//ի* համադրությամբ զուգաձև ունի, երկրորդը՝ *ու//ի-ա*: Բառացանկը համալրել ենք դասական գրաբարի ենթաշրջանում *ե//ի-ա* տարահիմք հոլովմամբ առանձնացող *աղբիւր, անզղ, աստղ, եղջիւր, կայսր* և *ի//ն* հոլովական զուգաձևությամբ հանդես եկող *այրեցած* գոյականներով:

<sup>3</sup> Հոդվածի ներածական, ամփոփիչ մասերը և ծանոթագրությունները հեղինակել է Գ. Խաչատրյանը, բուն տեքստային մասի համահեղինակներն են Գ. Խաչատրյանը և Ե. Հովհաննիսյանը:

<sup>4</sup> Պետրոսյան Հ. Զ., Գալստյան Ս. Ա., Ղարաբյուրյան Թ. Ա., Լեզվաբանական բառարան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975, էջ 100:

բնիկ կամ փոխառյալ լինելը, դրանց ձևափոխության առանձնահատկությունը, փոխառման ժամանակաշրջանը և այլն), որոնց բացահայտումը դուրս է մեր նպատակներից<sup>5</sup>: Գտնում ենք, որ գուգաձևերի անդամներից «շատերը ներկայացնում են տվյալ ժամանակաշրջանի հայերենի բառապաշարի ժողովրդախոսակցական շերտը»<sup>6</sup>:

Գրաբարի հոլովական գուգաձևերին առաջին հիմնավոր անդրադարձը կատարվել է դեռևս 19-րդ դարի 30-ականներին<sup>7</sup>, իսկ առաջին գիտական քննությունը կատարել է Ա.Այտրնյանը՝ դրանք անվանելով «կրկին հոլովմունք»: Լեզվաբանը նշում է. «Շատ անուններ երկու կամ երեք հոլովման կերպ ալ կրնան հոլովիլ», ապա բերում ոչ միայն հայերեն բառերի հոլովման գուգաձևեր (*զգեստու//զգեստի//զգեստով, բերդից/բերդաց, մոզաց/մոզուց, նախ/նաու/նավով, նաւաց/նաւուց, լուսնի/լուսնոյ ...*), այլև մատնանշում օտար բառերով պայմանավորված գուգաձևեր նույնպես: «Այսպես շատ օտար անուններ,- գրում է նա,- թէ հայերեն և թէ օտար (յունարեն) կերպով կը հոլովին. գործրինակ. *Փիլիպպոսի* կամ՝ *Փիլիպպեայ*. *Մատթէոսի* կամ՝ *Մատթէի ...*»: Նրա տեսադաշտից չի վրիպել և այն, որ շատ անուններ «բարդութեանց եւ ածանցից մեջ ... հոլովումնին կփոխեն», ինչպես՝ սեր – *սիրոյ*, բայց՝ իմաստասեր – *իմաստասիրի*, խրատ – *խրատու*, բայց՝ անխրատ – *անխրատի* և այլն<sup>8</sup>:

Հետագա քերականագետները գերազանցապես կրկնել են գրաբարի անունների հոլովական գուգաձևերին վերաբերող հիշյալ ձևակերպումները: Հիշարժան դիտարկումներ ունեն միայն Վ. Առաքելյանը և Է. Թումանյանը: Ըստ Վ. Առաքելյանի մի անտիպ աշխատության մեջ ներկայացրած, հոլովական գուգաձևեր ունեցող անունների (տվյալ դեպքում՝ գոյականներ և ածականներ) ցանկի և Է. Թումանյանի կատարած նախնական հաշվարկի՝ գրաբարում առանձնանում է այդ կարգի շուրջ 140 բառ<sup>9</sup>, որոնք հանդես են բերում երկու, երբեմն՝ երեք հոլովական գուգաձևեր<sup>10</sup>: Խնդրո առարկա հարցին Վ. Առաքելյանն անդրադառնում է նաև վերջերս լույս տեսած «Գրաբարի քերա-

<sup>5</sup> Խոսելով հոլովական գուգաձևությունների առաջացման մասին՝ Մ. Աբեղյանը միանգամայն ճիշտ է նկատել. «Այդպիսի փոխանցումները հոլովումների խմբերի մեջ՝ մեծ մասամբ հետագա ժամանակներում են յերևան գալիս և տարբեր բարբառների ազդեցության արդյունք են» (Տե՛ս Աբեղյան Մ. Գրաբարի քերականություն, Երևան, Պետհրատ., 1936, էջ 118):

<sup>6</sup> Խաչատրյան Գ. Կ., Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» երկի բայական և անվանական համակարգերի քերականական անկանոնությունները // Մ.Խորենացու ծննդյան 1600-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Վանաձոր, «ՄԻՄ տպագրատուն», 2011, էջ 17:

<sup>7</sup> Նկատի ունենք ՆՀԲ երկհատորյակը, որի համապատասխան բառահողվածներում ամենայն բարեխղճությամբ նշվել են գրաբար գրավոր աղբյուրներում վկայված հոլովական գուգաձևերը:

<sup>8</sup> Այտրնեան Ա., Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Երևան, Եր. համալսարանի հրատ., 1987 էջ 436]:

<sup>9</sup> Туманян Э. Г. Древнеармянский язык. Москва. Изд-во “Наука”. -1971. С. 238.

<sup>10</sup> Խոսքը Վ. Առաքելյանի «Ակնարկներ դասական հայերենի պատմության» խորագրով մի աշխատության մասին է, որը հեղինակը դեռևս անտիպ վիճակում տրամադրել է Է. Թումանյանին՝ արժանանալով վերջինիս շնորհակալական խոսքին (Տե՛ս Туманян Э. Г. Древнеармянский язык. Москва. Изд-во “Наука”. -1971. С. 196):

կանություն» աշխատության մեջ<sup>11</sup>, որում՝ ա) առանձնացնում է գրաբարյան շուրջ 140 գոյական և ածական, որոնք դասական գրաբարի շրջանում ունեն հոլովման գուգաձևեր (*աղախին, աղանդ, աղերս, աղետ ..... կոնք, կուզ, կրտսեր* և այլն)՝ զանց առնելով այն անունները, «որոնց դասական շրջանի հոլովումը յետդասական շրջանում փոխուել է, բ) հետևելով Ա. Այտընյանին՝ առանձնացնում է նաև օտար հոլովման վերապրուկներ, որոնց մի մասը պատճառ է դարձել հոլովական գուգաձևերի առաջացման (*Ֆիկասպոլին//Ֆիկասպոլիս, Գադմոն//Գադմոս* և այլն), գ) ներկայացնում է այլ պատճառներ, որոնց հետևանքով նույնպես կարող էին առաջանալ հոլովական գուգաձևեր<sup>12</sup>: Ըստ Է. Թումանյանի՝ հոլովական գուգաձևերը, որոնք առաջանում էին բառերի՝ մի հոլովումից մեկ այլ հոլովման անցումով, որտեղ նոր հոլովաձևերին գուգահետ պահպանվում էին նաև հները, վկայում են գրաբարում հոլովման համակարգը վերափոխող խորքային գործընթացների առկայության մասին, ինչը հետագայում հանգեցրեց հոլովումների պարզեցման և միօրինակացման: Է. Թումանյանն իրավացիորեն նշում է նաև, որ նկատվում է հոլովման որոշ տիպերի կրճատում մյուս տիպերի ընդարձակման հաշվին<sup>13</sup>:

Գրաբարի անվանական հոլովման համակարգում առկա գուգաձևերի դիտարկումը ցույց է տալիս, որ դրանք ներկայացնում են անմիօրինակ պատկեր թե՛ գուգաձև կազմող բաղադրիչ անդամների քանակի տեսանկյունից և թե՛ ժամանակագրական առումով:

Ըստ գուգաձև կազմող բաղադրիչների քանակի՝ գրաբարի հոլովական գուգաձևերը լինում են՝ ա) երկանդամ, որոնք գրաբար լեզվական աղբյուրներում նկատելիորեն հաճախադեպ են, իսկ տարբեր հոլովիչների համադրման տեսանկյունից՝ բազմազան, ինչպես՝ *n//ի-ա, ու//ո, ի//եան, ո//ո-ա* և այլն, բ) եռանդամ, որոնք թե՛ գործածության հաճախականությամբ և թե՛ տարբեր հոլովիչների համադրման առումով անհամեմատ սահմանափակ են, ինչպես՝ *ի//ի-ա//ո, ո//ու//ի-ա* և այլն և գ) քառանդամ, որոնք հազվադեպ են, ինչպես՝ *ու//ի-ա//ի//ո*, որով, օրինակ, առանձնանում է *խրատ* բառի հոգնակի գործիականը՝ *խրատուք//խրատոք//խրատիք//խրատուք*:

Հոլովական գուգաձևերի առաջացման ժամանակագրությունը ցույց է տալիս, որ դրանց մի մասի երկու կամ երեք բաղադրիչներն էլ ներկայացնում են գրաբարի միննույն ենթաշրջանը (համաժամանակյա գուգաձևեր)<sup>14</sup>, մինչդեռ մյուս գուգաձևերի բաղադրիչները տարբեր ենթաշրջաններում կամ դարերում են վկայվել (տարածամանակյա գուգաձևեր), ինչպես՝ 5-րդ և 6-րդ դդ., 5-րդ, 8-րդ և 9-րդ դդ., 8-րդ և 11-րդ դդ. և այլն: Հարկ է նկատել, որ հետդասական գրաբարի ենթաշրջանում գուգաձևերի թիվն անհա-

<sup>11</sup> Կարծում ենք՝ ժամանակին Է. Թումանյանին տրամադրվել է Վ. Առաքելյանի հենց այս աշխատության անտիպ տարբերակը՝ «Ակնարկներ դասական հայերենի պատմության» խորագրով:

<sup>12</sup> Առաքելյան Վ. Դ., Գրաբարի քերականություն, Երևան, «Վիամիթ» հրատ., 2010, էջ 80-86:

<sup>13</sup> Туманян Э. Г. Древнеармянский язык. Москва. Изд-во “Наука”. -1971. С. 238.

<sup>14</sup> Հին գրական հայերենի կամ գրաբարի շրջանը (5-11-րդ դդ.) ամբողջանում է 3 ենթաշրջաններով՝ «դասական գրաբարի ենթաշրջան» (5-րդ դ.), «հետդասական գրաբարի ենթաշրջան» (6-7-րդ դդ.), «նախամիջին հայերենյան ենթաշրջան» (8-11-րդ դդ.) (Տե՛ս Ջահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, «Միտք» հրատ., 1969, էջ 36-44):

մեմատ մեծանում է. բավական է նշել, որ, ըստ մեր հաշվարկների, ՆՀԲ-ի միայն առաջին հատորում դրանց թիվը հասնում է մոտավորապես 450-ի:

***Դասական գրաբարի ենթաշրջանի անվանական հոլովման համակարգի  
գուգաձևությունները***

Դասական գրաբարի ենթաշրջանում հոլովական գուգաձևերը լինում են՝

1. երկանդամ,
2. եռանդամ:

1. *Երկանդամ գուգաձևություններում* հոլովիչները հանդես են գալիս մի շարք համադրություններով, որոնք են՝

1.1. *n//h-ա*, որով հանդիպում 26 անուն՝ *աղախին, աղանդ, ամուր, բոյթ, գիշեր, երանգ, թաղանթ, լար, խաղող, կապար, կրտսեր, մառախուղ, որթագլուխ, պաշար, փոկ, քանքար* և այլն: Ահավասիկ օրինակներ *աղանդ* բառի գուգաձևերով<sup>15</sup> Եզնիկ Կողբացու երկից՝ Այս սկիզբն է *աղանդոյն* Մարկիոնայ (ԵԿ): Այս ամենայն վասն մարկիոնաց *աղանդին* ասացաւ (ԵԿ): Ուստի և *աղանդացն* առեալ նովին դանդաչեն (ԵԿ):

1.2. *h-ա//n*, որով հանդես եկող 15 բառերից են՝ *աղքատ, աման, անձրև, աստակ, առաւել, բաղարջ, կաշառ, նանիր, նշանագիր, սնգոյր, տաղանդ, փռճոկ* և այլն: Ահա համապատասխան օրինակներ *աման* բառով՝ Աստվածաշնչից՝ Եւ արծաթ իւրաքանչիւր *յամանի* իւրում էր (ՄԳ): Եւ առցէ քահանայն ջուր սուրբ կենդանի խեցեղէն *ամանաւ* (ՄԳ): Եւ դիք զարծաթն իւրաքանչիւր ի բերան *ամանոյ* իւրոյ (ՄԳ):

1.3. *h//n*, որով առանձնացող բառերը 20-ն են՝ *այրեցած, անշունչ, անութ, գորտ, դրամ, է, մեղեխ, նոճ, չէ, փոխ, քաղց, քարոզ, օղ* և այլն: Օրինակներ *այրեցած* գոյականով՝ Որ ունին զօրինակ յայտնութեան զմերկութիւն *այրեցածին* (ԱԳ): Շուխն *այրեցածոյն* ելեալ մաժեալ զնորօք (ԱԳ): Հնմտ. նան՝ Յօրինել շինել զամենայն զգերութիւնս յաւերածոյն և *այրեցածոյն* (ՓԲ): Չափեցին ... եւ զանբնակս *յայրեցածէն* մինչև ցՔիմիւռոն (ՄԽ) և Եւ լինիցի տեղի *այրեցածին* փայլուն կամ պաղպաջ սպիտակ՝ կամ կարմրացեալ (ՄԳ):

1.4. *n//h*, որով հանդես է գալիս 11 գոյական՝ *աղերս, բեր, գուր, դարման, լուսին, ճիչ, մագ, մութ, ցուրտ, փորձ, փոր*: Օրինակներ *դարման* բառով՝ Եւ փութացաւ նմա տալ զաճառն եւ զասն *դարմանոյ* նորա (ՄԳ): Եւ մէք *դարմանովք* կարենք բժշկել (ԵԿ) և Վասն պէսպէս *դարմանից* (ԵԿ):

1.5. *h//h-ա*, որը երկբաղադրիչ գուգաձևություններից առավել ծավալունն է (30 անուն)՝ *աղէտ, անյոյս, ասպառած, արբշիռ, գունդ, դաստակերտ, եկամուտ, գոյգ, ժանտ, իղձ, խճբիձ, կոնք, մժեխ, նշոյլ, շնորհ, սուտակասպաս, տոհմ* և այլն: Օրինակներ *դաստակերտ* գոյականով՝ Քաղցր է ինձ ասել եւ յաղագս գեղեցիկ *դաստակերտին* Երուանդակերտի (ՄԽ): Ամենայն հայոց աշխարհիս ... *դաստակերտիցդ* կայսերաց (ԱԳ): Եւ

<sup>15</sup> Հետագա շարադրանքում գերազանցապես բերում ենք եզակի սեռական, գործիական և հոգնակի սեռական հոլովաձևերով օրինակներ, որովհետև բառերի՝ այս կամ այն հոլովման պատկանելության հարցում որոշիչ դեր ունեն այդ հոլովաձևերը: Հազվադեպ անդրադառնում ենք նաև այլ հոլովաձևերի: Ի դեպ, նկատենք, որ լեզվական աղբյուրներից գուգաձև հոլովվող սակավաթիվ բառերի բոլոր հոլովաձևերով կարելի է վկայություններ քաղել:

տալ գահու եւ պատուոյ, հանդերձ իշխանութեամբ գիւղից եւ *դաստակերտաց* Համագասայ (ՄԻ): Չտունս նոցա հանդերձ գիւղօք եւ գիւղիք եւ *դաստակերտօք* հրամայեցաք ունել յարքունիս (ՄԻ):

1.6. *ի-ա//ի*, որով առանձնանում է 4 բառ՝ *գէտ, գոնե, հրաշակերտ, սաղմոս*: Օրինակներ *սաղմոս* գոյականով՝ *Չսաղմոսից* և զօրհնութեանց (ՆՀԲ): Արդ եւ ես խոստովան եղեց քեզ ի պատրաստութիւն *սաղմոսաց* (ՄԳ): Չգիշերն ամենայն *սաղմոսիք* ի գլուխ տանէին (Ե):

1.7. *ու//ի*, որով հանդիպում է 2 բառ՝ *կողոպուտ* և *վնաս*: Ահավասիկ *վնաս* բառի բնագրային օրինակներ՝ Եւ հարկանիցեն զկին յղի եւ էլանիցէ սաղմնն աննկար, կէս *վնասու* տուժեցցի (ՄԳ): Ոգովք չափ գային *վնասուցն* (ՓԲ): Իբրեւ զգաստ եղեւ Յուդա վասն անօրէն խակութեան *վնասին* (ՄԳ): Զի՞նչ խորհելով եւ կամ ո՞րպիսի ինչ զմտաւ ածեալ զայդպիսի իբս *վնասից* իշխեցեր ձեռնարկել եւ գործել (ՂՓ):

1.8. *ի//ու*, որով հանդէս է գալիս 2 բառ՝ *առաւօտ* և *կահ*: Օրինակներ *առաւօտ* գոյականով՝ Մինչ դեռ *առաւօտին* աղօթքն մատչէին (ՓԲ): *Յառաւօտուն* ժամուն այգանալոյն պաշտամանն (ՓԲ): Զարթի՛ք փառք իմ, եւ ես զարթեայց *առաւօտուց* (ՄԳ):

1.9. *ու//ի-ա*, որով հանդէս է գալիս 3 բառ՝ *ժաւ, նարօտ, նաւ*: Ահա օրինակներ *նաւ* բառով՝ Իբրև լուաւ Յիսուս զնաց անտին *նաւու* յանապատ տեղի առանձինն (ՄԳ): Կանամքք և մանկտով ածել զնոսա *նաւուք* (ՄԳ): Եւ զշաւիդս *նաւի* ընդ ծով զնացելոյ (ՄԳ): *Նաւաց* հետք ճանապարհի (ՄԳ): Թողուն զժողովուրդ և առնուն *զնաւան* յանդերձ (ՄԳ): *Նաւօք* բազմօք (ՄԳ):

1.10. *ի-ա//ու*, որով հոլովվում է *վաճառ* բառը՝ Եւ եղիցի վարձ *վաճառի* նորա Տեառն նուիրեալ (ՄԳ): Ի բազմութեան *վաճառաց* քոց (ՄԳ): Ի շահս՝ որք *վաճառու* են (ՆՀԲ): Գինք *վաճառուց* արքայի (ՄԳ)<sup>16</sup>:

1.11. *ո//ու*, որով առանձնանում է 7 անուն՝ *արմաւ, արջ, կերպաս, ձախ, միասօր, ուլ, ցիւռ*: Ահա օրինակներ *արջ* բառով՝ *Արջոյ* ի բայոց մտանելոյ (ԵԿ): Արձակել ի վերայ բազմութիւնս *արջոցն* (ՆՀԲ)<sup>17</sup>: Ոտք նորա իբրև *զարջու* (ՄԳ): Ի վերայ *արջուցն* և առիծուցն (ՄԳ):

1.12. *ու//ո*, որով հանդիպում է 4 բառ՝ *երինջ, հաւ* («պապ» իմաստով), *մաղ, մաղձ*: Ահա օրինակներ *հաւ* բառով՝ Յակոբայ և նորուն հօրն կամ *հաւուն* երևեցաւ յայտնապէս (ՆՀԲ): Հարանց կամ *հաւուց* կամ նախնեաց (ՆՀԲ): Ի մայրենի *հաւոյ* իւրոյ Գնելոյ Գնունոյ (ՄԻ):

1.13. *ե//ի-ա*, որով հանդէս են գալիս *աղբիւր, անգղ, աստղ, եղջիւր, կայսր* գոյականները: Երկբաղադրիչ *ե//ի-ա* տարբերակը նախորդներից առանձնանում է նրանով, որ գուգաձև կազմող անդամները ներկայացնում են հոլովման միևնույն համակարգը. ձայնավորահանգ են, ինչպէս՝ *ի-ա//ո, ու//ի* և այլն, մինչդեռ *ե//ի-ա*<sup>1</sup> տարբերակը հոլովումների համադրության անկանոն տիպ է. գուգաձևի անդամներից առաջինը թերվում

<sup>16</sup> Վկայվում է նաև *n* հոլովման եզակի թվով՝ *վաճառոյ* (ՆՀԲ):

<sup>17</sup> 5-րդ դ. հայ պատմագիրների, Եզնիկ Կողբացու, Կորյունի երկերի և Աստվածաշնչի լեզվական նյութը քաղել ենք բնագրերից, մնացած լեզվական նյութը բերում ենք Հայկազյան բառարանի համապատասխան բառահոդվածներից՝ ՆՀԲ հղումով:

է է ձանորդահանգ, իսկ երկրորդը՝ *ի-ա* ձայնավորահանգ հոլովմամբ: Այսպես՝ *աղբիւր* գոյականը ձանորդահանգ և ձայնավորահանգ հոլովումների զուգաձև ունի ոչ միայն հոգնակի սեռականում (բնականաբար՝ նաև տրականում ու բացառականում) և գործիականում [*աղբերց* (ՄԳ, ՄԽ, ՂՓ)//*աղբերաց* (ՄԳ, ՄԽ, ՂՓ, ՓԲ), *աղբերքք* (ՄԳ)//*աղբերօք* (ՄԳ)], այլև հոգնակի ուղղական, բնականաբար նաև հայցական հոլովներում՝ *աղբերք* (ՄԳ, ԵԿ)//*աղբերքք* (ՄԳ)//*աղբիւրք* (ՆՀԲ)<sup>18</sup>: Խորենացու երկում, օրինակ, միաժամանակ հանդիպում է բառիս հոգնակի ուղղականի *աղբիւրք*//*աղբերք* զուգաձևը<sup>19</sup>: Ահավասիկ օրինակներ նաև այդ շարքի *անգղ* գոյականի հոգնակի սեռականով՝ Բարք *անգղոց* (ՆՀԲ): Կարգեալ է ի կերակուր *անգղաց* (ՄԳ):

2. *Եռանդամ զուգաձևությամբ* անունները (ընդամենը 7 բառ՝ *անուլ, բիծ, երկիւղած, համար, համբաւ, ճեպ, քանդակագործ*) արտահայտվում են կանոնավոր հոլովումների տարբեր համադրություններ ներկայացնող չորս տարբերակով, որոնք են՝

2.1. *ի//ի-ա//ն*, որով հանդիպում է 4 բառ՝ *անուլ, բիծ, երկիւղած, քանդակագործ*: Օրինակներ *քանդակագործ* բառով՝ Զիա՛րդ ծակոտեալ դրոշմեալ են իբրև զգործ *քանդակագործի* զարմանալի՛ տերևովքն այգիք (ՆՀԲ): Մինս երկուս, եւ շրջանակս *քանդակագործից* սեանցն, ի վերայ գլխոյ սեանցն, երկուս երկուս վանդակապատս, ծածկել զերկուսին շրջանակսն *քանդակ*«ագործացն, որ էին ի վերայ սեանցն (ՄԳ): Եւ ձուլեաց զայն *քանդակագործով*, եւ արար որք ձուլածոյ (ՄԳ):

2.2. *ո//ու//ի*, որով հանդես է գալիս *համար* գոյականը՝ Միահամուռ թուէ զկշիռ ոսկւոյ եւ զարծաթոյ եւ զթիւ *համարոյ* ժողովրդեանն զանցելոցն ի հանդիսի (ՄԳ): Եւ ռոճիկ նորա ռոճիկ հանապագորդ տուաւ նմա ի տանէ թագաւորին, *համարով* օրըստօրէ զամենայն աւուրս կենաց իւրոց (ՄԳ): *Համարոցն* նոցա, յաւուրս Յովաթամայ արքայի յուղայ, եւ յաւուրս Յերոբովամայ արքայի Իսրայելի (ՄԳ): Բազում նուագս ոսկիս կորուսեալ ի միջոյ *համարուէն* (ՄԳ): Եւ այս է թիւ *համարուցն*, զոհարանք ոսկեղէիք երեսուն, եւ զոհարանք սպասուն արծաթեղէիք՝ հազար քսան եւ ինն (ՄԳ): Եւ ոչ եղեւ *ի համարի* բան իմ, նախ՝ ինձ դարձուցանել զարքայ առիս (ՄԳ):

2.3. *ո//ի//ի-ա*, որով հոլովվում է *ճեպ* բառը՝ Զի՛նչ իրք իցեն վասն անօրէն *ճեպոյն* (ՄԳ): Ժամ տուեալ ուրախութեան հարսանեաց՝ *ճեպով* տագնապաւ փութայր զուրախութիւնս հարսանեացն կատարել (ՄԳ): Ոչ առ *ճեպի* աղքատութեան անարգանացն բռնի վարելոյ և ածելոյ (ՆՀԲ): *Ճեպաւ* դեսպանօք զգացուցուք (ՂՓ):

2.4. *ո//ու//ի-ա*, որով հանդես է գալիս *համբաւ* բառը՝ Ի լուր *համբաւոյ* նորա իմաստնացան տգէտք, եւ ի տեսիլ մերձաւորութեան նորա զգաստացան լկտիք (Ե): Եւ այսք այսպէս թշնամանեալք եւ հայհոյանօք հալածեալք, ոչ յերեկոյս ինչ ժամանակաց զրուցատրութեամբք յումերքէ *համբաւուց* ծանուցաւ մեզ (ՂՓ): Այստաժէտք գային ի *համ-*

<sup>18</sup> *Աղբերք* կազմվել է ձայնորդահանգ հոլովման օրինաչափությամբ՝ եզակի սեռականից, *աղբերք*//*աղբիւրք*՝ ձայնավորահանգ հոլովման օրինաչափությամբ՝ եզակի ուղղականից:

<sup>19</sup> **Խաչատրյան Գ. Կ.**, Մովսէս Խորենացու «Հայոց պատմություն» երկի բայական և անվանական համակարգերի քերականական անկանոնությունները // Մ.Խորենացու ծննդյան 1600-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Վանաձոր, «ՄԻՄ տպագրատուն», 2011, էջ 17:

*բախին* (ՄԽ): Մի երբեք զանգիտիցեն սիրտք ձեր, եւ մի երկնչիք ի *համբաւաց* գոր լսիցէք յերկրին (ՍԳ):

Մրանից բացի՝ կան գոյականներ (թվով 7), որոնցից վեցն ունի երկանդամ գուգաձև, մեկը՝ եռանդամ: Այս գոյականները վերոնշյալ երկանդամ և եռանդամ շարքերից առանձնանում են նրանով, որ այս դեպքում գուգաձև կազմող անդամներից մեկը (եռանդամի դեպքում՝ երկուսը) կանոնավոր հոլովման է ենթարկվում, մյուսը՝ անկանոն հոլովման:

Այս խմբի՝

1. *Երկանդամ գուգաձևերն* արտահայտվում են անդամների համադրության հետևյալ տարբերակներով՝

1.1. *ան/ի-ա*, որով հանդես է գալիս *անդրանկիկ* բառը: Հմմտ. Ջանունն *անդրանկանն* (ՍԳ): *Անդրանկին* իւրում (ՍԳ): *Անդրանկաւ* եզին քո (ՍԳ) և Փոխանակ ամենայն *անդրանկաց* (ՍԳ):

1.2. *ի/եան*, որով առանձնանում են *թաքուստ* և *փախուստ* բառերը, ինչպես՝ Տեղի *փախստի* և *թաքստի* (Ե): Այլ և յանցուցեալ և *թաքստեան* եղեալ (ՄԽ): Ապաստան *փախստեան*, տեղի ապաւինի (ՆՀԲ):

1.3. *եան/ն*, որով արտահայտվում է *ծնունդ* բառը՝ Ժամանակ *ծննդեան* յամուրաց (ՍԳ): Պա՛րտ է հոգևոր *ծննդոցն* հոգևոր վարս ստանալ (ՆՀԲ):

1.4. *ու/ուան*, որով հանդես է գալիս *մահ* բառը՝ *Մահու* պարտական լիցի (ՍԳ): Եւ եղև յետ *մահուանն* Աբրաամու (ՍԳ): Խորենացու երկում միաժամանակ հանդիպում է բառիս հոգնակի ուղղականի *մահք/մահունք* գուգաձևը<sup>20</sup>:

1.5. *եան/ի-ա*, որով հանդիպում է *նաւահանգիստ* բառը՝ Ի *նաւահանգստեանն* նաւաբէկ լինիցիս (ՆՀԲ): Չմերել ի *նաւահանգստին* կրետացոց (ՍԳ): Իբր ի *նաւահանգստաց* համբարձեալք (ՆՀԲ):

2. *Եռանդամ գուգաձևն* արտահայտվում է կանոնավոր և անկանոն հոլովիչների *ն/ի/եան* համադրությամբ, որով հոլովվում է *խորհուրդ* բառը՝ Իբրեւ թէ բարեխօսեր ի խաղաղութին աշխարհին, բայց սրտի *խորհրդով* ցանկացեալ էր քահանայապետութեան աշխարհին (ՍԳ): Ոչ կամէին անսալ *խորհրդոց* իմոց (ՍԳ): Ըմբոնեցին նոքա զտեղիսն զայն ամենայն *խորհրդովք* իւրեանց (ՍԳ): Հաստատեցաւ բանս այս ի *խորհրդի* անդ՝ քակել զսեղանն զի պղծեալ էր ի թշնամեաց (ՍԳ): Վասն զի *խորհրդի* եղև զօրագլխացն այլագգեաց (ՍԳ): Խօսեցաւ ընդ նոսա ըստ *խորհրդեան* մանկտույն (ՍԳ):

Նկատելի է, որ այս խմբի յուրաքանչյուր տարբերակով, բացի *ի/եան-ից*, հանդես է գալիս մեկ գոյական, սակայն դրանցից մի քանիսն առայսօր մասամբ պահպանել են գուգաձև հոլովումների հետքեր (*մահու/մահվան*, *կորստի/կորստյան*, *փախուստի/փախստյան*):

Դասական գրաբարի ենթաշրջանի լեզվական աղբյուրներում հանդիպող թվով 145 հոլովական գուգաձևերի մեծագույն մասը (շուրջ 95%) երկանդամ է, և միայն թվով 8

<sup>20</sup> Խաչատրյան Գ. Կ., Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» երկի բայական և անվանական համակարգերի քերականական անկանոնությունները // Մ.Խորենացու ծննդյան 1600-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Վանաձոր, «ՄԻՄ տպագրատուն», 2011, էջ 15:

(շուրջ 5%) զուգաձևեր են եռանդամ: Չուգաձևերի բաղադրիչ անդամները գերազանցապես *ի*, *ի-ա*, *ո* և *ու* ձայնավորահանգ, հազվադեպ՝ *ա*, *ե* ձայնորդահանգ և անկանոն հոլովումներին պատկանող բառաձևեր են: Դրանք միմյանց հետ հանդես են գալիս տարբեր համադրություններով, որոնցից են՝ *ի//ի-ա* (զունդ-զնդից//զնդաց), *ու//ո* (երինջ-երնջու//երնջոյ), *ի-ա//ո//ու* (վաճառ-վաճառի-վաճառաւ//վաճառոյ//վաճառու), *ո//ու//ի-ա* (համբաւ-համբաւոյ-համբաւով//համբաւու/համբաւի-համբաւաւ), *եան//ո* (ծնունդ-ծննդեան//ծննդոյ), *ե//ի-ա* (աղբիւր-աղբերց//աղբերաց) և այլն: Տարբեր համադրություններում գործածված բառաձևերի քանակով առանձնանում են *ո*, *ի* և *ի-ա* հոլովումները՝ հանդիպելով ոչ միայն եզակի և հոգնակի թվերի թեք, այլև հոգնակի թվի ուղիղ հոլովներով: Դրանցից *ո* պարզ հոլովման ձևեր, ըստ մեր հաշվարկի, տարբեր համադրություններում հանդիպում են 95 անգամ, *ի-ա* խառը հոլովման ձևեր՝ 92 անգամ, իսկ *ի* պարզ հոլովման ձևեր՝ 78 անգամ: Ասվածից հետևում է, որ 5-րդ դ. գոյականների և ածականների հոլովման համակարգում գործուն դեր ունեն վերոնշյալ հոլովիչները, ինչը էական ազդեցություն է թողել նշված համակարգում հետագայում կատարված փոփոխությունների վրա: Պատահական չէ, որ միմյանց հետ հաճախագույն համադրություններով առանձնանում են հենց *ո*, *ի* և *ի-ա* հոլովիչները (ըստ մեր հաշվարկի՝ 145-ից՝ 116-ում): Ընդ որում, սրանց երկբաղադրիչ զուգաձևերի երկրորդ բաղադրիչի դերում ամենագործունը ոչ թե *ի*, ինչպես կարելի է ենթադրել, այլ *ի-ա* խառը հոլովումն է թե՛ եզակի և թե՛ հոգնակի թվերում (ընդամենը՝ 66 անգամ, որից 30-ը՝ *ի* պարզ հոլովման բառաձևերի հետ)<sup>21</sup>: Ասվածը վկայում է *ի-ա* խառը հոլովման համար 5-րդ և հետագա մի քանի դարերում ստեղծված նպաստավոր հանգամանքի մասին՝ պայմանավորված գրաբարի հոլովման գործընթացի իրականացման հարցում հոլովիչների և հոլովակերտների գրեթե անփոխարինելի դերով<sup>22</sup>: Սրան հակառակ՝ *ու* հոլովիչով կազմությունները անհամեմատ փոքրաթիվ են. բոլոր համադրություններում հանդիպում են ընդամենը 21 անգամ, որից 11-ը՝ *ո* հոլովման ենթարկված բառաձևերի հետ: Դժվար չէ ենթադրել, որ *ո* հոլովիչի *ու*-ով փոխարինվելը 5-րդ դ. նոր միայն սկսվող գործընթաց է, որը հաճախանում է հետագայում: Ի դեպ, անդրադառնալով *ո//ու* զուգաձևությանը՝ Է. Թումանյանն իրավացիորեն գտնում է, որ ընդհանրապես *ո* ձայնավորից անցումը *ու* ձայնավորին բնորոշ է գրաբարի հնչյունական համակարգին, և այն զուգաձևությունների տեսքով տեղ է գտել նաև հոլովման համակարգում: Արդյունքում ձևավորվել է զուգահեռա-

<sup>21</sup> Է. Թումանյանը նշում է, որ այդ ժամակահաստվածում ձևավորված հոլովման «համակարգի ճնշման ներքո» նկատվում է այլ հոլովման ենթարկվող անունների բացահայտ անցում *ի* պարզ և *ի-ա* խառը հոլովման համակարգեր (Տե՛ս Կуманян Э. Г. Древнеармянский язык. Москва. Изд-во «Наука». -1971. С. 239):

<sup>22</sup> Հետագայում, երբ եզակի գործիականում ամրակայվում է *-ու* թեքույթը, իսկ հոգնակի ուղղականն սկսում է կազմվել *-եր//ներ* ձևությամբ, *ա* հոլովիչը (և առհասարակ խառը հոլովումը) դուրս է մնում հոլովման համակարգից՝ հոգնակի թվում տեղն ամբողջովին զիջելով *ի* հոլովիչին:

բար հոլովվող անունների շարք, որոնք միաժամանակ կարող են կազմել ինչպես *n* արտաքին, այնպես էլ *nl* արտաքին հոլովման հարացույց<sup>23</sup>:

Հիշյալ ենթաշրջանում *է* ձայնորդահանգ հոլովման մի քանի բառ զուգահեռաբար հոլովվում է նաև *ի-ա* ձայնավորահանգ հոլովմամբ: Ավելին՝ *է* հոլովման ենթարկվող մի շարք բառեր եզակի գործիականում և հոգնակի թեք ձևերում դադարել են *է* հոլովիչով հոլովվելուց և թեքվում են միայն *ի-ա* հոլովման օրինաչափությամբ, ինչը վկայում է այդ բառերում զուգահեռ հոլովման գործընթացն ավելի վաղ սկսված և 5-րդ դարում արդեն ավարտված լինելու մասին: Ասվածը դարձյալ պայմանավորված է նշված ենթաշրջանում (և դրանից էլ առաջ) *ի-ա* խառը հոլովման գործունեությամբ. այն միակ հոլովումն է, որով զուգահեռաբար թեքվում է *ի, n, nl, է* հոլովումների պատկանող բառերի մեծագույն մասը:

**Եզրահանգում.** Անկանոն հոլովվող բառերից բացի՝ անկանոնությամբ առանձնանում են նաև մի շարք գոյականներ և ածականներ, որոնց թեքումը վկայում է դասական գրաբարի ենթաշրջանի հոլովման համակարգում առկա զուգաձևությունների մասին: Կանոնավոր ձևերին զուգահեռ՝ այդ բառերը հոլովվում են կանոնավոր (հազվադեպ՝ անկանոն) համակարգի այլ հոլովիչներով նույնպես: Ըստ բաղադրիչների քանակի՝ այդ զուգաձևերը հիմնականում երկանդամ են, սակայն հանդիպում են նաև եռանդամ (անհամեմատ փոքրաթիվ են) և քառանդամ (առհասարակ հազվադեպ են) զուգաձևեր: Հիշյալ ենթաշրջանում հոլովական զուգաձևեր ունեն շուրջ 150 գոյականներ ու ածականներ, որոնց մեծ մասը ենթարկվում է ձայնավորահանգ հոլովման: Դրանց հոլովման հարացույցների զուգաձևությունը գերազանցապես իրականանում է *ի, n, nl, ի-ա* պարզ և խառը հոլովումների տարբեր համադրություններով (շուրջ 25 տարբերակ), որոնցում գործուն դեր ունեն *n, ի* պարզ և *ի-ա* խառը հոլովումները: Հենց նրանք էլ որոշիչ ազդեցություն են թողել հայերենի հոլովման համակարգում հետագայում կատարված փոփոխությունների վրա:

## ПАРАЛЛЕЛЬНЫЕ ФОРМЫ В СИСТЕМЕ ИМЕННОГО СКЛОНЕНИЯ ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА КЛАССИЧЕСКОГО ПЕРИОДА

*Կачатրյան Գ. Կ., Օգաննիսյան Ե. Ա.*

**Ключевые слова:** *классический период древнеармянского языка, постклассический период древнеармянского языка, падежные параллельные формы, двучленные параллельные формы, трехчленные параллельные формы, показатель склонения, склонения с основой на гласные, склонения с основой на сонорные, система склонения.*

Кроме слов с нерегулярным склонением в системе склонения древнеармянского языка классического периода нерегулярностью отличался также ряд существительных и прилагательных, склонение которых, однако, не являлось отклонением от регулярной системы, а представляло собой падежные параллельные формы: наряду с собственно регулярными формами они также изменялись по падежам с другими показателями склонения регулярной

<sup>23</sup> Գումանյան Է. Գ. Դրևնեարմյանսկի լեզու. Մոսկու. Իզդ-վո «Նաուկա». -1971. Ս. 238.

системы. По количеству компонентов эти параллельные формы в основном были двучленными, однако, встречались также трехчленные (их было несравненно меньше) и четырехчленные (единичные случаи).

Падежные параллельные формы в указанный период имели около 150 существительных и прилагательных, большинство которых склонялись по основам на гласные. Параллельность их парадигмы склонения осуществлялась преимущественно различным соотношением простых и смешанных показателей склонения с основами на ի [i], ո [o], ու [u], ի-ւ [i-a] (около 20 вариантов), среди которых своей активностью выделялись простые (ո [o], ի [i]) и смешанные (ի-ւ [i-a]) типы склонения. Именно они сыграли решающую роль в дальнейшей трансформации системы склонения армянского языка.

## PARALLEL FORMS OF NOMINAL DECLENSION SYSTEM IN THE SUBPERIOD OF CLASSICAL GRABAR

*Khachatryan G. K., Hovhannisyanyan Y. A.*

**Key words:** *the subperiod of classical Grabar, the postclassical period of Grabar, case parallel forms, two-membered parallel forms, three-membered parallel forms, declension indicator, vowel-rhymed and sonorant-rhymed declensions, declension system.*

In addition to the words with an irregular declension, in the declension system of the subperiod of the classical Grabar, a number of nouns and adjectives stand out also with their irregularity. Their declension, however, is not a deviation from the regular system, but rather has case parallel forms. In parallel to the regular forms, they are declined with the other case indicators of the regular system as well. In terms of the number of components, these parallel forms mainly have two members, however, there are also three-membered (incomparably fewer) and four-membered (isolated cases) forms. In this period, about 150 nouns and adjectives have parallel case forms, most of which are declined by vowel-rhymed declension. The parallel forms of their declension paradigm is mainly done by different arrangements of the [i], [o], [ou], [i-a] simple and mixed declensions (about 20 versions), the most active of which are the simple [o], [i] and the mixed [i-a] declensions. It is these declensions that have had a decisive impact on the subsequent transformations in the declension system of the Armenian language.

### Սկզբնաղբյուրներ և համառոտագրություններ

ԱԳ – Ագաթանգեղոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909:

Ե – Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երևան, 1957:

ԵԿ – Եզնկայ Կողբացոյ Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:

Կ – Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941:

ՂՓ – Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1904:

ՄԽ – Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913:

ՆՀԲ – Աւետիքեան Գ., Սիրմելեան Խ., Աւգերեան Մ., Նոր բարգիւրք հայկազեան լեզուի, Կ. Ա.-Բ, Վենետիկ, 1836-1837:

ՍԳ – Գիրք Աստուածաշունչի եւ նոր կտակարանաց, Վենետիկ, 1860:

ՓԲ – Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883:

**Գ ր ա կ ա ն ո թ յ ո ն**

1. Աբեղյան Մ. Գրաբարի քերականություն, Երևան, Պետհրատ, 1936:
2. Աբրահամյան Ա. Ա. Գրաբարի ձեռնարկ, Երևան, «Լույս» հրատ., 1976:
3. Այտընեան Ա., Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Երևան, Եր. համալսարանի հրատ., 1987:
4. Առաքելյան Վ. Դ., Գրաբարի քերականություն, Երևան, «Վիամիր» հրատ., 2010:
5. Ավետիսյան Հ. Մ., Ղազարյան Ռ. Ս., Գրաբարի դասընթաց, Երևան, Եր. համալսարանի հրատ., 2001:
6. Խաչատրյան Գ. Կ., Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» երկի բայական և անվանական համակարգերի քերականական անկանոնությունները // Մ. Խորենացու ծննդյան 1600-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Վանաձոր, «ՄԻՄ տպագրատուն», 2011:
7. Խաչատրյան Գ. Կ., Գրաբար, Երևան, «Ոսկան Երևանցի» հրատ., 2014:
8. Շարաբխանյան Պ. Ե., Գրաբարի դասընթաց, Երևան, Եր. համալսարանի հրատ., 1974:
9. Պետրոսյան Հ. Ջ., Գալստյան Ս. Ա., Ղարազյուլյան Թ. Ա., Լեզվաբանական բառարան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975:
10. Ջահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, «Միտք» հրատ., 1969:
11. Туманян Э. Г. Древнеармянский язык. Москва. Изд-во «Наука». -1971.

*Ընդունվել է՝ 10. 12. 2020*

*Գրախոսվել է՝ 06. 04. 2021*

*Հանձնվել է տպ.՝ 21. 06. 2021*

**Տեղեկություններ հեղինակների մասին**

**Գուրգեն ԽԱՉԱՏՐՅԱՆ՝** բանասիրական գիտությունների դոկտոր,

Վանաձորի Հ. Թումանյանի անվ. պետական համալսարանի հայոց լեզվի  
և գրականության ամբիոնի պրոֆեսոր, էլ. հասցե՝ [gxachatryan@yahoo.com](mailto:gxachatryan@yahoo.com)

**Երանուհի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ՝** Վանաձորի Հ. Թումանյանի անվ. պետական  
համալսարանի բակալավրիատի «Հայոց լեզու և գրականություն» մաս-  
նագիտ. 3-րդ կուրսի ուսանողուհի, էլ. հասցե՝ [eran.hovhannisyan@list.ru](mailto:eran.hovhannisyan@list.ru)

ՀՏԴ՝ 801.7

DOI: 10.52971/18294316-2021.1-119

ՁԱՅՆՈՐԴԱՀԱՆԳ ՀԻՄՔԵՐՈՎ ԲԱՌԵՐԻ ԹՎԱԿԱԶՍՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

*Լիլիթ Խաչատրյան*

Համազգային Արևմտյան շրջանի գրական միավոր, Լոս Անջելես, ԱՄՆ

*Քանակի բառեր՝ թվի կարգ, հոգնակի թիվ, մասնիկավորում, թվակազմական իմաստ, թվակազմական մասնիկ, ձայնորդահանգ հիմքեր, հնչյունափոխված հիմք, անհնչյունափոխ հիմք:*

Հոդվածում քննվում են հին հայերենի ձայնորդահանգ հիմքերով բառերի թվակազմական կառուցվածքները: Այդ կարգի բառերը քննվում են ըստ վերջին ձայնորդի (կամ բաղաձայնի), և դիտարկվում են հիմքերի հետևյալ կառուցատիպերը՝ *(ը)ն > ուն, ուն > ուան / ուն, իւն-, (ը)ն > ին, (ը)ր > եր, (ը)ղ > եղ, իւր (եւր) > եր և ուր > եր* և այլն: Թվակազմական գործընթացում մեկնաբանվում են նաև թվանիշ հիմքերի կազմիչները կամ հիմքակազմ տարրերը, դիտարկվում է նաև ձայնդարձի գործոնը:

Ձայնորդահանգ հիմքերով բառերի թվակազմության ուսումնասիրությունը նպատակ ունի վեր հանելու որոշակի հատկանիշներ, որոնք կարևոր դեր ունեն լեզվի տվյալ գոյավիճակի տիպաբանական բնութագրի որոշելու հարցում:

*Նախաբան.* Թվի քերականական կարգն արտահայտում է քանակայնության գաղափար, որ տարածվում է հաշվելի առարկաների վրա: Հաշվելի գոյականները կարող են լինել մեկից ավելի. այստեղից էլ քանակայնության հասկացությունը: Քանակի կամ թվի ըմբռնումը ներառում է եզակի (մեկ) և հոգնակի (մեկից ավելի) հասկացություններ, որոնք քերականորեն և բառայնորեն տարբեր արտահայտություններ ունեն:

Թվանիշ թեքությունները՝ որպես թվանիշ վերջավորություններ կամ թվանիշ մասնիկներ, ավելանում են գոյականական հիմքի վրա. լեզվում բոլոր հիմքակազմ տարրերը կամ բոլոր ձևավոր հիմքերը չեն կարող թվանշային գույություններ կազմել թվա-

նիշ վերջավորությունների հետ, քանի որ թե՛ առաջինները և թե՛ վերջինները դիրքային սահմանափակություններ ունեն, հետևաբար թվանիշ վերջավորությունները կարող են հանդիպել միայն որոշ տիպի հիմքերի հետ: Թվանիշ թեքությունները շատ հաճախ փոխում են հիմքի կառուցվածքը: Այդ փոփոխությունը ներառում է ինչպես հիմքի հնչյունական կառուցվածքը, այնպես էլ նրա (հնչ)արտաբերությունը:

Առաջին դեպքում գործ ունենք հիմքի հնչյունափոխության, երկրորդ դեպքում՝ շեշտափոխության երևույթների հետ: Այս իրողությունները դիտվում են թվանիշ հիմքերի կազմիչներ կամ հիմքակազմ տարրեր: Հենց այդ գործոններով էլ պայմանավորված են թվակազմիչ հիմքերի «մաքուր» և «ձևավոր» տեսակները<sup>1</sup>:

Հին հայերենում գոյականի թվակազմության ոլորտում որոշակի յուրահատկություն են դրսևորում այն բառերը, որոնք բնորոշվում են ձայնորդահանգ հիմքերով. այդ կարգի բառերը վերջանում են -ն, -ր, -ռ ձայնորդներով կամ -դ բաղաձայնով, որոնցից առաջ հնչում է գաղտնավանկի -ը ձայնավորը:

Ձայնորդահանգ հիմքերով բառերի թվակազմական կաղապարները ներկայացնելիս անհրաժեշտ է կատարել որոշակի խմբավորումներ՝ անհարկի կուտակումներից խուսափելու նպատակով: Այդ բաժանումները կկատարենք ըստ վերջին ձայնորդի (կամ բաղաձայնի). ըստ այդմ՝ կարելի է առանձնացնել ձայնորդահանգ (բաղաձայնահանգ) հիմքերով հետևյալ բառախմբերը՝

- ա) (ը)ն > ուն հիմքերով բառեր,
- բ) ուն > ուան / ուն հիմքերով բառեր,
- գ) ին- հիմքերով բառեր,
- դ) (ը)ն > ին հիմքերով բառեր,
- ե) (ը)ր > եր հիմքերով բառեր,
- զ) (ը)դ > եդ հիմքերով բառեր,
- է) իւր (եւր) > եր և ուր > եր հիմքերով բառեր<sup>2</sup>:

Դիտարկենք վերոբերյալ հիմքերով բառերի թվակազմությունը:

1. (Ը)ն > ուն հիմքերով բառերի թվակազմությունը. Այս կառուցատիպի բառերը հոգնակի թվում ստանում են Ու երկբարբառային ձայնավորը, որ հանդես է գալիս վերջին վանկի (գաղտնավանկի) -ն ձայնորդից առաջ. հոգնակի կաղապարի սերող հիմքը բնորոշվում է -ուն վերջնամասնիկով, որի վրա ավելանում է -Բ հոգնակերտ մասնիկը: Հոգնակի ուղղականում այդ բառերը ստանում են -ունք բաղադրյալ հոգնակերտ մասնիկը: Այսպես՝

Ակն -ակունք, աղեղն- աղեղունք, ասեղն -ասղունք, ատամն - ատամունք, արմուկն - արմկունք, գագաթն- գագաթունք, բուրգն - բրգունք, եղունգն - եղնգունք, երկն - երկունք, թեկն - թիկունք, հիմն - հիմունք, մուկն -մկունք, մրջիմն - մրջմունք, պճեղն - պճդունք, ջայլամն - ջայլամունք, փայծաղն - փայծաղունք, ափն - ափունք, լորձն -

<sup>1</sup> Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 158-161:

<sup>2</sup> Եզակի թվում բաղաձայնահանգ հիմքերի մասին տե՛ս Պետրոսյան Հ., Գոյականի թվի կարգը հայերենում, Երևան, 1972, էջ 125-126:

լորձունք, կամն - կամունք, կառափն - կառափունք, կողն - կողունք, մասն - մասունք, մատն - մատունք, ստեղն- ստեղունք և այլն<sup>3</sup>:

Հոգնակի թվի քերականական իմաստը մյուս հոլովներում դրսևորվում է ք-ց և ք-ս հերթագայությունների միջոցով, որոնց հանգամանորեն կանդրադառնանք հոլովների տիպաբանությունը ներկայացնելիս:

Որպես նմուշ՝ դիտարկենք հետևյալ օրինակները՝ *գազաթուն-ք, գազաթան-ց, գազաթան-ց, (գ)գազաթուն-ս, ի գազաթան-ց*: Հոգնակի գործիականում հանդես է գալիս -ք հոգնակերտը, որ ավելանում է եզակի գործիականին՝ *գազաթա(ն>)մ-բ+ք*:

(Ը)ն հիմքով որոշակի բառեր թվակազմության ժամանակ ենթարկվում են այլ կարգի հնչյունափոխության. նրանց արտահայտության պլանում Ռ ձայնորդը, Ն-ից հետանալով, վերածվում է Բ-ի<sup>4</sup>, ինչպես՝ *ամառն - ամարուն-ք, եղենն - եղերունք*<sup>5</sup>, *մատուռն - մատրունք, ձմեռն - ձմերունք*<sup>6</sup>:

Որոշ բառերում -Ռ ձայնորդը պահպանվում է նույնությամբ, ինչպես՝ *թիթենն - թիթունք, լիսենն - լիսունք, ծիծառն - ծիծռունք, կրունկն - կռնկունք, նուռն - նռ(ն)ունք, սիսենն - սիսունք, փանդիռն - փանդունք, թռռն - թռռունք* և այլն:

(Ը)ն > ուն հիմքերով որոշ բառեր հոգնակի թվում ստանում են, այսպես կոչված, *ներդաշնակային հիմք*. այսպիսի հիմք ստանում են *-ուս(ը)ն* և *-(ը)ն* հնչյունախմբով վերջացող այն բառերը, որոնց բաղադրյալ հոգնակերտի ձայնավորը համապատասխանում է արմատի ձայնավորին:

ա) *-ուսն ածանցով բառեր*. ուսումն - ուսմ-ունք, արարումն - արարմ-ունք, կոչումն - կոչմ-ունք, դեզերումն - դեզերմ-ունք, երդումն - երդմ-ունք, խոստումն - խոստմ-ունք, խոտորումն - խոտորմ-ունք, հարցումն - հարցմ-ունք, շարժումն - շարժմ-ունք և այլն,

բ) *-(ը)ն հնչյունախմբով մեկնկեսվանկանի բառեր*. բուռն-բռուն-ք, մուկն-մկուն-ք, ձուկն - ձկուն-ք, դուռն - դրուն-ք<sup>7</sup>, շուրթն - շրթուն-ք, ուլն (վիզ, պարանոց)- ուլուն-ք, ուլն (վզնոց) - ուլուն-ք, ունկն - (կանթ) - ունկուն-ք, ռունգն - ռնգուն-ք, սունկն - սնկուն-ք, տուտն - տտուն-ք, քիրտն - քրտին-ք<sup>8</sup> և այլն:

2. *Ուն հիմքերով բառերի թվակազմությունը*. Հին հայերենում *-ուն* հիմքով որոշ բառեր հոգնակի թվում պահպանում են եզակի ուղղականի ձևը և հոգնակի ուղղակա-նում ստանում են -ք հոգնակերտ մասնիկը: Այդ կարգի բառերը համեմատաբար սա-

<sup>3</sup> Հին հայերենում *-(ը)ն* հիմքով որոշ բառեր հանդես են գալիս վերջին - Ն ձայնորդով կամ առանց դրան, ինչպես՝ *խուփն// խուփ, խուրձն // խուրձ, կրուկն // կրուկ* և այլն: Այս բառերի հոգնակին կազմվում է *-(ը)ն* հիմքով, ինչպես՝ *խփուն-ք, խրձուն-ք, կրկուն-ք* և այլն:

<sup>4</sup> Երբեմն հանդիպում են թվակազմական հիմքի երկու տարբերակներն էլ, հմմտ. *ոլորն - ոլորուն-ք // ոլորուն-ք*:

<sup>5</sup> Հոգնակիում ունի նաև *եղեր-ք* ձևը:

<sup>6</sup> Հմմտ. Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, Երևան., 1976, էջ 29: Խաչատրյան Լ., Թոսունյան Գ., Գրաբարի դասագիրք, Երևան, 2004, էջ 57:

<sup>7</sup> Հոգնակիում ունի նաև *դուր-ք* ձևը:

<sup>8</sup> Հոգնակիում ունի նաև *քրտուն-ք* ձևը:

կավ թիվ են կազմում, այնուամենայնիվ որոշակի օրինաչափություն են դրսևորում թվակազմական տեսակետից: Դրանց թվակազմական հիմքն անհնչյունափոխ կառուցատիպ ունի և, ինչպես ասացինք, համընկնում է եզակի ուղղականին, ինչպես՝ *ձեղուն – ձեղուն-ք, շուն- շուն-ք, տուն – տուն-ք*:

-*Ուն* հիմքով *անուն* բառը թվակազմական այլ օրինաչափություն է դրսևորում. հոգնակի թվում կատարվում է հիմքի փոփոխություն՝ *ուն > ուան* տարբերակով: Նրա հոգնակին կազմվում է եզակի սեռականից, որ ստանում է ներքին թեքման Ա հոլովիչը. հոգնակի ուղղականի հիմք է դառնում *անուան*- կառուցվածքը, որը հոգնակին կազմում է –ք մասնիկով՝ *անուան-ք*:

3. - *Իւն* հիմքերով բառերի թվակազմությունը. Այս կարգի հիմքերով բառերի հոգնակին կազմվում է –*ուն* հիմքերով բառերի օրինաչափությամբ. հոգնակի ուղղականում պահպանվում է եզակի ուղղականի անհնչյունափոխ հիմքը, որ ստանում է –ք հոգնակերտ մասնիկը, ինչպես՝ *անկին –անկինք, սին – սինք, արդին – արդինք, արին – արինք, հերին – հերինք, ձին – ձինք, մրջին – մրջինք* և այլն:

4. (*Ը*)ն > ին հիմքերով բառերի թվակազմությունը. Ինչպես նշել ենք, որոշակի դեպքերում գոյական անունների հոգնակին կազմվում է եզակի սեռականի ձևից. այդ դեպքում հոլովամասնիկը ներառվում է հիմքի կառուցատիպ, որտեղ կատարվում է նաև ձայնդարձ՝ պայմանավորված եզակի ուղղականի ձայնորդահանգ հիմքի հնչյունական անկայունությամբ: Ի հայտ են գալիս եզակի և հոգնակի հիմքերի (*ը*)ն > ին տարբերակները:

(*Ը*)ն > ին հիմքերով բառերի թվակազմական կաղապարն է՝ *եզակի սեռական + հոգնակերտ –ք մասնիկ* կառուցատիպը, ինչպես՝ *հարսն – հարսին-ք, ողն – ողին-ք, ազն – ազին-ք, անձն – անձին-ք, դաշն – դաշին-ք, եզն – եզին-ք, խաշն – խաշին-ք, ազբն – ազբինք, կաթն- կաթին-ք, սաղմն – սաղմին-ք, ստաշին – ստաշինք* և այլն:

*Ռ(ը)*ն գաղտնավանկով բառերը հոգնակին կազմում են այս օրինաչափությամբ՝ Ռ ձայնորդի պահպանումով, ինչպես՝ *առն* (արու ոչխարի տեսակ) – *առին-ք, բեռն – բեռին-ք, նեռն – նեռին-ք, գառն – գառին-ք, սառն – սառին-ք, սեռն* (անվի առանցք) – *սեռին-ք* և այլն:

*Լեառն* բառը, սակայն, պահպանում է հին հայերենի Ռ, Ն ձայնորդների բացառատման հնչյունական օրինաչափությունը, որի դեպքում Ռ վերածվում է Բ ձայնորդի, հմմտ. *լեառն – լերին-ք*:

5. (*Ը*)ր > եր հիմքերով բառերի թվակազմությունը. -(*Ը*)ր վերջնահանգ ունեցող բառերը ենթարկվում են ներքին թեքման. դրանց հոլովական իմաստներն արտահայտվում են արմատահնչյունի փոփոխությամբ կամ ձայնդարձով, ինչպես՝ *դուստ(ը)ր – դստեր, վագ(ը) – վագեր* և այլն: Ներքին թեքումը կապված է բառի վերջնահանգի ձայնորդային որակի հետ, ըստ այդմ՝ ներքին թեքման հոլովման համակարգում առանձնացնում են բառերի մի խումբ, որ բնութագրվում է յուրահատուկ՝ *ձայնորդահանգ հիմքով*: Ձայնորդահանգ հիմքերով բառերի հոլովական համակարգի քննությունը դուրս է մեր նպատակից, սակայն դրանց որոշակի մասին անդրադառնում ենք այն առումով, որ դրանք ինչպես եզակի, այնպես էլ հոգնակի թվում ունեն գուրգուրանություն, որի տարբե-

րակներից մեկը թվակազմական և հոլովակազմական իմաստներն արտահայտում է արտաքին թեքումով կամ մասնիկավորմամբ:

Այդ բառերից են՝ *ազդր, դուստր, եզր, կայսր, կողր* (ճյուղ, ոստ), *ոսկր, ուստր, սակր, վագր, տագր* և այլն:

Այս բառերը, պայմանավորված վերջնահանգի տեսակով, ցուցաբերում են հոլովման ընդհանուր օրինաչափություն և ենթարկվում են Ե ներքին թեքման՝ եզակի և հոգնակի թվերում:

(Ը)ր ձայնորդահանգ հիմքով բառերի հոգնակին կազմվում է *եզակի սեռական + ք մասնիկ* կաղապարով. ձևաբանական հիմքում արձանագրվում է  $(ը)ր > էր$  հնչյունափոխություն, ինչպես՝ *ազդր - ազդ-եր-ք, դուստր - դստ-եր-ք, եզր - եզ-եր-ք, կայսր - կայս-եր-ք, կողր - կող-եր-ք, ոսկր - ոսկ-եր-ք, ուստր - ուստ-եր-ք, սակր - սակ-եր-ք, վագր - վագ-եր-ք, տագր - տագ-եր-ք*:

Այս բառերը, ինչպես նշել ենք, հոգնակի թվում հոլովվում են նաև մասնիկավորմամբ՝ ենթարկվելով արտաքին թեքման: Հոգնակի թվում այդ բառերի սեռական-տրականը կազմվում է եզակի սեռականից (հոլովաձևից), ստանում է արտաքին թեքման Ա հոլովիչ և հոլովակերտ -ց, ինչպես՝ *եզ(ը)ր - եզ-ե-ր > եզեր -ա -ց, դուստ(ը)ր - դստ-ե-ր > դստեր-ա-ց* և այլն:

Հոգնակի թեք ձևերի արտահայտության և բովանդակության պլանների քննությունը ցույց է տալիս, որ քերականորեն առկա է հոգնակի թվի իմաստ, ձևակազմորեն՝ կրկնակի հոլովում: Կրկնակի հոլովումն արտահայտվում է ներքին և արտաքին թեքումների համատեղությամբ, որտեղ ներքին թեքումը զրկվել է հոլովական իմաստ արտահայտելու ներունակությունից, և թեքական այդ ձևը դարձել է հոլովահիմք. հետևաբար հոգնակի թվի հոլովական իմաստն արտահայտվում է արտաքին թեքման՝ մասնիկավորման միջոցով: Հին հայերենի ձևաբանական մակարդակում այս իրողությունը եզակի դրսևորում չունի, երբ բառերը եզակի թվում ենթարկվում են ներքին թեքման, իսկ հոգնակիում ցուցաբերում են արտաքին թեքման (մասնիկավորման) օրինաչափություն:

Հոլովակազմությունը հոգնակի թվում արտահայտվում է վերջադրական բնույթի Ա հոլովիչով և համապատասխան հոլովակերտներով, թվակազմությունը՝ հոգնակերտ -ք մասնիկի հերթագայությամբ՝ *ք>ց, ք>ս*. հերթագայության ենթարկված մասնիկները համատեղում են թվի և հոլովի քերականական իմաստներ:

Եզակի սեռականի ձևը, որպես ձայնդարձով ձևավորված հիմք, գործում է հոգնակի թվի բոլոր հոլովներում՝ որպես բացարձակ հիմք, որի վրա ավելանում են քերականական մյուս մասնիկները (հոլովիչ և հոլովակերտներ):

Հոգնակի սեռական-տրականում զուգահեռաբար գործում է մասնիկավորումը. *կայսեր-աց, ոսկեր-աց, ուստեր-աց, դստեր-աց, տարեր-աց, վագեր-աց* և այլն<sup>9</sup>:

Հոլովական այս ձևերը -ի նախդրով կազմում են հոգնակի բացառական՝ *ի կայսերաց, յոսկեր-աց, յուստեր-աց, ի տարեր-աց, ի վագեր-աց*:

<sup>9</sup> Այս բառերի հոգնակի հոլովման համակարգում տարածված են Ա հոլովիչով ձևերը (Տե՛ս Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 35):

Հոգնակի ուղղականի հիմքը մասնակցում է հոգնակի հայցականի կազմությամբ՝ *(q)կայսեր-ս, (q)ոսկեր-ս, (q)ուստեր-ս, (q)դստեր-ս, (q)տարեր-ս, (q)վագեր-ս* և այլն:

Հոգնակի գործիականը կանոնավոր կերպով կազմվում է եզակի գործիականից. հարցն այն է, որ այս բառերի եզակի գործիականը երկակի կառուցատիպ ունի. մի դեպքում այն ունի ներքին թեքման կառուցատիպ՝ համապատասխան հոլովակերտով՝ *կայսեր-ք, դստեր-ք* և այլն, երկրորդ դեպքում՝ արտաքին թեքման՝ *կայսեր-ա-ւ, դստեր-ա-ւ*: Երկու դեպքում էլ այդ բառերի հոգնակին կազմվում է եզակի գործիականին ավելացնելով հոգնակերտ *-ք* մասնիկը, սակայն վերջադրական հոլովման կառուցատիպը որոշակի յուրահատկություն է դրսևորում, որի դեպքում հստակ տարբերակվում են քերականական մասնիկները՝ իրենց որոշակի գործառույթով՝ հոլովիչ, հոլովակերտ և հոգնակերտ մասնիկներ, ինչպես՝ *կայսերաւ-ք (կայսերօք), ոսկերաւ-ք (ոսկերօք), ուստերաւ-ք (ուստերօք), դստերաւ-ք (դստերօք), տարերաւ-ք (տարերօք), վագերաւ-ք (վագերօք)* և այլն:

(Ը)ր ձայնորդահանգ հիմքով որոշ բառեր թվակազմության այլ օրինաչափություն են ցուցաբերում:

Այսպես, *ասր* բառը եզակի թվում հոլովվում է արտաքին թեքմամբ՝ Ո կամ Ու հոլովմամբ՝ *ասրոյ* կամ *ասրու*, եզակի գործիականն ունի ունի *ասրով* և *ասերք* ձևերը: Այն հանգամանքը, որ եզակի գործիականում բառը հանդիպում է *ասերք* ձևով, նշանակում է՝ նախագրային հայերենում այն ունեցել նաև ներքին թեքման օրինաչափություն. բնականաբար համատիպ բառերի համաբանությամբ հոգնակի թվի քերականական իմաստը պետք է արտահայտեր *ասեր-ք* ձևով (հմմտ. կայսեր-ք, վագեր-ք): Թեև հայագիտության մեջ այն կարծիքն են հայտնել, որ հին հայերենում այդ բառի հոգնակին գործածական չէ<sup>10</sup>, այնուամենայնիվ հանդիպում են արտաքին թեքման *ասուոց* և *ասրոց* զուգաձև հոգնակի տարբերակները: Եթե բառի հոգնակին տարածում չի ունեցել մատենագրության մեջ, դեռ չի նշանակում, որ հոգնակին գործածական չէ, մյուս կողմից՝ հազվադեպ հանդիպող հոգնակի թեք ձևերը վկայում են այն մասին, որ *ասր* բառի հոգնակին ունեցել է կանոնավոր հարացույց՝ զուգահեռ տարբերակներով:

Մյուս կողմից՝ չի կարելի անտեսել *ասերք* բառի վկայությունը. հնարավոր չէ հարացուցային մեկ անդամի գործածություն՝ առանց հարացուցային բոլոր ձևերի առկայության. մանավանդ այդ ձևը հանդիպում է գործիականում, որ կանոնավոր կերպով կազմվում է եզակի սեռականից. հետևաբար սեռական հոլովում պետք է ունենայինք *ասեր* ձևը, որից էլ տրամաբանորեն մակարերվում է հոգնակի թվի կազմությունը՝ *ասեր-ք*: Հետևաբար ձևական տրամաբանության օրենքով կարող ենք ցույց տալ նրա հոգնակի թեքական ձևերը և քերականական այն մասնիկները, որ ծառայել են քերականական համապատասխան իմաստներ արտահայտելուն. *ասեր-ք, ասեր-աց, (q)ասեր-ս, յասերաց, ասերք-ք*: Անշուշտ, *ասր* բառը կանոնավոր կերպով հոլովվում է արտաքին թեքմամբ, սակայն մենք դիտարկում ենք այն դեպքը, երբ եզակի թվում ներքին թեքման ենթարկվող բառերը հոգնակի թվում հոլովվում են արտաքին թեքման օրինաչափությամբ՝ քերականական իմաստներն արտահայտելով մասնիկավորման եղանակով:

<sup>10</sup> Տե՛ս Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 45:

Մեղր բառը եզակի թվում զուգահեռաբար ունի արտաքին և ներքին թեքում, եզակի սեռականում՝ *մեղու* և *մեղեր*, եզակի գործիականում *մեղու* ձևից բացի ունի նաև *մեղեր-ք*-ն *մեղու-ա-ւ* զուգահեռ տարբերակները:

Այդ, ի՛նչ եղանակով է արտահայտվում նրա հոգնակի թվի քերականական իմաստը: Ընդունված է նրա հոգնակի ուղղականի *մեղու-ք* ձևը, սակայն տրամաբանությունը հուշում է, որ այն պետք է ունենա նաև *մեղեր-ք* հոգնակի ձևը, ինչպես *անգեղ-ք*, *աստեղ-ք* կազմությունները: Եթե հոգնակի ուղղականում ընդունում ենք *մեղեր-ք* ձևը, ապա *մեղեր-* թեքական հիմքով կստանանք հոգնակի սեռական-տրականի *մեղ(ե)ր-ա-ց* ձևը, բացառականում՝ *ի մեղ(ե)րաց*, հայցականում՝ *(զ)մեղ(ե)ր-ս*: Գործիականում կանոնավոր *մեղու-ք* ձևին զուգահեռ կունենանք *մեղերք -ք* և *մեղուաւ-ք* (մեղուօք) տարբերակները: Եթե *մեղու* բառի եզակի թվի ներքին թեքման հոլովական հարացույցին հակադրենք նրա հոգնակի թվի արտաքին թեքման հարացույցը, կարող ենք ասել՝ հոգնակի թվում հոլովի և թվի քերականական իմաստներն արտահայտվում են մասնիկավորման միջոցով:

*Կարծր* բառի հոգնակի ուղղականն ունի *կարծեր-ք* և *կարծուն-ք* զուգահեռ ձևերը<sup>11</sup>: *Կարծերք* ձևը վկայում է, որ այն կազմվել է եզակի սեռականի *կարծեր* ձևից, հետևաբար հոգնակի սեռական-տրականում այն կունենա *կարծեր-ց* և *կարծեր-ա-ց* զուգահեռ ձևերը: Եթե *կարծերց* ձևում հոլովական իմաստն արտահայտվել է ներքին թեքման միջոցով, ապա *կարծերաց* ձևում՝ արտաքին թեքման (մասնիկավորման) եղանակով: Համաբանությամբ կարող ենք ցույց տալ *կարծերք* հոգնակի ուղղականի թեքական ձևերը, որոնք հոլովվում են մասնիկավորման միջոցով, հմմտ. *կարծերաց* – ի կարծերաց – (զ)կարծերս, կարծերաւք (կարծերօք):

6. (Ը)դ > եղ *հիմքերով բառերի թվակազմությունը*. (Ը)դ հնչյունախմբով վերջացող բառերը չեն մտնում *ձայնորդահանգ հիմքով* տիպի մեջ, թեև համաբանությամբ ենթարկվում են հոլովման նույն օրինաչափությանը:

(Ը)դ հնչյունախմբով վերջացող մի շարք բառեր, ինչպես՝ *անգղ*, *արկղ*, *աստղ*, *ետղ*, *կոճղ*, *սկուտղ* և այլն, հոլովվելիս նույնպես ենթարկվում են ներքին թեքման, սակայն թվակազմությանը մասնակցում են մասնիկավորման եղանակով. թվակազմական հիմք է դառնում եզակի սեռական հոլովաձևը: Այլ կերպ ասած՝ այդ բառերի հոգնակին կազմվում է (ը)ր ձայնորդահանգ հիմքով բառերի նման, հմմտ. *անգղ* – *անգ-եղ-ք*, *արկղ* – *արկ-եղ-ք*, *աստղ* – *աստ-եղ-ք*, *ետղ* – *ետ-եղ-ք*, *կոճղ* – *կոճ-եղ-ք*, *սկուտղ* – *սկուտ-եղ-ք* (*սկտ-եղ-ք*): Թվակազմության ժամանակ, ինչպես նշել ենք, տեղի է ունենում հիմքի վերջին հնչյունախմբի փոփոխություն՝ (ը)դ > եղ տարբերակով:

Այդ բառերը հոգնակի թեք հոլովներում ցուցաբերում են զուգաձևություն և այդ ձևերից մեկով հոլովակազմական և թվակազմական իմաստներն արտահայտում են մասնիկավորման միջոցով:

Հոգնակի ուղղականի *արկեղ-ք*, *անգեղ-ք*, *աստեղ-ք* վերակազմավորված հիմքերը վերաիմաստավորվում են համապատասխան հոլովիչներով և հոլովակերտներով.

<sup>11</sup> Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 44:

այդպիսով ընդգծվում է մասնիկավորման իրողությունը քերականական իմաստներ արտահայտելու առումով:

Հմտ. սեռական-տրական՝ *արկեղ-ա-ց, անգեղ-ա-ց, աստեղ-ա-ց*, հոգնակի բացառականը՝ *յարկեղաց, յանգեղաց, յաստեղաց*, հոգնակի հայցականը՝ *(գ)արկեղ-ս, (գ)անգեղ-ս, (գ)աստեղ-ս*, հոգնակի գործիականը՝ վերջադրական հոլովման դեպքում՝ *եզակի գործիական + ք* կադապարով՝ *արկեղաւ-ք* (արկեղօք), *անգեղաւ-ք* (անգեղօք), *աստեղաւ-ք* (աստեղօք) և այլն:

Ինչպես ցույց են տալիս լեզվական փաստերը, (ը)դ, ինչպես նաև (ը)ր հնչյունախմբով վերջացող որոշակի թվով բառեր եզակի և հոգնակի թվերում հակադրվում են ներքին և արտաքին թեքման տիպերով. վերջին դեպքում թվակազմական (և հոլովական) իմաստներն արտահայտում են մասնիկավորման եղանակով:

7. *Իւր (ււր) > էր և ուր > էր հիմքերով բառերի թվակազմությունը*. Այս կարգի բառերը ենթարկվում են հոլովակազմական և թվակազմական նույն օրինաչափությանը, ինչ՝ (ը)ր և (ը)դ վերջնահնչյուններ ունեցող բառերը, սակայն թեք ձևերում կատարվում է բառերի հնչյունական կազմի փոփոխություն. շեշտից անկախ՝ -իւ երկբարբառը վերածվում է Ե ձայնավորի. արձանագրվում է հոլովական հիմքի *իւր > էր* տարբերակը. *աղբիւր- աղբեր, աղբերք – աղբերց // աղբերաց* և այլն:

Այդ բառերից են՝ *աղբիւր (աղբեր), եղջիւր (եղջեր), աղտիւր (աղտեր) // եղտիւր (եղտեր), ալիւր (ալեր)* և այլն, որոնք եզակի թվում ենթարկվում են ներքին թեքման. եզակի գործիականում ունեն գուգաձևություն, հանդես են գալիս ներքին և արտաքին թեքումներով, ինչպես՝ *եղջեր-ք, եղջեր-ա-ւ*:

Այս բառերը հոգնակի թվի քերականական իմաստը դրսևորում են արտաքին թեքմամբ, երբ ցուցաբերում են հոլովական գուգաձևություն. գուգաձև տարբերակներից մեկի հիմք է դառնում եզակի սեռականը, որ հանդես է գալիս հոգնակի թվի բոլոր հոլովներում:

Այսպես, հոգնակի ուղղականում թվի քերականական իմաստը դրսևորվում է *-ք* մասնիկով՝ *աղբեր-ք*, նույն հիմքը հանդես է գալիս հոգնակի հայցականում՝ *(գ)աղբեր-ս*: Մնացած թեք ձևերում առկա է կրկնակի հոլովաձև. մի հոլովաձևը հոլովահիմքն է, որ, առանձին վերցրած, եզակի սեռական հոլովաձևն է (աղբեր), երկրորդը՝ *հոլովահիմք+ հոլովիչ+ հոլովակերտ մասնիկ* կադապարով տարբերակը, ինչպես՝ *աղբեր-ա-ց*. վերջինս *ի-* նախդրի հետ կազմում է հոգնակի բացառականը՝ *յաղբերաց*: Հոգնակի գործիականի արտաքին թեքումով ձևը կազմվում է եզակի գործիականի արտաքին թեքումով տարբերակից՝ համապատասխան *-ք* հոգնակերտի միջոցով՝ *աղբեր-ա-ւ+ք*:

Եթե փորձենք ամբողջացնել վերոբերյալ բառերի արտաքին թեքման, ինչպես նաև մասնիկավորման եղանակով քերականական իմաստներն արտահայտելու հարացույցը, կստանանք հետևյալ պատկերը. հոգն. ուղղական՝ *եղջեր-ք, աղտեր-ք // եղտեր-ք, ալեր-ք*, հոգնակի սեռական-տրական՝ *եղջեր-ա-ց, աղտեր-ա-ց // եղտեր-ա-ց, ալեր-ա-ց*, հոգնակի բացառական՝ *յեղջերաց, յաղտերաց // յեղտերաց, յալերաց*, հոգնակի հայցական՝ *(գ)եղջեր-ս, (գ)աղտեր-ս // (գ)եղտեր-ս, (գ)ալեր-ս*, հոգնակի գործիական՝ *եղջերաւ-ք* (եղջերօք), *աղտերաւ-ք* (աղտերօք) // *եղտերաւ-ք* (եղտերօք), *ալերաւ-ք* (ալերօք):

Թվակազմական այդ օրինաչափության է ենթարկվում նաև *բլուր* բառը, եթե այն դիտարկում ենք վերոբերյալ բառերի թվակազմության և հոլովակազմության համատեքստում. այն թեքվում է *ուր > ր* հիմքով: Հմնտ. *բլուր - բլեր- բլեր-ց // բլեր-ա-ց, բլեր-ց // բլեր-ա-ց, (գ)բլեր-ս, իբլեր-ց // ի բլեր-ա-ց, բլեր-ա-ւ-ք (օք)*:

**Եզրահանգում.** Այսպիսով, ձայնորդահանգ հիմքերով բառերի թվակազմական կաղապարները հին հայերենում բնութագրելու համար անհրաժեշտ է դրանք ներկայացնել հետևյալ խմբավորումներով՝

ա) (ը)ն > ուն հիմքերով բառեր, բ) ուն > ուան / ուն հիմքերով բառեր, գ) իւն- հիմքերով բառեր, դ) (ը)ն > ին հիմքերով բառեր, ե) (ը)ր > ր հիմքերով բառեր, զ) (ը)դ > եդ հիմքերով բառեր, է) իւր (եւր) > ր և ուր > ր հիմքերով բառեր:

Որոշակի դեպքերում թվակազմական սերող հիմքեր են դառնում եզակի ուղղականի անփոփոխ կամ հնչյունափոխված հիմքերը (կորիւն – կորիւն-ք, ատամն-ատամ-ունք, որոշ դեպքերում էլ՝ եզակի սեռականը (աղբիւր – աղբեր – աղբեր-ք):

Ձայնորդահանգ հիմքերով գոյականների թվակազմության քննության ընթացքում մենք վերահաստատեցինք տիպաբանական այն մոտեցումը, որ հին հայերենում թվակազմությունն իրականանում է միայն մասնիկավորման ուղիով, որ համարվում է կցական կառուցատիպի լեզուների տիպաբանական կարևոր բնութագրիչներից:

## ЧИСЛОБРАЗОВАНИЕ СЛОВ ЗАКАНЧИВАЮЩИХСЯ С СОНАНТАМИ В ДРЕВНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

*Хачатрян Л. Л.*

**Ключевые слова:** категория числа, множественное число, аффиксация, числообразовательное значение, числообразовательная частица, чередованная основа, нечередованная основа.

Для характеристики числообразовательных моделей слов заканчивающихся с сонантами необходимо представить эти слова следующими группами;

- а) слова с основами (ը)ն > ուն (*գազաթն- գազաթունք*),
- б) слова с основами ուն > ուան / ուն (*ձեղուն – ձեղուն-ք, անուն – անուան-ք*),
- в) слова с основами իւն- (*անկիւն – անկիւն-ք*),
- г) слова с основами (ը)ն > ին (*անձն – անձին-ք*),
- д) слова с основами (ը)ր > ր (*վազր – վազեր-ք*),
- е) слова с основами (ը)դ > եդ (*անզդ – անզդ-ք*),
- ё) слова с основами իւր (եւր)>ր (*աղբիւր-աղբեր-ք*) и ուր> ր (*բլուր-բլեր-ք*).

В некоторых случаях неизменные или чередованные основы единственного числа именительного падежа (*կորիւն - կորիւն-ք. лъвенок-лъвята, ատամն-ատամ-ունք. зуб-зубы*), иногда и родительный падеж в единственном числе (*աղբիւր – աղբեր – աղբեր-ք. родник-родники*) выступают в роли числообразовательных основ.

Анализ числообразования существительных заканчивающихся с сонантами подтверждает тот типологический подход, согласно которому, числообразование в древнеармян-

ском языке осуществляется с помощью аффиксации. Аффиксация является важным типологическим маркером агглютинативных языков.

## THE NUMBER FORMATION OF WORDS ENDING WITH SONANT STEMS IN OLD ARMENIAN.

*Khachatryan L. L.*

**Key words:** *category of number, plural number, affixation, number-forming meaning, number-forming particle, words ending with sonant stems, stem with sound interchange, stem without sound interchange.*

For describing the number-forming patterns of words ending with consonants it is necessary to introduce them in following groups;

- a) words with stems (ը)ն > ուն (գագաթն- գագաթունք),
- b) words with stems ուն > ուան / ուն (անձն – անձինք),
- c) words with stems իւն- (անկիւն – անկիւնք),
- d) words with stems (ը)ն > ին ին (անձն – անձինք),
- e) words with stems (ը)ր > ր (վագր – վագրք),
- f) words with stems (ը)ղ > եղ (անգղ – անգղք),
- g) words with stems իւր (ելւր) > ր (աղբիւր - աղբերք) and ուր > ր (բլուր - բլերք).

Sometimes plural nominative stems (կորիւն – կորիւնք whelp-whelps, աստամ- աստամ-ունք tooth-teeth) or form of singular possessive ( աղբիւր – աղբեր – աղբեր fountain-fountains) with or without sound interchange become number-forming derivative stems.

The analysis of number formation of nouns ending with consonants certifies the typological approach that number formation is realized by affixation in Old Armenian. Affixation is an important typological marker of agglutinative languages.

### Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ յ Ո Ւ Ն

1. Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, Երևան., 1976:
2. Խաչատրյան Լ., Թոտունյան Գ., Գրաբարի դասագիրք, Երևան., «Ջանգալ» հրատ., 2004:
3. Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1974;
4. Պետրոսյան Հ., Գոյականի թվի կարգը հայերենում, Երևան, ԵՀ հրատ., 1972:

Ընդունվել է՝ 20. 02. 2020

Գրախոսվել է՝ 18. 03. 2021

Հանձնվել է տպ.՝ 21. 06. 2021

#### Տեղեկություններ հեղինակի մասին

**Լիլիթ ԽԱՉԱՏՐՅԱՆ**՝ բանասիրական գիտությունների թեկնածու,  
Համազգային Արևմտյան շրջանի գրական միավոր, Լոս Անջելես, ԱՄՆ  
Էլ հասցե՝ lilitellen@yahoo.com

ՀՏԴ՝ 82-9

DOI: 10.52971/18294316-2021.1-131

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԵՐԵՎԵԼԻ ԴԵՄՔՐ՝

ԳՐԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԻ ՆԱԽԱՏԻՊ

(Ավետիս Ղարիբյանը՝ Հ. Հակոբջանյանի «Պաղվալի Վաղոն» վեպում)

*Ռոզա Հովհաննիսյան*

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

**Բանալի բառեր՝** ազատագրական շարժում, հայդուկ, էպիկական կերպար, պատում, պատմական դեմք, գեղարվեստականացում, կերպարի ստեղծման չափումներ, լեզուն:

Այս հոդվածով անդրադառնում ենք Ալեքսանդրապոլի հայտնի դեմքերից մեկի՝ Պաղվալի Վաղոնի կերպարին, որի կյանքի ու գործունեության իրողություններն ու դրվագները պատումի հենք են դարձել թե՛ բանավոր ստեղծագործություններում և թե՛ գեղարվեստական գրականության մեջ: Կարծում ենք՝ ավելի ուշագրավ է, որ բանավոր պատումները երևակվում են կոնկրետ գրական երկում, ինչպիսին ժամանակակից արձակագիր, գրականագետ Հ. Հակոբջանյանի «Պաղվալի Վաղոն» վեպն է:

**Նախաբան.** Հ. Հակոբջանյանի «Պաղվալի Վաղոն» վեպի ազգային ձևա-նաչողական ու գեղարվեստական հմայք են տալիս պատմական իրականության խորքի վերհանումն ու գծագրումը, որտեղ իրական անձը՝ Ավետիս Ղարիբյանը (Պաղվալի Վաղոն)՝ որպես կերպար, ներկայացվում է գեղարվեստական միջավայրի հետ ունեցած ընդհանրությամբ՝ ազգային-ազատագրական պայքարի ծրագիրն իրականացնող ընկերների հետ ընդհատակյա գործունեության շառավիղով:

Հեղինակը հայ արձակի գեղարվեստական փորձի յուրացմամբ ստեղծել է հայ տոհմիկ բնավորություն իր ժամանակի քաղաքական կյանքի էվերումների, Ալեքսանդրապոլ-Գյումրու կենցաղի ու բարքերի, տարերքի ներքին շարժման նկարագրության համապատկերում:

**Ո՞վ էր Պաղվալի Վաղոն:**

Պատմաբան Ա. Հայրապետյանն իր գիտական հոդվածներում ու հրապարակումներում բազմիցս անդրադարձել է XIX դ. վերջի Ալեքսանդրապոլի ՀՅԴ կառույցի ամենաառեղծվածային գործչի՝ Ավետիս Ղարիբյանի (Պաղվալի Վաղոյի) կյանքին ու գործունեությանը: Հոդվածներից մեկում<sup>1</sup> նա մասնավորապես գրում է. «Ալեքսանդրապոլցիներին քաջ հայտնի պանդոկատեր Ավոն իրականում այն եզակիներից էր, որոնք ի վիճակի էին ազատագրական շարժման կարիքների համար անսպառ քանակությամբ զինամթերք մատակարարել:

Իր հեղափոխական գործունեությունը Ա. Ղարիբյանը սկսեց 1890-ական թվականների սկզբներին՝ մասնավոր անձանցից զենք գնելով: Հաջորդ տարիների ընթացքում, շրջանցելով ցարական վարչամեքենայի լարած բոլոր թակարդները, նա իր ընկերների հետ ծրագրեց ու անթերի իրագործեց Ալեքսանդրապոլի պետական զինապահեստների «մաքրագարդման» երեք գործողություն:

Հեղափոխական ընդհատակի լեգենդը Թորգոմի «Որսկան» խմբի կազմում իր մահկանացուն կնքեց 1904թ. հուլիսին՝ Զարդանիսի կովում...»: Մի այլ հոդվածում Ա. Հայրապետյանը նշում է. «Հայ ազատամարտի պատմության մեջ բացառիկ դերակատարում է ունեցել 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի ՀՅԴ Ալեքսանդրապոլի կառույցը, որն իր գործունեության հենց սկզբից դարձավ Արևմտյան Հայաստանի ազատագրության գործի կազմակերպման համար զենքի կուտակման ու առաքման հիմնական հենակետ: «Քար» կամ «Քարոտ» անունով կառույցը հետագայում ստացավ կենտրոնական կուրիտեի կարգավիճակ, իսկ նրա հիմնադիր անդամները՝ Թադևոս Խզմալյանը, Ավետիք Մալոյանը, Ալեքսանդր Պետրոսյանը (Պետո), Ենովք Գյունջյանը, Վաղարշակ Ժամակոչյանը, Ավետիս Ղարիբյանը (Պաղվալի Վաղո), Տեր-Խորեն Աբգարյանը (Նոթաջի), դարձան հայտնի գործիչներ»<sup>2</sup>:

Ըստ Ա. Ազնավուրյանի հուշագրության՝ պետական զինանոցների ահ ու սարսափ Պաղվալի Վաղոյին արգելվել էր մարտական խմբերին միանալ, որպեսզի նա շարունակեր զենքի ձեռքբերման աշխատանքը, սակայն Վաղոն սպառնիչ պատասխան էր տվել. «Հերիք, ախպե՛ր, ինչքան ուրիշներին զենք տամ ու դրկեմ մեռնելու: Հիմի սրբեն (իմա՝ հերթը-Ա.Հ.) ընձի է հասե՛»<sup>3</sup>:

Քննության առարկա վեպի նախախոսքում ակադեմիկոս Ս. Մարինյանը նշում է. «Այս խորհրդավոր քաղաքի (իմա՝ Ալեքսանդրապոլի- Ռ.Հ.) նկուղներում է ահա, որ հանապազօր սկիզբ է առնում փիլիսոփայական մի կյանք, իսկ Վաղոյի Պաղվալում, ոգելից վայելքի շղարշի հետևում գործում է հայ հեղափոխության ջիղը՝ ճշգրիտ նշանակելով կացության դաժան ծանրությունն ու մաքառման վերջին սահմանը «Երկու թշնա-

<sup>1</sup> Հայրապետյան Ա., Դրվագներ զինյալ պայքարի պատմությունից. Ավետիս Ղարիբյան (Պաղվալի Վաղո) // ՇՊՀ Գիտական տեղեկագիր, պրակ Բ, 2018թ., Գյումրի, էջ 34:

<sup>2</sup> Հայրապետյան Ա., Հուշեր Ալեքսանդրապոլի հեղափոխական անցյալից (Արամայիս Ազնավուրյան) // ՀՀ ԳԱԱ ՇՀԿ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 20, 2017, Գյումրի, էջ 170:

<sup>3</sup> Հայրապետյան Ա., Հուշեր Ալեքսանդրապոլի հեղափոխական անցյալից (Արամայիս Ազնավուրյան) // նշվ. աշխ., էջ 178:

մու...թուրք և ռուս բռնակալների» արանքում: Եվ այդպես էլ, հավատարիմ իր երդումին, վերուստ սահմանված ճակատագրով, Բասենի դաշտում գոհվում է Պաղվալի Վադոն՝ հայոց մաքառման տարեգրության մեջ գրանցելով նահատակության մի գեղեցիկ դրվագ և Ամենափրկիչ եկեղեցում Մանուշի աղոթքներից հյուսելով խորտակված սիրո մի անգուգական լեզենդ<sup>4</sup>: Հայոց ազգային-ազատագրական շարժման ոգեշնչող այս անհատականությունը՝ Պաղվալի Վադոյին անդրադարձել է նաև Խ. Դաշտենցը: Կարևոր ենք համարում ընդգծել, որ Հ. Հակոբջանյանը «Պաղվալի Վադո» վեպում, վկայաբերելով Խ. Դաշտենցի «Ռանչպարների կանչից» մի դրվագ, այն կշռադատված բանալինախամուտք է դարձրել համանուն կերպարի ներկայացման իր (հեղինակային) մտահղացումը գեղարվեստորեն իրացնելու համար. «Այդտեղ թաղված էին լռեցի Սրապն և գյումրեցի Պաղվալի Վադոն և դարձյալ մի հայդուկ՝ Մենակ անունով: Ռուսահայ երիտասարդի միակ ձգտումն էր, թե երբ պիտի անցնի սահմանը՝ իր հայ եղբայրներին ազատագրելու սուլթանի լծից: Ալեքսանդրապոլցի Վադոն և լռեցի Սրապը 1904թ. ընկերներով ձեռք էին սահմանը և անցել Երկիր՝ միանալու Մասնո ապստամբներին, բայց ռուսաց թագավորի հրամանով սպանվել էին սահմանագլխին և ամփոփվել այդ քարակույտի տակ»: Ասել է թե՛ Դաշտենցը ազգային-ազատագրական շարժման ուխտավորի ընթացքը ոչ պատահականորեն սկսում է նահատակների ու Պաղվալի Վադոյի գերեզմանների մոտով, ինչպես որ մեր էպոսի Դավիթը այցելելով հոր գերեզմանին՝ տեսնում է կանաչ-կարմիր լույսը՝ որպես կյանքի խորհուրդ:

**Պաղվալի Վադոյի վիպական կերպարի ստեղծման չափումները**

Վիպական կերպարի ստեղծման չափումները մշտապես եղել են գրականագիտության ուշադրության ծիրում՝ անշուշտ, կարևորելով կերպարակերտման հնարների կամ միջոցների ընտրությունը:

1. Ընդունված է գեղարվեստական կերպարի ստեղծման հիմնական տարրերից առանցքային համարել անհատ պատմողի հեղինակային չափումը, որը կարող է տարողունակ լինել՝ ներառելով այլոց մոտեցումներն ու գնահատականները: Ինչ խոսք, պատումի զարգացման ընթացքում հեղինակային չափումը կարող է հարստանալ նորանոր գծերով, գույներով ու նրբերանգներով, գրական կերպարի էության ու գործողությունների մեկնաբանման նոր հայեցակետով:

Հ. Հակոբջանյան արձակագիրը կերպարների մասին կերպարաստեղծ տվյալները և հնարները դրվագ-դրվագ է ներկայացնում՝ տարբեր մուտքերով ու պատումներով, բայց դրանք ֆաբուլային ու կերպարների աճին կարկատաններ չեն դնում<sup>5</sup>, ձուլվում են ընդհանուր սյուժեի մեջ:

Հ. Հակոբջանյանի վեպում հերոսի ընտրության հարցում հեղինակային չափումը արտահայտում է կերպարի այն հատկանիշները, որոնք բխում են նրա ժամանակից ու բարքերից, ազգային կյանքից ու կենսական միջավայրից. ահա և՛ «Մոսահոգ է Պաղվալի Վադոն. միտքը պատեպատ է զարկվում. ելք չկա, ճար չկա: Աչքերը արյուն առած՝

<sup>4</sup> **Հակոբջանյան Հ.**, Պաղվալի Վադոն, Երևան, «Նաիրի» հրատ., 1997, էջ 4: (Այսուհետև այս գրքից արված հղումները կնշենք հոդվածում՝ փակագծերով):

<sup>5</sup> Տե՛ս **Սանթրոյան Մ.**, էպիկական կերպարի ստեղծման չափումները, Վանաձոր, 1994թ., էջ 26:

կատաղի դիմադրում է Վանը, Սասունը մոնչում է վիրավոր գազանի նման, Մերաստիան, Խարբերդը, Էրզրումը լուռ են՝ մեջքները կոտրած, հոգեվարք ապրող հուսահատ լեռնցիներ: Թուրքը հզոր թաթը սեղմել է Երկրի կոկորդին ու մեջքը ջարդել» (էջ 8):

Կերպարի ստեղծման գործում հեղինակային չափման տարրերից են արտաքին նկարագրությունից՝ երեսհարքից, գնալ դեպքի ներքին՝ հոգևոր աշխարհի նկարագրություն: Այսպես Պաղվալի Վաղոն էլ ժամանակի ընթացքում գաղափարապես աճում է, իսկ նրա ու ընկերների ծրագիրը՝ մեծանում, առնականանում: Մինչ Հակոբը խոսում էր դառնացած, Վաղոն բոցկլտուն հայացքը հատել էր ավագ ընկերոջ դեմքին, որսում էր բառերը և ալեկոծված հոգում մի տեսակ բողբոջի այլք էր բարձրանում. հանիրավի անարգվածի ընդվզում էր, հուսահատի ճիճ, ստորացվածի արժանապատվության արթնացում մ, չգիտեր և իմանալ չէր ուզում: Հստակորեն մի բան գիտեր: Մարդուն չի կարելի հասցնել հուսահատության, որովհետև դա վերջին սահմանն է, ուր հանդիպում են զոհն ու հրեշը (էջ 25):

Անշուշտ, իրադարձությունն է կերպարին դարձնում հերոսական, իսկ կերպարն էլ, եթե նրա բնական հատկանիշների մեջ մտնում է սխրանքը, իր հերթին իրականությունը դարձնում է գեղարվեստական: Պահակագործի հրամանատար գնդապետ Անդրեյ Սմիրնիդովին կաշառելով՝ Վաղոն կարողանում է Սև բերդի զինապահեստները մաքրագարդել...

Արտաքին պատկերագծումից դեպի ներաշխարհի բացահայտում. այսպես է հեղինակը բնութագրում Վաղոյի ընդհատակյա ընկերոջը ևս. *Իսկական երեխա է հսկայամարմին Սվագցի Հարությունը: Մանկական հոգի ունի, և չնայած Գյումրին սարսազողու պատմություններ է հորինել նրա մասին, ոչ մեկը չգիտե, թե ինչ կավից է հունցված այս մաքուր մարդը* (էջ 22):

2. Կերպարաստեղծման մյուս չափումը ինքնաչափումն է, որը շատ հաճախ լրացնում է հեղինակային չափումը, թեև վերջինս կարող է երբեմն գերակա ու թելադրող լինել: Վաղոյի կերպարի ինքնաչափումը վեպի էջերում դառնում է ընդգրկուն. խոսկումների շրջանի մեջ է առնում, վերլուծում ու գնահատում է քրոնոտոպային հարցեր՝ ժամանակի ու միջավայրի համապատկերում.

*Երկու վանք պակաս շինեիք, մի հատ էլ զինգործարան լինեք, տնաշեննե՛ք: Արհեստավորների կենտրոն Գյումրիում զինագործ վարպետների պակաս կունենայի՞ք: Տուլան կարող է, Գյումրին չի կարող: Մի բուռ Գյումրին հարյուր բանաստեղծ, հազար երաժիշտ, գիտնական ու նկարիչ ունի: Թուրքը քթներիս տակ զինված խրախճանք է անում: Մենք ապավինել ռուսին՝ անզեն թրև ենք գալիս փողոցներում: Որտեղի՞ց այդ անսասան հավատը ռուս քեռու հանդեպ: Ռո՞ւսը չէ, որ թուրքի հետ սեղան է նստում հայոց հողը բաժանելիս ու երրորդ աթոռը թողնում է դատարկ: Քանի զինատար խմբեր, թուրքերից խույս տալով, ռուսի համազարկերի գոհը դարձան: Պետք եղավ, վաղը գորքը ետ կբաշի ու Կարսը կտա, մեզ կթողնի թուրքի յաթաղանի առաջ:*

... Պահեստ թալանելով էլ ժողովուրդ զինե՛ս, բանակ հանե՛ս ուրիշի հաշվին (էջ 35):

Վերապարների ինքնաչափումը ևս կարելի է բաժանել տարրերի՝ կերպարի անձնական կյանքը, նրա ներքին խոսքն ու մտածումները, ինքնաբնորոշումները և այլն, որոնք քննվող վեպում հանդես են գալիս ոչ թե տրոհված, այլ միասնաբար: *Պատեպատ զարկվող մտքերը գնացին հասան իրենց տուն: Տունը մտքից հանել է լրիվ: Տեսնես ի՞նչ է անում մայրը: Արդեն երկու տարի է՝ տնեցիք սովորել են իր հանկարծակի չքվելուն... Պաղվալի հեղինակությունը օրեցօր աճում է, ավելանում են հաճախորդները: Վաղոն պիտի վազի... Իրեն մեծ գործ պետք չէ, տունը պահեն ու մեկ էլ զենքի փող հասցնեն (էջ 59):*

Վաղոյի կերպարի ինքնաչափման մեջ, անշուշտ, կարևոր է էպիկական-հուզական բաղադրիչը, հուզական պայթյունը, որը լավագույնս արտահայտված է Մն բերդի զինապահեստը մաքրագործելու գնացած և երեք օր ու գիշեր ստիպված այնտեղ գիշերած, մահն աչքն առած Վաղոյի խոհերում. *Գա՛ր Մանուշը, գա՛ր: Փռեր թաշկինակը, թխած բանջարհացը ուտեին ախորժակով, Գախեթի Մուկուչի սև գինին խմեին կուկում: Ու խավարի մեջ Մանուշը քներ՝ զլուխն իր ուսին հակած: Գրողի ծոցը կորչեին գորանոցն էլ, կարաուլն էլ: Գա՛ր Մանուշը, գա՛ր (էջ 58):*

Ինչ խոսք, բնականոն կյանքի ու ներդաշն սիրո վայելքի երազանքը մի առանձին փայլ ու բանաստեղծական հնչեղություն են ստանում սահմանային վիճակում հայտնված հերոսի մտաշխարհում:

3. Պաղվալի Վաղոյի կերպարի ստեղծման կարևոր գործոն է միջավայրի չափումը: Միջավայրի ներքին ամբողջականության մեջ չեն վերանում մեծ աշխարհի, արդիականի ազդակները: Վեպում բավական ներգործուն են դրանց ազդեցությունները. միջավայրն իր հերթին նկարագրականից աստիճանաբար վերածվում է գործող կերպարի ու ձեռք է բերում կերպարային հյուրեղ գծեր: Հայ իրականության մեջ Վաղոյի անունն արդեն անցնում էր բերանից բերան՝ վերածվելով լեզենդի, որն այսպես է արտահայտվել վեպում.

*Եվ քանի որ այդ գործողությունը /իմա՝ պահեստները թալանելու-Ռ.Հ./ մեծագույն զգուշությամբ և ճշտապահությամբ կատարվեց մեկ ամսվա մեջ տասներեք անգամ, շատերը մասնակից դարձան դրան, շուտով ծայր առան գանազան վարկածներ...*

*-Գա-չկա, սա Վաղոյի ու Բիճայի ձեռքի գործն է,- փսփսում էին իրար ականջի: Քանի՞ զլխանի էին, որ բարձրաձայն ասեին իրենց կասկածների մասին: Մյուսները պատմում էին, որ դա Բիճայի ձեռքի գործն է, որն իր մեջքին փաթաթած սապնած չվանով մատնիչներին ու թույլբերաններին մեջտեղից վերացնում է: Պարանը զցում է պարանոցը, խեղդում ու նետում Վաղոյի պաղվալի մեջ փորած հորը: Ինչե՛ր ասես, որ չէին պատմում Գյումրիում (էջ 67-68):*

Պաղվալի Վաղո մականվան մեջ, անշուշտ, նշմար չկա էպիկական հերոսության, որն ըստ էության հատուկ է Վաղոյին: Բայց զարմանալիորեն այդ բնորոշումը նոր հնչերանգ է ստանում ոչ թե նկուղային գաղջ միջավայրի, այլ առեղծվածայինի ուրվապատկերմամբ: Իսկ ինչն առեղծված է, այնտեղ առկա է ծպտյալ գաղափար, խորհրդավոր մտքի թռիչք, ոչ սովորական մտածելակերպ: Եվ ժողովուրդը ենթագիտակցորեն

ընդունում է այդ մականունով մարդուն, հարազատացնում իրեն, իր միջավայրին, և Պաղվալի մեջ չի տեսնում բացասական տարրեր:

Ստացվում է այնպես, որ կերպարակերտման միջավայրի չափումը, որ երբեմն հանգեցնում է նաև հերոսի ինքնաչափման, արդեն իր բնում առասպելացվում է, լեզենդացվում՝ հեղինակին թողնելով կերպարի հարդարման որոշակի աշխատանք: Գյումրիում՝ ոգեղենության քուրայի մեջ, օրը ցերեկով ծնվում են վարկածներն ու լեզենդները.

*Դեռ Կարսում Ռուբենը քանիցս լսել էր Վաղոյի նշանավոր Պաղվալի մասին, որի շուրջը խոսում էին Գյումրիի սահմաններից դուրս: Ո՞րն էր նրա առավելությունն ու արժեքը, գիտեցողը չէր խոսում, իսկ չգիտեցողը այնպես էր ներկայացնում, կարծես Երուսաղեմի կամ Ս. Կարապետի վանքը լիներ: Տիրոջ շուրջը պտտվող անհավատալի լուրերը հետաքրքրել էին այն աստիճան, որ քաղաք գալով, ժամ առաջ ուզում էր ծանոթանալ Վաղոյի հետ: Գիտեցող-չգիտեցողը խոսում էր, պատմում, հորինում անհավատալի դեպքեր:*

*-Գյումրի գնացիր, Վաղոյի Պաղվալը մտա՞ր,- հարցնում էին մարդիկ՝ իրար բազմանշանակ աչքով անելով:*

*-Չէ՛, փնտրեցի, բայց չգտա:*

*-Օր ըղպես է, բա՛ն էլ չես տեսն (էջ 72):*

Վեպի խոսուն էջերում Պաղվալի առեղծվածը բացահայտվում է ազգանվեր ուժերի քաղաքական ծրագրերի ու նրանց զինավառության կազմակերպման գործի մասնակիցների հավաքատեղիի գործառույթով: Ինչպես մի ուրիշ առիթով հայ երևելիներից մեկը՝ Ս. Փարաջանովն է ասել՝ մենք մեր գաղափարները հանում ենք Պաղվալից: Ասել է թե՛ ընդհատակից ենք վերցնում կյանքի տրոփյունները, արմատներով զգում ազգային կյանքի զարկերակն ու ժամանակի ավիշը:

4. Ընդհանրացնելով կերպարակերտման չափումները՝ նշենք, որ շատ հաճախ դրանք ներառում են մեկմեկու, հետևաբար *Պաղվալի Վաղո* ասելով՝ հասկանում ենք նաև մի ամբողջ ազգային-ազատագրական շարժման ավեքայության հատված: Ուստի Պաղվալը դառնում է խորհրդանիշ՝ ժողովրդի երևակայության մեջ ստանալով առեղծվածային միստիկ գծեր, որի գեղարվեստական կերպավորումն առ այսօր մնում է ոգեղեն իմաստության տանող ամենակարճ ճանապարհը:

Գրականության մեջ կերպարաստեղծման չափում է նաև հեղինակային չափման և ինքնաչափման գույգորդումը, որը մուծում է մի չափումը մյուսի մեջ, բխեցնում ու պայմանավորում է դրանք իրարով, հանգեցնում մեկը մյուսին<sup>6</sup>: Ի հավելումն այս մտքի՝ ընդգծենք, որ կերպարաստեղծման բոլոր չափումները հաճախ կարող են համադրվել, որը և ի վերջո դառնում է կերպարի գեղարվեստականացում:

Ահա համադրական չափման մի օրինակ է այս դրվագը. *Ու հորինում էին, իբր ծանոթ են Վաղոյին, խմել են նրա Պաղվալում, պաշտոնշտի են եղել հետը: Իրենց մտերմությունը ուրիշները շեշտում էին նախատիքի խոսքերով, իբր պատվիրել են զենքը մեծ-մեծ արկղերով չտա, որ փոխադրելը հեշտ լինի: Սակայն Վաղոն ականջ չի դրել: Այս բոլորը հորինվածքներ են, որ պատմում էին նույնիսկ այնպիսի մարդիկ, որոնք ի-*

<sup>6</sup> Մանթոյան Մ., նշվ. աշխ., էջ 7:

*րենց կյանքում դեռ ոտք չէին դրել Գյումրի: Ճիշտը այն էր միայն, որ Կարսի ու Գյումրի-վա շրջանները զենքի նեղություն առաջվա նման չէին քաշում: Հերիքում էր նաև զինամթերքը: Եվ այդ ամենը Վաղոյի շնորհիվ (էջ 72):*

**Պաղվալի Վաղոյի վիպական միջավայրն ու հարակից հերոսները**

Հ. Հակոբջանյան արձակագիրը նոր գծեր է ավելացնում իրական պատմական դեմքերին և վիպական գործողությունների թափի մեջ գեղարվեստական բնորոշումներով թանձրացնում է նրանց կերպարը: Վիպական միջավայրն ու գլխավոր հերոսի նկարագիրը, նրա գործունեությունն ամբողջանում, լիարյուն են դառնում հարակից կերպարներով՝ գաղափարակից ընկերներով, որոնք ևս ազգային-ազատագրական պայքարի նվիրյալներ են: Ամեն դեպքում ուշադրության է արժանի ոչ միայն առանցքային կերպարը՝ որպես դիպաշարի ու կոմպոզիցիայի էպիկենտրոն, այլև գլխավոր հերոսի հարազատ միջավայրի մարդիկ՝ նրա զինակից ընկերները՝ Բիձան՝ Սվազգի Հարությունը, Կարսից եկած Ռուբենը՝ Մինաս Տեր-Մինասյանը, Համո Ջամփոլադյանը, Նիկոլ Դումանը, Լոռեցի Սրապը, Հակոբ Չիլինգարյանը /Երկաթը/ և այլք, որոնք պատմական դեմքեր են: Ժամանակը նրանցից հայդուկ լինել էր պահանջում, և ահա նրանցից մեկը՝ *կայծակի արագությամբ Երկաթը անցել էր հարյուրավոր բնակավայրեր, զենքը տեղ հասցրել, խմբեր կազմել և... ծաղկոտ լեռների փեշերին, Սոսկունի մեջ, Քիշմիշ Թափայի քարայրում հերոսաբար նահատակվել՝ իրենից հետո թողնելով նամակների, ծրագրերի մի մասը, մյուսը կա՛մ թուրքերի ձեռքն է անցել, կա՛մ գնդել իր իսկ պայթեցրած քարայրի հետ միասին (էջ 84):*

Վաղոյի կերպարի զուգահեռի վրա բարձրանում է նաև նրա՝ ոչ պակաս առեղծվածային ընկերոջ՝ Բիձայի կերպարը, որին էլ աննման սիրով սիրահարված էր Մանուշի ընկերուհին՝ Նունեն:

*Կարսում Բիձայի մասին խոսելիս մարդիկ մի տեսակ ջոկում էին բառերը, դառնում զգուշավոր, ու դեմքներին գծվում էր խորհրդավոր երկյուղածություն: Սակայն մի առանձին համակրանքով էր միշտ Սերգեյը խոսում Պաղվալի Վաղոյի մասին, իսկ լսողները չէին էլ կարող պատկերացնել, թե որքան ջանհեղ, անփորձ է այս երիտասարդը: Երևի հոգում փայփայած գաղտնի ցանկությունն էր նրան մղում վտանգավոր արարքների... Չինել, ինչքան հնարավոր է շատ: Ինչպես ինքն էր ասում՝ կաթիլ-կաթիլը փոր չի կշտացնե (էջ 75):*

Կերպարի ստեղծման միջավայրային չափման վառ արտահայտություն է նաև հերոսին տված մականունը, քանի որ այն դառնում է գրական կերպարին ներսից կամ խորքից տրված գնահատական, ինչպես հեղինակն է վեպում բնութագրում. *Անխիդ է գյումրեցին, ու կատակն էլ դադե կանցնի, դրած անունն էլ մինչև մահ-գերեզման վրայից չես կարող քերել (էջ 11):*

*Շարաթից ավել է՝ կորել է Սվազգի Հարությունը, որին գյումրեցիք, սովորության համաձայն, առանց մականվան չթողեցին՝ Բիձա կնքեցին: Բարձր հասակով, թավ բեղերով, դեռ երեսուն տարին չբոլորած երիտասարդին Բիձա անունը այնպես սազեց, կասես կոտրած աթոռի ոտքը թուրթխալով կպցրին (էջ 9):*

Վաղոյի Պաղվալի մշտական հաճախորդներից էր նաև Ավետիք Իսահակյանը. *Գրքեր ունի, Եվրոպա է տեսել, համբավ ունի, ժողովուրդը նրա ոտանավորները բերանացի գիտե, իսկ Գյումրու հեշ պետքն էլ չէ՝ իր համար մնացել է Թոթով Ավո (էջ 10):*

Եվ այսպես՝ դրվագ առ դրվագ պատկերվում է Գյումրին իր մարդկանցով, կենցաղավարությամբ, ավանդական բարքերով ու նիստուկացով, քեֆչի լոթիների տրամադրությամբ, արհեստավորներով ու նրանց սովորություններով, սրճարաններում հնչող աշուղական արվեստով, կենսական հումորով... *Գյումրին կատակում էր. փողոցում, գինետներում, հարսանիքներում առանձնանում, համուհոտ էին տալիս Պոլոզ Մուկուչն ու Ծիտրո Ալեքը, Ձիգ-ձիգ Կարոն ու Ղուտուղ Արամը, Բզբիտով Արշալույսն ու Նայրն Կարոն (էջ 69):* Ընդհանրապես մականունները կերպարի գեղարվեստական բնութագիրն են՝ ժողովրդական մտածողության մեկնակերպով:

Ինչ խոսք, Վաղոյի կերպարը գեղարվեստական առումով ամբողջական չէր լինի, եթե վեպի էջերում չգծագրվեր սիրած աղջկա՝ Մանուշի հուզիչ կերպարը: *Վերջապես Վաղոն հայտնեց իր սիրո մասին: Թե գիտենար՝ ինչքան է սպասել աղջիկն էս օրվան, ինչպես էր ուզում հենց էդ խոսքերը լսել՝ տաք, մտերիմ, քնքուշ: Աշխարհի բոլոր կանանց երջանկությունը այս պահից է սկսվում (էջ 28):*

Դեպքերի զարգացման ընթացքում շիկանում են Վաղոյի խոհերն ու հույզերը. նրա հոգին անսահման աշխարհ է, անվերջ գեղեցկությունների ու նրբավորումների մի աշխարհ, բայց և սևեռուն գաղափարի՝ Երկրին զինելու գերակայությամբ. *Ի՞նչ ասեր Վաղոն, ինչո՞ւ պղտորեր աղջկա անտեղյակ հոգին, ասեր, թե Բիձայի նման ինքն էլ մատողրու է, թե այդ ճանապարհն ընկնողները իրավունք չունին ուրիշի մեղք ու արունքի տակ մտնելու... Էնքան բան կա պատմելու, Մանուշ, բայց արժե՞ հոգիդ պղտորել: Առանց այդ էլ օրերը հանգիստ չեն: Խաղաղ, անզիտակ ապրի քեզ համար, չարդ տանի Վաղոն (էջ 30):*

Վաղոյի կարոտից ու սիրուց հիվանդացած Մանուշին տանում են հեքիմների դուռը: *Տարան Ամենափրկիչ, աղոթել տվեցին, երկու աղավնի մատողեցին, արյունը քսին ճակատին: Հնար չեղավ: Մանուշը ապաքինվում է այն ժամանակ, երբ իմանում է, որ Վաղոն հայտնվել է քաղաքում: Վիպական ժամանակի մեջ ալեծուփ հույզերը հաղորդում են շղարշիկ զգացողություններ... Վաղոյի աչքի առաջ սիրածը վերածվում էր հեքիաթային ջրվեժի նայադի, որ սափորն ուսին՝ սպասում է ծարաված ճամփորդների հայտնվելուն (էջ 70):* Բայց և՛ կյանքում, և՛ գեղարվեստական բնագրում անավարտ է մնում Վաղոյի սերը. սերը հաց չի դառնում, քանի որ *մատողրուի ճակատագիրն է այդպես...*

Այսպիսով՝ քննվող վեպի պատմական դեմքերը ազգային արժանապատվություն ունեցող հայի կերպարներ են, իսկական որոտման որդիներ՝ աննվաճ երազի կարոտով: Նրանք կյանքից են գալիս, ունեն իրական բնորդներ, և խիզախումը, սխրանքն ու անձնվիրումը նրանց կենսունակ ջղերն են, որոնք էլ ձևավորում են անհատի հայեցակարգը գրական երկում:

Էպիկական ժամանակով ու վիպական մթնոլորտի ընդհանուր գծագրմամբ «Պաղվալի Վաղոն» հեռու է մեծակտավ գործ համարվելուց. հեղինակը գնում է դեպի բնաշխարհ ու մարդիկ, հրաժարվելով ծավալից՝ թափանցում է իր հերոսների խորքը,

բացահայտում նրանց գործողությունների ու վարքագծի շարժառիթները: Վեպի հյուսիսը լեզուն ևս Հակոբջանյանի արձակի կերպարաստեղծման միջոցներից է: Ժողովրդական բառուբանով հարուստ լեզուն՝ Կարնո բարբառի Շիրակի խոսվածքով, կերպարների անհատականացման ու միջավայրի կոլորիտային բնութագրմանն է ծառայում: Վեպի էջերը հարուստ են քնարական բանահյուսության նմուշներով, ժողովրդական խաղիկներով, Գյումրվա քաղաքային երգերով ու սովորության կենցաղի գունեղ նկարագրությամբ. պատկերվում են Գյումրին ու նրա բնակիչները աշխարհընկալման ինքնատիպությամբ, զվարթախոհությամբ ու դարձվածային մտածողությամբ, գործինակ՝ *Կյանքից ձեռք քաշած տղերք են, ամեն մեկը՝ մի առյուծ: Գյումրին ըսպես է, մեծ ու պզտիկ կռիվ ման կուզան: Կռիվ օր չեղնի, յաղլու տաք ու պաղի վրա կռիվ կսարքեն: Աստծու համբերության վրա կգարմանս, օր վերեն լավն էլ կտեսնի, վատն էլ ու դաբուլ կենե, էդ չարի ձեռքը չի բռնե, հոգին չի առնե: Ընչի՞ է էս աշխարհը ըսքան ծուռումուռ շինած: Բա խոտն է ճիշտ, թե՞ աստվածը: Աշխարհը ընչի է ըսպես անտեր: Տիրույին տերն է տարել, անտերին՝ գելը: Աստված նուր ու ջուր թափե գլխիդ:*

**Եզրահանգում.** Պաղվալի Վաղոն, նույն ինքը՝ Ավետիս Ղարիբջանը (վեպում՝ Վաղինակ Մինասյան), ավետիս դարձավ հայ ազգային-ազատագրական շարժման գալիք հաջողության ու զարթոնքի համար: Տարակույս չկա, որ իրական կերպարը վիպականանում է, երբ ոգեղեն բաղադրիչը նրա մեջ արտահայտված է հզոր լիցքերով ու ներգործուն ազդակներով: Ի վերջո այդ ամբողջը հանգեցնում է գաղափարական ճշմարիտ ուղու: Պաղվալի Վաղոյի կերպարի գեղարվեստական անդրադարձը հետահայաց խոկում է մեր ազգային բախտի ու ճակատագրի՝ այսօր էլ դեռ չլուծված հարցերին: Ամեն դեպքում այդ հարցադրումներն արդիական են ու միտված ապագայի հեռապատկերին: Վիպական սյուժեի մեջ դրվել են եղելություններ ու գործողություններ, և պատմական ոչ շատ հեռու անցյալի խնդիրները Վաղոյի շուրթերով նորօրյա հնչեղություն են ստացել. *<<Հրացանի պաշտամունք պիտի ունենայինք: Փամփուշտի ու վառողի պաշտամունք: Վառողի հոտ պիտի առնեք նորածին ամեն հայ մանուկ: Ամեն հայ օջախի պատի սրբապատկերի տեղ հրացան էր պետք կախել>> (էջ 35):*

Այս վեպը 20-րդ դարասկզբի հասարակական-քաղաքական կյանքի իրողությունների ներըմբռնողական ընկալման գեղարվեստական փորձ է՝ Հայրենիքին հաղորդակցվելու, նրան զինելու, հանուն նրա հերթական անգամ կենաց-մահու կռվի մասնակցելու և նրա հետ միավորվելու մի համապատկեր, որ թույլ կտա ըստ էության հասկանալ հայ ոգու ինքնության կենսաշարժը:

**ВИДНОЕ ЛИЦО АЕКСАНДРОПОЛЯ – ПРООБРАЗ  
ЛИТЕРАТУРНОГО ПЕРСОНАЖА  
(Аветис Гарибян в романе А. Акопджаняна «Падвали Вахон»)  
Оганесян Р. П.**

**Ключевые слова:** *освободительное движение, гайдук, этический образ, рассказ, историческое лицо, артистизация, измерения создания образа, легенда.*

В статье мы обращаемся к образу одного из известных деятелей Александрополя – Падвали Вахо, реалии и эпизоды жизнедеятельности которого легли в основу рассказов как в устных произведениях, так и в художественной литературе. Примечательно, что устные рассказы формируются в конкретных литературных произведениях, таких как роман современного писателя, литературного критика Айказя Акопджяна «Падвали Вахон».

Национальной черте романа Акопджяна «Падвали Вахон» познавательное и художественное очарование придают выявление и прорисовка глубины исторической действительности, где реальный человек - Аветис Гарибян (Падвали Вахо), представлен как персонаж, связанный с художественной средой посредством его подпольной деятельности с друзьями, осуществляющими национально-освободительную борьбу.

**THE PROMINENT FIGURE OF ALEXANDRAPOL  
AS A PROTOTYPE OF A LITERARY PERSONAGE  
(Avetis Gharibyan in H. Hakobjanyan's "Padvali Vaghon" Novel)  
Hovhannisyan R. P.**

**Key words:** *liberal movement, hayduk, epic personage, narrative, historical figure, fictionalization, metrics of a personage creation, legend.*

The paper highlights the personage of Padvali Vagho- one of the most prominent figures of Alexandrapol; the episodes and real-based activities of his life are the basis of narration both in oral works and fiction. It is noteworthy that narrations are illustrated in concrete literary works, as it is in modern prose writer, literary critic Haykaz Hakobjanyan's novel "Padvali Vagho". The revealing and highlighting of historical background gives colours to the national morpheme of the novel; the real person- Avetis Gharibyan (Padvali Vagho) as a personage is presented with the synthesis of literary environment through the prism of joint national-liberal struggle program.

**Գ ր ա կ ա ն ո թ յ ո ն**

1. Հակոբջանյան Հ., Պաղվալի Վաղոն, Երևան, «Նաիրի» հրատ., 1997:.
2. Հայրապետյան Ա., Դրվագներ զինյալ պայքարի պատմությունից. Ավետիս Դարիբյան (Պաղվալի Վաղոն) // ՇՊՀ Գիտական տեղեկագիր, պրակ Բ, 2018թ., Գյումրի, էջ 34-48:
3. Հայրապետյան Ա., Հուշեր Ալեքսանդրապոլի հեղափոխական անցյալից (Արամայիս Ազնավուրյան)//ՀՀ ԳԱԱ ՇՀԿ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 20, 2017, Գյումրի, էջ 170-183:
4. Սանթրյան Մ., Էպիկական կերպարի ստեղծման չափումները, Վանաձոր, 1994թ.:

Ընդունվել է՝ 26. 04. 2021  
Գրախոսվել է՝ 09. 05. 2021  
Հանձնվել է տպ.՝ 21. 06. 2021

**Տեղեկություններ հեղինակի մասին**

**Ռոզա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ՝** ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական  
հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող,  
էլ. հասցե՝ vard-rosa@mail.ru

ՀՏՂ՝ 7.072.2

DOI: 10.52971/18294316-2021.1-142

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ՝ ԻԲՐԵՎ ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ  
ԿՐՈՂ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

*Արաքս Մարգարյան*

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Գյումրու մասնաճյուղ

**Բանալի բառեր՝** *աշխարհաճանաչողություն, հեթանոսություն, կուլտ, միաստվածություն, տաճար, ճարտարապետություն, քրմեր, Զվարթնոց, մշակույթ:*

Հողվածում դիտարկվում են հայ մշակույթի ինքնատիպությունը և նրա զարգացման փուլերի հաջորդական փոխկապվածությունը, որում կարելի է տեսնել մեկ ընդհանուր աշխարհաճանաչողական հենք: Այն շաղկապում է թե՛ հեթանոսության և թե՛ քրիստոնեության շրջանի գիտելիքներն ու մշակութային արժեքամակարգը: Քրիստոնեությունը յխախտեց հին օրենքները, այլ որդեգրեց հեթանոսական ըմբռնումները բնության տարրերի, մարդկային բնության ու էության մասին: Այս երևույթը ամենից լավ բնութագրում են Քրիստոսի խոսքերը. «Մի՛ կարծեք, թե օրենքը կամ մարգարեներին ջնջելու եկա, չեկա ջնջելու, այլ լրացնելու»<sup>1</sup>:

**Նախաբան.** Միաստվածության պաշտամունքը հայ իրականության մեջ կապվում է Արա Գեղեցիկի հետ: Հայ հեթանոսական աստված Արան խորհրդանշում էր հոգու հարության գաղափարը: Արայի հոգին բարձրանում է երկինք, սակայն աստվածներն այն վերադարձնում են, որպեսզի Արան իր տեսածը պատմեր ու տարածեր երկրի վրա<sup>2</sup>: Արան մարդ էր դառնում հոգու վերադարձով՝ Քրիստոսի նման ամբողջացնելով հարության գաղափարը: Ըստ Ղափանցյանի՝ «Հայ քրիստոնեական եկեղեցին, ընդգրկելով Արայի և հեթանոսական պաշտամունքի այլ հոգևոր փշուրներ, դարձավ մի տեսակ

<sup>1</sup> Նոր Կտակարան, Էջմիածին, 1975, էջ 12 (Ավետարան ըստ Մատթեոսի):

<sup>2</sup> Платон, Сочинения в трех томах. Т III. Москва. Изд. «Мысль». -1971. С. 447.

ազգային ձևավորվածություն՝ ի հակադրություն ճնշող պետությունների նույն քրիստոնեական կրոնների... Հեթանոսական գաղափարները, Ծով, Երկինք, Երկիր եռյակ աստվածությունների փոխարեն, հանդես եկան սուրբ երրորդության՝ Հայր, Որդի, Սուրբ Հոգի, իսկ Ծովինարի փոխարեն՝ Կույս Մարիամը (որպես երկրի, մայրության խորհրդանիշ), որը հղիանում է Աստծո հոգով, և նրա որդու՝ Քրիստոսի ծնունդով սկսվում է նոր գաղափարախոսության ծնունդը»<sup>3</sup>: Հայքի քրիստոնեացումից հետո հայոց քրիստոնեական մշակույթի մեջ սկսվում են երևալ պաշտամունքային տարրեր, որոնք ոչ մի կապ չունեն քրիստոնեական դավանաբանության ու կանոնիկ գրքերի հետ: Օրինակ՝

• Այծի պատկերները եկեղեցիների պատերին (Մբ Հռիփսիմե, Մբ Գեղարդ և այլն): Քրիստոնյաների մեջ այծը հեթանոսների խորհրդանշանն էր:

• Ցլին հռչոտող առյուծի պատկերներ (Ցախաց քար, Մակարավանք և այլն): Մա Միհրի պաշտամունքի կենտրոնական սյուժեներից է, և առյուծի պատկերը ներկայացնում է Միհր-Արեգակին:

• Ազգային դիցարանի դիցանունների գաղափարագիր նշանագրերի գործածությունը որպես զարդանախշ (եկեղեցիների պատերին, խաչքարերի վրա, գորգերում):

• Օձի պատկերներ եկեղեցիների տարբեր մասերում:

• Նշանագիր իմաստոց (գաղափարագիր գրանշաններ) ցուցակների հայտնվելը մատյաններում: Այդ ցուցակներում ներկայացվում են 400-ից ավել նշանագրեր և նրանց ընթերցումները: Դրանց հնագույն անունները ժայռապատկերներում են<sup>4</sup>:

Հայերը իրենց աշխարհաճանաչողությունից չհեռացան, այլ յուրովի բացահայտեցին նոր գաղափարախոսությունը և նույնացրին այն նախկին տիեզերական ըմբռնումներին՝ ներդնելով դրանք ժամանակի պաշտամունքային կառույցների մեջ: Ուստի հոգու գալստյան արտահայտությունը տեղ է գտել նրանց նվիրված պաշտամունքային կառույցների ձևերում և, ըստ Կ. Ավետիսյանի, արտահայտվել հոգու, երկնքի ու երկրի կապի մեջ<sup>5</sup>:

Հայ քրիստոնեական մտածողությունն իր արայական բնապաշտական, բնափիլիսոփայական հասկացություններից հեռու չգնաց, այլ բացահայտելով ինքն իրեն, հասավ իր հնագույն հասկացությունների ու ձևերի կատարելությանը<sup>6</sup>: Այն հնարավորություն տվեց հեթանոսական տաճարները սրբազործելու քրիստոնեական եկեղեցիների: «Էջմիածնի հիմնարկությունն է գոնե մեկ-երկու տարի առաջ, - գրում է Թորոս Թորամանյանը<sup>7</sup>, - մեհենական ձևը սրբազործվեցավ հայոց քրիստոնեական եկեղեցիների համար: Հետևաբար, մեհյանները սրբազործող Լուսավորիչը պատճառ չունեի իր հիմնարկած տաճարին համար տարբեր ձև ստեղծելու: «Արդ, Լուսավորիչը նոր իմաստավորում տվեց հեթանոսական տաճարից ժառանգած այդ ձևին ու պաշտոնապես հաստատեց նրա իրազործումը: Այդ տեսիլքի ճարտարապետական մեկնաբանությունը համընկ-

<sup>3</sup> Ղափանցյան Գ., Արա Գեղեցիկի պաշտամունքը, Երևան, 1945, էջ 164:

<sup>4</sup> Մարտիրոսյան Հ. <https://www.facebook.com/hamlet.martirosyan> (13 dektember 2020):

<sup>5</sup> Ավետիսյան Կ., Արարչագործությամբ արարվածները, Երևան, 1995, էջ 40:

<sup>6</sup> Ղափանցյան Գ., Արա Գեղեցիկի պաշտամունքը, Երևան, 1945, էջ 164:

<sup>7</sup> Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Երևան, 1942, էջ 170:

նում է Էջմիածնի Կաթողիկեի կերպարին, Բագարանի կաթողիկեին»<sup>8</sup>: Նման օրինակները շատ են հայ ճարտարապետության մեջ: Այսպես, Գիսանեի /Դեմետրայի/ պաշտամունքի վայրում, որ գտնվել է Տարոնում, կառուցվել է Մբ Կարապետի վանքը<sup>9</sup> Տուրուբերան նահանգի Տարոն գավառում՝ Մուշից հյուսիս-արևելք՝ Ծիրինկատար լեռան վրա, հնուց ի վեր եղել է Անահիտ դիցուհու մեհյանը, որը կործանվել է Գրիգոր Լուսավորչի հրամանով, ու մեհյանի հիմքի վրա կառուցվել է Առաքելոց եկեղեցին:



Անահիտ դիցուհու տաճարը / Առաքելոց վանքը

VII դարի պատմական քաղաքական բարդ իրադրությունների պայմաններում Ներսես կաթողիկոսի ծավալած գործունեության շնորհիվ Հայաստանը ապահովագրվեց արաբների հետագա արշավանքներից: Եվ կաթողիկոսը նախաձեռնեց այնպիսի շինարարություն, որը, ինչպես Թորամանյանն է գրում, «որչափ կրոնական, այնչափ էլ քաղաքակրթական նշանակություն ուներ»<sup>10</sup>: Զվարթնոցը նվիրված է երկնային արթուն ուժերին՝ «յանուն երկնային գուարթնոց», ենթադրվում է, որ այն կառուցվել է հեթանոսական Տիր աստծո մեհյանի վայրում, իսկ նրա հատակագիծը ունի «բանալու» ուրվագիծ՝ կողավորելով հեթանոսական գաղափարներ ու հասկացողություններ<sup>11</sup>:

Զվարթնոցի պատերի քարերի վրա վարպետների թողած նշանագրերը իրենց ձևերով ու բովանդակությամբ արտահայտում են պտղաբերության հավերժության գաղափարը: Ներսես կաթողիկոսի նշանը պատկերված է Զվարթնոցի խոյակների վրա, որը Կենաց ծառ է՝ նոնենու տեսքով: Հինգ ուժերի (հող, ջուր, օդ, արև, հատիկ կամ հոգի) օգտին է խոստում նաև հինգ մուտքերի առկայությունը Զվարթնոցում: Այս ամենը վկայում են, որ Զվարթնոցի հատակագիծը ներկայացնում է ազգի աճման, զարգացման, պտղաբերման ու հարատևման գաղափարը<sup>12</sup>:

<sup>8</sup> Զարյան Ա., Եվրոպայում Բագարանատիպ կառույցների տարածման հարցի շուրջ, Բեյրութ, 1972, էջ 123:


<sup>9</sup> Առաքելյան Բ., Հայկական պատկերաքանդակները IV-VII դդ, Երևան, 1949, էջ 22:

<sup>10</sup> Ավետիսյան Կ., Արարում և երկրային արարվածներ, Երևան, 1995, էջ 49:

<sup>11</sup> Ղափանցյան Գ., նշվ., աշխ., էջ 62:

<sup>12</sup> Ավետիսյան Կ., նշվ. աշխ., էջ 50:

Զվարթնոց տաճարի հատակագիծը



Աղթամար կղզին ու Վանա լիճը համատարած ջրի ու նավի խորհրդանիշ են, որի վրա դրված է Կենաց ծառը՝ Աղթամարի եկեղեցին<sup>13</sup>: Աղթամարի Սբ Խաչ եկեղեցու ներքին հորինվածքը բացահայտվում է արտաքին ձևերում, ցույց տալիս իր գոյավիճակը, ի հայտ բերում հեղինակի ներքին մտահղացումը: Այն արտահայտում է Մարտի մարդկանց նախապատրաստումը Քրիստոսի գալստյան: Փրկության իմաստ են կրում տաճարի զարդարանքները՝ որմնաքանդակ ձկներ, աղավնի, նավ, եգ, նուռ, խաղողի ողկույզ: Դեպի դրախտ առաջնորդողը Գազիկ թագավորն է. նա հանդես է գալիս որպես Քրիստոսի գաղափարակիր ու կատարող անձ, և Քրիստոսին է

ներկայացնում նրան համագոր մի կառույցի մոդել, որի անունը ցույց է տրված հրեշտակների բռնած Սբ Խաչով: Քրիստոսի երկրորդ քանդակը հարավային պատին է գահին բազմած: Այստեղ նա հանդես է գալիս հովանավորի դիրքով, ծնկանը դրված խաչադրոշմ գրքով, կարծես ասելիս լինի՝ այս խաչն է պայմանավորում ամենը, և որ նա է իրթանում մարդկային, կենդանական ու բուսական աշխարհի աճն ու զարգացումը: Հեթանոսությունից քրիստոնեություն փոխակերպումը արտահայտվեց ինչպես առանձին եկեղեցիների, այնպես էլ ճարտարապետական տարրերի միջոցով:



Որոտնավանք / Սյունիք


Տրամաբանական հարց է ծագում. ովքե՞ր էին հին գիտելիքների կրողները, ո՞ւմ հաջողվեց քրիստոնեություն ներմուծել հեթանոսության գաղափարները: Նախ՝ դրանք

<sup>13</sup> Ավետիսյան Կ., նշվ. աշխ., էջ 33:

աղանդավորական շարժումների՝ թոնդրակյանների ներկայացուցիչներն էին, որոնք իրենց «արևորդիներ» էին անվանում և՛ թոնդրակյան շարժման (IX-XI դդ.) ժամանակ, և՛ դրանից հետո: Թոնդրակյան շարժման հայտնի առաջնորդները բարձրաստիճան հոգևորականներ էին: Քրմական դասի մի մասը գերադասեց ընդունել նոր կրոնը, մկրրտվել ու իր գիտելիքներն ու կենսափորձը տարածել նոր կրոնի քողի տակ: Անտարակույս է, որ հոգևորականների մեջ կային այդ գիտելիքներին տիրապետող մարդիկ: Նրանց գոյության մասին առաջին հիշատակությունը տալիս է մեր պատմագրությունը, որտեղ նշվում է, թե որոշ քրմեր և քրմերի որդիներ քրիստոնեություն ընդունեցին (կամավոր կամ ստիպողաբար) և դարձան հոգևորականներ: «Հոգևորականների մեջ կար նախաքրիստոնեական ազգային գիտելիքներին ծանոթ մի խավ, որ ծայտվելով քրիստոնյա հոգևորականի վեղարի տակ, ուսուցանում էր այդ գիտելիքները ուսուցիչ-աշակերտ ժառանգորդության միջոցով և պատրաստում իրեն փոխարինող նոր սերունդ»<sup>14</sup>:

Հայագետ Համլետ Մարտիրոսյանը կարծում է, թե նոր ժամանակների այդպիսի հոգևորականներից էր եպիսկոպոս Գարեգին Մրվանձտյանը՝ հայ բանահավաքների ու ազգագիրների ուսուցիչը: Այսօր էլ հայ հոգևորականների մեջ կան այդ գիտելիքներն իրենց ուսուցիչներից ժառանգաբար ստացած և իրենց կարգավիճակը գաղտնի պահող անհատներ:

*Եզրահանգում.* Թեև քրիստոնեության ընդունումը Հայաստանում Գրիգոր Լուսավորչի ու վերնախավի կողմից ուղեկցվել է հուշարձանների՝ բազիլիկների ու մեհյանների, հնագույն ձեռագրերի ու քանդակների ոչնչացմամբ, այդուհանդերձ ժողովուրդը հավատարիմ է մնացել իր հնագույն հավատալիքներին ու կոտորներին: Հեթանոս քրմերին ինչ-որ չափով հաջողվեց ծածկագրել ու տարբեր միջոցներով (գրականություն, ճարտարապետություն, քանդակ) փոխանցել որոշակի հնագույն գիտելիքներ: Այս ամենը հանգեցրեց նրան, որ քրիստոնյա հայ մեկնիչների կողմից հեթանոսական ծեսերը, հասկացությունները և երկրաչափական խորհրդանշական պատկերները քրիստոնեաբար սրբազործվեցին ու եկեղեցու հովանավորության տակ առնվելով՝ վերածվեցին քրիստոնեական խորհրդանշանների:



<sup>14</sup> Մարտիրոսյան Հ., <https://www.facebook.com/hamlet.martirosyan>, (13. 12. 2020):



Տեղեկաց մենաստան. 12-րդ դար

## ХРИСТИАНСТВО, КАК НОСИТЕЛЬ ЯЗЫЧЕСКИХ ЗНАНИЙ В КОНТЕКСТЕ СРЕДНЕВЕКОВОЙ АРМЯНСКОЙ КУЛЬТУРЫ

*Маркарян А. В.*

**Ключевые слова:** мировоззрение, язычество, идол, единобожие, собор, архитектура, жрецы, Звартноц, обряд.

Принятие христианства в Армении Григором Просветителем и представителями верховной власти сопровождалось уничтожением памятников культуры: алтарей, жертвенников, древних рукописей, скульптур. Несмотря на все это, народ оставался верным своим древним богам и верованиям. Языческим жрецам удалось с помощью архитектуры, литературы, скульптуры, закодировать и сохранить древние знания. Это привело к тому, что языческие обряды, понятия, геометрические символы армянскими священниками были по-христиански освящены и приняты под покровительство церкви, став христианскими символами.

## CHRISTIANITY AS A CARRIER OF PAGANIC KNOWLEDGE IN MEDIEVAL ARMENIAN ART

*Margaryan A. V.*

**Key words:** world cognition, paganism, idol, monotheism, temple, architecture, priests, Zvartnots, ritual.

Although the adoption of Christianity in Armenia by Gregory the Illuminator and the elite was accompanied by the destruction of monuments, such as gods and shrines, ancient manuscripts and sculptures, people remained faithful to their ancient beliefs and idols. The pagan priests to some extent managed to encode and transmit certain ancient knowledge through various means (literature, architecture, sculpture). All this led to the pagan rituals, notions and geometric

symbolic images being Christianized by Christian Armenian commentators and taken under the auspices of the church, be.

**Գ ր ա կ ա ն ո թ յ ո ն**

1. Առաքելյան Վ., Հայկական պատկերաքանդակները IV-VII դդ., Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1949:
2. Ավետիսյան Կ., Արարչագործությամբ արարվածները, Երևան, ՀԲՀ հրատ., 1995:
3. Զարեան Ա., Եվրոպայում բազարանատիպ կառույցների տարածման հարցի շուրջ, Բեյրութ, 1972:
4. Ղափանցյան Գ., Արա Գեղեցիկի պաշտամունքը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1945:
5. Մարտիրոսյան Հ., <https://www.facebook.com/hamlet.martirosyan>, (13.12. 2020):
6. Նոր Կտակարան, Ավետարան ըստ Մատթևոսի, Էջմիածին, Սբ Աթոռի հրատ., 1975:
7. Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Երևան, 1942:
8. Платон, Сочинение в трех томах. Т. III. Москва. Изд-во «Мисль». -1971.

*Ընդունվել է՝ 10. 02. 2021*

*Գրախոսվել է՝ 27. 05. 2021*

*Հանձնվել է տպ.՝ 21. 06. 2021*

**Տեղեկություններ հեղինակի մասին**

**Արաքս ՄԱՐԳԱՐՅԱՆ՝** արվեստագիտության թեկնածու, դոցենտ

ՀԳՊԱ Գյումրու մասնաճյուղի կերպարվեստի տեսության ամբիոնի վարիչ,

Մ. Նալբանդյանի անվան ՇՊՀ դասախոս, էլ. հասցե՝ araxmargaryan@gmail.com



Ժամանակի հոլովությի մեջ դիտելով նրա ստեղծագործության դերն ու նշանակությունը, թերթելով 1920-ականների հայկական նորաստեղծ հանրապետության մշակութային տարեգրության էջերը՝ վերստին համոզվում ենք կոմպոզիտոր գործիչի՝ ի վերուստ ուղղորդված և լավագույնս իրականացրած պատմականությունը, կշիռն ու չափը:

Վերստին անդրադառնալով Ալ. Սպենդիարյանի ստեղծագործության ազգային հատկանիշներին, դրանց ձևավորման բարդ ու հետաքրքիր գործընթացի կարևոր հանգրվաններին, որոնք հնարավոր դարձան մի շարք նպաստավոր գործոնների համադրությամբ, այս հոդվածում առանձնացրել ենք այդ գործոններից մեկը՝ ավանդական աշուղական արվեստը՝ հիմնականում կոմպոզիտորի ալեքսանդրապոլյան գրառումներում:

Ի սկզբանե որպես XIX դարի ռուս առաջադեմ արվեստագետների և հատկապես «Հզոր խմբակի» գեղագիտական սկզբունքների հետևորդ՝ Ալ. Սպենդիարյանը մոտեցավ ճշմարիտ արվեստի ակունքներին: Դեռևս Հայաստան ռոք չդրած՝ նա զգաց, որ իր ոգեղեն թիրախը հայ ժողովրդական-ավանդական երաժշտության տիրույթում է: Ընտրեց ու սկսեց հաջողությամբ ծավալվել այդ տիրույթում:

Հայտնի է, որ 1916թ. Թիֆլիսում Ալ. Սպենդիարյանն ի մոտո ծանոթանում է Կովկասյան տարածաշրջանի ավանդական նվագարաններին ու նվագախմբերին: Որպես եվրոպական նվագարանային-նվագախմբային կատարողական արվեստի հնուտ գիտակ՝ նա հանդես է գալիս էլոյթներով ու հրապարակումներով, որտեղ հստակ շարադրում է իր դատողությունները՝ այսպես կոչված, Արևելյան նվագախմբի լիակատար ու գունագեղ հնչողությամբ նպաստող մի շարք արտահայտչամիջոցների մասին<sup>1</sup>:

Որպես սկզբունքային հիմնադրույթ՝ նա կարևորում է հետևյալը. արևելյան նվագախմբին սնուցող աղբյուր կարող է ծառայել միայն արևելյան ժողովրդական երգի բնօրինակը կամ էլ կոմպոզիտորական ստեղծագործությունը՝ հորինված խիստ ժողովրդական ոճով<sup>2</sup>:

Ինչպե՞ս էր կոմպոզիտորը հասել այս հիմնադրույթին, ի՞նչն էր նրան ուղղորդել:

1893-94թթ. Ալ.Սպենդիարյանի ստեղծագործական տեսադաշտում արդեն հայտնվել էին հայկական քաղաքային ժողովրդական երգերի կատարումները, որոնք նա փոխադրել էր դաշնամուրի համար: Մակայն կարևոր նշանակություն ունեցան նրա ծանոթությունն ու հետագա տարիների մտերմությունը մեծ գումրեցու՝ Նիկողայոս Տիգրանյանի հետ:

Արևելքի ժողովուրդների երաժշտության խոր գիտակ, կոմպոզիտոր, դաշնակահար Ն. Տիգրանյանն իր ստեղծագործական որոնումները սևեռեց հատկապես քաղաքային ժողովրդական և աշուղական երաժշտական նմուշների ուսումնասիրման, գրառման և բազմաձայն վերակերտման վրա: Հաշվի առնելով այդ ժամանակաշրջանի պատմաքաղաքական իրադրությունը և եվրոպական արժեքների նկատմամբ ազգային չա-

<sup>1</sup> Спендиаров А. А. О восточном оркестре // в кн. Г. Г. Тигранова "А. Спендиаров". Ереван. -1957. С. 177.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 179:

փանիշների ընդհանուր մակարդակը՝ կոմպոզիտորի ստեղծագործությունը ժամանակին դիտարկվել է որպես առաջադեմ և վառ հեռանկարային:

Հայ երաժշտագիտության մեջ այս երաժշտապատմական ժամանակաշրջանը բաժանվում է մինչկոմիտասյան, կոմիտասյան և հետկոմիտասյան փուլերի: Անշուշտ, սա հիմնավոր բաժանում է: Մակայն որոշ փաստեր թույլ են տալիս նկատել յուրահատուկ ընդհանրություններ և սկզբունքային մոտեցումներ այս փուլերի սահմանագծերում: Մասնավորապես, նկատի ունենք Գոմիտասի և Ն. Տիգրանյանի մոտեցումները ժողովրդական և մասնագիտացված երաժշտության հավաքման, գրառման և բազմաձայն մշակման ասպարեզում: Դրան նպաստել են նրանց ստեղծագործական կապերը, անձնական մտերմությունը և նամակագրությունը: Հայտնի է, որ Ալեքսանդրապոլ այցելելիս Գոմիտասը մշտապես հյուրընկալվել է Ն.Տիգրանյանի տանը, և նրանց միավորել է նաև ստեղծագործական աշխատանքը: Այստեղ հատկապես կարևորում ենք կոմպոզիտոր և ժողովրդական ստեղծագործություն հարաբերությունը, որտեղ սկզբունքային նշանակություն ունեն ինչպես բնօրինակ նյութի հավաքման, այնպես էլ դրա բազմաձայն մշակման օրինաչափությունները:

Ժամանակին և այսօր էլ թե՛ կատարողների և թե՛ գիտականների շրջանում մեծ հետաքրքրություն են առաջացնում կոմպոզիտորի գրի առած և բազմաձայն մշակված մուղամները: Դրանց երաժշտապատմական արժեքը չափազանց բարձր է. «Ն. Տիգրանյանի՝ մեծ «Արևելք երգողի» (Ալ. Մպենդիարով) ստեղծագործությունը մուղամաթի զարգացման ու տարածման մեջ հսկայական ներդրում է», - գրում է Լ. Երնջակյանը մի քանի նկատառումներով: Հայտնի է, որ Ն. Տիգրանյանը դրանք գրառել է թառահար Ա. Մելիք-Աղամալյանի փայլուն կատարումներից:<sup>3</sup>

Կոմպոզիտորի գրի առած և բազմաձայն մշակված մուղամները մինչ օրս էլ որոշակի հետաքրքրություն են առաջացնում ինչպես երաժշտագետների, այնպես էլ կատարողների շրջանում: Այս առումով ուզում ենք հենվել Կ. Խուդաբաշյանի մի արժեքավոր դրույթի վրա. «Ն. Տիգրանյանի մուղամների մշակումները ներկայումս չեն կատարվում (բացառություն է կազմում միայն «Շահնագ» մուղամի մշակումը ջութակի և դաշնամուրի համար, կատարված՝ կոմպոզիտորի կողմից): Բայց եթե մուղամների մշակումները կորցրել են իրենց գեղարվեստական արժեքը դաշնամուրային նվագացանկի և համերգային նյութի առումով, քանի որ ժամանակակից դաշնամուրային տեխնիկայի տեսանկյունից շատ պարզունակ են, ապա դրանք պահպանելու են իրենց արժեքը որպես նյութ՝ հետազոտողների և կոմպոզիտորների շատ սերունդների համար»:<sup>4</sup>

Այսպիսով, Ն. Տիգրանյանը՝ որպես հայ ավանդական երաժշտության փայլուն գիտակ, մեծ հետաքրքրություն էր պատճառում նաև իր համար հայ ազգային երաժշտությունը տակավին բացահայտող Ալ.Մպենդիարյանն: Հետագայում յուրահատուկ փոխազդեցության ու փոխլրացման ճանապարհով ընթացան երկու հայ երաժիշտների մերձեցումն ու ստեղծագործական համագործակցությունը: Համոզված ենք, որ հենց Ն.

<sup>3</sup> Երնջակյան Լ., Հայ մուղամաթիստները և նրանց դերը Արևելյան երաժշտական մշակույթի զարգացման մեջ // Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 1982, N2, էջ 47:

<sup>4</sup> Худабашян К. Армянская музыка на пути от монодии к многоголосию. Ереван. -1978. С. 88.

Տիգրանյանի հետ ստեղծագործական առնչակցությունն էլ մի կողմից կողմնորոշեցին Ալ. Սպենդիարյանի ազգային-ռճական որոնումները, մյուս կողմից էլ՝ պարզապես նրա ստեղծագործական խառնվածքի մեջ առանձնահատուկ տեղ ունեին նվագարանային երաժշտության ժանրերն ու կատարողական առանձնահատկությունները:

Հիշենք, որ վերջինիս հմուտ գիտակն ու ջատագովն էր Ն. Տիգրանյանը, որի տեսադաշտում մշտակայուն տեղ էր զբաղեցնում հիմնականում հայ աշուղական-սազանդարական արվեստի ավանդույթների թե՛ ուսումնասիրությունը և թե՛ յուրացումը: Ինքը՝ Ալ. Սպենդիարյանը, Գումրեցու գրքի առաջաբանում խոստովանում է, որ խորապես տպավորվել ու ազդվել է նրա դաշնամուրային մանրանվագներից: Ավելին, նա իր ստեղծագործական արևելյան կողմնորոշման մեջ հենց Ն. Տիգրանյանի ստեղծագործություններն է համարում առավել մոտ ու հարազատ:<sup>5</sup>

Ասվածի լավագույն վկայությունները սփռված են նրանց նամակներում և այսօր էլ հիացնում են ընթերցողին մարդկային ջերմ զգացմունքայնությամբ, ստեղծագործական տարբեր խնդիրների արծարծմամբ ու դրանց ինքնօրինակ լուծումներով:

Ընդհանրացնելով դրանց բովանդակությունը՝ տեսնում ենք, որ այստեղ հիմնանյութը վերաբերում է ավանդական պրոֆեսիոնալ երաժշտության ժանրերին ու արտահայտչամիջոցների նորովի յուրացմանը: Խոսքը տարվում է «Ալմաստ»-ի, «Երևանյան էտյուդներ»-ի հորինվածքային առանձնահատկությունների և նվագախմբային նոր հնարքների՝ կյանքի կոչման խնդիրների շուրջ: Այսպես, 1925թ. հուլիսի 6-ին նա Յալթայից գրում է Ն. Տիգրանյանին. «Ես իրոք ուզում եմ գալ Լենինական, հիմնականում Ձեզ տեսնելու համար, բայց դա հազիվ թե հնարավոր լինի սեպտեմբերից առաջ: Ես հաճույքով պատրաստ եմ գործիքավորման իմ գիտելիքները ի սպաս դնել Ձեզ:

1916թ. Թիֆլիսում ծանոթացա Հովհաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմին և որոշեցի պոեմն օգտագործել որպես օպերայի սյուժե»:<sup>6</sup>

Ալ. Սպենդիարյանի համար Ն. Տիգրանյանի ստեղծագործությունը երկակի հետաքրքրություն էր ներկայացնում. նկատի ունենք նախ՝ սազանդարների ավանդական երաժշտությունը, ապա՝ կոմպոզիտորի մշակումներում դրսևորված մոտեցումները բնօրինակ մուղամների ու պարեղանակների հանդեպ: Ա. Սպենդիարյանը բազմիցս հիացել էր հայտնի թառահար Աղամալ Մելիք-Աղամալյանի կատարած մուղամներով, որոնք հիմնականում գրի էր առել Ն. Տիգրանյանը: Ալ. Սպենդիարյանը նկատում է. «Նրա գրի առած մեղեդիներին բարձր արժեք են հաղորդում զեղարվեստական նուրբ ճաշակով կատարված ընտրությունը, նրանց բոլոր առանձնահատկությունների ճիշտ ընկալումը և ճշգրիտ գրանցումը, որ ժամանակին արժանացել է Ա.Մելիք-Աղամալյանի նման գիտակի լիակատար հավանությանը: Մեղեդիների արժեքին համապատասխան է նրանց հարմոնիկ հարդարումը, ինչպես նաև Նիկոլայ Ֆադեևիչի մշակումների ողջ

<sup>5</sup> Гумреци, Николай Фаддеевич Тигранов и музыка Востока, с предисловиями Н.Я. Марра и композитора А. А. Спендиарова. Ленинград. -1927. С. 4.

<sup>6</sup> Ժամանակակիցները Ալ. Սպենդիարյանի մասին, Երևան, 1960, էջ 169-170:

ֆակտորան, որ այդ մշակումները դարձնում է համերգային էստրադաների հետաքրքրական նվաճումը»:<sup>7</sup>

Ինքը՝ Ալ. Սպենդիարյանը, Ն. Տիգրանյանի օրինակով մշտապես գրի է առել թառահարների, քամանչահարների, դուդուկահարների կատարումներից: Նույնիսկ ժամանցների ու հավաքույթների ընթացքում նա լիովին տրվել է ավանդական եղանակների հմայքին: Հովհ. Հովհաննիսյանի տանը կազմակերպված երեկույթների ընթացքում դա նույնպես ակներև էր. «Հյուրերը նստում էին գորգին, - հիշում է Ն. Տիգրանյանը, - և սկսվում էր աշխույժ զրույց, որին չէր մասնակցում միայն Ալ. Սպենդիարյանը՝ անտարբեր ամեն ինչի նկատմամբ, բացի «Դուն էն գլխեն»-ից, որը թառի նվագակցությամբ երգում էր քեֆի մասնակիցներից մեկը»:<sup>8</sup>

Հիշենք նաև «Էնգելի»-ի գրառումը՝ հայտնի թառահար, Արևելյան նվագախմբի ղեկավար Ա. Ալեքսանդրյանի կատարմամբ, կամ «Հիջաս»-ը՝ աշուղական գրասենյակում՝ սազանդարների շրջապատում, նարդու կատաղի պայքարից հետո: Երաժիշտներից շատերին նա ուղղակի ստիպել է սովորել կոնսերվատորիայում: Նրանք նշում են, որ կոմպոզիտորը հատկապես իր համար կարևորել է կատարվող ստեղծագործությունների ռիթմի ճշգրիտ ընկալումն ու զգացողությունը:

Ինչպես Լենինականում ու Երևանում էր, կրկնվում է նաև Թիֆլիսում: Այստեղ Հայկական երաժշտական ընկերությունը Հովհաննես Թումանյանի ղեկավարությամբ համերգների ու հանդիպումների շարք է կազմակերպում Ալ. Սպենդիարյանի ներկա գտնվելու առիթով՝ այն վերածելով յուրահատուկ տոնի:

«Այս երեկոյին Էլույթ ունեցան, - հիշում է բանաստեղծի դուստրը, - Մայաթ-Նովայի անվան աշուղական երգի անսամբլը, սազանդարների խումբը, սանթուրահարների փոքրիկ անսամբլը, դուդուկահարներ, քամանչահարներ: Վերջում Մ. Աղայանը կատարեց «Անտունի»-ն ու «Դուն էն գլխեն»-ը: Հիացած Սպենդիարյանը որոշ մոտիվներ գրի առավ: Հաջորդ օրը Սպենդիարյանի եղբոր տանը դարձյալ հանդես եկան աշուղներ, որոնց կոմպոզիտորը շարունակ կատարել էր տալիս իրեն դուր եկած երգերը նորից ու նորից... Չբավարարվելով դրանով՝ նա թափառում էր Թիֆլիսում, հին թաղամասերում այցելում էր սրճարաններ, որպեսզի բնական միջավայրում ունկնդրի աշուղներին: Նրան ուղեկցում էր Ռ. Մելիքյանը»:<sup>9</sup>

Այս հանդիպումներից մեկի ընթացքում էլ կոմպոզիտորը ծանոթանում է աշուղ Շերամի հետ, հիանում է նրա երգերի ինքնօրինակ կերտվածքով և հորդորում է աշուղին և նրա որդուն՝ Վարդգես Տալանին, գրի առնել նրա երգերը:<sup>10</sup>

Ի վերջո, հիշենք նաև, որ հենց «Թմկաբերդի առումն» էլ աշուղական պատում էր, ինչը այնքան տպավորվել էր կոմպոզիտորի մեջ և ոգեշնչել նրան:

<sup>7</sup> Ժամանակակիցները Ալ. Սպենդիարյանի մասին, էջ 58-59:

<sup>8</sup> Սպենդիարյան Ա., Ա. Սպենդիարյան, Երևան, 1966, էջ 179:

<sup>9</sup> Тигранов Г. Г. А. Спендиаров. Ереван. -1957. С. 142.

<sup>10</sup> Հարությունյան Հ. Հ., Աշուղ Շերամը և Ալեքսանդրապոլի երաժշտական կյանքը // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», № 10, Գյումրի, 2007, էջ 94:

*Եզրահանգում.* Ամփոփելով հայրենի երկրում Ալ. Սպենդիարյանի ստեղծագործական որոնումների շուրջ մեր դիտարկումները՝ կարող ենք նշել հետևյալը. թե՛ իր ելույթներում ու հրապարակումներում, թե՛ իր որոնումներում Ալ.Սպենդիարյանը առանձնահատուկ ու բացառիկ կարևորություն է տվել ժողովրդական երգերի լիարժեք ընկալմանն ու էության ճանաչմանը, սակայն նրա համար ստեղծագործական յուրացման ու լավագույն արդյունքների ձեռքբերման ոլորտը ավանդական պրոֆեսիոնալ երաժշտարվեստն էր՝ աշուղական երգն ու սազանդարական նվագը: Ակնհայտ է, որ այստեղ ալեքսանդրապոլյան նմուշները բացառիկ կարևոր դեր կատարեցին: Հիշենք նաև, որ կոմպոզիտորը կյանքից շուտ հեռացավ, և իր իսկ խոսքերով ասած՝ ժողովրդական երգի իմացական խորքերին հասնելու համար իրեն դեռ շատ ուղիներ էին սպասում: Մի առիթով նա ասել է Մ. Միրզոյանին. «Այ, երբ ես կգրեմ իմ երկրորդ օպերան, դա բոլորովին ուրիշ բան կլինի»:<sup>11</sup>

## ТРАДИЦИОННАЯ МУЗЫКА АЛЕКСАНДРОПОЛЯ В ТВОРЧЕСТВЕ АЛЕКСАНДРА СПЕНДИАРЯНА

*Арутюнян А. А.*

**Ключевые слова:** *Ал. Спендиарян, народная песня, ашугская песня, устная традиция, интерпретация, вариант.*

В своих выступлениях и публикациях, а также в своих исканиях Ал. Спендиарян придал особое и исключительное значение восприятию и познанию сути армянских народных песен. Но для творческого освоения и значительного достижения для композитора стала сфера народно-профессиональной, в основном ашугской музыки.

В творческом поле зрения композитора в основном были исполнения городских народных песен, которые он переложил для фортепиано. Особо важным стало его знакомство с выдающимся Гумреци – Никогаесом Тиграняном. Именно благодаря ему Ал. Спендиарян досканально познакомился с ашугскими песнями и классическими инструментальными му-гамами Александрополя, которые сыграли важную роль в его творчестве.

## TRADITIONAL MUSIC OF ALEXANDRAPOL IN ALEXANDER SPENDIARYAN'S PIECE OF ART

*Harutyunyan H. H.*

**Key words:** *Al.Spendiaryan, folk song, ashough song, oral tradition, interpretation, variant.*

In his speeches and publications, as well as in his research, A. Spendiaryan gave a special and unique opportunity to the perception and recognition of the essence of Armenian folk songs, for him the field of creative mastery and achieving the best results was folk-professional music, mainly ashough music.

<sup>11</sup> Ժամանակակիցները Ա. Սպենդիարյանի մասին, Երևան, 1960, էջ 127:

The composer's creative sphere included performances of urban folk songs, which he rendered for the piano. His acquaintance with composer Nikoghayos Tigranyan (born in Gyumri) was of great importance. It was thanks to him that A. Spendiaryan gained access to the classical samples of Shirak ashough songs and instrumental mughams, which played a significant role in his work.

### Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Երնջակյան Լ., Հայ մուղամաթիստները և նրանց դերը Արևելյան երաժշտական մշակույթի զարգացման մեջ // Լրաբեր հասարակական գիտությունների, N 2, Երևան, 1982:
2. Մարյան Ա., Հայ քաղաքային ժողովրդական երգարվեստը. 19-20-րդ դարեր // Հայ ազգագրություն և բանահյուսություն, N 4, Երևան, 1973:
3. Ժամանակակիցները Ա.Սպենդիարյանի մասին, Երևան, 1960:
4. Հարությունյան Հ.Հ., Աշուղ Շերամը և Ալեքսանդրապոլի երաժշտական կյանքը // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», N. 10, Գյումրի, 2007:
5. Սպենդիարովա Մ., Ա.Սպենդիարով, Երևան, 1966:
6. Տիգրանյան Ն. , Հողվածներ, հուշեր, նամակներ, Երևան, 1981:
7. Атаян Р. Об изучении мугамов в Армении//в сб. Макомы, мугамы и современное композиторское творчество (межреспубликанская научно–теоретическая конференция). Ташкент.-1978.
8. Гумреци, Николай Фадеевич Тигранов и музыка Востока, с предисловиями Н.Я. Марра и композитора А. А. Спендиарова. Ленинград. -1927.
9. Тигранов Г.Г. А. Спендиаров. Ереван. -1957.
10. Спендиаров А. А. О восточном оркестре //в кн. Тигранов Г. Г. «А. Спендиаров». Ереван. -1957.
11. Худабашян К. Армянская музыка на пути от монодии к многоголосию. Ереван. -1978.

*Ընդունվել է՝ 15. 05. 2021*

*Գրախոսվել է՝ 07. 06. 2021*

*Հանձնվել է տպ.՝ 21. 06. 2021*

### Տեղեկություններ հեղինակի մասին

Հասմիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ՝ արվեստագիտության թեկնածու, դոցենտ,  
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի  
ավագ գիտաշխատող, էլ հասցե՝ hasmik.har@mail.ru

ՀՏԴ՝ 781.7

DOI: 10.52971/18294316-2021.1-156

Գ Ե Ղ ՈՒ Ն Ի Չ Թ Չ Յ Ա Ն Ի Ռ Ո Մ Ա Ն Մ Ն Ե Ր Ի Կ Ա Տ Ա Ր Ո Ղ Ա Կ Ա Ն  
ՈՐ ՈՇ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՁ

*Մերի Մկրտչյան*

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղ

**Բանալի բառեր՝** *ժանր, ռոմանս, վոկալ շարք, ոճական առանձնահատկություններ, նվագամաս, բարձրակետ, ձոն, մեղեդիական գիծ, քայլերգ:*

Գ.Չթյանի ստեղծագործության մեջ կարևոր տեղ են գրավում ռոմանսները: Կամերային վոկալ ժանրը ներկայացնող այդ ստեղծագործությունները կրում են կոմպոզիտորի ոճի ձևավորման և զարգացման օրինաչափություններն ու տիպական առանձնահատկությունները: Պահպանելով այդ ժանրին բնորոշ քնարական խորաթափանցությունն ու ձևի հակիրճությունը՝ ստեղծագործողը հասնում է ժամանակակից նորարարական և զգացմունքային բազմաշերտ ու հարուստ կերպարային դրսևորումների:

Հոդվածը նպատակ ունի ներկայացնելու Հ.Շիրազի խոսքերով գրված, Գ. Չթյանի ռոմանսների շարին վերաբերող կատարողական որոշ առանձնահատկություններ:

**Նախաբան.** Գ. Չթյանի ստեղծագործության մեջ կարևոր տեղ են գրավում ռոմանսները: Կարևոր այնքանով, որ կամերային վոկալ ժանրը ներկայացնող այդ ստեղծագործությունները կրում են կոմպոզիտորի ոճի ձևավորման և զարգացման օրինաչափություններն ու տիպական առանձնահատկությունները<sup>1</sup>: Բացի առանձին ռոմանսներից, կոմպոզիտորի գրչին են պատկանում թվով ինը վոկալ շարեր՝ գրված հայ պոետների խոսքերով: Հայ կամերային վոկալ երաժշտության հարուստ ավանդական հիմքերը, որոնք բյուրեղացել էին Կոմիտասի, Ալ.Սպենդիարյանի, Ռ.Մելիքյանի ստեղծա-

<sup>1</sup> **Аматуни С.Б.** Жизнь и творчество Гегуни Читчян. Ереван. -2003.

գործություններում, կոմպոզիտորին հնարավորություն են ընձեռում շարունակելու և զարգացնելու այդ ավանդույթները:

Հոդվածը նվիրված է Հ.Շիրազի խոսքերով գրված Գ.Չթյանի ռոմանսների շարի կատարողական որոշ առանձնահատկություններին<sup>2</sup>:

Շարը ներառում է հինգ ռոմանսներ («Մանուշակին», «Արարատ», «Կարոտ», «Իմ սուրբ հայրենիք», «Ասում են, թե»), որոնք դասավորված են հակադրության սկզբունքով, սակայն միավորված են գաղափարային և կերպարային բովանդակությամբ: Այս առումով կատարողի համար առաջնային են կոմպոզիցիայի հիմքում կոմպոզիտորի կողմից դրված գաղափարի հստակ ընկալումը և տեքստից կտրվելով՝ հնչյունային կազմակերպվածությամբ ունկնդրին այդ մտքի կամ զգացմունքի հաղորդումը: Շարի կենտրոնական ռոմանսները («Արարատ», «Իմ սուրբ հայրենիք») կրում են հիմնական գաղափարական բովանդակությունը:

«Արարատ» ռոմանսում մարմնավորված է ազգային ոգու, վեհության և հավերժ գոյության գաղափարը: Այն յուրօրինակ բավլադ է՝ հագեցված խորը, բայց զուսպ դրամատիզմով: «Իմ սուրբ հայրենիք» ռոմանսը հայրենիքին ձոնված վեհ ու վերամբարձ մի կոթող է, սրբազան երդում: Շարը բացող առաջին ռոմանսը («Մանուշակին») քնարական - դրամատիկական մանրակերտ է և իր տրամադրությամբ ու բնույթով կարծես կանխորոշում է շարի հիմնական բովանդակային զարգացումը: Այստեղ շատ զուսպ ու համեստ արտահայտչամիջոցներով տրված է հայրենիքի ու մարդու անբաժան կապի գաղափարը: «Կարոտ» ռոմանսը քնարական, սիրային նուրբ զգայական երանգներով մի փոքր լիցքաթափում է «Արարատ»-ից հետո կուտակված դրամատիզմը: Իսկ «Ասում են, թե...» ռոմանսը եզրափակում է շարը սիրային, դրամատիկական, կյանքի և մահվան խորը փիլիսոփայական մտորումների ու զգացողությունների ընդհանրացումով:

Այժմ անդրադառնանք այն միջոցներին և կատարողական հմտություններին, որոնք կարող են հնարավորինս արտահայտիչ և ներգործուն դարձնել ռոմանսների կատարումը՝ բացելով կոմպոզիտորի մտահղացումների տիպական բովանդակային բնութագրումները:

«Մանուշակին» ռոմանսը ձևի առումով հստակ ընկալելի է: Այն ներկայացնում է երկմաս ձև՝ երկու քառակուսի պարբերություններով, որոնք ընդմիջվում են չորս տակտ կազմող դաշնամուրային նվագամասով: Ռոմանսի այս ձևը բխում է բանաստեղծության կառուցվածքից, որտեղ պարբերության յուրաքանչյուր նախադասություն համապատասխանում է բանաստեղծական քառյակի երկու տողի, ամեն մի ֆրագում կա ութ վանկ:

Ամբողջ կառուցվածքը կարելի է ներկայացնել հետևյալ ձևով.

- Դաշնամուրային նախանվագ - 2 տակտ,
- Առաջին պարբերություն - 8 տակտ /4+4/ - 16 վանկ,
- Դաշնամուրային ինտերմեդիա - 4 տակտ,
- Երկրորդ պարբերություն - 8 տակտ /4+4/ - 16 վանկ,

<sup>2</sup> Читчан Г.О. Цикл романсов на слова Ов. Шираза. Ереван. -1956.

Ռոմանսում երկար ֆրազներ չկան, յուրաքանչյուր ֆրազը երկու տակտի սահմաններում է, ամեն մի վանկին համընկնում է մեկ, իսկ ֆրազի վերջում՝ երկու հնչյուն: Այսինքն՝ կատարողից պահանջվում է *detache* և *legato* շտրիխների հստակ համադրում:

Ինտոնացիայի առումով որոշակի բարդությունները պայմանավորված են լադային փոփոխակի դարձվածքների առկայությամբ: *e* փուլգիական լադը խրոմատիզացվում է *fis*-ով և *ais*-ով:

*mf*

Քա-մին ա - սաց      մա-նու-շա-կին՝      եկ ծովտա-նեն      քեզ այս-տե-ղից .  
 Фи - ал - ке - влруг      ве - тер шеп - нул:...      кмо - рю те - бя      я у - не - су

Հաճախ ֆրազի վերջում հանդես է գալիս լիդիական կվարտան կամ դրա շրջվածքը.

*mf*

Քա - մին ա - սաց      մա - նու - շա - կին՝  
 Фи - ал - ке влруг      ве - тер шеп - нул:...

ծա - դիկն ա - սաց      ես կր - մեռ-նեն.  
 О, нет, мо - лю,      не тронь - ме - ня.

Մեղեդիական այս դարձվածքների ինտոնացիոն մաքրությանը պետք է առանձնակի հետևել և հղկել լադային խրոմատիզմի տարրեր պարունակող ձայնավարժություններով: Ռոմանսում չկան դինամիկայի սուր հակադրություններ: Հիմնական ուժգնությունը *mf*-ն է, իսկ բարձրակետերում դրան պետք է հասնել *crescendo*-ի միջոցով:

Հատուկ ուշադրության է արժանի ֆրազի ծավալման ընթացքում դինամիկայի այն նրբությունը, երբ *ais* – *e* եռատոն վերընթաց թռիչքը պետք է սկսել *p* (մեղմ) և դրան հաջորդող աստիճանական ներքընթաց քայլերին համընթաց՝ ուժեղացնել հնչողությունը (*crescendo*), իսկ վերընթաց շարժման ժամանակ՝ նվազեցնել այն:

ծա - դիկն ա - սաց      ես կր - մեռ-նեն.  
 О, нет, мо - лю,      не тронь - ме - ня.

Ռոմանսում առկա խորը փիլիսոփայական ուժով հագեցված զուսպ ողբերգականության ալիքը իր բարձրակետին է հասնում ձևի 2-րդ պարբերության 1-4 տակտերում:

Դրան նախորդում է դաշնամուրային նվագամասը, որի դերը այս հատվածում կարևորվում է նրանով, որ այն դառնում է արագ զարգացող գործողության «գլխավոր դերակատարը» և նախապատրաստում բարձրակետը:

Չը-հա-վա-տաց կար - ծես քա - մին ու շա-րա-ցավ պո - կեց ծաղ-կին  
 Но не по - ве - рит ве - тер зной, вгне - ве сор-вал сво - ей ры - кой

Ընդհանրացնելով նշենք, որ այս ռոմանսի կատարման համար հզոր ձայնի անհրաժեշտություն չկա: Կատարողի զգացմունքայնության աստիճանը ցանկալի է պահել «համեստության» և զսպվածության սահմաններում:

Այս ռոմանսի հետ կերպարային և զգացմունքային առումով որոշակի ընդհանրություն ունի շարք եզրափակող «Ասում են, թե...» ռոմանսը: Բանաստեղծական տեքստը քառակուսի կառուցվածք ունեցող ութնյակ է, յուրաքանչյուր տողում՝ 8 վանկ: Կոմպոզիտորի մտահղացմամբ՝ այդ քառակուսիությունը հաղթահարվում է մետրոռիթմական տարբերակումներով, փոփոխական տակտերով (5/8–6/8, 9/8–6/8), արագության հաճախակի փոփոխություններով: Այս միջոցները միջանցիկ զարգացման հնարավորություն են ստեղծում, որի ընթացքում բալլադին բնորոշ դեկլամացիոն ինտոնացիաների պարբերականությունը հաղթահարվում է: Անընդմեջ զարգացումը ապահովելու համար կատարողը պետք է տիրապետի դինամիկ համադրությունների, ուժգնության և արագության հաճախակի փոփոխման, դրանց համատեղումների նրբություններին: Այս համադրումները շատ կարևոր են երաժշտական ձևում բարձրակետի հասնելու և գաղափարական, կերպարային բովանդակությունը առավել ցայտուն արտահայտելու իմաստով: Տվյալ հատվածում բարձրակետին նախորդող երեք տակտերից յուրաքանչյուրում կատարվում են ն՝ դինամիկայի, ն՝ արագության փոփոխություններ:

Բարձրակետը պետք է ընդգծել *ff* – ով, որին հաջորդում են *marcato* շտրիխով «վայրէջքը» և շարժման դադարը:

բայց թն նս էլ դարս զամ հո - դից, ինձ կրր - կնա - կի  
 И, ес - ли в мир вновь при - ду я вновь за - хо - чу я

*accel.* *f a tempo* *allargando*

*accel.* *a tempo* *allargando*

սահ կր լի - նի, թն շր տես - ննմ ին նա - զն - լի,  
 смерть при - нять, копь цвет - ком, лю - бовь мо - я,

*ff* *agitato*

Դաշնամուրային նվագամասը դինամիկ զարգացող գործողությունների «ինտենսիվ խթանիչ» է, հարուստ պոռթկուն, հախառն զգացմունքային թռիչքներով ու ջերմությամբ:

Գաղափարական, բովանդակային իմաստով շարի մեջ կենտրոնական, առանցքային դեր ու նշանակություն են ստանում «Արարատ» և «Իմ սուրբ հայրենիք» ռոմանսները: Մյուս ռոմանսներում ռոմանտիկական ոճին բնորոշ նուրբ դինամիկայով, հոգեբանական գույների բացառիկ հարստությամբ, ջերմությամբ ու երազկոտությամբ կերտված կերպարների աշխարհը այս ռոմանսներում կտրուկ փոփոխվում է: Այս դեպքում հայրենիքի և հայրենասիրության գաղափարը կերտված է երկու տարբեր, բայց ընդհանրություններ ներառող շրջանակներում: «Արարատ»-ը դինամիկական և պոռթկուն, միաժամանակ «հարցադրումներով» ավարտվող կերպարի արտահայտություն է: Իսկ «Իմ սուրբ հայրենիք» ռոմանսը հանդիսավոր և հուզական «հիմներգ» է, ձոն՝ հայրենիքին: Այս երկու ռոմանսներն «ընդմիջվում» են քնարական-սիրային, նուրբ ու երազկոտ բնույթի «Կարոտ» ռոմանսով, որի միջոցով շարում ապահովված է դասավորության հակադրության սկզբունքը:

«Արարատ» ռոմանսում կոմպոզիցիոն մտահղացումը իրագործելու համար կատարողը պետք է կենտրոնանա դինամիկ հակադրությունների բարդության հաղթահարման ուղղությամբ: Ըստ այդմ՝ ձայնի հզորությունը անհրաժեշտ է կիրառել հանդի-

սավորություն, ինչպես նաև բարձրակետային հատվածում *f* և *con brio* ստանալու համար, և ճիշտ հակառակ պարագայում, մասնավորապես՝ ֆրագի սկզբնական հատվածում, ձայնի ուժի նվազեցմամբ հասնել *p* կամ *mezza voce* հնչողության:

Ինչ զն - ղն - զիկ ևս սար իմ հայ - րն - նի  
 O, как пре - кра - сен А - ра - раг ты мой

Մի - րն, շատ պի - տի մը - նա, Ա - րա - րառ,  
 Дол - го́дь бу - дешь ты да - лек от ме - ня,

Ռոմանսի եզրափակիչ ֆրագը ներառում է ևս մեկ դաշնամուրային նվագամասի բարձրակետ, որը նախապատրաստվում է դաշնամուրային նվագամասի պոռթկուն վերընթաց պասսաժով և ավարտվում «գահավիժող» հնչյունային հորձանքով:

Ա - րա - րառ Ա - րա -  
 А - ра - раг А - ра -

րառ:  
 раг.

accelerando crescendo

Ռոմանսում առկա մեղեդային կազմավորումների քառակուսի կառուցվածքը և մետրառիթմական լուծումները ինչ-որ չափով ընդհանրություն ունեն քայլերգի հետ: Ռոմանսը քայլերգի ոճով կատարման բարդությամբ հաղթահարելու համար տրամաբանական քայլ է մեղեդիական գծին հաղորդել որոշակի շարժում և դինամիկ խաղ: Անշուշտ, այս առումով իր նպաստն է բերում նվագակցությունը՝ խթանելով այս խնդրի լուծմանը:

վերժ կեն - դա - նի: շա - յարս է սա-ռել, ճրոն դա-ռել վը-բայ,  
 как мой край род - ной. Мой взор на те - бе сты-нет как сне-жок,

«Իմ սուրբ հայրենիք» ռոմանսը վեհ ու հանդիսավոր կոթող է, նվիրում և երդում հայրենիքին: Օրհներգին բնորոշ երաժշտական հորինվածքի որոշ առանձնահատկություններ կրելով՝ այն միևնույն ժամանակ ստանում է նաև ռոմանսին բնորոշ զուսպ հուզական, պաթետիկ երանգավորում: Օրհներգին հատուկ քայլերգային ռիթմը այստեղ կարծես ենթադրվում է, սակայն ձևի ու մտածողության հնարամիտ լուծումներով հաղթահարվում է կառուցվածքների սիմետրիկ համաչափությունը, մասնավորապես՝ քառյակ – կրկներգ ձևը:

Ռոմանսն ունի երկմաս ձև՝ միջանցիկ զարգացումով /a – b c – a/: Ձևի բարձրակետը (վերնի ռեգիստրում ff հնչողությամբ) տեղակայված է երրորդ պարբերության սկզբում (c):

րոնն նմ շայ - րն - նիք, դու իմ սրբ - բա - զան  
 твой, край мой род - ной я на - ве - ки твой.

Ես սմ-բող - ջո - վին րոնն նմ հա - վիտ - յան  
 Так люб-лю те - бя, сын я вер - ный твой

Այստեղ նույնպես կատարողին անհրաժեշտ է կիրառել ձայնի հզորությունը, նաև պարզորոշ ընդգծել դինամիկ հակադրությունները: Դինամիկայի նրբերանգներից գատ՝ միննույն ժամանակ կարևոր է հստակ կատարել արագացումները (*accelerando*) և դանդաղեցումները (*ritardando*)՝ չխաթարելով հիմնական տեմպն ու հանդիսավորությունը (*Moderato maestoso*).

Ստեղծագործության կատարման համար անհրաժեշտ է *detache, non legato*, իսկ բարձրակետում նաև *marcato* շտրիխներին հմուտ տիրապետումը:

Ռոմանսը եզրափակվում է բարձրակետով՝ *f* հնչողությամբ 6/4 ձգվող տևողությամբ, որի ընթացքում ձայնի ուժն ու դինամիկան չպետք է նվազեցնել:

**Եզրահանգում.** Այսպիսով, ներկայացնելով Գ. Չթյանի ռոմանսների շարի կատարման որոշ առանձնահատկություններ, փորձել ենք բնորոշել և ընդգծել յուրաքանչյուր ռոմանսին հատուկ բովանդակային, կերպարային գծերը:

Նախ և առաջ անհրաժեշտ է խորանալ ոճական ուղղվածության և այդ ուղղությունը բնորոշող գլխավոր առանձնահատկությունների մեջ: Կարևոր է ընկալել կոմպոզիտորի ստեղծագործական ոճի յուրահատկությունները:

Շարք կազմող ռոմանսներին բնորոշ են ռոմանտիկական վոկալ-կամերային ժանրի կատարողական արվեստին հատուկ գծերը, որոնք, անշուշտ, բխում են այդ ուղղության կերպարային, բովանդակային շրջանակների բազմազանությունից: Մարդկային կյանքի ու մահվան, հոգեբանական նուրբ լարվածությունից մինչև դրամատիզմի հասնող զգացմունքայնությունը մեծ զսպվածության շրջանակներում է: Մրանով է պայմանավորված, որ որոշ ռոմանսներում դինամիկայի առավելագույն սահմանները չեն գերազանցում *mf* հնչողությունը: Դինամիկ հակադրությունները, որոնք առաջանում են միջանցիկ զարգացողական ձևերում, սրացված չեն և շատ զուսպ են:

Որոշ ռոմանսներում, որոնցում հայրենասիրական պոթյունն զգացմունքային հորձանքը նույնպես զսպվածության սանդղակում է, զարգացման ալիքը խարխլում է քառակուսի կառուցվածքներն ու բանաստեղծական քառյակային ձևերը: Որոշ դեպքերում իմաստային, կերպարային տիպականությունն ու խորությունն ընդգծելու նպատակով բանաստեղծական տեքստը որոշակի փոփոխվում է՝ վերածվելով «լիբրետոյի»:

Շատ կարևոր է հստակ պատկերացում կազմել ստեղծագործության ձևի և այն կազմող առանձին կառուցվածքների մասին: Տարանջատելով դրանց ձևակառուցողական դերն ու նշանակությունը՝ անհրաժեշտ է տարբերել կառուցվածքների էքսպոզիցիոն-ստատիկ, զարգացողական կամ ընդհանրացնող ռեպրիզային ֆունկցիաները: Այս առումով վերլուծել ենք ռոմանսներում ձևը կազմող առանձին տարրերը (ֆրագներ, նախադասություն, պարբերություն և այլն): Հատուկ նշել ենք բարձրակետերի նախապատրաստման և ձևի մեջ նրանց տեղակայման «դրամատուրգիական» նշանակությունը:

Պետք է հաշվի առնել, որ վոկալ ստեղծագործության կատարումը ներառում է երեք բաղադրամասեր, որոնցից յուրաքանչյուրի կատարելությամբ է պայմանավորված կոմպոզիցիայի մտահղացման գեղարվեստական փոխանցումն ունկնդրին: Պոետի *բանաստեղծական մտահղացումն* ու ընդհանուրից որևէ կերպարային ձևավորումը *հնչյունավորել*, նվազակցության և մենակատարի միջոցով *փոխանցել* ունկնդրին:

Այսինքն՝ ստեղծագործության գեղարվեստական արժեքը կախված է *պոետ – կոմպոզիտոր– կատարող* եռյակի գաղափարական արժեհամակարգային ընդհանրական դրսևորումներից:

Վոկալ արվեստը ներառում է կատարողական ձևերի և մեթոդների լայն շրջանակ<sup>3</sup>: Այստեղ փորձել ենք շարադրել վերոհիշյալ ռոմանսների կատարողական մեկնաբանումներին առնչվող որոշակի ձևեր ու մեթոդներ, որոնք հեղինակի մեջ ձևավորվել են մանկավարժական և կատարողական փորձառության արդյունքում և կարող են կիրառվել գործնականում<sup>4</sup>:

Կատարողական հնարները, ձայնային ներկայանակը, գեղարվեստական արտահայտչամիջոցները անսահման են: Ամեն մի ստեղծագործություն կատարողից պահանջում է անհրաժեշտ այն միջոցները, որոնք անհատական են և հնարավոր են դարձնում լիովին բացահայտել մտահղացման գաղափարը: Կատարման համար պատրաստի բաղադրատոմսեր և կաղապարներ չկան և չեն կարող լինել: Կատարման համապատասխան ձևերն ու մեթոդները ծնվում են ստեղծագործության վրա աշխատելու ստեղծագործական մոտեցումների արդյունքում:

## О НЕКОТОРЫХ ВОПРОСАХ ИСПОЛНЕНИЯ РОМАНСОВ ГЕГУНИ ЧИТЧЯНА

*Մկրտչյան Մ. Գ.*

**Ключевые слова:** романс, жанр, вокальный цикл, стилевые особенности, партия, кульминация, ода, мелодичная линия, марш.

Романсы Гегуни Читчяна - продолжение и развитие богатых традиций армянской камерной вокальной музыки. Они украшают репертуар многих исполнителей. По словам Шираза, серия романсов, состоящая из пяти романсов, требует от исполнителя профессиональных навыков, которые направлены на раскрытие их идейно-образного содержания, обусловленного общим размахом замысла композитора. Вокальное исполнительское искусство включает в себя широкий спектр исполнительских приемов. Здесь представлены некоторые специфические приемы исполнения исполнительских интерпретаций вышеупомянутых романсов. Они могут быть практически использованы в исполнительской и педагогической практике.

<sup>3</sup> Musical performance. Collection of articles. M. Music. -1979.

<sup>4</sup> Нежданова А.В. Материалы и исследования. Москва. -1967.

ABOUT SOME PERFORMING PROBLEMS OF  
GEGHUNI CHTCHYAN'S ROMANS

*Mkrtchyan M.H.*

**Keywords:** *romance, genre, vocal cycle, style features, part, culmination, melodic line, march.*

Geghuni Chtchyan's romances are the continuation and development of the rich traditions of Armenian chamber vocal music. They adorn the repertoire of many performers. The series of romances- consisting of five romances, written by H. Shiraz' lyrics, requires professional skills from the performer, which are aimed at revealing their ideological-figurative, conditioned by the general scope of the composer's idea. The art of vocal performance includes a wide range of performance techniques. Here are some suggestions for the methods and forms of such Romans' performance. They can be used in performing and pedagogical practice.

Գ ր ա կ ա ն ո լ թ յ ո ն

1. Амагуни С.Б. Жизнь и творчество Гегуни Читчян. Ереван. -2003.
2. Читчян Г.О. Цикл романсов на слова Ов. Ширази. Ереван. -1956.
3. Нежданова А.В. Материалы и исследования. Москва. -1967.
4. Musical performance. Collection of articles. M., -1979.

*Ընդունվել է՝ 05. 02. 2021*

*Գրախոսվել է՝ 19. 03. 2021*

*Հանձնվել է տպ.՝ 21. 06. 2021*

**Տեղեկություններ հեղինակի մասին**

**Մերի ՄԿՐՏՉՅԱՆ՝** Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի  
Գյումրու մասնաճյուղի դասախոս, էլ. հասցե՝ marymkrtchyan77@gmail.com

ՀՏԴ՝ 391

DOI: 10.52971/18294316-2021.1-166

## ԱԶԳԱՅԻՆ ՀԱԳՈՒՍՏԻ ԻՆՔՆԱՏԻՊ ԴԻՄԱԳԻԾԸ

### *Տարթևիկ Հարթենյան*

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Գյումրու մասնաճյուղ

**Բանալի բառեր՝** *հայկական տարազ, զգեստ, խույր, կարմիր գույն, զարդ, մետաքս, պատմուճակ, ասեղնագործ, թագադիր ասպետություն:*

Հրապարակման մեջ դիտարկվում է ազգային հագուստի տեղը հայ ժողովրդի մշակույթի գանձարանում: Այն իր ամբողջ հարստությամբ, ոճա-յին առանձնահատկությամբ ու գեղագարդմամբ (ասեղնագործություն, ժա-նեկագործություն, ոսկերչություն և այլն) հազվագյուտ ճյուղերից է, որն ար-տացուցում է ազգի բնավորությունը, կենցաղը, ապրելակերպը, հազարամ-յակների ընթացքում ձևավորված նրա գեղարվեստական ճաշակը: Ազգա-յին տարազը թույլ է տալիս պատկերացում կազմել տվյալ ժողովրդի ապ-րած տարածքի, բնակլիմայական պայմանների ու բազմաթիվ այլ հարցերի վերաբերյալ: Առանց ազգային տարազի ուսումնասիրության՝ անկարելի է գաղափար կազմել ազգի անցյալի, նրա կենցաղավարության, սոցիալա-կան շերտավորման, ազգային բնավորության ու սովորությունների մասին:

Դիտարկել ենք հագուստի ստեղծման մեջ կիրառված հումքի, գույ-նի, զարդարանքի առանձնահատկությունները: Պատահական չէ, որ ազ-գային տարազը վաղուց գրավել է բազմաթիվ ուսումնասիրողների ուշադ-րությունը, և տարբեր ժամանակներում գրվել ու հրապարակվել են հայկա-կան ազգային տարազին վերաբերող աշխատություններ:

**Նախաբան.** Հայերենում «տարազ» բառը բարբառային ձև է, որը նշանակում է «համաձև հագուստ»: Թեև տարազը ոսկերչարյան լեզվի մեջ տարբեր իմաստներ ունի<sup>1</sup>, սակայն, նկատի ունենալով բառի պարսկական ծագումն ու նույն լեզվի մեջ ունեցած հանդերձի, ձևի և կերպի նշանակությունը, հավանական է, որ հայերենում ևս նույն ի-

<sup>1</sup> Սբ Ղազար., «Նորին մեկնություն Ջաբարիա», Վենետիկ, 1855, էջ 1-5:

մաստն է ունեցել: Դասական լեզուն ունի նաև այլ անվանումներ: «Զգեստ» բառը ծագել է «զգենուլ» բայից /հագնել, հագնվել/, որ հագուստի հավաքական իմաստով է ներկայացվել և գործածվել է ռամիկ կանանց, թագավորի և քահանայի համար որպես հագուստ՝ առանց դասակարգային և սեռի տարբերակման:

Զգեստի բոլոր մասերի պատրաստումը մեկ արհեստավորի գործ չէր, այլ տարբեր ճարտարների, կտավագործների աշխատանք: Խույրերը, արտախուրակները, վակասները (ծիսական կանգուն օձիքներ) և բազպանները պատրաստվել են ատլասից, թավիշից և մետաքսյա միագույն այլ գործվածքներից: Գույնը գերազանցապես կարմիրն է, հանդիպում է նաև մանուշակագույն, մուգ կապույտ: Սև գույն քիչ է հանդիպում: Վակասները նույնպես ձևավորվում են մետաքսյա գործվածքով՝ ատլասով և թավիշով<sup>2</sup>:

Երբ մարդն իր համար սեփական ձեռքերով է հագուստ պատրաստել, մորթել է որևէ կենդանի, հանել մորթին, չորացրել, ապա կրել: Մակայն երբ զգեստը նրբացավ, բարդացավ, և այն պատրաստելը դժվարացավ, առաջ եկան արհեստավորներ: Եսայու թարգմանության մեջ հանդիպում է «տարագագործ» բառը: Կտավագործ, բեհեզ, շինողաց և ճարտարներին, այսինքն՝ հագուստ պատրաստողների գաղափարը կա նաև Հովհաննես Ոսկեբերանի թարգմանությունների մեջ<sup>3</sup>:

Մեծ ջանքեր էր պահանջում նաև կոշիկի պատրաստումը, դրանք ստեղծողները կոչվում էին կոշկակարներ<sup>4</sup>: Մաշված և պատռված կոշիկները տալիս էին նորոգման: Այս գործը սովորական կոշկակարը չէր կատարում, այլ առանձին մարդիկ, ինչպես այժմ: Ոսկեբերանի թարգմանության մեջ հանդիպում ենք «խտաւանդիչ կարկատիչ» հոմանիշ գույգ անունների, որոնք տրվում էին կոշիկ նորոգողներին<sup>5</sup>:

Գործածված հագուստները պետք էր լվանալ և հղկել: Այս գործը կատարում էին թե՛ տանը, թե՛ դրսում հատուկ մարդիկ, որոնց անվանում էին «թափիչք»-վագող: Անի քաղաքի գործվածքները, որոնք պահվում են ՀՊՊ թանգարանում, բացառիկ նշանակություն ունեն: Այդ պատահիկների մեջ հանդիպում են մետաքսյա մի քանի տեսակի ճերմակ կտորներ՝ գործված բարձր վարպետությամբ, հասարակ կտավ, սև գույնի նրբագույն շղարշ, որի վրա ոսկեթելով ասեղնագործված են գազանների պատկերներ: Մանկական հագուստները կարված են մետաքսյա գործվածքից, իսկ գլխաշորի տակի ճերմակ կտորը, որի վրա կարմիր մետաքսաթելով ասեղնագործություն է կատարված, իր վրա ունի նույն գույնի նախշեր՝ բանված հենց գործելու ընթացքում:

Արքունիքն իր ծառայության և հանդերձատան մեջ բազմաթիվ պաշտոնյաներ ուներ, որոնցից վերջին Սուրբ Գրոց թարգմանիչներն անվանում էին «պատմուճակ», կիրառվում էր նաև «հանդերձասրահ» ձևը<sup>6</sup>: Բարձր էր հանդերձասրահի դերը. նա էր

<sup>2</sup> Դավթյան Մ., Դրվագներ հայկական միջնադարյան կիրառական արվեստի պատմության», ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1981, էջ 17-29:

<sup>3</sup> Հաճախապատման ճառ, 5-րդ դար, Վենետիկ, 1838, էջ 40:

<sup>4</sup> Նորին մեկնություն Մաթևոսի, թարգմանություն, 5-րդ դար, Վենետիկ, 1826:

<sup>5</sup> Գոշ Մ., Ճառեր, հեքիաթներ, առակներ, Վաղարշապատ, 1880:

<sup>6</sup> Հացունի Վ., Պատմություն հին հայ տարագին, Վենետիկ, Սբ Ղազար, 1923, էջ 9:

թագավորին արժանավայել ներկայացնում՝ ինամբով պահպանելով թանկարժեք հանդերձները:

Խորենացին Վաղարշակի մասին պատմելիս խոսում է նաև նրանցից. «Յիշեալը կը կարգէ զգեցուցանողս իւր զձեռն» (իւր ձեռքի տակ ապրող սպասավորներին), որոնց պատմիչը անվանում է «Գինթունիս»: Հավանաբար Խորենացին նկատի ունի գինդ արմատը՝ իբրև օղերը պահող: Օղերը ևս հագուստի մաս էին կազմում<sup>7</sup>:

Արշակունիների ժամանակաշրջանում բարձր պաշտոն էր զբաղեցնում թագադիր Բագրատունի իշխանը. նա նորընտիր թագավորի գլխին թագ էր դնում: Նա հանդես էր գալիս «իւր սեփական տարագով»<sup>8</sup>:

Ն. Մառը Անիի իշխանական դամբարանից հանել էր մետաքսյա պատմուճաններ՝ կենդանակերպ նրբահյուս գործվածքով: Արիստակեսը պատմում է, թե Բագրատունիների օրոք հայ իշխանները «կը նստէին համախումբ, զգարնանաբեր ծաղկանոցաց բերեալ զնմանութիւն, վառ ի վառ գունովք առաջի կացեալք»<sup>9</sup>:

Ռուբինյանների ժամանակաշրջանում «թագադիր» էր կոչվում այն պաշտոնյան, որ արքունի հանդիսավոր զգեստավորման պահին թագավորի գլխին թագ էր դնում: Մակայն թագավորի օժման պահին «թագադիրն թագաւ» կանգնում էր, բայց թագը դնում էր եպիսկոպոսը:<sup>10</sup>

Թագավորների կողմից հագուստներ նվիրելու սովորությունը հայտնի է Հռոմում, Պարսկաստանում և Հայաստանում: Այն կատարվում էր խնջույքի պահին, իսկ եթե պարզևառուն հեռու էր, ուղարկվում էր խնջույքից հետո: Այսպես՝ պարսից Շապուհ արքան հայոց Զարմանդուխտ թագուհուն ուղարկում է թագ ու պատմուճան, Արշակ և Վաղարշակ արքայորդիներին՝ թագեր և զգեստներ<sup>11</sup>: Հազկերտը «զպատուական հանդերձն» է ուղարկում մարզպան Վասակին, որով էլ նա գնում է Պարսից Դուռը: Նույն արքայի հրամանով հայ նախարարներին նվիրում են նոր հագուստներ, որով էլ նրանք մասնակցում են կեղծ ուրացության առիթով կազմակերպված խնջույքին<sup>12</sup>:

Նույն սովորությունները կային նաև Հայաստանում: Պաս արքան իշխանների պատվին կազմակերպված խնջույքի ժամանակ հրամայում է «տանել և պատմուճան հազցնել Դղակ մարզպետին հանդերձատան մեջ»<sup>13</sup>: Ազաթանգեղոսը նույն սովորության մասին է պատմում այլաբանորեն, թե լսել է Քրիստոսի մասին, որ նա ճաշի է հրավիրում հավատացյալներին և ինքը մեջտեղում նստելով, պարզևատու է լինում իրենց արժեքների համար: Ահա թե որքան մեծ էր հագուստի դերը<sup>14</sup>:

<sup>7</sup> Բուզանդ Փ., Հայոց պատմություն, 4-րդ դար, Վենետիկ, 1832, էջ 204-205:

<sup>8</sup> Ալիշան Ղ., Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 485:

<sup>9</sup> Մառ Ն., Անիի պալատական եկեղեցու նկարագրություն, Մանկտ-Պետերբուրգ, 1916:

<sup>10</sup> Գանձակեցի Կ., 13-րդ դարի պատմություն, Վենետիկ, 1865, էջ 157:

<sup>11</sup> Եղիշե, Մատենագրություն 5-րդ դար, Վենետիկ, 1859, էջ 106:

<sup>12</sup> Փարպեցի Ղ., Պատմություն հայոց, 5-րդ դար, Վենետիկ, 1873, էջ 154:

<sup>13</sup> Բուզանդ Փ., Պատմություն հայոց, 4-րդ դար, Վենետիկ, 1832, էջ 204:

<sup>14</sup> Ազաթանգեղոս, Պատմություն, 4-5-րդ դարեր, Վենետիկ, 1862, էջ 424-425:

**Ձարդը** հագուստի անբաժան մասն էր: Ունենալով ձևի իմաստ, նշանակում է նաև կարգ և աշխարհ (կոսմոս) հունական ոճով, որ թարգմանությունների և հունաբան դպրոցի միջոցով լրիվ տեղայնացված էր: Բավական է հիշել մեր գրականության մեջ հանդիպող այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են՝ «Երկինք և երկիր, և ամենայն զարդ երկնից», «գաստեղս և ամենայն զարդ երկնից», «Հայկին հանդերձ և ամենայն զարդուց երկնից» և այլն: Հասկանալի է, որ զարդ բառը այստեղ չի կարելի սուկ պաճուճանք հասկանալ, այլ առաջին հերթին՝ ձև, կարգ<sup>15</sup>:

14-րդ դարի մանրանկարիչ Սարգիս Պիծակը ավետարանական ֆիգուրատիվ պատկերներն ընկալում էր իբրև «տնօրինական զարդ»: Դա ցույց է տալիս մի կողմից՝ նկար և զարդ, մյուս կողմից՝ *զարդ* և *կարգ* ըմբռնումների միասնությունը: «Ձարդ» բառը Պիծակն անշուշտ գործածում է իբրև *պատկեր* բառի հոմանիշ: Բայց այն իր հետ բերում է որոշակի երանգներ, որոնք թաքնված են այդ բառի կազմության մեջ և որոնք զուգորդվում են զարդ-պատկերի այնպիսի ըմբռնմանը, որ տարածված էր ամբողջ Արևմուտքում, մասամբ՝ բյուզանդական աշխարհում: Ըստ Հայկազյան բառարանի՝ զարդի առաջին իմաստը վայելուչ հորինվածքն է՝ աչքի համար գրավիչ, նաև՝ պաճուճանք, զարդարանք: Բայց *զարդ* բառի արմատը «արդ»-ն է: Չանագանվելով «արդ» բառից՝ զարդը չի կորցրել սեմանտիկ արժեքը, որ նշանակում է ձև, կարգավորություն (կարգ): *Արդ* բառի բացատրությունը Նոր Հայկազյան բառարանում հետևյալն է՝ հարդարումն, զարդ, հարթություն, ձև, հորինված, կազմություն, արդակ, կարգավորություն: Հայտնի են *արդ* և *զարդ* բառերի միասնական գործածություններ, որ վերցրել ենք նույն բառարանից. «*Ի զարդ, և ի յարդ* - ի պէսպէս կերպարանս և ի զարդս և ի յարդս: *Արդս և զարդս* - Արարչի այն գործն է՝ զբնութիւն առնել, և ոչ միայն արդս և զարդս: *Արդուց և զարդուց* - Ոչ միայն արդուց և զարդուց արարիչ է, այլ յոչնչէ առնել բաւական»<sup>16</sup>:

Քանի որ Սարգիս Պիծակը համարում է զարդ, իսկ վերջինս ինքնին կարգավորված է, ապա նրա համար ոչ թե որևէ պերսոնաժի գլխի և մարմնի համամասներն էին դառնում էական, այլ ամբողջ պատկերատարածքը, երբ մարդկային ֆիգուրները, առարկաները, նախշաձևերը շրջանակի կամ տեքստի հետ դառնում էին միմյանց զուգակշռող գունաձևային միություններ: Դա համապատասխանում էր «նկար-զարդ» պատկերավորման ըմբռնմանը:

*Ձարդ* (նույնն է՝ արդ) բառը, ինչպես ցույց տրվեց, ունի նաև ձևի իմաստ: «Ձևը մաքուր լույսն է» լատինական միջնադարի արտահայտությունը խորթ չէր հնչում նաև միջնադարյան Հայաստանում:

Ազգային տարազի զարգացումը պայմանավորված էր նաև համապատասխան բարձրորակ հյուսվածքների առկայությամբ, որը հնարավորություն էր ընձեռում ստեղծելու տարբեր տեսակի հագուստներ<sup>17</sup>: Այդ տեսակետից Հայաստանում պայմանները միանգամայն բարենպաստ էին: Նուրբ բուրդ ունեցող ոչխարի բուծումը, բամբակագործությունն ու մետաքսի մշակումը նպաստում էին բարձրորակ հյուսվածքների, հետևա-

<sup>15</sup> Ղազարյան Վ., Սարգիս Պիծակ, ՀՄՄՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1980, էջ 14:

<sup>16</sup> Եզնիկի ոսկեդեմիկ լեզվից վերցրած այս արտահայտությունները շատ են պերճախոս (հեղ.):

<sup>17</sup> Պատրիկ Ա., Հայ ազգային տարազ, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1983, էջ 12:

պես և տարբեր ոճի գործվածքների ստեղծմանը: Այդ գործում իր մեծ դերակատարությունն ունենին ներկերի մեծ տեսականին և ճիշտ ընտրությունը, որից առանձնանում է մեր անգուգական, հայկական որդան կարմիրը: Հայաստանը հարուստ էր նաև բուսական և հանքային ծագում ունեցող ներկանյութերով: Ներկեր էին ստանում տարբեր բույսերից, ծաղիկներից ու արմատներից, տարածված էին տորոնի արմատներից ստացվող ներկեր և այլ ներկանյութեր:

Շատ բնակավայրերում կային հյուսվածքի բազմաթիվ վարպետներ, ովքեր կարողանում էին ոչ միայն բավարարել ներքին շուկայի պահանջները, այլև վաճառքի նպատակով արտասահման, այդ թվում՝ եվրոպական երկրներ ուղարկել մեծ քանակությամբ կտորեղեն, հատկապես՝ բամբակե հյուսվածքներ, ոսկեթել ձուլ դիպակներ, շալկտոր և այլն: Առանձնապես հայտնի էր Թոխաթում արտադրվող կտորատեսակը, որը եվրոպական երկրներում համարվում էր «արևելյան կերպաս»: Հնագույն ժամանակներից հայ վաճառականները կտորեղեն էին բերում Ասորեստանից, Բաբելոնից, Իրանից, Հնդկաստանից, Չինաստանից՝ հանրահայտ «Մետաքսի ճանապարհով»: 18-րդ դարից Հայաստան էր ներմուծվում նաև Ռուսաստանի քաղաքներում գործված կտորեղենը:

Տարազի ստեղծման գործում մեծ էր հայ կնոջ դերը: Դեռ մանուկ հասակից նա ավագներից սովորում էր բուրդ գգելու և թել մանելու արհեստը: Հայ կնոջ ճաշակին ու մեծ աշխատասիրությանն ենք պարտական կիրառական արվեստի գլուխգործոցների՝ կարպետի, գորգի, ասեղնագործության ստեղծման համար, որոնցում պահպանվել են ազգային ոճի բոլոր առանձնահատկությունները՝ զարդանախշի արվեստ, գունային սքանչելի համադրություն, չկրկնելու վարպետություն: Կիրառական արվեստի բնագավառում հայ կնոջ ձեռքով ստեղծված անկրկնելի նմուշները մինչև այժմ զարմացնում ու հիացնում են թե՛ մեզ և թե՛ օտարներին: Հայկական ազգային տարազի անբաժան մաս են կազմում ոսկե և արծաթե զարդերը, ձեռագործ իրերը, քսակները և այլն:

Ինչպես ամենուրեք, այնպես էլ Հայաստանում, տարազներն ստեղծվում էին զանազան խավերի համար: Հաշվի էին առնվում կլիմայական առանձնահատկությունները: Մեծ տարբերություն կար շինականների, աշխատավոր մարդկանց և հարուստ վերնախավի տարազների միջև: Հագուստների որակը մեծապես կախված էր հագնողների սոցիալական վիճակից: Ունևոր խավի տարազն իր հարստությամբ ու շքեղությամբ բավական տարբերվում էր աշխատավոր մարդկանց տարազից: Մեծ տարբերություն կար նաև իշխանների, զինվորականների և հոգևորականների հագուստների միջև: Չպետք է մոռանալ նաև տարիքային գործոնը. անչափահաս տղաների ու աղջիկների համար կարվում էին այլ տիպի զգեստներ: Ինչ վերաբերում է ժողովրդական լայն զանգվածներին, նրանք, զուրկ լինելով ընտրության հնարավորությունից, բոլոր օրերին հագնում էին այն, ինչ կարողանում էին ձեռք բերել: Ազգային տարազի մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ամեն մի նահանգ առանձնանում էր մյուսներից տարազի ինքնատիպ գեղագարդամբ ու գուներանգային յուրահատուկ համադրություններով՝ միևնույն ժամանակ ստեղծելով պատմագագազրական համայնապատկերի ամբողջ բազմազանությունը:

Հայ ժողովրդի ազգային հագուստի պատմությունը գալիս է դարերի խորքից: Չնայած այն բանին, որ պետականությունը կորցնելուց հետո Հայաստանը՝ որպես երկիր, դարեր շարունակ մասնատված վիճակում գտնվել է տարբեր պետությունների կազմում, իսկ հայերի մի մասը հարկադրված է եղել հեռանալ մայր հայրենիքից, այնուամենայնիվ հայկական շատ տարածքներ անաղարտ են մնացել և պահպանել են ինքնատիպությունն ու ազգային գծերը: Ինչպես գիտենք, մեծ են նաև հայ ժողովրդի կորուստները: Մեծ եղեռնին և հաջորդող տարիներին ոչնչացվել են կիրառական արվեստի բազմաթիվ նմուշներ, այդ թվում՝ տարազ: Այնուամենայնիվ, ժողովուրդը կարողացել է փրկել հագուստների որոշ տեսակներ և որպես սրբացված նմուշներ՝ պահպանել կամ հանձնել թանգարաններին:

Հայաստանի պատմության թանգարանում տարազի ամենահին նմուշները Անիի պեղումների ժամանակ ակադեմիկոս Նիկողայոս Մառի հայտնաբերած՝ ազնվատոհմ աղջկա մետաքսե հագուստներն են: Նույն դամբարանից հայտնաբերվել են նաև կտորեղենի պատառիկներ, որոնց վրա կան գեղեցիկ ոսկեթել շղթայակար ասեղնագործություններ: Ոսկեթել ասեղնագործության արհեստանոցներ կային Ալեքսանդրապոլում, Ախալցխայում, Թիֆլիսում, այնտեղ էին կարվում նաև բարձրորակ տարածքներ, որոնք ցուցադրվում էին միջազգային ցուցահանդեսներում և արժանանում բարձր գնահատանքի:

*Եզրահանգում.* Ազգային հագուստը՝ հայկական տարազը, մեր ժողովրդի մտածողության արտացոլանքն է: Այն ոչ միայն արտահայտել է մեր ինքնությունը, այլև եղել է այդ ինքնությունը պահպանող ազդակներից մեկը՝ ունենալով դարավոր պատմություն և լինելով նույնքան հարուստ ու բազմազան, ինչքան մեր բազմաբարբառ լեզուն է: Հայկական տարազն ունի մի շարք առանձնահատկություններ: Այն տարբերվում է ուրույն նկարագրով ու նշանակությամբ՝ հայ ժողովրդի պատմության որոշակի ժամանակահատվածներում: Նրա առանձնահատկությունների մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ամեն մի նահանգ առանձնանում էր մյուսներից տարազի ինքնատիպ գեղազարդմամբ ու գուներանգային յուրահատուկ համադրություններով՝ մինևույն ժամանակ ստեղծելով պատմաազգագրական համայնապատկերի ամբողջ բազմազանությունը:

20-րդ դարի 50-ական թվականներից ազգային տարազի կրողներ մնացին գերազանցապես Արցախի և Զանգեզուրի բնակիչները, մինչդեռ երկրի մյուս տարածքներում ազգային տարածքները դարձան թանգարանային նմուշներ:

## САМОБЫТНЫЙ ОБЛИК НАЦИОНАЛЬНОЙ ОДЕЖДЫ

*Артемян Т. К.*

**Ключевые слова:** *армянский костюм, платье, шляпа, красный цвет, ювелирные изделия, шелк, халат, вышиванка, коронованное рыцарство.*

Национальная одежда, армянский костюм, является отражением мышления нашего народа. Это не только выражало нашу идентичность, но и было одним из сигналов, которые

сохранили эту идентичность, имея многовековую историю, будучи таким же богатым и разнообразным, как и наш **многоязычный** язык. Армянский костюм имеет ряд особенностей. Он отличается уникальным описанием и значимостью в определённый период истории армянского народа. Детальное изучение его особенностей показывает, что каждое государство выделялось из других своим уникальным костюмным убранством и уникальными цветовыми сочетаниями, одновременно создавая все разнообразие историко-этнографической панорамы. С 50-х годов XX века национальные костюмы носили только жители Арцаха и Зангезура, а остальные стали музейными экспонатами.

## THE UNIQUE FEATURE OF NATIONAL CLOTHING

*Hartenyan T. K.*

**Key words:** *Armenian costume, dress, hat, red colour, jewelry, silk, gown, embroiderer, crowned chivalry.*

The national garment, the Armenian costume, is a reflection of our people's thinking. It not only expressed our identity, but was one of the signals that preserved that identity, having a centuries-old history, being as rich and diverse as our multilingual language. The Armenian costume has a number of features. It differs by its unique description and significance in a certain period of the history of the Armenian people. A detailed study of its features shows that each state stood out from the others with its unique costume decoration and specific color combinations, at the same time creating the whole diversity of the historical-ethnographic panorama. From the 50s of the 20th century, only the residents of Artsakh and Zangezur wore national costumes, and the rest became museum pieces.

### Գրականություն

1. Ազաթանգեղոս, Պատմություն 4-5-րդ դարեր, Վենետիկ, 1862:
2. Ալիշան Ղ., Մխուան, Վենետիկ, 1885:
3. Աղայան Է., Բազմավաստակ, մեծ գիտնականը (Նիկողայոս Մառի ծննդյան 100-ամյակը) // «Գրական թերթ», N-2, 1965:
4. Բուզանդ Փ., Հայոց պատմություն 4-րդ դար, Վենետիկ, 1832:
5. Կ. Գանձակեցի, «13-րդ դարի պատմություն», Վենետիկ, 1865:
6. Գոշ Մ., Ճառեր, հեքիաթներ, առակներ, Վաղարշապատ, 1880:
7. Գրիգորյան Ֆ., Հայկական ազգային տարագ, Երևան, 2011:
8. Դավթյան Ս., Հայկական ասեղնագործություն, Երևան, 1972:
9. Դավթյան Ս., Դրվագներ հայկական միջնադարյան կիրառական արվեստի պատմության, ՀՄՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1981:
10. Եղիշե, Մատենագրություն 5-րդ դար, Վենետիկ, 1859:
11. Հացունի Վ., Պատմութիւն հին հայ տարազին, Վենետիկ, Սբ Ղազար, 1923:
12. Մառ Ն., Անիի պալատական եկեղեցու նկարագրություն, Սանկտ-Պետերբուրգ, 1916:
13. Պատրիկ Ա., Հայ ազգային տարագ, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1983:
14. Հաճախապատման ճար, 5-րդ դար, Վենետիկ, 1838:
15. Նորին մեկնություն Մաթևոսի, թարգմանություն 5-րդ դար, Վենետիկ, 1826:

16. Նորին մեկնություն Ջաքարիա, Վենետիկ, 1855:

17. Ղազարյան Վ., Սարգիս Պիծակ, ՀՄՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1980:

18. Փարպեցի Ղ., Պատմություն հայոց 5-րդ դար, Վենետիկ, 1873:

*Ընդունվել է՝ 20. 04. 2021*

*Գրախոսվել է՝ 26. 05. 2021*

*Հանձնվել է տպ.՝ 21. 06. 2021*

**Տեղեկություններ հեղինակի մասին**

**Տաթևիկ ՀԱՐԹԵՆՅԱՆ՝** Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի

Գյումրու մասնաճյուղի ավագ դասախոս, էլ. հասցե՝ tatevt85@mail.ru

ՀՏԴ՝ 316

DOI: 10.52971/18294316-2021.1-174

ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԴԵՐՈՂ ՔԱՂԱՔԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔՈՒՄ  
(Շիրակի երկրագիտական թանգարանի և  
Կումայրի պատմամշակութային արգելոց-թանգարանի օրինակով)  
*Արթուր Հովհաննիսյան*

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

*Բանալի բառեր՝ մշակույթ, Գյումրի, հավաքածու, հուշարձան, ցուցանիշ-  
մուշ, պատմաճարտարապետական:*

Թանգարանները՝ որպես «մշակութային դիվանագիտության» իրականացնողներ, ակտիվորեն ներգրավված են իրենց երկրների մշակույթների հանրահռչակման գործում: Թանգարաններն այսօր ունեն լայն հնարավորություններ՝ զբոսաշրջության, մշակութային և սոցիալական հաղորդակցության գործում, և ներկայիս խոշոր թանգարանները՝ Լուվրը, Էրմիտաժը, Մետրոպոլիտենը և այլն, տարեկան միլիոնավոր այցելություններ են գրացնում և մեծ ներդրում ունեն իրենց երկրների զարգացման գործում: Արևմտյան փորձը ցույց է տալիս, որ ժամանակի պահանջներին ներդաշնակ կառավարվող թանգարանը կարող է ոչ միայն գործունեություն ծավալել վաստակած սեփական միջոցների հաշվին, այլև «նպաստել տնտեսության զարգացմանն ու ընկերային (սոցիալական) խնդիրների լուծմանը՝ դառնալով հասարակության առողջացման ներուժակ լծակներից մեկը»<sup>1</sup>: Վերջին տարիներին Գյումրի քաղաքի հանդեպ աճող զբոսաշրջային հետաքրքրությունն իր հետ բերում է քաղաքի զարգացման նոր հեռանկարներ, որ մեծապես առնչվում են թանգարաններին և պատմամշակութային ժառանգության կառավարման հետ: Հետևաբար թեմայի արդիականությունն ակներև է, քանզի Գյումրի քաղաքի երբեմնի ինդուստրիալ կենսագ-

<sup>1</sup> Պիկիչյան Հ., Հարոյան Մ., Գրիգորյան Ա. Թանգարանային մենեջմենթ և մարքեթինգ, Երևան, 2006, էջ 7:

րությունը վաղուց արդեն անցյալում է, և քաղաքի զարգացման նոր տեսլականը կապվում է քաղաքի զբոսաշրջային հնարավորությունների օգտագործման հետ: Այս տեսլականի հիմնաքարային դրույթներից մեկն էլ քաղաքի թանգարանային կարգավիճակի օգտագործումն է՝ ի նպաստ նրա զարգացմանը:

**Նախաբան.** Մշակութային կյանքի ակտիվությունը բնորոշ է բարձր կենսամակարդակ ունեցող քաղաքներին: Այս իրողությունը փաստվում է նրանով, որ դեռևս 1865 թ. Ալեքսանդրապոլը դարձավ Արևելյան Հայաստանի քաղաքներից առաջինը, որտեղ ստեղծվեց մշտական գործող թատերախումբ<sup>2</sup>: Սա քաղաքի մշակութային կյանքում լուրջ ձեռքբերում էր, և շուտով քաղաքում կենտրոնացան Հայաստանի կարևոր մշակութային իրադարձությունները, դրա վառ ապացույցը 1912 թվականին Գյումրի քաղաքում բեմադրված առաջին հայկական օպերան էր՝ «Անուշը»<sup>3</sup>: Շատ չանցած՝ 1918 թվականին Կարանյանների գերդաստանը, որոնք զինագործներ էին, Գյումրի քաղաքում հիմնում է առաջին հնագիտական հավաքածուներով հարուստ (մասնավոր) թանգարանը: Նույն թվականին՝ թուրքերի կողմից Ալեքսանդրապոլի գրավումից հետո, թալանվում է Ալեքսանդրապոլի ամբողջ գավառը, այդ թվում՝ նաև Կարանյանների ընտանիքին պատկանող թանգարանը: Հակոբ Կարանյանը թուրքերի կողմից թանգարանի թալանված իրերի մասին տեղեկացնում է այդ շրջանում հասարակական-ազգային ակտիվ գործունեություն ծավալող, Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանին: Իր նամակում նա ներկայացնում է թալանված առարկաների ցանկը և հավելում, որ ցանկում տեղ գտած առարկաները դեռ բոլորը չեն, քանզի առարկայացանկը վերականգնվել է հիշողությամբ<sup>4</sup>, այսինքն՝ թանգարանի հավաքածուներում ավելի շատ առարկաներ են եղել, որոնք սակայն անդառնալիորեն կորսվել են: Գյումրիում թանգարան ունենալու պահանջը կարևորվում էր նաև Հայաստանի խորհրդային տարիներին: Խորհրդային Միության պետական մակարդակով վարած քաղաքականությունը, այն է՝ վերջ տալ անգրագիտությանը, բերելու էր նոր «կուլտուր-լուսավորչական» օջախների ստեղծմանը: 1922 թ. խորհրդային իշխանությունների կողմից Գյումրիում բացվեց կերպարվեստի թանգարան<sup>5</sup>:

Ինչպես նկատեցինք վերը շարադրվածից, Գյումրիում թանգարանների ստեղծումը կարելի է պայմանավորել 2 կարևոր գործոնով: Առաջին և հիմնական գործոնը օրվա իշխանությունների կողմից տարվող պետական քաղաքականությունն էր, այն է՝ մշակութային օջախների ստեղծման շնորհիվ պայքարել անգրագիտության դեմ: Իսկ երկրորդը զարգացող քաղաքներին բնորոշ ենթակառուցվածքների ձևավորումն էր, ինչպես եղավ եվրոպական շատ քաղաքներում և Ռուսաստանում: Ասվածը հստակեցնելու

<sup>2</sup> Մկրտչյան Ստ., Լենինականը նոր վերելքի ճանապարհին, Երևան, 1970, էջ 219:

<sup>3</sup> Հայկական համառոտ հանրագիտարան, Ա դաջում, հ 1, Երևան, 1990, էջ 226:

<sup>4</sup> Մալխասյան Դ., Կարանյանցի նամակը Թումանյանին. թալանված թանգարանի պատմությունը. <https://elck.ru/MHAB4> (24.02.2020).

<sup>5</sup> Պիճիկյան Հ. Ա., Չաքարյան Պ., Գյումրի, 2013, էջ 6:

համար պատմական անդրադարձ կատարենք Եվրոպայում թանգարանների ձևավորման ընթացքին:

16-17-րդ դարերի Եվրոպայում թանգարանները հաճախ հիմնվում էին որոշ անհատների հավաքածուների հիման վրա: Գիտական հետազոտությունները մեծ մասամբ իրականանում էին թանգարանային առարկաների հիմքի վրա՝ բավարարելով գիտական պահանջմունքները: Սակայն այս հավաքածուները շատ դեպքերում փակ էին հանրության լայն շերտերի համար: Սկսած 17-րդ դարից՝ Եվրոպայում արդեն սկսել էր ձևավորվել թանգարաններ ունենալու պահանջարկը, իսկ արդեն 19-րդ դարում Եվրոպական թանգարանները վերածվեցին կրթական հաստատությունների, որոնք հասանելի էին հասարակության բոլոր շերտերի համար:<sup>6</sup> Ինչպես տեսանք, թանգարանների առկայությունը քաղաքային կյանքի ինքնակենսագործունեության մեջ համարվում էր պահանջված, և այն հետզհետե իր զարգացումն ապրեց՝ դառնալով գիտակրթական հաստատություն:

Գյումրի քաղաքում մշակութային հաստատությունների ակտիվ գործունեությունը որոշակիորեն լուծեց քաղաքի բնակչության կրթական, մշակութային, ինչպես նաև ժամանցի կազմակերպման խնդիրներ, սակայն թանգարանների ստեղծումը ձգձգվեց մինչև 1930-ականները: Դրա փոխարեն՝ որոշ անհատներ ունեին իրենց հավաքածուները, որոնք սակայն, ցուցադրվում էին նեղ շրջանակների համար: Հետագայում սրանք ևս մաս կազմեցին Շիրակի երկրագիտական թանգարանի հավաքածուի:

**Շիրակի երկրագիտական թանգարանը** հիմնվել է 1930 թվականին: Թանգարանն ունի հնագիտության, ազգագրության, քաղաքի և Շիրակի մշակույթը ներկայացնող բաժիններ: Այս թանգարանում են կենտրոնացել պատմական Շիրակ գավառի նյութական և հոգևոր մշակույթի մասին վկայող հազարավոր ցուցանմուշներ: Խորհրդային տարիներին՝ սկսած 1950-ական թվականներից, թանգարանը սկսեց գնումներ իրականացնելու պրոցեսը, որով թանգարանը ընդլայնում էր իր հավաքածուն: Թանգարանի հավաքածուներն ընդլայնվում էին նաև նվիրատվությունների և պեղումների միջոցով: Հետխորհրդային տարիներին թանգարանին անցան նաև Բ. Ղարիբջանյանի տուն-թանգարանի հավաքածուները<sup>7</sup>. այն 1966 թվականին հիմնվել էր Գյումրիում և Երևանում գործող Հեղափոխության թանգարանի մասնաճյուղ էր<sup>8</sup>: 1970-ականներից սկսած՝ թանգարանը համագործակցել է ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի<sup>9</sup> հետ: 1990-ից սկսած՝ թանգարանը սերտ կապերի մեջ է Նանտի (Ֆրանսիա) Դոբրեի թանգարանի հետ, որի արդյունքում իրականացվել են աշխատակցիների փոխադարձ վերապատրաստումներ, հնագիտական հազվագյուտ իրերի անվճար վերականգնում և այլն: Չնայած հետերկրաշարժյան ծանր պայմաններին՝ թանգարանը Գյումրիում և Երևանում իրականացրել է մի քանի ցուցահանդեսներ. «Շիրակի հնագույն մշակույթը», «Շիրակի խեցեգործությունը 5000 տարում», «Բելգիացի նկարիչներն աղետյալ Լենի-

<sup>6</sup> Левыкина К. Г., Хербста В. Музееведение. Москва. -1988. С. 36-37.

<sup>7</sup> Հայկական սովետական հանրագիտարան, Երևան, 1975, էջ 32:

<sup>8</sup> Տե՛ս <https://clck.ru/MxAAt>:

<sup>9</sup> Տե՛ս <https://iae.am/>:

նականին», «Շիրակը մշակույթի բնօրրան<sup>10</sup>»: 1998 թվականին Շիրակի երկրագիտական թանգարանի և Արևելքի ուսումնամասիության Լիոնի գիտահետազոտական կենտրոնի համատեղ ջանքերով՝ *INTAS* ծրագրով մեկնարկեցին Շիրակում քարիդարյան հուշարձանների հայտնաբերման ուղղությամբ կատարվող պեղումները<sup>11</sup>: Ավելի քան երկու տասնամյակ է, ինչ Շիրակի երկրագիտական թանգարանը ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի աջակցությամբ իրականացնում է արժեքավոր պեղումներ Շիրակի մարզի հնագիտական հուշարձաններում: Իբրև առանձին գիտահետազոտական նախագծեր իրականացվել են Հոռոմի, Բենիամինի, Հայկաձորի պեղումները, այժմ էլ ընթացքի մեջ են Ջրաձորի, Ագատանի և Մեծ Սեպասարի հնագիտական հուշարձանների գիտական ուսումնասիրությունները: Արդյունքներն անգերազանցելի են, հատկապես Մեծ Սեպասարի տաճարական համալիրում, որտեղ այսօր էլ նախագծի գիտական ղեկավար, պատմագիտության թեկնածու, Երջանկահիշատակ Լ. Եգանյանից հետո դրանք շարունակվում են: 2004 թվականից իրականացվող պեղումներով հայտնաբերվել են տարածաշրջանում զուգահեռները չունեցող հնադարյան շինություններ, հնագիտական կարևոր արժեք ներկայացնող պեղածո նյութեր<sup>12</sup>: Շիրակի երկրագիտական թանգարանի և Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի սերտ համագործակցության շնորհիվ շատ նշանակալի արդյունքներ են գրանցվել: Այս համագործակցությունը հնարավորություն տվեց երևան հանելու, ուսումնասիրելու և պահպանելու Շիրակի մարզի մի շարք հուշարձանների մշակութային շերտերից պեղված արտեֆակտները, որոնք ներկայումս վերականգնվում են և մեծ հոգատարությամբ պահվում են թանգարանի ֆոնդերում:

Չնայած այն փաստին, որ թանգարանում առկա հավաքածուները պատիվ կբերեին ցանկացած խոշոր թանգարանի, այնուամենայնիվ իր գոյության օրվանից երկրագիտական թանգարանը խնդիրներ է ունեցել՝ կապված շենքային պայմանների և ցուցադրության հետ: Թանգարանի գիտաշխատող Հ. Խաչատրյանը նշում է, որ նախկինում թանգարանը զբաղեցրել է Գյումրու մանկավարժական ինստիտուտի առաջին հարկը, ընդ որում՝ այնտեղ է գտնվել միայն ցուցադրությունը: «1984 թվականին թանգարանը հանեցին այնտեղից, ու այդ օրից այն կոնսերվացվել էր: Երկրաշարժն էլ ամեն ինչ ավելի հետաձգեց: Իսկ երկրաշարժից հետո առաջին հերթին լուծվեցին քարաշեն դպրոցների, այնուհետ՝ հիվանդանոցների, և հիմա՝ բնակարանաշինության առաջնահերթ հարցերը՝ թանգարանի շենքի կառուցման հարցը անընդհատ հետաձգելով անորոշ ժամանակով»<sup>13</sup>: Միայն 2018-ին Գյումրի քաղաքի ավագանու որոշմամբ<sup>14</sup> Շիրակի երկրագիտական թանգարանին վերջապես շենք հատկացվեց: Թանգարանի տնօրեն

<sup>10</sup> Շիրակի երկրագիտական թանգարան, «Շիրակը մշակույթի բնօրրան» Գյումրի, 2013, 17 էջ:

<sup>11</sup> Վարդանյան Գ., Գյումրի, I գիրք, Երևան, 2006, էջ 517:

<sup>12</sup> Եգանյան Լ., Մեծ Սեպասարի 2006թ.պեղումները // ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 9, 2006թ. էջ 63-75:

<sup>13</sup> Հարցազրույց ՇԵԹ-ի գիտաշխատող Հ. Խաչատրյանի հետ:

<sup>14</sup> Տե՛ս Գյումրու ավագանու որոշում՝ 11 դեկտեմբերի 2018, N 195- Ա:

Արտաշես Բոյաջյանի հետ զրույցից տեղեկացանք, որ ներկայումս թանգարանին հատկացված շենքը վերանորոգվում է :

Քաղաքի տարեգրության մեջ բեկումնային եղավ **Կոմայրի պատմամշակութային արգելոց-թանգարանի** հիմնումը, քանզի այն փրկեց քաղաքի յուրօրինակ ճարտարապետությունը և քաղաքում թանգարանների ստեղծման «բում» առաջացրեց: Կոմայրի պատմամշակութային արգելոց-թանգարանի ստեղծումն ի սկզբանե միտված էր ինչպես Գյումրու բազմաշերտ պատմամշակութային ժառանգությունն իր միջավայրում անաղարտ պահպանելուն, այնպես էլ թանգարանային գործառույթներով և զբոսաշրջային սպասարկման նպատակներով օգտագործելուն: Քաղաքի պատմական կորիզը կազմող ժողովրդական ճարտարապետության նմուշների արժևորումը՝ որպես մշակութային ժառանգության օբյեկտներ և դրանց ներկայացումն արգելոց-թանգարանի կարգավիճակով, ինքնին նորույթ էր հայ իրականության մեջ 1980-ական թթ. սկզբին: Դեռևս ՀԽՍՀ 7-րդ գումարման Գերագույն խորհրդի 5-րդ նստաշրջանում (1969 թ.) հուշարձանների պահպանության վերաբերյալ մի խումբ պատգամավորների կողմից առաջարկներ եղան. հայ մեծանուն նկարիչ Մարտիրոս Սարյանը (1880-1972 թթ.) հին Խնձորեսկն իր նախնական տեսքով պահպանելու վերաբերյալ հարց բարձրացրեց, իսկ մեկ այլ պատգամավոր՝ Ռաֆիկ Եղոյանը, առաջարկեց վերականգնել Լենինականի մի շարք հուշարձաններ և օգտագործել նրանց «ծավալները որպես թանգարաններ, ցուցասրահներ, համերգասրահներ, որոնք իրենց կձգեն զբոսաշրջիկներին և հասարակական լայն խավերին»<sup>15</sup>: Խնդիրն այն էր, որ մինչև 1970-ական թթ. պահպանության և թանգարանային օգտագործման ենթակա հուշարձանները հիմնականում առանձին հնագիտական, պաշտամունքային և ճարտարապետական կառույցներ էին:

Շ. Մարությանն իր գիտական հոդվածներից մեկում իրավացիորեն նշում է, որ մինչև 1970-ական թթ. վերջը քաղաքային կամ գյուղական բնակելի տների, հասարակական կառույցների ամրակայման, վերականգնման կամ վերակառուցման գործունեություն չիրականացվեց, և որ միայն հետո սկսվեց ընկալվել դրանց գեղարվեստական, ճարտարապետական, ապա նաև ազգագրական ու պատմաքաղաքաշինական արժեքը<sup>16</sup>: Այս առումով՝ արդեն 1970-ական թթ. սկզբներից սկսեցին կարևորվել բնակավայրերի ամբողջական պատմաքաղաքաշինական հատվածները և դրանց հիմքը կազմող ժողովրդական ճարտարապետության կառույցները: Նման հասուկ պահպանման օրինակներ էին համարվում այնպիսի հին բնակավայրեր, ինչպիսիք էին Գորիսը, Շինուհայրը, Հին Խնձորեսկը, Վաղարշապատը, Լենինականը կամ նրանց առանձին հատվածները<sup>17</sup>: Նման իրավիճակում մեզանում գործնականում սկսվեց պաշտոնապես կիրառվել

<sup>15</sup> Պողոսյան Գ., ՀՀ պատմամշակութային արգելոց-թանգարանների կազմակերպման գործընթացի սկզբունքները, Երևան, 2018, էջ 56:

<sup>16</sup> Марутян А. Из истории сохранения и застройки исторического центра Еревана (XIX-начало XXI века) // Историко-культурное наследие. Сб. науч.-инф. статей. Выпуск 1. Ереван. -2014. С. 75-76.

<sup>17</sup> Հարությունյան Վ., Նալբանդյան Գ., Գրիգորյան Ա., Աբրահամյան Կ., Իսրայելյան Վ., Ճարտարապետական հուշարձանների վերականգնումը, Երևան, 2005, էջ 167:

«արգելոց-թանգարան» հասկացությունը՝ ի դեմս 1980 թ. ստեղծված «Կումայրի» պետական պատմաճարտարապետական արգելոց-թանգարանի<sup>18</sup>:

Հայաստանի Կառավարության համապատասխան որոշման մեջ նշվում էր, որ Լենինականի քաղաքաշինական-ճարտարապետական կարևոր արժեք ներկայացնող Կումայրի-Գյումրի-Ալեքսանդրապոլ-Լենինական պատմական միջուկի պահպանումն ապահովելու նպատակից ելնելով, «Հայկական ԽՍՄՍ պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանման և օգտագործման օրենքի» հիման վրա Հայկական ԽՍՄՍ Մինիստրների խորհուրդը որոշում է՝ ընդունել Հայաստանի կոմկուսի Լենինականի քաղաքային կոմիտեի, ժողովրդական դեպուտատների Լենինականի քաղաքային սովետի գործադիր կոմիտեի և Հայկական ԽՍՄՍ պետշինի համատեղ առաջարկությունը և Լենինական քաղաքի պատմական միջուկը հայտարարել ժողովրդական դեպուտատների Լենինականի քաղաքային սովետի գործկոմի «Կումայրի» պետական պատմաճարտարապետական արգելոց-թանգարան...<sup>19</sup>: Վերջինս ի սկզբանե հիմնվեց առավելապես իր գործառույթներով օգտագործվող ժառանգության ամբողջական արժևորման, «որոշակի ժամանակաշրջանին հատուկ քաղաքաշինական միջավայրի պահպանման», դրան «անհարիր տարրերի ներթափանցման կասեցման», սերունդների միջև «նյութեղեն-հոգևոր կամրջի» ստեղծման նպատակով<sup>20</sup>: Որոշմանը կից կանոնադրության մեջ արգելոց-թանգարանի հիմնական խնդիրներ էին առաջադրվում՝

ա) Կումայրի-Գյումրի-Ալեքսանդրապոլ-Լենինական պատմական ժամանակաշրջանի քաղաքաշինական ավարտուն համալիրի պահպանումը և նրա վերականգնման ու վերակառուցման աշխատանքների կարգավորումն ու կատարումը,

բ) «Կումայրի» արգելոց-թանգարանի բոլոր հուշարձանների հատուկ հաշվառումը, նրանց պահպանումը և օգտագործումը,

գ) գոյություն ունեցող ճարտարապետական-քաղաքաշինական ավանդների ու կոլորիտի պահպանումը, պատմաճարտարապետական արժեք չունեցող և միջավայրի հետ չներդաշնակվող շենքերի հետզհետե պլանային վերացման, ինչպես նաև «Կումայրի» արգելոց-թանգարանի տարածքից նրան ոչ բնորոշ արդյունաբերական ձեռնարկությունների, այլ կառույցների տեղափոխման ու տրանսպորտային երթևեկության ակտիվության պակասեցման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը,

դ) քաղաքաշինական հնարավորությունները լավագույն ձևով ցուցադրելու վերաբերյալ միջոցառումների իրականացումը, «Կումայրի» արգելոց-թանգարանում և նրա շուրջը հայտնաբերված հնագիտական, ազգագրական, պատմության ու կուլտուրայի արժեքավոր հուշարձանների հաշվառումը, պահպանումը և ձեռքբերումը,

<sup>18</sup> Պողոսյան Գ., նույն տեղում, էջ 71:

<sup>19</sup> Տե՛ս ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի 1980թ. օգոստոսի 5-ի № 463 որոշումը Լենինական քաղաքում «Կումայրի» պետական պատմաճարտարապետական արգելոց-թանգարան ստեղծելու մասին // ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի որոշումներ և կարգադրություններ, Երևան, 1980, օգոստոս, էջ 19:

<sup>20</sup> Միրիջանյան Ա., «Կումայրի» արգելոցի քաղաքաշինական խնդիրները // Գիտություն և տեխնիկա, № 4, 1983, Երևան, էջ 15-20:

ե) «Գումայրի» արգելոց-թանգարանի տարածքում բոլոր տեսակի շինարարական աշխատանքների ճարտարապետական հատակագծման առաջադրանքների կատարման ապահովումը և շինարարական ու վերանորոգման աշխատանքների նկատմամբ հսկողության իրականացումը,

զ) «Գումայրի» արգելոց-թանգարանի տարածքում գտնվող հուշարձանները շրջապատող տարածությունների, պատմականորեն ձևավորված քաղաքային կառուցապատումների, այգեպուրակային և բնական լանդշաֆտի պահպանման, օգտագործման և կատարելագործման միջոցառումների իրականացումը,

է) թանգարանային գործի, հուշարձանների գիտական ցուցադրման, գովազդային-գեղարվեստական, զբոսաշրջիկների սպասարկման, հուշանվերների պատրաստման ու իրացման հետ կապված աշխատանքների կատարումը»<sup>21</sup>: Այս դեպքում հուշարձանների թանգարանացումը ենթադրում էր ոչ միայն պահպանել քաղաքի հարուստ և բազմաշերտ մշակութային ժառանգությունը, այլև այն օգտագործել իր տեղում ու գործառույթներով:

*Եզրահանգում.* Հողվածում ներկայացված են Գումայրիում երկու թանգարանների ստեղծման ակունքները՝ նրանց գործունեության զարգացումը և ազդեցությունը հասարակական կյանքի վրա: Հետազոտության մեջ հստակ կարևորում ենք Գումայրի քաղաքի վերոհիշյալ թանգարանների՝ որպես մշակութային կենտրոնների նշանակությունը: Դրանք իրենց գործունեությամբ միտված են ոչ միայն հավաքելու, ուսումնասիրելու և հանրահռչակելու նյութական մշակույթի իրողությունները, այլև նպաստելու քաղաքային ճարտարապետությանը բնորոշ տարրերի անխաթար պահպանմանը: Վերոհիշյալ թանգարանների օրինակը համոզիչ վկայում է, որ նրանց գործունեության ընթացքում պարբերաբար առաջացել են բազմաթիվ խնդիրներ: Ուստի հաշվի առնելով այս փաստը՝ կարևոր ենք համարում ևս մեկ անգամ անդրադառնալ թանգարաններում և արգելոց-թանգարաններում մեր ունեցած խնդիրներին և դրանց լուծմանը նպաստող նոր մեխանիզմների կիրառման անհրաժեշտությանը:

**РОЛЬ МУЗЕЕВ В КУЛЬТУРНОЙ ЖИЗНИ ГОРОДА  
(по примеру Ширакского краеведческого музея и  
Историко-культурного музея-заповедника Кумайри)  
Оганисян А. Л.**

**Ключевые слова:** *культура, музей-заповедник, Гюмри, коллекция, памятник, экспонат, историко-архитектурный.*

В статье представлены истоки создания двух музеев в Гюмри: развитие их деятельности и влияние на общество. В исследовании мы четко подчеркиваем важность упомя-

<sup>21</sup> Կանոնադրություն ժողովրդական դեպուտատների Լենինականի քաղաքի գործկոմի «Գումայրի» պետական պատմաճարտարապետական արգելոց-թանգարանի՝ հաստատված ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի 1980 թ. օգոստոսի 5-ի № 463 որոշմամբ // ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի որոշումներ և կարգադրություններ, օգոստոս, 1980, էջ 25-26:

нутых музеев Гюмри как культурных центров, деятельность которых направлена не только на сбор, изучение, популяризацию артефактов материальной культуры, но и на сохранение элементов, характерных для городской архитектуры. По законам вышеупомянутых музеев мы увидели, что в процессе их деятельности возникли ряд проблем. Поэтому, учитывая этот факт, мы считаем возможным использование новых механизмов в музеях, заповедниках-музеях, о которых шла речь в работе.

**THE ROLE OF MUSEUMS IN THE CULTURAL LIFE OF THE CITY  
(With Special Reference to Shirak Regional Museum and  
Kumayri Historical and Cultural Museum-Reserve)  
Hovhannisyan A. L.**

**Key words:** *culture, Gyumri, collection, monument, exhibition, historical and architectural.*

The article presents the origins of the foundation of two museums in Gyumri: the development of their activities and their impact on society. In the study, we clearly emphasize the importance of the mentioned museums of Gyumri as cultural centers, the activities of those are aimed not only at collecting, studying, popularizing artifacts of material culture, but also at preserving the elements characteristic to urban architecture. According to the aforementioned museums, we have noticed that a number of problems arose in the course of their activities. Therefore, taking into account this fact, we consider it possible to use new mechanisms in museums, reserves-museums, which were discussed in the work.

**Գ ր ա կ ա ն ո լ թ յ ո ն**

1. Կանոնադրություն ժողովրդական դեպուտատների Լենինականի քաղսովետի գործկոմի «Կումայրի» պետական պատմաճարտարապետական արգելոց-թանգարանի՝ հաստատված ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի 1980 թ. օգոստոսի 5-ի № 463 որոշմամբ // ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի որոշումներ և կարգադրություններ, Երևան, օգոստոս, 1980, էջ 25-26:
2. Հայկական համառոտ հանրագիտարան, Ա դաջում, հ 1, Երևան, 1990:
3. Հայկական սովետական հանրագիտարան, Երևան, 1975:
4. Հարությունյան Վ., Նալբանդյան Գ., Գրիգորյան Ա., Աբրահամյան Կ., Իսրայելյան Վ., Ճարտարապետական հուշարձանների վերականգնումը, Երևան, 2005:
5. ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի 1980թ. օգոստոսի 5-ի № 463 որոշումը Լենինական քաղաքում «Կումայրի» պետական պատմաճարտարապետական արգելոց-թանգարան ստեղծելու մասին //ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի որոշումներ և կարգադրություններ, Երևան, 1980, օգոստոս, էջ 19:
6. ՀՀ Գյումրի համայնքի ավագանու որոշում, Գյումրի, 11 դեկտեմբերի 2018, N 195- Ա:
7. Մալխասյան Դ., Կարանյանցի նամակը Թումանյանին. թալանված թանգարանի պատմությունը <https://clck.ru/MHAB4> (24.02.2020).
8. Միրիջանյան Ա. , «Կումայրի» արգելոցի քաղաքաշինական խնդիրները // Գիտություն և տեխնիկա, № 4, 1983, էջ 15-20:
9. Սկրտչյան Ստ. , Լենինականը նոր վերելքի ճանապարհին, Երևան, 1970:

10. Շիրակի երկրագիտական թանգարան, «Շիրակը մշակույթի բնօրրան» Գյումրի, 2013:
11. Պիճիկյան Հ., Ջաքարյան Պ., Գյումրի, Գյումրի, 2013:
12. Պիկիչյան Հ., Հարոյան Մ., Գրիգորյան Ա., Թանգարանային մենեջմենթ և մարքեթինգ, Երևան, 2006:
13. Պողոսյան Դ., ՀՀ պատմամշակութային արգելոց-թանգարանների կազմակերպման գործընթացը և սկզբունքները, Երևան, 2018:
14. Վարդանյան Գ., Գյումրի, I զիբբ, Երևան, 2006:
15. Левыкина К.Г., Хербста В. Музееведение. Москва. Изд-во «Высшая школа». -1988.
16. Марутян А. Из истории сохранения и застройки исторического центра Еревана (XIX-начало XXI века) // Историко-культурное наследия. Сб. науч.-инф. статей. Выпуск 1. Ереван. Изд-во «Зангак». -2014.
17. <https://clck.ru/MxAAAt> (22. 09. 2020 ).
18. <https://iae.am/> (29. 10. 2020).
19. <https://clck.ru/MHAB4> (24. 02. 2020).

*Ընդունվել է՝ 11. 02. 2021  
Գրախոսվել է՝ 07. 05. 2021  
Հանձնվել է տպ.՝ 21. 06. 2021*

**Տեղեկություններ հեղինակի մասին**

Արթուր ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական  
հետազոտությունների կենտրոնի ասպիրանտ,  
Էլ. հասցե՝ arthur.hovhannisyanyan333@gmail.com

ՀՏԴ՝ 159.93

DOI: 10.52971/18294316-2021.1-183

ՀԱՅՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈՔԵԲԱՆԱԿԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Կարինե Սահակյան*

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,  
Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան

**Բանալի բառեր՝** *հոգեբանություն, ապրումակցում, ընտանիք, ընտանեկան թերապիա, ընտանեկան խորհրդատվություն, մայրակենտրոն ընտանիք, դրական ծնողավարում:*

Հոդվածի նպատակն է ընդգծել դրական ծնողավարման մեջ հայրական դպրոցի դերի կարևորությունը համակողմանի զարգացած անձ ձևավորելու գործընթացում: Հետազոտության իրականացման ընթացքում կիրառվել են ինչպես համագիտական (անալիզ, սինթեզ, պատմականության սկզբունք), այնպես էլ հատուկ (համեմատական) մեթոդներ:

Ուսումնասիրության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ դաստիարակությունն առավելապես իգական սեռին վերագրվող գործառնություն է, և ոչ լիարժեք ընտանիքներում, որտեղ բացակայում է հայր ծնողը, երեխայի հոգեբանական աճը թերի է մնում: Արդի ժամանակներում աստիճանաբար ավելի է կարևորվում հայրական դպրոցի նշանակությունը ներընտանեկան դերերի համակարգում, քանի որ այն կոչված է լուծելու պետության ժողովրդավարական անվտանգության ամրապնդումը՝ երիտասարդ ընտանիքի կայունության մեծացման հիման վրա:

**Նախաբան.** Մեր աշխարհը փոխվում է, և դրանում տեղի ունեցող փոփոխությունները չեն կարող չազդել ընտանեկան համակարգի վրա: Մի կողմից ժամանակի պահանջը թելադրում է գենդերային կարծրատիպերից հեռու լինելու անհրաժեշտություն, ըստ որի՝ կինն ընդամենը տնային տնտեսուհի է, որը խնամում է տունը, իսկ տղամարդը՝ հիմնական մատակարարն ու պաշտպանը, մյուս կողմից՝ պետք է ընդու-

ներք, որ մեր հասարակության մեջ շարունակում են գերակայել նորմերը, ըստ որոնց՝ տղամարդկանց և կանանց դերի ցանկացած փոփոխություն համարվում է ավանդույթների և ինքնին բարոյականության նորմերի խախտում<sup>1</sup>:

Հասարակության մեջ և ընտանիքում գենդերային հավասարության խնդիրները, ընդհանուր առմամբ հոգեբանական խնդիրները, ինչպես նաև տղամարդկանց հետ աշխատանքը, մասնավորապես, սոցիալական աշխատանքի պրակտիկայում, բավականին նոր են: Հատկանշական է, որ սոցիալական աշխատանքի գենդերային մեթոդների հիմնական ձևերը ուղղված էին կանանց իրավունքների և շահերի պաշտպանությանը և իրականացվել են կանանց հասարակական կազմակերպությունների, կանանց ճգնաժամային կենտրոնների և կանանց համար պետական ծառայությունների միջոցով:

Եթե վերլուծում ենք ընտանիքների և երեխաների համար գոյություն ունեցող սոցիալական ծրագրերն ու նախագծերը, ապա ստացվում է, որ դրանցից շատերը առաջնորդվում են ոչ թե հավասարության սկզբունքներով, տղամարդկանց և կանանց միջև համագործակցության կազմակերպմամբ, այլ գենդերային կարծրատիպերով: Ընտանիքի սոցիալական առողջության կարևոր բաղադրիչը նրա բոլոր անդամների միջև հարաբերությունների հոգեբանական կայունությունն է: Նորածին երեխա ունեցող երիտասարդ ընտանիքներում նման հոգեբանական կայունության կարելի է հասնել ամուսնու ավելի ակտիվ դերով, որն էլ երեխայի կյանքի առաջին իսկ օրվանից զբաղվում է նրա խնամքով: Դա հնարավոր է հեշտացնել «հայրերի դպրոցներում բոլոր ցանկացողների ուսուցմամբ<sup>2</sup>:

Շոր դերը երեխայի կյանքում անընդհատ զարգացող թեմա է, որը հուզում է ոչ միայն գիտնականներին, այլև միլիոնավոր մարդկանց, որոնք պատրաստվում են ծնող դառնալ կամ արդեն դարձել են: Հայրության հոգեբանությունն ու մանկավարժությունը գիտական մտքի, հոգեբանական և մանկավարժական պրակտիկայի և սոցիալական աշխատանքի դինամիկ և ժամանակակից ուղղություն են: Պետք է գիտակցել, որ երեխայի կյանքում մայրերի դերի վերաբերյալ վիճակագրական և գիտական նյութերի առատությամբ հանդերձ՝ գրականության և հետազոտությունների պակաս կա<sup>3</sup>:

Վերջին ժամանակներս սոցիալական և հումանիտար գիտություններում ընդունված է տարբերակել «սեռ» և «գենդեր» հասկացությունները, որոնք համապատասխանաբար ցույց են տալիս տղամարդու և կնոջ տարբերությունների սահմանադրական կամ սոցիալ-մշակութային կողմերը:

«Սեռ» եզրույթը նկարագրում է մարդկանց միջև կենսաբանական տարբերությունները, որոնք որոշված են գենետիկական բնութագրերով, անատոմիական և ֆիզիոլոգիական հատկություններով և վերարտադրողական գործառույթներով: «Գենդեր» եզրույթը վերաբերում է անձի սոցիալական կարգավիճակին և սոցիալ-հոգեբանական հատկանիշներին, որոնք կապված են սեռի ու սեռականության հետ, բայց առաջանում են որոշակի մշակույթի շրջանակներում՝ այլ մարդկանց հետ փոխգործակցության մեջ:

<sup>1</sup> Ст' у Папа-школа: шаг за шагом. Москва. ООО «БЭСТ-принт». -2010.

<sup>2</sup> Нартова-Бочавер С.К., Бочавер К.А., Бочавер С.Ю. Жизненное пространство семьи.-2017.

<sup>3</sup> Колесов П. Б. Муза для любимого. Как вдохновлять мужчину на подвиги. М. -2019. С. 256.

Մարդկանց միջև կենսաբանական տարբերություններից բացի, գոյություն ունեն սոցիալական դերերի բաժանում, գործունեության ձևեր, ինչպես նաև վարքի ու հուզական հատկանիշների առանձնահատկություններ: Մարդաբանները, հոգեբանները և պատմաբանները վաղուց հաստատել են, որ «տիպիկ տղամարդ» կամ «տիպիկ կին» հասկացությունը բավականին պայմանական է. այն, ինչը մի հասարակության մեջ արական զբաղմունք է, մյուսում համարվում է կնոջը հատուկ զբաղմունք:

Աշխարհում կանանց ու տղամարդկանց սոցիալական բնութագրերի բազմազանությունը և կենսաբանական բնութագրերի հիմնարար ինքնությունը մեզ թույլ են տալիս եզրակացնել, որ կենսաբանական սեռը հիմք չէ տարբեր սոցիալական հասարակություններում գոյություն ունեցող սոցիալական դերերի տարբերությունների համար: Այսպես առաջացավ «գենդեր» հասկացությունը՝ նկատի ունենալով սոցիալական և մշակութային նորմերի մի շարք, որ հասարակությունը սահմանում է մարդկանց համար՝ ըստ նրանց կենսաբանական սեռի:

Գենդերային հավասարության գաղափարներն ամենամեծ զարգացում և ժողովրդականություն ստացել են այնպիսի երկրներում, ինչպիսիք են Շվեդիան, Նորվեգիան, Դանիան և Նիդերլանդները: Գենդերային հավասարության սկզբունքները ակտիվորեն իրականացվում են Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի այլ երկրների պետական հաստատություններում: Ընտանիքի ու հասարակության դասական՝ հայրիշխանական մոդելի կողմնակիցների տեսակետները, որոնցում հայրը պետք է առաջնորդի դեր կատարի և ստանձնի ուժային, գերիշխող դիրք, հաճախ կտրուկ հակասում է հետդասական՝ էգալիտար մոդելի կողմնակիցների տեսակետներին, որոնք ողջունում են հոր և մոր դերերի հավասարությունը և ճկունությունն ընտանիքում ու հասարակության մեջ:

Առկա են նաև դերային սոցիալականացումը, դերային տրանսֆերը, դերային փոխներգործության փորձի փոխադրումը, ինչպես նաև դերերի բովանդակային փոփոխությունները ժամանակի ընթացքում<sup>4</sup>:

Երեխայի կյանքում հոր դերի վերաբերյալ հետազոտությունների պատմությունը սկսվում է հոգեբանության՝ որպես գիտության, ծննդյան շրջանից: Հոգեբանական գիտության այնպիսի խոշոր գործիչներ, ինչպիսիք են Ջ.Ֆրեյդը, Կ.Յունգը, Կ. Հորինը, Ա. Ադլերը, Է. Բեռնը և ուրիշներ, մեծ ուշադրություն են դարձրել հոր դերին: Այսպես օրինակ՝ հումանիստական հոգեբանության հիմնադիր Ա. Ադլերը շեշտեց հոր դերը երեխայի սոցիալական հետաքրքրության ձևավորման գործում: Նրա կարծիքով, իդեալական հայրը նա է, ով իր երեխաներին վերաբերվում է որպես հավասար մարդկանց և իր կնոջ հետ ակտիվ մասնակցություն է ունենում նրանց դաստիարակության գործում: Հայրը պետք է խուսափի երկու սխալից՝ հուզական մեկուսացում և ծնողական ավտորիտարիզմ, որոնք հանգեցնում են աններդաշնակության երեխայի անհատականության ձևավորման մեջ:

<sup>4</sup> Սեդրակյան Ա., Ընտանիքի հոգեբանություն, Երևան, «Ուրարտու» համալսարան, 2010, էջ 391:

Ինչո՞ւ է այդքան կարևոր հայրերին ներգրավել երեխաների դաստիարակության մեջ: Հոր ազդեցությունը երեխայի կերպարի ձևավորման ամենավաղ գործոնն է:

-Նորածինները, որոնք ունեն հուզական մտերություն հոր հետ, ցույց են տալիս բարձր արդյունքներ մտավոր և մոտորիկային զարգացման թեստերում:

- Ակտիվ հայրերի երեխաները մեծանում են շփվող ու պատասխանատու:

- Հայրերը, որոնք հոգ են տարել երեխայի համար ծնվելուց անմիջապես հետո, հաճախ են խաղում նրանց հետ, ավելի շատ ժամանակ են անցկացնում միասին. նման ընտանիքներում ամուսինների միջև հարաբերությունները ներդաշնակ են, և բարձր է ընտանիքի հասունության մակարդակը: Հաջողակ հայրը հաջողակ է ամեն ինչում, քանզի ձգտում է դառնալ լավ օրինակ իր երեխայի համար: Կարևոր է, որ հայրը լինի ոչ միայն ընտանիքի տնտեսական հիմքը, այլև ընկերը, ուսուցիչը, օգնականը, երջանիկ ամուսինը:

Հայրերի դպրոցի պատմությունը գոյություն ունի մի քանի տասնամյակ, որը չափազանց քիչ է ընտանեկան հարաբերությունների հազարամյա պատմության հետ համեմատած: Բայց հասարակության համար, որը զարգանում է, և որում փոխվում են տղամարդկանց ու կանանց դերերը, այն փոփոխությունների, առաջընթացի, նոր գաղափարների որոնման և ընդունման տասնամյակ է<sup>5</sup>:

Հայրերի դպրոցն առաջացել է Շվեյցարիայում XX դարի 80-ական թվականների կեսերին: Երիտասարդ հայրերի համար առաջին դասընթացներից մեկը կազմակերպել է Մերս Բերգենը: Չորս երեխաների հայրը հետաքրքրվում էր հայրության թեմայով, և նրանով, թե ինչպես հայրը կարող է օգտակար ու հետաքրքիր լինել իր երեխաներին ոչ միայն «տնային դրամապանակի» ձևով, այլ նաև որպես ընկեր, ուսուցիչ: Նախագիծը հաջողված էր: Եվ հետագայում ապագա հայրերի ուսուցումը պարտադիր դարձավ ընտանիքների համար՝ ընդունելով այն ձևը, որ այսօր մենք անվանում ենք «Հայրերի դպրոց»:

Նախագծի նպատակն է ամրապնդել պետության ժողովրդավարական անվտանգությունը՝ երիտասարդ ընտանիքի կայունության մեծացման հիման վրա, տղամարդկանց հայրական և ամուսնական որակների բացահայտման հաշվին,

- ստեղծել պայմաններ տղամարդկանց՝ ապագա հայրերի անձնային աճի համար, ընտանիքում փոխհարաբերությունների հոգեբանական մթնոլորտի և առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորում,

- ընտանիքի ամրապնդում՝ ընտանիքում հոր դերի օպտիմալացման, ապագա և երիտասարդ հայրերի ներուժի բացահայտման շնորհիվ,

- պատասխանատու հայրության դրական սոցիալական կերպարի ձևավորում,

- երեխայի դաստիարակության գործընթացի վրա մոր ու հոր դերի և ազդեցության վերաբերյալ երիտասարդ ծնողների հոգեբանական ուսուցում, հայրերի ներգրավում սոցիալական ակտիվ գործունեության մեջ:

<sup>5</sup> Смирнов Д. А. Современный российский мужчина в семье и о семье: Стиль «молодого отца» в массовом сознании и поведении россиян // Конструирование маскулинности па Западе и в России. Межвузовский сборник научно-методических материалов. Ивлгово. -2006. С. 58.

Հայրերի դպրոցում գործում է «ներկա հորից մինչև ապագա հայր» բանաձևը, հետևաբար սոցիալ-հոգեբանական աջակցությունն առավել վստահելի բնույթ է կրում հատկապես այն իրավիճակներում, երբ տղամարդիկ մեծացել են ոչ լիարժեք ընտանիքներում և չունեն բավարար պատկերացում հոր դրական դերի մասին: Հայրության փորձ ունեցող տղամարդկանցից անմիջականորեն ստացած տեղեկատվությունն ու աջակցությունն օգնում են երիտասարդ հորը հաղթահարելու անվստահությունը:

Հայրերի դպրոցը ձգտում է՝

- ամրապնդել ծնողական ու ամուսնական փոխհարաբերությունները երիտասարդ ընտանիքներում,
- նվազեցնել ամուսնալուծության ռիսկը, որը հանգեցնում է ընտանիքի քայքայմանը,
- կանխել երիտասարդ տղամարդկանց շրջանում վարքի հակասոցիալական ձևերը,
- ակտիվացնել տղամարդկանց սոցիալական կարևոր գործունեությունը, որն ուղղված է ընտանիքի պահպանմանը, պատասխանատու հայրության քարոզչությանը,
- բարձրացնել ծնողների հոգեբանական, մանկավարժական և իրավական մշակույթի մակարդակը<sup>6</sup>:

Հայրերի դպրոցում դրական ծնողավարության համար երեխաների դաստիարակության գործընթացում կարևորվում են հետևյալ սկզբունքները.

- Երեխաներին սովորեցնում է շրջապատը:
- Եթե երեխային հաճախ են քննադատում, նա սովորում է դատել:
- Եթե երեխային հաճախ են գովում, նա սովորում է գնահատել:
- Եթե երեխային թշնամանք է ցուցաբերվում, նա սովորում է կռվել:
- Եթե երեխայի հետ անկեղծ են, նա սովորում է արդար վարվել:
- Եթե երեխային հաճախ ծաղրում են, նա սովորում է երկչոտ լինել:
- Եթե երեխան ապրում է անվտանգության զգացողությամբ, նա սովորում է հավատալ:
- Եթե երեխային հաճախ են ամոթանք տալիս, նա սովորում է իրեն մեղավոր զգալ:
- Եթե երեխային հաճախ են հանդուրժողականությամբ վերաբերվում, նա սովորում է համբերատար լինել:
- Եթե երեխային հաճախ են խրախուսում, նա ինքնավստահություն է ձեռք բերում:
- Եթե երեխան ապրում է բարեկամության մթնոլորտում և իրեն անհրաժեշտ զգում, սովորում է սեր գտնել այս աշխարհում:
- Վատ մի՛ խոսեք երեխայի մասին ո՛չ նրա ներկայությամբ, ո՛չ էլ առանց նրա:
- Կենտրոնացե՛ք երեխայի մեջ լավը զարգացնելու վրա, և արդյունքում տեղ չի լինի վատի համար:
- Ակտի՛վ եղեք միջավայրը պատրաստելու հարցում: Իսկական հոգատարություն դրսևորեք նրա նկատմամբ: Ցույց տվեք յուրաքանչյուր զարգացնող նյութի տեղը և դրանով աշխատելու ճիշտ եղանակները:

<sup>6</sup> <https://papa-school.by/o-proekte/?fbclid=IwAR3DlcmWBiLkwbhPwMby17LG2fPQW6mROMSLhHy46z5c9iEz4BUM3QUmXs>

- Պատրաստ եղեք պատասխանել երեխայի կոչին, որ ձեր կարիքն ունի: Միշտ լսեք և պատասխանեք այն երեխային, որ ձեզ հետ է խոսում:
- Հարգե՛ք այն երեխային, որ սխալ է թույլ տվել, և նա կկարողանա շտկվել:
- Պատրաստ եղեք օգնել երեխային, որը գտնվում է որոնումների մեջ, և անտեսանելի մնալ այն երեխայի համար, ով արդեն գտել է ամեն ինչ:

**Ընտանիքը և դպրոցը՝ արական սկիզբով.** Ընտանիքի և դպրոցի ամենահետաքրքիր և հեռանկարային համագործակցության ձևերից մեկը հայրերի խորհուրդն է: Ինչո՞ւ է առաջացել հայրերին միավորելու անհրաժեշտությունը: Բոլոր երեխաները, անկախ սեռից, իրենց ծնողների դրական ազդեցության կարիքն ունեն: Եվ հրաշալի է, եթե նրանք ունեն այդ հնարավորությունը: Հայրության դերի կարևորությունը կասկածի տակ չի դրվել դարերի ընթացքում: Դրա առավել տարածված մոդելը մինչև վերջին ժամանակներս ավանդական մոդելն էր, որտեղ հայրը կերակրողն է, իշխանության անձնավորումը և բարձրագույն կարգապահական մարմինը, ընդօրինակման օրինակը և ընտանիքի բոլոր անդամների համար անմիջական դաստիարակը: Հայրական դերը ներառում է պատասխանատվություն նախևառաջ որդու դաստիարակության համար: Ավանդական հասարակության մեջ հայրերի աշխատանքը մշտապես եղել է ակնհայտ, ինչը հիմք է հանդիսացել տանը առաջին տղամարդու հեղինակության համար: Հայրը եղել է ընտանիքի գլուխը, մարդ, որ ընդունում է կարևոր որոշումներ, խորհուրդ է տալիս, ղեկավարում է:

Բոլոր ժամանակներում մարդիկ իմացել են, որ հայրը կարևորագույն դեր է խաղում երեխաների կողմից բարոյական նորմերի յուրացման մեջ: Ծնողները բառերի և վարքի միջոցով արտահայտում են իրենց վերաբերմունքը որոշակի իրադարձությունների կամ մարդկանց արարքների նկատմամբ՝ այդպիսով, ներկայացնելով վարքի մոդելները և բարոյական գնահատականը:

Համաձայն ավստրիացի հոգեբան և մտածող Ա. Ադլերի՝ հոր դերը դաստիարակության մեջ ուղղված է սոցիալական կոմպետենտության զարգացմանը: Եթե մայրը ներկայացնում է մարդկային սիրո մտերմությունը զգալու հնարավորությունը, ապա հայրը երեխայի համար ճանապարհ է հարթում դեպի մարդկային հասարակություն:

Հոր ազդեցությունը տարբերվում է մայրական ազդեցությունից: Դա կապված է այն սոցիալ-մշակութային դերերի հետ, որոնք պատկանում են մորը և հորը երեխայի դաստիարակության գործընթացում: Գերմանացի փիլիսոփա և հոգեբան Է. Ֆրոմը պնդում էր, որ հայրը կատարում է սոցիալական վերահսկողության գործառույթ: Դպրոցում հայրերի խորհուրդն ապահովում է արական դաստիարակության առկայություն, տղամարդկային վարքի նմուշ, երեխաների համար հասարակության նմուշ և հուզական աջակցություն ու հենք՝ ծնողների ու մանկավարժների համար:

Հայրերի խորհուրդը բաղկացած է հոգատար, պատասխանատու մարդկանցից, որոնք ունեն ակտիվ կենսակերպ և հավատում են, որ եկել է ժամանակը, որ ավելի ակտիվ մասնակցություն ունենան երեխաների դաստիարակության գործում:

**Հայրության սոցիալ-հոգեբանական մոդելները.** Հայրությունը սոցիալական գյուտ է: Հայրական դերի հոգեբանական բովանդակությունը կախված է ընտանիքում անձի ունեցած փորձից՝ հայրերի նախորդ սերունդների դրսևորած հայրության մոդելից:

Հայրության ավանդական մոդելում հայրության դերը դաստիարակության մեջ դիտվում էր որպես օժանդակ: Հայրության ժամանակակից մոդելը երեխայի հետ հուզական կապի մեջ մտնելու ունակությունն է, և դրա առաջացումը կապված է ընտանիքում իրավունքների ու պարտականությունների բաշխման մեջ ամուսինների իրավահավասարության հետ:

Հոր սերը հաջողության և լավ պահվածքի պարզն է: Ավանդույթների համաձայն՝ տղամարդը պետք է դաստիարակի ժառանգորդ՝ որպես տոհմի շարունակություն, ավանդույթների ու նախնիների հիշողության պահպան:

**Հայրեր ու երեխաներ. ինչի՞ց է սկսվում ըմբռնումը.** Ժամանակակից հայրը հաճախ երեխայի համար դառնում է առասպելական, անհասկանալի ու անհասանելի: Հայրերի հեռացումը երեխաների դաստիարակությունից հայրության մշակույթի կարծրատիպն է:

Հոգեբանական ուսումնասիրությունների արդյունքների համաձայն՝ նորածինները, որոնց հայրերը հոգ են տարել իրենց մասին՝ կյանքի առաջին իսկ օրերից, ցույց են տալիս ավելի բարձր մակարդակի մտավոր և ֆիզիկական զարգացում, աճում են ավելի հուզականորեն պատասխանատու, և ամուսինների միջև երեխայի դաստիարակության վերաբերյալ բախումներ չեն առաջանում<sup>7</sup>:

Ո՞վ է ծնողը: Կարևորվում է այն ճշմարտությունը, որի համաձայն՝ բոլոր երեխաները պետք է ծնող ունենան: Իսկ եթե երեխան որք է, ապա պարտադիր է, որ նա իր կյանքում ունենա ծնողական հոգատարությամբ օժտված անձ: Ուղղակի ծնողից դեպի ծնող դառնալու ճանապարհին հարկավոր է մշտապես շփման մեջ լինել սեփական երեխայի հետ: Երեխային կարելի է ճանաչել նրա հետ զրուցելով, խաղալով, զբոսնելով, կարդալով, մանկանալով և նրան մեծի պես որևէ բանում ներգրավելով<sup>8</sup>:

Պետք է նշել, որ հայրերը երեխայի հետ խաղում են այլ կերպ, քան մայրերը: Նույնիսկ երեխային խնամելիս հայրերը նախընտրում են դա անել խաղային ձևով: Նրանք հակված են ավելի եռանդուն խաղերի, որոնք ուղղված են երեխայի ֆիզիկական զարգացմանը. մայրերն ավելի մեղմ են վերաբերվում: Այն հայրերը, որոնք մանկության տարիներին ուժեղ հուզական կապեր են զարգացնում երեխաների հետ, ընդհանուր առմամբ մեծ ազդեցություն են ունենում իրենց երեխաների վրա:

**Պատրաստություն հայրությանը.** Հայրերի հիմնական հոգեբանական դժվարությունը երեխայի հետ շփումից հաճույք ստանալու ունակությունն է: Հասուն հայրական զգացմունքներն արտահայտվում են սիրող, ընդունող դաստիարակության ոճով, որն ուղղված է երեխային: Նման հայրերը հոգ են տանում երեխաների մասին, խնամում

<sup>7</sup> Руководство по подготовке родителей к рождению и воспитанию здорового ребенка (Под научной ред. к.м.н., доц. В.С Ковалтсего). СПб. ООО «Издательство Фолиант». -2004.

<sup>8</sup> Գիրակոսյան Հ., Մասնա ծերերի դաստիարակության գիրքը (Գործնական ձեռնարկ հայ ծնողների համար), Երևան, «Հալիվոր» հրատ. 2019, էջ 70:

նրանց: Նրանք երեխային սովորեցնելու, իրենց փորձը նրան փոխանցելու, երեխային իրենց ժառանգ դարձնելու, նրան այն ամենալավը, ինչին իրենք տիրապետում են, փոխանցելու պահանջ են զգում<sup>9</sup>:

Այն ընտանիքներում, որտեղ հայրերը հեռացվում են դաստիարակությունից, մայրը ներկայացնում է խիստ իշխանություն: Մոր գերիշխման և հորը օտարելու հետևանքով ապագայում երեխաների մեջ հայրության և մայրության նորմալ դրական մոդելը խաթարվում և խեղաթյուրվում է, ինչը բացասաբար է անդրադառնում ապագայում երեխաների դաստիարակության վրա: Աղջիկների ու տղաների մեջ ձևավորվում են անվստահություն, ցածր ինքնագնահատական, դրսևորվում է ագրեսիա (մորից չափազանց մեծ կախվածության դեմ), դժվարություններ են առաջանում հասակակիցների հետ շփվելիս: Իմպուլսիվ, պոթթկուն հայրերի, որոնք հակված են անսպասելի գործողությունների, որդիները հաճախ տառապում են ներողներից՝ գիշերամիզություն, կակաություն: Հոր բժախնդրությունը նույնպես երեխայի նյարդայնացման գործոն է: Հոր չափազանց խստությունը կարող է վախ առաջացնել որդու մեջ<sup>10</sup>:

*Եզրահանգում.* Այն հայրերը, որոնք մանկության տարիներին ուժեղ հուզական կապեր ունեն երեխաների հետ, ընդհանուր առմամբ մեծ ազդեցություն են թողնում իրենց զավակների վրա: Որդիները ցանկանում են նմանվել այն հայրերին, որոնց հետ նրանց մեջ ձևավորվել են ընկերական հարաբերություններ: Հայրը կարևորագույն դեր է խաղում երեխաների բարոյական նորմերի յուրացման մեջ: Ծնողները բառերով ու վարքով արտահայտում են իրենց վերաբերմունքը որոշակի իրադարձությունների կամ մարդկանց արարքների հանդեպ՝ այդպիսով ներկայացնելով վարքի մոդելները և այս կամ այն երևույթի բարոյական գնահատականը: Ծնողները, հատկապես հայրը, վարքի որոշակի շրջանակների մեջ են դնում երեխաներին, հավանության են արժանացնում կամ պատժում են որոշ արարքների համար: Ընտանիքը մյուս սոցիալական խմբերի նման ապրում է հասունության գործընթաց, հասունության տարբեր որակներ ու վիճակներ, տարբեր աստիճաններ՝ կախված ներընտանեկան դերերի հստակությունից, ընտանիքի անդամների փոխհարաբերությունների բնույթից և այլ գործոններից:

Ամփոփելով կարելի է նշել, որ «Հայրերի դպրոցը» ձգտում է ամրապնդել ծնողական ու ամուսնական փոխհարաբերությունները երիտասարդ ընտանիքներում, նվազեցնել ամուսնալուծության ռիսկը, որ հանգեցնում է ընտանիքի քայքայմանը:

<sup>9</sup> Психология и психоанализ беременности. Хрестоматия (под ред. Райгородского Д.Я.). Самара. Изд. дом «Бахрах». Москва. -2003.

<sup>10</sup> Александрович Н. А., Материнская любовь. Москва. -2020. С. 320.

## СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ОТЦОВСКОЙ ШКОЛЫ

*Տապյան Կ. Ա.*

**Ключевые слова:** *воспитание, семья, материнство, отцовская школа, родительство.*

Цель данной статьи - подчеркнуть важность участия отцов в процессе воспитания детей, подчеркнуть важность отцовских школ в процессе развития полноценного человека. В ходе исследования использовались как симметричные (анализ, синтез, исторический принцип), так и специальные (сравнительные) методы.

В ходе исследования сделан вывод, что, несмотря на то, что в нашей стране воспитание в основном является функцией, приписываемой женскому полу, исследования показали, что в неполных семьях, где отсутствует отец, воспитание ребенка остается неполным. В наше время способность отцовской школы завершить воспитательный процесс становится все более важной. Автор утверждает, что последнее призвано решить проблему укрепления демократической безопасности государства, основанной на повышении устойчивости молодой семьи, за счет выявления отцовско-супружеских качеств мужчины.

## FATHER SCHOOL: SOCIAL AND PSYCHOLOGICAL CHARACTERISTICS

*Sahakyan K. A.*

**Key words:** *upbringing, family, motherhood, father school, parenting.*

The purpose of the article is to emphasize the importance of the participation of fathers in the process of raising children in the context of individual development of a person. In the course of the research, both symmetric (analysis, synthesis, historical principle) and special (comparative) methods were used.

The study concluded that, despite the fact that in our country, upbringing is mainly a function attributed to the female sex, studies have shown that in incomplete families, where the father is absent, the upbringing of the child remains incomplete. In our time, the ability of the father's school to complete the educational process becomes more and more important. The author argues that the latter is designed to solve the problem of strengthening the democratic security of the state, based on increasing the stability of a young family, by identifying the paternal and marital qualities of a man.

### Գ ր ա կ ա ն ո թ յ ո ն

1. Գիրականյան Հ., Սասնա ծոերի դաստիարակության գիրքը /Գործնական ձեռնարկ հայ ծնողների համար/, Երևան, «Հալիվոյ» հրատ., 2019:
2. Սեդրակյան Ս., Ընտանիքի հոգեբանություն, Երևան, «Ուրարտու» հրատ, 2010:
3. Александрович Н. А. Материнская любовь. Москва. -2020.
4. Колесов П. Б. Муза для любимого. Как вдохновлять мужчину на подвиги. Москва. -2019.
5. Нартова-Бочавер С.К., Бочавер К.А., Бочавер С.Ю. Жизненное пространство семьи. -2017.

6. Папа-школа: шаг за шагом. - Москва. ООО «БЭСТ-принт». -2010.
7. Психология и психоанализ беременности. Хрестоматия/ под ред. Райгородского Д.Я. Самара. Изд. дом «Бахрах». Москва. - 2003.
8. Смирнов Д. А. Современный российский мужчина в семье и о семье: Стиль «молодого отца» в массовом сознании и поведении России/ Конструирование маскулинности на Западе и в России // Межвуз. сб. научно-методических материалов. Ивлгово. -2006. С. 58-79.
9. Руководство по подготовке родителей к рождению и воспитанию здорового ребенка /Под научной ред. к.м.н., доц. В.С Ковалсясо/. СПб. ООО «Издательство Фолиант». -2004.

*Ընդունվել է՝ 26. 04. 2021*

*Գրախոսվել է՝ 24. 05. 2021*

*Հանձնվել է տպ.՝ 21. 06. 2021*

**Տեղեկություններ հեղինակի մասին**

**Կարինե ՍԱՀԱԿՅԱՆ՝** հոգեբանական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի ավագ գիտաշխատող, ՇՊՀ հոգեբանություն, սոցիոլոգիայի և անգլիստանի ամբիոնի վարիչ, էլ հասցե՝ sahakyanani@mail.ru

## Հ Ի Շ Ա Տ Ա Կ Ի Խ Ո Ս Ք

### Հ Ա Ս Մ Ի Կ Պ Ա Ր ՈՒ Յ Ր Ի Կ Ի Ր Ա Կ Ո Ս Յ Ա Ն



Ճանաչողներս գիտեն՝ միտք շարադրելն ինձ համար բարդ չէ, բայց սա այդ դեպքը չէ: Գուցե նրանից է, որ այդ շատերի մոտ, թեկուզ՝ միայն մտք, բայց գուգորդումներ կան իմ ու այս շարադրանքի հերոսի հետ: Կամ, որովհետև իմ ուսերին հսկա պարտավորություն է դրվել, ու ես այն վերցրել եմ՝ գիտակցությանս բոլոր շերտերով զգալով պատասխանատվության ահռելի չափը:

#### *Որովհետև...*

Ինքը՝ տիկին Կիրակոսյանը, մարդ-հուշարձան է (բնութագրումն իրենն է, և դա այդպես է), ու այդ պատճառով միշտ քիչ է թվում՝ ինչ էլ որ ասես: Հստակ է, որ անփոխարինելի է, որքան էլ հայտնի միտքը երբեմն հակառակն է պնդում: Իր գործը կնիք է այս քաղաքի ու հատկապես մշակութային կյանքի կենսագրության տակ, կնիք, որով ամեն անգամ հաստատել է իր ու քաղաքի անբացատրելի կապն ու սերը:

Ապրած տարիները, սովորաբար, հարստացնում են մարդու միտքը և հանգստացնում անհանգիստ հոգիներին: Կենսախնդրությունը, սակայն, այս դեպքում բացարձակ բնութագրիչ էր. էներգիայի զարմանալի պաշարը թվում էր՝ ուր որ է կսպառվի: Բայց, միայն թվում էր:

*Եւ...*

Արտիստ էր: Ու ոչ միայն լիաբուռ ծափեր կորզելիս: Արտիստ էր ամենասովորական, առօրյա իրադրություններում անգամ՝ կնոջական փնտրված սեթնեթանքով, զարմանալի կոկիկ, հարդարված, տեսանելի շքեղությամբ:

Այդպես էլ խոսում էր. ծորո՛ւն, հարուստ, շքե՛ղ հայերենով, բառերի յուրատիպ ընտրությամբ, դիպուկ բնութագրումներով, անհրաժեշտ դադարներով, քաղաքի հանդեպ ունեցած կրքոտ սիրով: Ճարտասա՛ն էր՝ բառի բոլոր իմաստներով:

*Ու...*

Բա՛րձր, վարակիչ ծիծաղ ուներ, որ կախվում էր օդում ու շարունակում գրնգալ՝ հասմիկկիրակոսյանական հերթական շեղք-պատումից հետո: Սուր համեմատություններով ու կոմիկական մեծագույն վարպետությամբ, դիպուկ բնութագրումներով կարծես նկարում էր այն միջավայրն ու մարդկանց, ում կամ ինչի մասին խոսում էր, պատմում: Նրա հետ հնարավոր էր ամեն բան ու անհնար միայն մեկը՝ ձանձրանալ:

*Թեև...*

Մերը, որպես կանոն, իր չափումներն ունի: Բայց նա այստեղ էլ կարծատիպ կուտրոդ էր. Գյումրու նկատմամբ նրա սերն անչափելի էր, նա Գյումրու հավերժ սիրահարն էր՝ նվիրյալի ու նվիրումի չպարագծվող մասշտաբներով:

Ասում էր՝ սոսնձված է այս հողին և իր միտք ու ոգով՝ քաղաքի մշակույթին: Այդպես էլ հեռացավ՝ գյումրեցիների խոնարհված հայացքների ու ծափերի ներքո, կորստի զգացում փոխանցելով նույնիսկ չճանաչողներին և օդում թողնելով իր ձայնը: Հիմա մենք պարտավոր ենք միասին՝ տասնյակներով՝ շարունակել այս ՄԵԿ ՄԱՐԴՈՒԳՈՐԸ՝ թեկուզ միայն ի հանգստություն այն անհանգիստ հոգու, որ փոթորկել գիտեր ամեն ինչ ու ամեն ներաշխարհ:

*Ուրեմն...*

Իր գծած ճանապարհով անցնելու համար համարձակություն է պետք, իմ առջև դրված նշաձողը շատ բարձր է, պատասխանատվությունը՝ հազարապատիկ մեծ: Ես իրեն խոստացել եմ, որ տանուլ չեմ տա ու որ մեր բոլոր չկայացած երկխոսություններում հնչած խոստումները՝ ի սեր քաղաքի ու մշակույթի, կվերածեն գործի. ես գիտեմ, որ պարտավոր եմ, ինքը՝ գիտեր, որ կարող եմ...

*Լիլիթ Թովմասյան*

*Գյումրու քաղաքապետարանի  
մշակույթի և երիտասարդության  
հարցերի բաժնի պետ*

## **Բ ո վ ա ն դ ա կ ո թ յ ու ն**

### **Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

#### *Պետրոսյան Ս. Գ.*

Հնագույն Տարոնի և Բզունիքի արտոնյալ դասերն ու պաշտամունքը.....5

#### *Ակոպով Ա. Ա.*

Բերդագրակի գավառի բնակչության ազգային կազմը XVI-XVIII դարերում .....19

#### *Այվազյան Գ. Ս.*

Մովսես Խորենացու երկասիրությունների հրատարակությունների պատկերագրաբանական խորհրդաբանությունը (XVII-XIX դդ.).....30

#### *Ամիրջանյան Հ. Հ.*

Հովսեփ Արղությանի գործունեությունը՝ ուղղված ժուսահայ թեմում հայոց դավանանքի պահպանմանը .....39

#### *Հայրապետյան Ա. Ս.*

Ալեքսանդրապոլը Ռուսական առաջին հեղափոխության հորձանուտում (1905-1907թթ.) .....52

#### *Ավագյան Բ. Է.*

Գյումրու Պատվո բլուրը որպես պատմամշակութային պահպանական միավոր.....64

### **Ժ Ո Ղ Ո Վ Դ Դ Ա Գ Դ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

#### *Բոյաջյան Ա. Գ.*

Շիրակի մարզի բնակչության սեռատարիքային կառուցվածքի փոփոխությունը (XXդ. վերջ - XXI սկիզբ).....73

### **Բ Ա Ն Ա Հ Յ Ո Ւ Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

#### *Խենյան Ս. Հ.*

Գ. Սրվանձտյանցի գրառած հեքիաթները հայ ժողովրդական հեքիաթների համատեքստում.....84

#### *Մատիկյան Հ. Հ.*

Օրոր-ողբերգ տեքստերը հայկական բանահյուսության մեջ (գրական միջավայրի համատեքստում).....97

### **Լ Ե Զ Վ Ա Բ Ա Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

#### *Խաչատրյան Գ. Կ., Հովհաննիսյան Ե.*

Դասական գրաբարի ենթաշրջանի անվանական հոլովման համակարգի զուգաձևությունները.....108

*Խաչատրյան Լ. Լ.*  
 Չայնոդահանգ հիմքերով բառերի թվակազմությունը հին հայերենում.....120

**Գ Ր Ա Կ Ա Ն Ա Գ Ի Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

*Հովհաննիսյան Ռ. Պ.*  
 Ալեքսանդրապոլի երևելի դեմքը՝ գրական կերպարի նախատիպ  
 (Ավետիս Ղարիբյանը՝ Հ. Հակոբջանյանի «Պարվալի Վաղոն» վեպում).....130

**Ա Ր Վ Ե Ս Տ Ա Բ Ա Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

*Մարգարյան Ա. Վ.*  
 Քրիստոնեությունը՝ իբրև հեթանոսական գիտելիքների կրող  
 միջնադարյան հայ արվեստի  
 համատեքստում.....140

*Հարությունյան Հ. Հ.*  
 Ալեքսանդրապոլի ավանդական երաժշտությունը  
 Ալեքսանդր Սպենդիարյանի ստեղծագործության մեջ.....147

*Մկրտչյան Մ. Հ.*  
 Գեղունի Չթյանի ռոմանսների կատարողական որոշ խնդիրների շուրջ.....154

**Մ Շ Ա Կ ՈՒ Յ Թ**

*Հարթենյան Տ. Կ.*  
 Ազգային հագուստի ինքնատիպ դիմագիծը.....164

*Հովհաննիսյան Ա. Լ.*  
 Թանգարանների դերը քաղաքի մշակութային կյանքում  
 (Շիրակի երկրագիտական թանգարանի և  
 Կումայրի պատմամշակութային արգելոց-թանգարանի օրինակով).....172

**Հ Ո Գ Ե Բ Ա Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

*Մահակյան Կ. Ա.*  
 Հայրական դպրոցի սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները.....181

Հիշատակի խոսք .....191

# СОДЕРЖАНИЕ

---

---

## ИСТОРИЯ

*Петросян С. Г.*

Привилегированные сословия и культ древнейшего Тарона и Бзунника.....5

*Акопов А. А.*

Этнический состав Бердагракской провинции в XVI-XVIII веках..... 19

*Айвазян Г. С.*

Замысел иллюстраций изданий сочинений Мовсеса Хоренаци (XVII-XIX вв.) .....30

*Амирджанян А. О.*

Вопросы вероотступничества в деятельности

Овсепя Архиепископа Аргутяна в Российско-армянской духовной епархии.....39

*Айрапетян А. С.*

Александрополь в пучине Первой русской революции 1905-1907гг.....52

*Авагян И. Э.*

"Холм чести" в Гюмри как охраняемая историко-культурная единица.....64

## ДЕМОГРАФИЯ

*Бояджян А. Г.*

Изменение половозрастной структуры населения Ширакского марза

(конец XX века - начало XXI века).....73

## ФОЛЬКЛОР

*Хемчян М. Г.*

Сказки записанные Г. Срвандзтянцом в контексте армянских народных сказок.....84

*Матикян А. Г.*

Колыбельная - скорбная в армянском фольклоре

(в контексте литературной среды).....97

## ЯЗЫКОЗНАНИЕ

*Хачатрян Г.К., Оганнисян Е. А.*

Параллельные формы в системе именного склонения

древнеармянского языка классического периода.....108

*Хачатрян Л. Л.*

Числообразование слов заканчивающихся с сонантами в древнеармянском языке.....120

**ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ**

---

---

*Оганесян Р. П.*

Видное лицо Александрополя – прообраз литературного персонажа  
(Аветис Гарибян в романе А. Акопджаняна «Падвали Вахон»).....130

**ИСКУССТВОВЕДЕНИЕ**

---

---

*Маркарян А. В.*

Христианство, как носитель языческих знаний в контексте  
средневековой армянской культуры.....140

*Арутюнян А. А.*

Традиционная музыка Александрополя в творчестве Александра Спендиаряна .....147

*Мкртчян М. Г.*

О некоторых вопросах исполнения романсов Гегуни Читчяна.....154

**КУЛЬТУРА**

---

---

*Артемян Т. К.*

Самобытный облик национальной одежды.....164

*Оганисян А. Л.*

Роль музеев в культурной жизни города (по примеру Ширакского  
краеведческого музея и Историко-культурного музея-заповедника «Кумайри»).....172

**ПСИХОЛОГИЯ**

---

---

*Саакян К. А.*

Социально-психологические особенности отцовской школы.....181

**Слово**

**памяти**.....191

# CONTENTS

---

---

## HISTORY

---

---

*Petrosyan S. G.*

The Privileged Estates and Cult of the Ancient Taron and Bznuniq.....5

*Akopov A. A.*

The Ethnic Situation of Berdagrak Province in the XVI-XVIII Centuries.....19

*Ayvazyan G. S.*

The Symbolic Meaning of Illustrations for Editions of the Works of Movses Khorenatsi  
(XVII-XIX centuries).. .....30

*Amirjanyan H. H.*

Apostasy Issues in the Activities of Archbishop Hovsep Arghutyan  
in the Armenian Eparchy in Russia.. .....39

*Hayrapetyan A. S.*

Alexandrapol in the Whirlpool of the First Russian Revolution in 1905-1907.....52

*Avagyan I. A.*

"Hill of Honor" in Gyumri as a Protected Historical and Cultural Unit.....64

## DEMOGRAPHY

---

---

*Boyajyan A. G.*

Changes of Gender Age Structure of the Population of Shirak Region  
(end of XX-beginning of XXI cc).....73

## FOLKLOR

---

---

*Khemchyan M.H.*

Fairy Tales Recorded by G. Srvandztyants in the Context of Armenian Folk Fairy Tales.....84

*Matikyan H. H.*

Lullaby- Lamentations in Armenian Folklore (in the Context of Literary Environment).....97

## LINGUISTICS

---

---

*Khachatryan G. K. Hovhannisyan Y. A.*

Parallel Forms of Nominal Declension System in the Subperiod of Classical Grabar.....108

*Khachatryan L. L.*

The Number Formation of Words Ending with Sonant Stems in Old Armenian.....120

LITERARY SCIENCE

---

---

*Hovhannisyan R. P.*

- The Prominent Figure of Alexandrapol as a Prototype of a Literary Personage  
(Avetis Gharibyan in H. Hakobjanyan's "Padvali Vaghon" Novel).....130

ART STUDIES

---

---

*Margaryan A. V.*

- Christianity as a Carrier of Paganic Knowledge in Medieval Armenian Art.....140

*Harutyunyan H. H.*

- Traditional Music of Alexandrapol in Alexander Spendiaran's Creation.....147

*Mkrtchyan M.H.*

- About Some Performing Problems of Geghuni Chtchyan's Romans.....154

CULTURE

---

---

*Hartenyan T.K.*

- The Unique Feature of National Clothing.....164

*Hovhannisyan A. L.*

- The Role Museums in the Cultural Life of the City (Following the Example of the  
Shirak Regional Museum and the Kumayri Historical and Cultural Museum-Reserve).....172

PSYCHOLOGY

---

---

*Sahakyan K. A.*

- Father School: Social and Psychological Characteristics.....181

- A Word of Remembrance.....191

Հայաստանի Հանրապետություն  
Գիտությունների ազգային ակադեմիա  
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ. 1 (24) 2021

Республика Армения  
Национальная академия наук  
Ширакский центр арменоведческих исследований

НАУЧНЫЕ ТРУДЫ. 1 (24) 2021

Shirak Centre for Armenological Studies  
National Academy of Sciences  
Republic of Armenia

SCIENTIFIC WORKS. 1 (24) 2021

Համակարգչային և գեղարվեստական ձևավորումը՝ **Լ. Կոստանյանի,**  
Խմբագրումը և սրբագրումը՝ **Ռ. Հովհաննիսյանի, Հ. Մատիկյանի,**  
**Ա. Սառաջյանի**

Ստորագրված է տպագրության՝ 21. 06. 2021թ.

Ծավալը՝ 200 էջ, թուղթը՝ A4, տպաքանակը՝ 120, գինը՝ պայմանագրային

---

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի  
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն  
Հայաստան, Գյումրի, Վազգեն Սարգսյանի-5<sup>ա</sup>  
<http://shirakcenter.sci.am/>. E-mail: [scient.works@shirakcenter.sci.am](mailto:scient.works@shirakcenter.sci.am)

